

ՄԱՐԴԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ
Ա. Մ. Ս. Ա. Գ. Ի. Բ.

№ 6 1894

ՅՈՒՆԻՍ

1894 № 6

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԻԾ

1 ԳԱԲՈՅԵԽԵԼԻ	881	Երկլեզուն և Քուչէ (սպատմածք):
2 ՇԱՆԹ	844	Մակուկը (բանաստեղծ.):
3 ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.	845	Ահնա (սպատմածք.):
4 Ա***	865	Հելչն և լլիլ:
5 ՅԱԿՈԲՅԱՆ, ՅԱԿՈԲ	886	*** Լ. Պ. (բանանաստեղծ.):
6 ԳՈՒՐԲԱԿԵՆԱՆ, Յ.	888	Սանձարձակ անասուն, զրուանքը:
7 ՄԱՆՈՒԿԵՆՅԱՅ, ԼԵՒՈՆ	892	Դպրոցական նամակներ:
8 ԱՐԾՐՈՒՆԵ, ԲԺՇ. Վ.ԱՀԱՅՆ	901	Բնական Հիպնոտիսմ:
9 ՅԱԿՈԲՅԱՆ, ՅԱԿՈԲ	913	Բանւորների ապահ. Ոռւսաստան.:
10 Գ. ԱՍՏ.	924	«Հայ աշուղներ»:
11 Ե. ՄԻՆ.	927	«Ճանապարհովող. Արարատի վրայ»:
12 »	928	«Երկրագունդ, ծովերը և ցամաք»:
13 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻՍՏԻՔ	930	Ժամանակակից Տիութիւն: Յունիսի ընտարութիւնները:
14 ՄԵԼՔՈՒՄԵԱՆՅ, Մ.	938	Մեղրի գիւղի զբութիւնը:
15 ՄՈՒՐԱԴԵԱՆՅ, Յ.	945	Նամակներ Ահ-Ֆոլի ափերից III.
16 Վ.ԱՐԴԱՆԵԱՆ, Գ.	949	Վերմանացիք Փոքր Ասիակում:
17 Ա. Մ. Ն.	952	Ալսաստահմանից: Կարնօի սպանումը:
18 ԽՄԲ.	974	Լուրեր:
19 ԽՄԲ.	978	«Մուրճ» բոլանդակութ. № 1—6:

ՅԱՅՍԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Գ. ՌՕՏԻԿԵՆԵԱՅԻ

Տիպոգրաֆія Մ. Դ. Ռոտիկանի, Գօլ. պր., լ. № 41.

1894



ՄՈՒԾ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 6 1894

ՅՈՒՆԻՍ

1894 № 6

ՎԵՅՏՈՐԴ ՏԱՐԻ

~~~~~

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. Ա-ՕՏԻՒԵԱՑԻ

Տիպոգրիայ Մ. Դ. Ռոտնանց, Թօլ. պր. ճ. № 41.

1894

Дозволено цензурою. Тифлисъ, 23 Июня, 1894 г.

## ԵՐԿԼԵԶՈՒՆ ԵՒ ՔՈՒԶԵ

Գ Ա Բ Ա Շ Ի Ե Լ Ի Դ

Թարգմ. ՄԿՐՏԻՉ ՆԱԽԱՍՍՌԵԱՆՑԻ

### I

Վարդիսուբան գիւղում ամենից առաջ նողաձէն վերջացրեց իր կալը։ Այսօր, շաբաթ օրը, վերջնականապէս ներս ածեց յարդը մարաքը, և այս պատճառով նրա կալը այնպէս է ցողում ինչպէս մարդու նոր սափրած երեսը, այնուեղ մարդու սոոը այնպէս է սայցմաքում ինչպէս յունւարին խիստ սառած Փրոն գետակի մակերեւոյթի վրա։ Հէնց այս պատճառով գեղի ամբողջ երիտասարդութիւնը հաւաքւեց այնուեղ զւարճանալու այս կիրակնամօւտին։ Այսօր հոկտեմբեր ամսի հիանալի, քաղցր, տաքուկ երեկոներից մէկն էր, որ շատ յաճախ է պատահում մեր օրհնւած երկրում։ Նողաձէի կալը գտնւում էր մի բարձրաւանդակի վրա, որտեղից ցած էր նայում գեղին։ Նրան մօտիկ տարածում է մի մաշտու անտառ և քի։ հեռու մի հինաւեր եկեղեցի, որի պատերի ձեղքերից դուրս են նայում բաւական խոշոր ծառեր, և որի միջից լսւում է աղաւնիների անընդհատ մնչիւնը։ Մայր մանող արեւը սփուռում է առատօրէն իր ճաւագայթները և քմահաճ կերպով լուսաւորում է աշնանային գեղնած անտառը, ճերմակ եկեղեցին և կենսալից աղջիկ-տղայոց երեմները։ Սրանք ածում են դահրէն, «բուզիկա»<sup>1)</sup>,

1) «Բուզիկա» վրայի գեղացիք անւանում են զարմոն կոչւած նւագելու գործիքը.

և դամա ու կաւալէր (նոր մոլայով) արագ պարում են:  
—Այդպէս, այդպէս, շարդ տանեմ, ձայն էին տալիս երթեմն  
պարողներին տղերքը. այդպէս, ցաւդ առնեմ:

Ճշմարիտ որ շատ գեղեցիկ էր այս պարող զոյգը: Աղջիկը  
բարձրահասակ, զարդարուն, մայխեան վարդի նման թուշ-շունք-  
ներով. հագել էր ճերմակ չթի մաքուր գէիրա և գլխին ծածկել  
գեղին բաղդադի, որի տակից կախւած վեց հատ հաստ ծամերը,  
ոտնախաղին աւելի շնորհք տալու համար, թիկունքի վրա ցատկո-  
տում էին չարաձնի կերպով: Տղան առիւծ, լայն թիկունք-ու սով, բե-  
լիերը նորածիլ, զալմուխի փոքրիկ «գարիբալդին» զլսին բդովի  
զրած. մեաքսեայ կրծկալով, հագին աւ ախալուղ և ուղար բրդից  
չուխէք, որի փեշերի ծայրերը գէսի յետ տարած ամրացրել էր ար-  
ծաթեայ քամարի մէջ, ոտերը փափում և զանկասպաններով շնոր-  
հալի կերպով զարդարել էր: Սրանք սիրուն կերպով պատում էին  
միմեանց շուրջը: Թեղն, երթեմն յափշտակւած, աշխատում էր որ  
և է կերպով բռնել Քուչէին, բայց սա ճարպիկաբար դուրս էր  
պրծնում նրա ձեռից և այսպիսով գրգռում ընկերունիների սրաս-  
լից ծիծաղը:

Քուչէն միամօր և օժիտով աղջիկ էր: Այն ինչ Թէդօն ուրիշ  
տեղից եկած տղայ էր և օրւաց հացը ծառայութեամբ էր վաս-  
տակում: Սա իր վաստակը ամբողջովին հագուստի էր տալիս և այս  
պատճառով մի գրոշ անգամ չունէր յետ դցած: Նատախօն էր  
վերին աստիճանի ու լիրահաչ, և այս պատճառով գիւղում սրան  
կոչում էին երկլեզու. առաջին ըմբշամարտ և հիանալի զուռնայ  
ածող էր, որի համար բոլոր խնջոյքներում և տօնախմբութիւննե-  
րում դլխաւորն էր: Արդէն մի տարի է, ինչ որ սա Գօդիայի եղ-  
քօր մօտ, հէնց սրան դրացի, ծառաց մտաւ և այն օրից գեղեցիկ  
Քուչէի հետ բարեկամ եղաւ: Քուչէն, ի հարկէ, իզուր չէր մուեր-  
մանում լիասիրտ Թէդօխն, ոչ թէ իբր իր վիխացուխն, ինչ ասե-  
լու խօսք է այս, նա մոքովն էլ չէր անցկացնում: Սա գիւղում  
առաջին հարուստ հարսնացուն էր, այն ինչ նա մի հասարակ ծա-  
ռայց: Անկարելի բան էր այս հարուստ գեղացու հպարտութեան  
պատճառով, և կարծես թէ սրա համար էլ ուշաղրութիւն չէին  
գարձնում սրանց սրտակցութեանը և Թէդօի սիրահարութեան վրա

շատ էին ծիծաղում: Որքան աւելի մթնում էր, այնքան զւարճութիւնը սաստիանում էր, պարողներին էլ հարկաւոր չէր խնդրել, իրենք էին վագում կամովին: Մեծ մասամբ աղջիկ և տղայ էր պարում միասին, երբեմն երկու աղջիկ, այն ինչ մենակ շատ քիչն էր պարում: Մթնեց, բայց ոչ երկար ժամանակ: Հիմա լուսինն սկսեց կամաց-կամաց բարձրանալ և գունատ լուսով լուսաւորել հիանալի տեսարանը:

Դահրէ ածելը վերջացաւ և սկսեց «ցանդալա»<sup>1)</sup>: Աղջիկներն և աղաները մրցում էին միմիանց գէմ երգերով: Մի մի երգասաց ընտրեցին իրանց միջից: Սրանք մրցում էին միմեանց գէմ երգասածութեամբ և միւսները ձայն էին պահում: Երգասածութիւնը ջգրու աւելի և աւելի էր սաստիանում, ձայներն աւելի էին բարձրանում և տարածում ամբողջ գեղի վրա:

Նատ սկեսուրներ, բազմաթիւ ծեր հայրեր, աթեշտանի մօտ նստած, դժգոհում էին ջահելների այսպիսի չափազանց գժութեան պատճառով, բաց ոչ ոք սիրու չէր անում զւարճութիւնը դադարեցնել: Սակայն աշնանալին մէջ-զիշերեան ցուրտը սաստիացաւ այնպէս որ ջահելների տաք արիւնը չդիմացաւ այլ ևս և խաղը վերջացաւ:

—Աղջիկներ, ասաց Քուչէն, եկեք վաղը գնանք նրոլոսանի: անստառը սպանուա (վայրի տանձ) քաղելու:

—Գնանք, գնանք, լսեց ամեն կողմից:

—Մի մի եղը բերենք ամեն մի տանից, մի երկու սայլ լծենք, ձամփի սպաշար առնենք հետներս, պանուա քաղենք և մի լսւ էլ զւարճանանք, աւելացրեց մի տղայ:

—Ով չգայ, թող նրա օրը պակսի, ասաց Քուչէն:

—Լաւ, լաւ: Լուսագէմին հաւաքւենք այս կալի մօտ և ձամփայ ընկնենք կանուխ: Միայն թէ քանի մի ծերեր տանենք հետներս:

Անպատճառ տանենք. այս, նոզառութին և Խարազառութին ուրախութեամբ կը զան և չեն մըթմըթաչ մեր գժութեան վրա:

<sup>1)</sup> Ցանդալա—վրացի գեղացի աղաւոց և աղջիկերանց սիրելի խաղն. և այս խաղը կտրանում է նրանում, որ աղջիկները և աղաները խոռվ. բերի բաժանւած միմեանց գէմ պարսաւական երգեր են երգում:

—Այդ գուք գիտէք, ասացին տղաները, իսկ մենք սայլերը կը պատրաստենք:

—Գիշեր բարի, գիշեր բարի:

—Զեզ լոյս բարի. լուերն ուստեն ձեզ: Ազջիկները միմեանց թիկունքին զարկելով վազեցին դէպի գիւղը:

Պէտք է ասած, որ Վարդիսութան գիւղը այն բաղդաւոր քունցիրից մէկն էր, որ թէն. քիչ, բայց և այնպէս զանւում է դարձեալ մեր աշխարհի զանազան կողմերում: Այստեղ ապրում էին մօտ քառասուն տնւոր հող չունեցող արքունական գեղացիք ազնաւականի կալւածքի վրա: Սրանից մի քանիսը իրանց սեփական հող էլ ունեն. այս գիւղի բնակիչները համարեա ամենքն էլ ունեոր են: Սրանց արօտատեղերի վրա բազմաթիւ կով, եզ և փոքր կենդանիներ են արածում, գեղը զարդարւած է նաշխուն սիւների վրա կառուցած տներով. կիրակի օրերով մաքուր հագնւած և ուրախասիրտ, թէ այր և թէ կանայք, լաւ ապացոց են տեղիս ընդհանուր բարօրութեան: Սիրտը շահած դիւզացիք թափում են անխնայաբար իրանց քրտինքը հողի վրա և վայելում իրանց վաստակը ուրախութեամբ:

Վարդիսութանի ճամփի վրա հայն ոտք չէ կոխել տակաւին. իսկ հրէան գալիս է այստեղ ծննդիւն և Զատկի տօներից քանի մի օր առաջ այն էլ իր փալաս-մալասը սազացնելու: Վարդիսութանցիք վազուց ի վեր վերաբնակւած լինելով այստեղ, բոլորն էլ համարեա իրար մէջ խնամութիւն և կնքահայրութիւն ունեն: Այս է պատճառը, որ թէ կանայք և թէ տղամարդիկ, առանց քաշելու, միասին ժամանակ են անցկացնում և այնպէս ջոկ-ջոկ չեն ապրում, ինչպէս ընդունւած է մեզանում առհասարակ ամեն տեղ:

## II

Արշալոյսը բացւելուն պէս նոգաձէի կալը կենդանութիւն ստացաւ: Թէե արեւ շուտով ցոյց տւեց իր երեսը, բայց չորս մատի հասուութեամբ գրւած եղեամ կար և, բացի սրանից, ցուրտը խիստ զգալի էր: Ազջիկները հնոտիներում փաթաթւած՝ կուչ էին եկել մարաքի մօտ. իսկ ողաները սայլեր էին պատրաստում: Տրոլոսանը ահագին մեծ անտառ էր, որի ծառերը մեծ մասամբ վայրի տանձենի և զառնիձենի են, և որովհետեւ Վարդիսութանը լեռնոտ էր և

խաղողի որթ չեր աճում; այս պատճառով տեղացիք աւելի օդի էն պատրաստում. հէնց սրա համար իւրաքանչիւր տարի մեծ քանակութեամբ պանտա և զառնիճ (վայրի խնձոր) են հաւաքում օդի պատրաստելու:

Սրանք ունին գիւղի ծայրում կառուցած մի երկու հատ համանապտկան օդի քաշելու «գաւողներ» և ամեն տան մէջ, եթէ ոչ հացի օդի, գոնեա լաւ տանձօդի կարելի է գտնել: Այսօր էլ համարեա թէ գիւղի ամբողջ երիտասարդութիւնը մասնակցեց պանտա քաղերուն: Ամենից վերջը եկաւ Քուչէն երեսը կարմիր—ճերմակ գոյներով շպարած և չիքիլան գլխին զցած: Այս իսկոյն և եթ նկատեցին աղջիկները և միմեանց երեսին նայեցին:

— Քա, թնչ ես այդպէս զարդարւել, աղջի, ասեց նրանցից մէկը, ուխտի հօ չենք գնում, չփնտես որ ամբողջ օրը պանտա պէտք է քաղենք:

— Ի՞նչի կը քաղեմ, պատասխանեց Քուչէն. հայրս տանձօդի չէ գործածում, ես միայն զւարճանալու եմ գալիս:

— Քա, ճար կը տրած, սիրող կը համբերի միթէ պարապնտել, քանի որմենք մեծ ու փոքր բանելու ենք կուացած, ասեց երկրողը:

Ի՞նչ էք ուղում՝ ինձանից, քա, թէ նախանձում էք, դուք էլ զարդարւեցէք:

— Սայլերը պատրաստ են, աղջիկներ, դէհ գնացէք, գոչեց Խարազառուլը: Օդի հօ շատ էք վերցրել հետներդ. առանց նրան կարող չենք շատ տանձ քաղել ձեզ համար:

— Բաւականի ունենք, դու մի՛ վախի, պատասխանեց մի ջահիլ տղայ և եղներին ճիւղուցեց: Սայլերը տեղներից շարժւեցին և բոլորն էլ հետևեցին նրանց: Սկզբում ամենքն էլ լուռ ու մունջ հետևում էին սայլերին և կարծես թէ հիսնում էին նոր զարթող բնութեան հրաշալիքներով. իսկ յետոյ լսւեց միաձայն գուսաներդ, որը վերջապէս ընդհանրացաւ: Ճամփ ութին մեր սայլերը արդէն մոտան բրոլոսանի անտառը: Հոյակալ էր ահազին անտառը այս պքանչելի եղանակին, ուր տիրում էր կատարեալ լոռութիւն, նոյն իսկ հովը չէր շարժում բարձրաբերձ ծառերի ճիւղերը: Ոչ մի թռչուն չէր գայլացը այս միայնութեան մէջ և չէր տալիս կենդանութեան նշոյլ անգամ: Պանտացով և գառնիճով լիքը մնտառը

դեղնել էր ամբողջովին, որի տակը տրորած և թառամած խոտի վրա՝ ծաղիկների փոխանակ թափւած էին զեղին պանսոաներն և կարմիր խնձորներ։ Մեր ճամփորդները ընտրեցին մի մեծ կաղնի և նրա տակը մեծ կրակ վառեցին։ Արձակեցին եղներին սայլերից և սկսեցին նախաճաշիկ պատրաստել։ Եռւով բարձրացաւ խոզենու խորովածի հոտը և ամենքը նստեցին կրակի շուրջը։ Աղջիկները ամբողջ հացեր թափեցին խոտի վրա. ամուր եփած հաւկիթները, դեղին պանիրը և օղիով լիթը շիշերը զարդարում էին բնութեան բացած սփոռոցը։ Ամենքը լաւ ախորժակով կերան, մի քանի անգամ եղջեւրով օղի վայելելուց յետոյ սկսեցին վիճաբանել։ Նաև խօսեց սարից-քոլից և կարծես տեղից վերկենալ ոչ ոք չէր մտածում։ Բոլորի գէմքերը գոհունակութիւն էին արտայայտում. միայն Քուչէն ծացրին նստած մոռթն էր կախել և սրտատրով ինչ որ բանի էր սպասում։

— Բաւական է, որդիք, ասաց Խարազառուլը և ոոի կանզնեց։ Այդպէս որ երկար բարակ խօսում էք, պանտէն հօ ինքն իրեն չի քաղցի ձեր քթոցներում։

Ամենքը, շուտով վեր թռաները բարձրացան ծառերի վրա թափ տալու. իսկ աղջիկները սկսեցին հաւաքել։ Երկար ժամանակ քաղը շարունակեց եռանդով, քանի քանի քթոցներ լցւեց բերնէ բերան, բայց ոչ ոք բան չէր ասում։ Այն ինչ Քուչէն դէս ու դէն էր ընկնում առանց դործի և անդադար պանտա էր տրորում։ Երեկոն արդէն մօտենում էր, արեւ խիստ թեքւեց դէպի մուտքը, սայլերը լաւ բեռնեցին և մշակներն վերջացրին քաղը։

— Արդէն բաւական է, իս ու իմ Աստած, լաւ աշխատեցինք, աղջիկներ, դուք էլ նոյնպէս, տղերը, ասեց նոզառուրը։ Այժմ մի կտոր հաց ուտենք և ճամփայ ընկնենք, թէ չէ կը մթնի և ցուրտը խիստ կը նեղացնի մեզ։

— Լաւ է, լաւ, սանահայր։ Դեռ մի փոքր իրիկնահաց ուտենք և յետոյ ճամփայ ընկնենք։ Իրիկնահացի համար նորից կրակ վառեց և երբ նրա շուրջը նստեցին, Քուչէն անհետացել էր։ Նատ փնտրեցին ամեն կողմը. բայց իզուր։ Ուրիշ ճար չկար, առանց նրան հացի նստեցին. այս անգամ հացկերոյթը այլ ևս աջնպէս

ուրախ չէր ինչպէս առաւօտեան: Քուչէի բացակայութեան պատճառով ամենքը ակամաց ախրում էին:

Բոլորը շտապով տեղիցը ելան և ճամփաջ ընկան:

—Վայ, կուրանամ ես, ծնկները ծեծելով ասում էր Նողառուրը, էլ ինչ պատասխանեմ նրա կուրացած մօրը. չէ որ ինձանից կը պահանջի:

—Ի՞նչի կը պահանջի քեզանից, ողորմելի, պատասխանեց Խարազառուրը. նա միշտ այդպէս գլուխ առածն է և մենք ի՞նչ մեղաւոր ենք:

—Միք վախի, այ մարդիկ, նա ճամփէն չի կորցնի, այժմ, ով գիտէ, տանն էլ է նստած, աւելացրեց մի ուրիշը:

Այս խօսակցութեան ժամանակ սայլերը դուրս ելան անտառից և ուղիղ Քուչէի մօտ կանգնեցին. նա կոնակի վրա պառկած՝ իր ընկերուհիներին էր սպասում: Նրան տեսնելուն պէս բոլորը բացականչեցին և սկսեցին կշտամբել. «ի՞նչ Աստած խռովեց քեզ, ի՞նչի մեզանից գողունի փախար. կարծեցինք թէ արջերը մի տեղ քեզ կերած կը լինեն»:

Քուչէն, չիստիւկովին<sup>1)</sup> մի կողմը թեքւած, կարմրած թուշերով և ցոլուն աչքերով, լնկել էր խորը մտածման մէջ գլխակոր. նա կարծես թէ այստեղ չլինէր և նրան վերաբերելիս չլինէին ասած խօսքերը: Այս շփոթ և աղմուկի միջոցին երեաց և Երկեղուն, որ այսօրւայ ճամփորդութեան մէջ մասնակից չէր եղել:

—Բարի աջողում ձեզ, տղերը, մարալ եզս հօռ: մի տեղ չէք տեսել, հայ:

Այս հարցի դէմ, պատասխանի փոխարէն, լսեց սարսափելի անվերջ ծիծաղ. — տեսել ենք, տեսել, լսում էր երբեմն և անվերջ ծիծաղը դարձեալ շարունակում: Իոլորն էլ փորները բռնել էին և աչքերից արտասուք թափում շատ ծիծաղելուց: Թէդօն և Քուչէն միմեանց նացեցին և հասկացան, որ իրանց գաղանիքը յայտնի եղաւ բոլորին:

—Վայ ձեզ ու Աստծու կրակ, ասեց Երկեղուն զայրացած և

<sup>1)</sup> Կլիսաղարդի պարագաներ:

շարունակեց իր ճամփէն. իսկ մնացեալները խիստ ծիծաղից յոդ-նած գնացին միւս կողմը:

Միւս օրն և եթ ամբողջ գիւղում տարածւեց այս լուրը. առաջացաւ մի սարսափելի բամբասանք և դղրդոց: Վարդիսուբանը պարծենում էր իր բարի վարք ու բարքով, և Բնչակէս եղաւ, որ մի դէս ընկած ծառալող տղայ ցեխ քսեց ամբողջ գեղին: Ի՞նչ ասել կուզէ, որ այս լուրը յայտնեցին և Քուչէի հօրն ու մօրը: Այն օրից ի վեր էլ ոչ ոք չտեսաւ գիւղում Քուչէին: Պատմում էին թէ հայրը այնպէս ծեծեց նրան, որ ստիպւեց անկողնում պառկել:

Միւս օրն և եթ Երկլեզուն մարդ զրկեց Գոգիացի մօս, բայց սա, իր աղջիկը տալու փոխանակ, մահ սպառնաց նրան: Սրանից յետոյ Երկլեզուն անհետացաւ գիւղից: Ասում էին, որ միլիցիացի մէջ զինւոր գրւեց և գնաց պատերազմելու:

### III

Եկաւ նոյեմբեր ամիսը և գիւղական հարսանիքները սկսւցին: Վարդիսուբան բերին քանի մի հարսներ և ճամփու գրին բաւական շատ աղջիկներ. բայց ոչ մի հարսանիքում ոչ ոք չէ տեսել խեղճ Քուչէին: Բարիկենդան գիշերը անսպասելի կերպով գիւղացիք իմացան, որ Գոգիան հարսանիք ունի և այս երեկոյ Քուչէին ճամփում է: Ումն էր տալիս. Երբ կարողացաւ այս բանը գլուխ բերել. այս ոչ ոք չկարողացաւ իմանալ: Երեկոյեան մթին գիւղից դուրս գնաց օժիտով ծանր բեռնած սայլը և ճանփայ ընկաւ: Հարսին չէին հետեւում ոչ մակարներ, ոչ խաչեղբայր, ոչ քուրացեղ. չէր կրում զլիսի վրա ոսկեզօծ պսակ և սրանից կախ ընկած ծոպերը չէին զարդարում նրա շնորհալի վիզը: Կողքին նստած էր բաւական ալեոր, միջին տարիքով մի մարդ. սա մի յիսուն տարեկան կոարւած մարդ էր, այբի և չորս զաւակի հայր: Ընդամենը գեռ վեց ամիս չէր լրացել, ինչ որ սա այրիացել էր, բայց իր դոցը մի նայող կինմարդ պէտք էր, և բաղդը Քուչէին հանդիպեցրեց:

### IV

Անցաւ վեց ամիս, մայիսեան երեկոներից մէկն էր, անձրեւում էր մեղմաբար Վարդիսուբանի շրջակայքում, Գոգին և նինոն

կրակի առաջ նստած էին. Նինոն կերակուր էր եփում, իսկ Գոգիան ծխամորձը ձեռին նայում էր վառւող կրակին, սրա երեսի վրա նկատելի էր մի տեսակ թախիծ և նեղութիւն։ Այն միջոցում կամացուկ բացւեց դարբասի կաղնեաց ծանր դուռը և երկու անձ ներս եկան։ Սկզբում տան տիկինը չնկատեց հիւրերին և այս վերջիններն էլ ձայն չէին հանում, որպէս զի իրանց չճանաչեն։

Նինոն շուտով մոմ վառեց և սարսափելի ձայնով կանչեց, երբ միջնասիւնի մօտ կանգնած տեսաւ իր աղջկան գլխակոր և նրա կողքին զերքը այլակերպւած փեսացին։ Գոգիան էլ ոտի ելաւ։

Այս ի՞նչ է նշանակում, հարցը գոգիան փեսացին։

— Դուն այդ աւելի լաւ պէտք է զիտենաս քան թէ ես, պատասխանեց նա։ Ասուած զործիդ այնպէս յաջողի, ինչպէս դուն ինձ խարեցիր, որդիկերանցս առաջ պարտական մնաս յաւիտեան։ Մընչ օրս պատւաւոր մնացած օջախիս անունը խայտառակեցիր և կրակս մարեցիր։ Ընդունիր պատւաւոր աղջկանդ, աշխատիր հանգիստ ծնի, որ անարատ անդրանիկը չվնասւի։

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ, գոչեցին միասին կինն և մարդը։ Քուչին աւելի ցած կախեց զլուխը։

— Սժիար, աւելացրեց փեսան, ինչ որ տարել եմ, անսպակաս յետ բերի. մնաք բարով։

Գոգիան և Նինոն մնացին այնպէս ասկուշ կորած և բերանները բաց կանգնած, չէին էլ կարողանում պատասխանել։

Փեսան շոապով դուրս գնաց, հեծաւ իր ձին և մի ակնթարթում անյայտացաւ մթութեան մէջ։ Քուչին այնտեղ և եթ սիւնի մօտ նստեց և սկսեց գառնապէս հեկեկալ։ Սրա լացը դուրս բերեց ծնողներին մտածմունքից, որոնք գազանների պէս յարձակւեցին Քուչի վրա։ Կարելի բան է արդեօք, որ իրանց անւանարկ և արատաւորած աղջիկը վերադառնայ հայրական օջախը. ի՞նչ պատասխանեն մարդոց կամ ի՞նչ երեսով պէտք է նայէին հարեաններին։ Հպարտութիւնից կատաղած, սրանք անողորմաբար տանջում էին Քուչին։ Երես, ձեռքեր, ծամեր, ամենը մի խօսքով, ի՞նչ որ ծանկում էին, քըքըում էին անխիղմ կերտով։

Ահա քեզ, տնաքանդի աղջիկ. դրութիւնդ զիտէիր և մեզ

բան չեիր ասում; հայ Գոգիան կատաղած բերանից փրփուր էր թափում և քացիներ հասցնում նրա կողքերին:

—Մեռիր, մեռիր, քըքըւած, ազդակս խայտառակւած էլ ի՞նչիս ես հարկաւոր. մեռիր, ասում էր նինօն և նրա մազերը փետում:

Լուած, թէ նւաղած, տարածւել էր Քուչէն գետնի վրա և անմուռնչ տանում էր իր ծնողների ձեռքից ելած տանջանքը: Վերջապէս, երբ սրտները հանգստացան, առան երկուսն էլ նւաղած աղջկան և ներս գցեցին հորթանոցում. փակեցին դուռը և նորից կրակի մօտ նասուտեցին:

Նինօն սկսեց բարձրածայն լալ, իսկ Գոգիան իր գլուխն ու երեսն էր ծեծում: Այս աղմուկի վրա հարեանները ներս եկան. սկսեցին պատճառը հարցնել, մսիթարել և բարձր ձայնով խօսել: Ամբողջ տունը լցւեց գիւղի բնակիչներով:

Մեծ ու փոքր աշխատում էին մսիթարել հորն ու մօրը և անէծք կարդալ անբախտ աղջկան: Բայց ոչ մէկի մէջ չծագեց մարդագասէր զգացմունքը, որ գնար, տեսնէր ցղի աղջկան և օգնութիւն հասնէր որ և է կերպով. բաւականին ուշ ցրեցին Վարդիսուբանցիք այսպիսի անսպասելի դէպքին հանդիսատես լինելուց ցետոյ: Նինօն և Գոգիան էլ, եթէ ոչ քաղցր, գոնէ ծանր քնով խորդում էին և չիմացան թէ ի՞նչ ողբերգ էր կատարւում իրանց մօտիկ տեղում:

Երբ Քուչէն ուշքի եկաւ, նայեց իր շուրջը և գտաւ իրեն սարսափելի մթին մէջ, անծածկ խոնաւ գետնի վրա, փոքրիկ հորթերի և երինջների մօտ: Հեռու դրիշակից լոյս էր երեռում և մի տեսակ աղմուկի ձայն էր գալիս: Սա ապշած լսում էր, որ մեծ ու պստիկ անիծում էին իրան: Ոչ մի սրտացաւ, ոչ մի մսիթարիչ չունէր ամբողջ գիւղում: Յուսակտուր աս լնկաւ գետնի վրա և քիթ-բերանից արիւն ժայլմքեց: Սա երեք օր անօթի, այսօր քառասուն վերաս ճամփայ կտրեց ձի հեծած. այս ամենի վրա տւելացաւ այսօրւայ սե ու մութ դժբաղդութիւնը, սպառեց նրա ոչքը և նորից նւաղեց: Լուսապէմին անտանելի ցաւ զգաց Քուչէն. արգանդում դժոխացին կրակ էր վասւում և տոչորում նրան,—ի՞նչ անէր: Ի՞նչ վայ տամ անբախտ դլիսիս, տնքում էր ողբալի կերպով Քուչէն և գտուն կսկիծից ձեռներն էր կոտրատում: Մի թոկ էլ

շունիմ, որ կախւեմ ու ազստւեմ՝ այս անասելի տանջանքից։ Բաւական է, աւելին չեմ կարող տանել։ Օգնեցէք, քրիստոնեացք, օդնեցէք։ Այս խօսքերի վրա նորից ուշաթափւեց։ Երբ ուշքի եկաւ՝ հորթանոցում ներս էր լնկել արևի ճառապայթը և նրա ողբալի դրութիւնը լուսաւորում էր։ Կողքին լնկած էր մի փոքրիկ կապտած էակ, որ մշառում էր ցաւալի կերպով։ Քուչէն վրա ընկաւ խեի պէս փոքրիկին, շատապով կրծքին սեղմեց, համբուրեց գորովալից գգւանքով և յետոյ նորից տափովը տւեց նրան ուժգնապէս քարայատակի վրայ։ Երեխան մի անդամ ձաց միայն և ձայնը կտրեց յաւիտեան։ Հէնց այս միջոցում հորթանոցի դուռը բաց եց, ներս եկաւ մի դրացի պառաւ. և տեսաւ այս ամենը։

## V

**Ուշաթափ Քուչէին մի ժամից յետոյ դուրս բերին հորթանոցից։ Ամբողջ երեք շաբաթ նրա կեանքը մազից էր կախւած։ Նինօն և Գոդիան դառն օրեր շատ անցկացրին սրա անկողնի մօտ։ Մրանք նոր հասկացան իրանց մեղապարտութիւնը, նոր զարթեց սրանցում ծնողական զգացմունքը դէպի իրանց սիրելի միակ աղղիկը։ Նոր էին հասկանում որ իրանք և զարձեալ իրանք էին որդու կորստեան պատճառը, և եթէ այնպէս չափազանց հապարտ չլինէին, Քուչէն այսօր մի բախտաւոր և օրինաւոր կին կը լինէր։ Միայն այսօր են հասկանում այս և միմեանց հանդիմանելով ողբում էին. բայց ուշ էր արդէն ապաշաւելլ։ Սրանց միակ աղջիկը ջոկւած էր հասարակութիւնի, և բախտը յաւիտեան կործան ած։**

Քուչէն առողջացաւ, բայց վայ այն առողջանալուն. որովհետեւ աւելի սև օր էր սպասում նրան։ Երբ ոտի կանգնել կարողացաւ, չգիտենք որի շնորքովն էր, այստեղ քննիչ եկաւ։ Գերեզմանից հանեցին Քուչէի երեխան. բժիշկը հաստատեց որ երեխային զօրով են սպանել և Քուչէն, իբրև մահապարտ, բերեց քննիչի մօտ։ Մրանում չէր մնացել առաջւայ առողջ կազմը և շնորհալի գեղեցկութիւնը. սա նոցն իսկ չէր ներկայացնում այն աղջկայ շւարքը, որ իննը թէ տասն ամսից առաջ այնպէս զւարթ կերպով սլար էր բոլորում։ Տժգոյն, մէջքակոր, մարտ աչքերով, հազիւ էր կարողանում կանգնել և շարունակ օրօրւում էր։

—Նստիր, որ չես կարող կանգնել, ասաց քննիչը. Բնչի գործեցիր այս սարսափելի յանցանքը:

—Այն պատճառով, որ...

—Ի՞նչ պատճառով: Ասա ամենը ուզիդ. այս կարող է պատիժդ թեթևացնել:

—Այն պատճառով, որ ես ուզեցի պատժւել, նրա համար որ ես ուզեցի զերծ պահել նրան անբախտութիւնից և նրա մահով վերջ տալ թշւառ կեանքիս: Յանկանում եմ ինձ որ սպանէք, ազատէք դառն տանջանքներից: Սպանեցէք ինձ, պարոններ, ի սէր Ասածու, սպանեցէք: Ել ապրել չեմ ցանկանում:

—Ոչ, ամեն բան ճշմարիտ պէտք է ասես:

—Երեխաս ես սպանեցի. սրանից աւել չեմ կարող ասել և ասելու էլ բան չունիմ: Խեղուցէք ինձ, աղաչում եմ, կախուցէք ինձ:

Ներկայ եղողները, ամենքն էլ հաստատեցին, որ Քուչէն սպանեց իր որդուն զետնին զարկելով: Բայց Բնչը ստիպեց նրան ացլու վարելու, այս մասին ոչ ոք մի խօսք չասեց:

## VI

Երբ Քուչէն տարան Թիֆլիս և բանտարկեցին, Նինօն և Գողիան առան հետները ինչքան առձեռն փող ունէին և վազեցին շատապով քաղաք: Նատ աշխատեցին իրանց աղջկան աղատել. բայց ի զուր անցաւ նրանց ջանքը. արդարադառութիւնը անկաշառելի է և Քուչէն տաս տարւայ ժամանակով աքսորի դատապարտեցին դէպի Սիբիր: Դատարանի դահլիճը կատարելապէս դատարկ էր. ընդամենը տասը մարդ միայն ներկայ էին այս գործի քննութեան:

Ասէք, ինդրեմ, Բնչ մի նշանաւոր բան էր մի խեղճ դիւղացու աղջկայ գործի քննութիւնը: Եթէ Քուչէն հարուստ ընտանիքի աղջիկ լինէր, այն ժամանակ փաստաբանները ատեանի առաջ իրանց ճարտասանական հմտութիւնը ցոյց կը տալին, այն ժամանակ արդարադառութիւնը աշքի առաջ կունենար շատ մեղմացնող հանգամանքներ: Այն ինչ հիմա Գողիան հրաւիրեց մի ինչ որ կասկածելի ապուկանտ» փաստաբան, որ ատեանի առաջ գրդում էր և, պաշտպանելու փոխարէն, որովհետեւ ինքն էր հրաւիրւած, ներողութիւն էր ինդրում:

Ներողնեթիւն։ Ներումն հայցել այնտեղից, ուր մարդկացին սիրով քարացած է և որաեղ ուրիշների վիշտը գւարճութեան առարկայ է մարդոց համար։ Փուչէն բանսարկեալի շորերով և գըլ-խի շալը մինչի աչքերը վար թողած, նստել էր անզգայ կերպով։ Նա այսօր միայն երկու անգամ վեր նայեց. մեկ երբ որ վճիռը կայանալուց վերջը նինօն և Գողիան սկսեցին լալ—սարսափելի նայւածք էր այն։ Այն հայացքում և գառը ժայիսի մէջ նկատում էր կատարեալ ատելութիւն և զգւանք ծնողների անտեղի թափած արտասուքի դէմ, որ այս դրութեան հասցրին իրան։ Երկրորդ անգամ նայեց և ժայտաց դառնապէս, երբ երկու ու ինակիր զինւորներ իջեցնում էին նրան դատարանի սանդուղքներից. այնող մի քնչում կանգնած էր մի գունատ, ցնցոտիներում փաթաթւած, մի կռնանի ջահիլ տղայ և ձեռքը մեկնած ողորմութիւն էր խնդրում։ Փուչէն ամբողջ մարմնով սառստաց. կանգ առաւ րոպէապէս, թափ տւեց անմիտիթար կերպով գլուխը և էլ չկարողացաւ զսպել իր արտասուքը։ Կարելի է, չիշեց այն բռնէները, երբ նրանք անշափ բազմաւոր էին սիրով. և այժմ նոյն իսկ այն սիրոյ և մարդկացին լիմարութեան պատճառով գլորւած էին անբազութիւնն անդունդը։

Սրանք մի տարի առաջ, կեանքով լիքը, գեղեցիկ և կտրիճ, սիրահարւած գուրգուրում էին միմեանց և մարդու սիրու լցնում ուրախութեամբ. իսկ այժմ նոյն մարդոց շնորհով յաշմանդամ եղած անշատում էին հասարակութիւնից։ Փուչէին տարան։ Թէզօն վագեց շապառվ նրան զինւորների ձեռքից ազատելու. բայց նայեց իր կտրւած թւեին, ժպտեց դառնապին և անմիտիթար սրտով վեր նայեց դէսի երկինք, կարծես, մեկին յանդիմանելու նպատակով։

## ՄԱԿՈՅՎԵ

ՇԱՆ թ. ի

Մակոյին է խըրած  
Օքօրուն ափին,  
Անձնատուր եղած  
Իր ամուր կապին:

Առ ագաստը թոյլ,  
Կախւած մեղկօրէն,  
Կը դողաց անդուլ  
Հոյի սարսուռէն:

Թիերն ալ, յոգնած  
Դադարէն երկար,  
Բաց ծովուն դիմաց  
Կը նայեն իրար:

Եւ զըժգոհ, խոհուն  
Թէք կայմը ամուր  
Կը զիտէ հետուն  
Կարօսով արխուր:

Ու կըմբռնեմ և —  
Նմուն ալ կազմ, անահ,  
Անձկոտ սըրտիս ողէս  
Բաց ծով կը ցանկայ:

Կ'ուզէ սաստկակոծ  
Կեանք ու փոթորիկ.  
Մինչ ափին անգործ  
Կ'երերաց լըռիկ...

# Ա Ն Ն Ա

(ՈՒՍՍՆՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ

## I

Եւ որովհեակ իտառացել եմ քեզ, ահա պատմում եմ:  
Գուցէ պատմածս քեզ այլանդակ թւի, սակայն պատմում եմ  
այն ինչ որ եղել է և, Աստած է վկաց, որ շատ էլ մի մեծ հա-  
ճոցը չեմ զգում դրանով. անցեալը, մանաւանդ հին վերքերը քւր-  
քըրող անցեալը, պեղել՝ կէս վիրաւորւել է նշանակում:

...Պարիզ էի գնում. այն ժամանակ ես իրաւաբանութեան ու-  
սանող էի: Ամառը մեզ մօտ Կովկասում անցկացնելուց յեաց հոկ-  
տեմբեր ամսին վերադառնում էի. դասախոսութիւնները շուտով  
սկսւելու էին և դրա համար էլ հազիւ Վիէննայի մի կայարանը  
հաստած, իսկոյն կառք բռնեցի դէպի միւս կայարանը գնալու. այդ-  
պէս անելու տափեցի նաև մի մալարուս ընկերունուս, որ նոր էր  
գնում. Եւրոպա և Օդեսայում ինզրել էր ինձ օգնել իրան:

Հասնելով Վեստբահնը<sup>1)</sup>, մի անկիւնում ցած դրի բեռս, խնդ-  
րեցի ընկերունուս սպասել և վազեցի տոմսավաճառի մօտ երկու-  
սիս համար էլ տոմսակ առնելու:

Ահա այստեղ էր որ ծանօթացայ Աննայի հետ:

Կռթնած տոմսավաճառի առջեի կայանքին սպասում էի

1) Վիէննայից դէպի արևմուտք տանող երկաթուղիների կայարանը.

իմ հերթին և մոքով Պարիզ էի. ոչ ոքի ու շաղրութիւն չի դարձնում երբ տեսայ որ մէկը ինձ հարցնում էր՝

—Ներեցէք, պարո՞ն, Պարիզ էք զնում դուք:

Դառնում եմ. մի ոռւս օրիորդ էր, թեով յենած կայանքին:

Երկարահասակ էր, սիրուն. կապտագոյն աչքերը խիստ արտացայտիչ էին, մի ամբողջ խոր աշխարհ կար նրանց մէջ... գէմքի վրայ խաղում էր մանկական խիստ քաղցր, գրաւիչ ժպիս. թշերը կարմիր էին, զողորիկ: Մազերը կարճ և բաց թողած. երկու քունքերից դէմքի վրայ իջել՝ ծածանում էին երկու խոպո զներ. գլխին ունէր մէջ տեղից ակռացքած՝ տղամարդի մի փափուկ գլխարկ, որ սքանչելապէս սազում էր նրան:

Նարժւածքների մէջ թէև կար ոռւս ինտելիգէնսո կնոջ, մանաւանդ ուսանողունու, ազատութիւն, բայց այդ այն յախունն, անքնական շարժւածքներից չէր, որոնք իրանց այլանդակութեամբ ինձ միշտ անապնելի են եղել:

Նա պարզ էր և բնական. ոչ մի կապկացին վարժունք, ձեռքերով օդ սղոցել, բարձրացացն կեղծ քրքիչ, բռնազբօսիկ միմիկաներ—բոլորը՝ տաղառամիտ կինո ձեւանալու համար... նա դրանցից չունէր. ինչպէս յետոյ էլ նկատեցի, մինչեւ իսկ ոչ վրազեօր էր և ոչ էլ ամենադէտ:

Յենւել էր կացանքին, ժպում էր և պատասխանիս սպասում:

Նայեցի նրան մի վայրիկան. չեմ լիշում ինչեր անցան իմ մէջ, բայց զգացի որ այդ արարածը ձգում էր ինձ դեպի իրեն, հմայել էր ինձ:

—Այն, օրիորդ, ասացի ես ազնիայ պէս կարմրելով—Պարիզ եմ գնում:

—Դուք ուստանաղ էք, ինչպէս տեսնում եմ, խօսեց նա—իսկո՞ն գուշակեցի... մեր երկրիցն էլ էք, քանի որ ոռւսերէն էք խօսում... ասացէք ինդրեմ քանի՛ արժէ արդեօք տոմսակը այսուղից մինչեւ Փընէւ, գիտէք արդեօք:

—Ժլմէւ... այն... 38 վրանկ արժէ, բայց դուք Պարիզ էք ուզում գնալ թէ Փընէւ:

Մանուկի պէս գլուխը շարժեց, խոպոպէքը եռ ձգեց և իր դիւթիչ ձայնովը պատասխանեց:

—Ըմ... այսինքն... զիտէք ինչ, իսկն ասած ես ինքս էլ դեռ չգիտեմ ուր գնալ:

Ի՞նչ եղուսութիւն էր այդ. ահազին ճանապարհից մինչև Վիշննա էր եկել և չգիտէր ուր գնալ:

Մօտեցայ նրան և խօսակցութիւն սկսեց մեր մէջ. սկսեցինք զբոսնել սրահի մէջ:

—Եյսպէս ուրեմն, ասացի ես—չգիտէք դեռ թէ ուր էք գնալու:

—Ո՞չ այդպէս, պատասխանեց—գիտեմ որ գնալու եմ բժշկութիւն սովորելու. բայց ահա հարցը... դուք ինչ էք կարծում, մրտեղ է լաւ դրւած համալսարանը, Ժընէւ թէ Պարիզ:

Չգիտէի ինչ պատասխանել. մի բովէ լուս կեցայ. բժշկական ուսանող չէի և Ժընէւի մասին էլ համարեա թէ ոչինչ չգիտէի:

—Գիտէք ինչ, պատասխանեցի վերջապէս—զուք մի դժւար հարց տւիք. իմ կարծիքով միշտ Պարիզումն է, ուր ամեն ինչ լաւն է... բայց ես ոչինչ չգիտեմ բժշկական ֆակուլտետի մասին... գիտեմ միայն որ ունենք աշխարհուակ պրոֆէսորներ, որպիսիք են Շարկօ, Ռիբօ, Պիէր Ժանէ...

Կարծես թէ ուզում էի համոզել որ ինձ հետ գար: Այդպէս էլ էր. չէի ուզում որ հեռանար ինձնից: Իմ առարկութեանս վրայ օրիորդը սկսեց մտածել, իսկ ես, զգալով յանկարծ որ կարող է նա գուշակած լինել իմ «ցետին միտքը», ուզեցի սխալ ուզութեան վրայ զնել նրան և մի քիչ էլ ինքս ինձ մօտ արդարացնել:

—Սակայն օրիորդ, աւելացրի քիչ յետոյ—դուք գիտէք էլի, ես չեմ ուզում պատճառ դառնալ, որովհետեւ... ասում են որ Ժընէւի համալսարանն էլ լաւ է... բայց Պարիզը, զիտէք... Պարիզը ուրիշ բան է...

Աշխատում էի որչափ կարելի էր անտարբեր ձևանալ:

—Իսկ եթէ, շարունակեցի սասնութեամբ—ես ուզում եմ ուսանել, ես տուրիստ չեմ:

—Ուրեմն Պարիզ եկէք, վրայ տւի իսկոյն—չմոտ անհամար ասելու նաև, որ Պարիզումն էլ էժան կարելի է տպրել... այն, բաւական էժան:

—Օրինակ, քանիսով կարելի է ասորել, հարցրեց Աննան:

Անունը Աննա էր. այդ ես իմացաւ երբ սկսեցինք զբօսնել. նա անւանեց իրեն և իմ անունս էլ ինքը հարցրեց:

—Այսպէս, պատասխանեցի նրա հարցին—ամսական ամենաքիչը 50 ռուբլի պէտք է, մօտ 125 ֆրանկ:

—0', միթէ, բացականեց նա և կանգ առաւ:

Կարծեցի թէ ուրախացաւ էժանութեան վրայ. ես էլ ուրախացայ, մտածելով որ ահա համոզւեց ինձ հետ դալու:

—Ես կարծում էի, աւելացրեց նա—որ ամսական 30 ռուբլիով կարելի էր ապրել, այդպէս էին ասել:

—0', գոչեցի ես—30 ռուբլի, այսինքն 75 ֆրանկ և ոչ իսկ 100—դա անկարելի է:

—Եւ սակացն ինձ այդպէս ասացին, վերջացրեց նա տխուր շեշտով—ինձ ասացին որ Պարիզումն իսկ այդքանով կարելի էր ապրել:

—Շատ կարելի է, մոռմացի ես—եթէ նեղ ապրւի:

—Ուրեմն կարելի է, ժպտեց նա երեսիս նացելով—ես շուաց չեմ, շատակեր էլ չեմ. ես միայն սովորել եմ ուզում:

Լոեցիր Վճռողապէս ասւած այդ խօսքերը նրա կամքի ոչի շափն էին ցոյց տալիս և ես հիացել էիր:

Նա էլ լոեց և մտածութեան մէջ ընկաւ: Սկսեցի աչքիս տակով քիչ զննել նրան: Սիրուն գողտրիկ գէմքի վրայ, ունքերի մէջ տեղում, գոյացել էին երկու ուղղահաջեաց ակոսներ, իսկ կապտագոյն բիբերը բարձրացել: Այդպէս էր մտածում Աննան:

Նայում էի և զննում նրա մետաքունման դորշ մազերը, սիրուն վայելու հասակը, վարդագոյն աննման շրթունքները, որոնք վարդի թերթերունքների պէս բացւել՝ երկու շարք առողջ ատամներ էին ցոյց տալիս:

Լիովին դրաւում էի նրանով, զգում էի որ այլ ևս նրանից բաժանւել չէի կարողանալու և—մի գիտէր—պատրաստ էի ինքս Ժլնէւ գնալ, եթէ նա Պարիզ գալու չլինէր:

Մի քանի բոսէ մտածութիւնից յետոյ, յանկարծ կանգ առաւ նա, արագութեամբ հանեց գրալանից գրամագանակը, որ լիքն էր զրամով, աւեց ինձ և ասաց.

—Խնդրեմ՝ երկու տունակ դնեցէք մեղ համար:

## —Պարիզի:

—Այս, Պարիզի. մեկն էլ ընկերուհուս համար, որ ահա ցածում սպասում է. առեք և բերեք ինձ, ես այնտեղ կը լինեմ:

Ընկերուհին Վարշաւացի մի կաղ ոսուհի էր (աւելի շուտով հրէուհու էր նման). դժգոյն-հիւանդու, ձկան պէս լուակեաց. բացի պէտք եղած, բուսական կեանքի վերաբերեալ, բառերից, նա ոչ մը խօսք չէր արտասանում. ամբողջ օրը վագոնի լուսամուտի մօտ նստած, լուռ լսում էր մեզ, գուրսն անդամ չէր նայում մեզ հետ, երբ մենք յաճախ հիանում էինք լեռնային տեսարաններովը; Խելօք աշքեր ունէր, որոնք անգոյն և անփայլ՝ ծածկում էին սպիտակ ակնոցի տակ: Խղթում սպատկառում էի այդ աղջկանից. ինձ թւում էր գիտուն, որովհետեւ ես յաճախ մտածել եմ, որ ճշմարիտ գիտունները նրանք են, որոնք ամենից աւելի լոել գիտեն. բայց, այդ պիսի գեպքում չէ որ համբերը գիտուններ են գուրս գալիս:

Մենք, ես ու Աննան, ոչ համբեր էինք և ոչ էլ գիտուններ, այնպէս որ ամբողջ ճանապարհի ընթացքում խօսակցում էինք: Ինչի մասին ասես որ չխօսեցինք: Ակած սոցիոլոգիականից մինչև դիտական հոգեբանութեան ամենախոր հարցերը, մանաւանդ սպիրիտիզմի մասին: Բաւական վիճեցինք այն հարցի մասին, թէ ի՞նչ դեր են խաղում՝ բնական գիտութիւնները սոցիոլոգիական հարցերի մէջ: Աննան նրանց գերը ըմբռնել չէր կարողանում (ես չէի զարմանում, որովհետեւ համալսարանի մէջ այդպիսի պրոֆեսորներ անդամ կացին): Ես աշխատում էի նրան ըմբռնել տալ, խօսելով էւոլյուցիացի, դարւինիզմի, լամարկիզմի և այն մասին:

Աննան շատ կարպացել էր, բայց հարցերից՝ ընդհանուրացումն գոյացնելու գեռ չէր հասել, մի քի: էլ սխալ ուղղութեամբ էր քայլել: Ճշտութիւնը նա նշմարում էր. բաւական էր նրան մի քանի կտրուկ հարցեր տալ, բերել նրան ճանապարհի վրայ, մի մղում (impulsion) —և ահա այդ հաշալի սրամութեամբ աղջիկը այնպիսի խորաթափունց եղանակացութիւնների, այնպիսի առողջ վճիւնների էր համանում, որ ինձ զմայիցնում էր: Նրա պակասութիւնը միայն այն էր, որ հեշտութեամբ էր կորցնում մտածութեան թելը, եթէ մի դիպւած խախտէր նրան: Այդ իսկ պատճառով էլ նա սաստիկ նեղանում էր, եթէ ես միջահատում էի նրա գատողութիւնը կամ

չէի կարողանում իսկոյն ըմբռնել թէ ի՞նչ է ուզում ասել:  
—Խնդրեմ, ասում էր նա նեղացած—գերմանացոց պէս եղէք,  
մի՛ միջամտէք ինձ և սպասեցէք մինչև որ ես կատարելապէս վեր-  
ջացնեմ ասելիքս:

Բայց ինքն իսկ չէր պահպանում իր խրառը, երբ ես էի խօ-  
սում: անդադար ստիպում էր ինձ ներողամիտ լինել իր վերաբե-  
րութեամբ:

Մեր խօսած լիգու յատկութիւնն էր դրա պատճառը. իսկոյն  
հասկանում էինք միմեանց, գետ նախադասութեան կէսը չհասած:  
Գերմանացիք սպասում են մինչև վերջացնելլ, որովհետեւ ուրիշ  
կերպ անել չեն կարող. նրանց լեզուում՝ նախադասութիւնը կարող է  
լիովին հակառակ մոքի փոխւել՝ վերջումը մի խօսք միայն դնելով.  
մի ուժ կամ ուժականէ որ ամբողջ նախադասութեան դրա-  
կան միաքը բացասականի կամ ներկայ ժամանակը անցեալի  
փոխւի:

Այսպէս, Աննայի հետ ամբողջ օրը խօսում էինք: Աւելի շատ  
խօսում էր նա քանի թէ ես պատմում էր ամեն բան. իր երկրի  
մասին, իր մուգրութիւնների մասին. յետոյ հարցնում էր ինձ  
Պարիզի ուսու ուսանողների կեանքը և երբ իմացաւ որ ես հրէաց  
չեմ, այլ հայ, ծիծաղելով ասաց.

—Ես մի քանի հայ ուսանողների եմ ճանաչում Մոսկւայում:  
Նրանք լաւ մարդիկ չեին. ինձ ասել են որ հայերը առհասարակ  
սաստիկ վաճառական, գծուծ մարդիկ... աշխարհիս երկրորդ աե-  
սակ հրէաները... խնդրեմ չնեղանաք, ես իմ լսածս եմ միայն  
ասում... բայց ես աեսնում եմ որ զուք լաւ մարդ էք... չեմ շո-  
ղոքորթում:

Երկի որ իսկապէս ես նրան լաւ էի թւում, որովհետեւ ոչ մի-  
այն ճանապարհին չբաժանեց ինձնից, այլ և Պարիզ հասնելիս, երբ  
նրան առաջարկեցի իմ տան մէջ գտնուզ սենեակը վարձնէլ, ըն-  
դունեց:

Տեղաւորւելուց յետոյ ամբողջ օրը այլպիսով կամ ես նրա  
սենեակումն էի և կամ նա իմ. խօսում էինք, հետզհետէ աւելի և  
աւելի մտերմանում: կարդում էինք միասին, վիճում, ժողովների  
և երեկոյթների միասին գնում, համալսարանում նա իմ դասերիս

յաճախում էր ու կողքիս նստում, ևս նրա դասերին չ  
կողքին նստում:

Մի խօսքով՝ սիրում էինք միմեանց, բայց գեռ ոչինչ չէինք  
խոստովանւել:

Եւ երբ ցիշում եմ թէ որպիսի այլանդակ եղաւ մեր խոստա-  
վանութիւնը...

Ես հրաժարում եմ այսօր այլ ես զրել: Ի՞նչ օգուտ քըր-  
քրել հին վէրքերը. ինձ պէտք է մոռանալ նրանց և ես աւելի պե-  
ղում եմ ցիշատակներս:

Մի երազ էր որ տեսայ. այժմ, զարթուն եմ արգեօք... չգիտեմ  
այդ... տանջւում եմ... ցիշում եմ Աննացին, ցիշում այդ հրաշալի  
հրեշտականման ազնիւ աղջկան, ցիշում եմ նրա և իմ տանջանք-  
ները և... ներիր ինձ, բարեկամն, որ զրիչս ցած դնեմ այլ ես...  
գոնէ այսօրւայ համար:

## II

Յուրա է. ձմեռնային մի երես կտրող քամի է բարձրացել.  
Փրանսերէն դրան կոչում են հիսե.—իսկապէս որ բիզ է, ծակծր-  
կում է մարմինը. երբեմն թւում է թէ սառոցի կտորներով ապտա-  
կում են քեզ:

Վառել եմ վառարանս և գուրս չեմ գալիս. կարգում եմ, երա-  
գում եմ զրակի բոցի առաջ, բազկաթոռիս մէջ ընկղմած:

Աննային եմ մտածում... չշարունակել արդեօք զրիչը:

Որքան գժւար բան է եղել խոստում կատարելը. եթէ խոս-  
տացած չլինէի, մի՛ կարծիլ թէ կուզենայի խօսել-գրել:

Բայց ահա ցիշում եմ այսօրւայ պէս այն երեկոն, երբ կա-  
տարեց խոստովանութիւնը:

Փամ 7-ն էր, այսօրւայ պէս մի սառը քամի էր վշում՝ զըր-  
սում. ես նստել էի վառարանիս մօտ, աչքերս կրակին յառած մնա-  
ցել էի, երբ գուռը մեղմութեամբ բացւեց:

Աննան էր. մոտաւ, զլիսարկը չհանած մօտեցաւ վառարանին  
ու ասաց.

—Լու տաք է այստեղ, սակայն գնանք ինձ մօտ, տանտիկինը  
անշուշտ վառած կը լինի իմ վառարանն էլ:

Յետոյ դուրս եկաւ. ես էլ ետեից: Երբ իր սենեակը մտանք,  
գլխարկը հանեց, վառարանի մէջ վայտ դրեղ, յետոյ դրազանից գուրս  
քաշելով սեղանի վրայ ձգեց Մոսկւայից ստացած 10-րդ նամակը:  
Մի ամիս էր որ Պարիզ էր և 10-րդ նամակն էր որ ստանում էր  
նա միենոյն անձից... և պարբերաբար, շաբաթը երկու անգամ,  
ամեն անգամ երկու կամ երեք ժեերթերից բաղկացած:

Մինչև այդ օր չէի համարձակւել հետաքրքրւելու, թէև մի  
խուլ կասկած կոծում էր ուղեղս. երբ 10-րդ նամակը ձգեց սեղա-  
նի վրայ, այլ ես չդիմացայ և հարցրի գողդոջուն ձայնով՝

— Լաւ շուտ շուտ նամակներ էք ստանում: մւմնից է արդեօք.  
հօրից:

Մէջքը դարձրած, պահարանի վրայ մի գիրք էր փնտում իմ  
այդ հարցը տւած ժամանակ. երբ լսեց, ուժգնութեամբ դարձաւ,  
թափանցիկ հայեացքով զնեց ինձ և ասաց.

— Իմ մի բարեկամից է:

— Բարեկամ, ասացի ես աշխատելով անվրդով մնալ — տարօ-  
ինակ բարեկամ... բարեկամները այդքան ջանասէր չեն լինում...  
ինչ որ սիրոյ հոտ է գալիս զրանցից:

Միծաղում էի այդ ասելու ժամանակ, իր սխալը հասկացող  
մարդու մի բռնազբօսիկ ծիծաղով: Նա մրսած մատներավ խոպոպիքը  
ետ տւաւ, մօտեցաւ նստեց սեղանի մօտ, կոթնեց նրա վրայ, նա-  
յեց գէմքիս և իւրաքանչիւր բառը շեշտելով՝ ասաց.

— Եսկ եթէ այդպէս լինէր. միթէ դա յանցանք կը լինէր:

Կնշու յանցանք, ժպանցի ես բռնազբօսիկ կերպով — երբէք...  
բայց հզ է այդ պարոնը, ձեր նշանամծն է, չէ:

Զպատասխանեց իսկոյն, վարանում էր. նամակները ժողովելով  
շպրտեց պահարանի վրայ, յետոյ աչքը վառարանի վրայ յառեց և  
ասաց կոպիտ ձայնով.

— Ամուսինս է... բայց ձեզ ինչ... այդ ձեր զործը չէ:

— Վեր թռայ տեղիցս, սկի չէի սպասում մի այդպիսի պա-  
տասխանի և չգիտէի հաւատալ թէ ոչ: Այդ միջոցին նա մէկն  
ի մէկ դարձաւ ու աչքերը սեեռեց վրաս:

— Ուրեմն դուք ամուսնացած էք, թոթովեցի ես:

— Գրեթէ, ասաց խուլ ձայնով. յետոյ լաւնկը մօտ քաշեց,

բուռն մի ճիդ գործեց, թոթւեց իրան, կնճուեց ճակատը և յարեց վճռապէս.

— Ասեցէք ինձ... ինձ թւում է որ դուք ինձ սիրում եք...  
արդեօք ճիշտ է նկատածու:

Զէի սպասում այս անակընկալ հարցին և կարկամեցի. չկարողացայ մի բառ խոկ արտասանել:

— Ես այդ տեսնում եմ, շարունակեց նա — և չեմ ուզում ձեզ տանջել. քանի շուտ է պիտի մեռցնել ձեր մէջ ծնող այդ զգացումը. ես կարող եմ ձեզ հետ բարեկամ, շատ մօտ և լաւ բարեկամ լինել, բայց սիրել... ոչ, ես ամուսնացած եմ, ես... մի նոսքով ձեզ չեմ կարող և չեմ ուզում սիրել:

Ասաց, բարձրացաւ տեղիցը, հեռացաւ դէսի մի մութ անկիւն և այնոեղից սկսեց դիտել ինձ կիսովին զլուխը թագցրած իր ոսփի վրայ ծածկւած շալում:

Այդ յախնութիւնը այնպէս խիստ ներգործեց վրաս, որ վերկացայ երերալով, կոթնեցի դարանին — ցած էի ընկնում — դուռը բացի և չգիտեմ ինչպէս հասայ սենեակս և ինձ ձգեցի բաղիաթուիս մէջ:

Ոչ մտածել էի կարողանում և ոչ էլ շարժւել. ցաւ անգամ չէի զգում, հարւածը շատ խիստ էր եղել և մի առժամանակւայ համար թժմրեցրել էր չղերս:

Բայց երբ կէս ժամ անցաւ և քիշ-քիշ զգալ սկսեցի, սարսափելով տեսայ որ պաշտում էի Աննային, որ առանց նրան այլ ևս ինձ ապրել անհնար էր և որ... ես մի թշշւառ էի, մի դժբաղդ... զգացածս ցաւը այնքան խիստ էր, զառնութիւնը՝ առատ և յուսահատութիւնը՝ կատարեալ...

Մթան մէջ նստած, չէի ապրում այլ ևս, կսկիծ էի զգում, լալ չէի կարող, լալ — մի քիշ մխիթարւելու համար:

Յանկարծ զգացի որ ճրագս վառւեց, յետոյ երկու թեւեր գլըր-կեցին ինձ և մի ջերմ, շատ ջերմ համբոյր սթափեցրեց ինձ:

Աննան էր: Գրկել էր վիզս, զլուխը ետ ձգած և աղաչաւոր կերպարանքով չոգել էր առջես...

Աննա, գոչեցի ես վայրենի ձայնով — այդ դժւ ես... մի թէ ինձ  
սիրում ես ուրեմն:

Ինձ էր նայում դառնութեամբ, մի յանցանք գործողի ակնար-

կով. կրծտեցնում էր ատամները, մօտենում էր ինձ ջղաձգորէն: —Ո՞չ, ոչ, մռառաց նա, քեզ էլ չեմ սիրում, բայց չեմ ուզում որ քեզ չարչարես և ինձ էլ տանջես... ծ, դու ինձ շատ, շատ ես տանջում...

—Ինձ չես սիրում, բայց ականչեցի—ուրեմն ինչ գործ ունիս այսուղ. հեռացիր, զնա և թող ինձ կրեմ իմ վիշտը:

Գրկեց ինձ, լնկաւ կրծքիս վրայ և համբուրեց: Համբուրում էր ու կրկնում:

—Զկարծես սակայն որ քեզ սիրում եմ, ոչ... ոչ քեզ և ոչ էլ նրան. ես ոչ ոքի սիրել չեմ ուզում:

Զէր էլ լաց լինում, բայց տանջւում էր ամբողջ էութեամբը: Գէմքը փոփոխուում էր, աչքերը պատուում, ջղաձգութեամբ գալար-ւում էր գրկիս մէջ, քաշում էր ինձ գէպի իրեն, մօտենում շլր-թունքներիս, կատաղի համբոցըներ էր գրոշմում նրա վրայ... եթէ չէի հարցնում թէ սիրում էր ինձ, թողնում էր որ իրեն գգւէի, իսկ եթէ հարցնում էի—իսկոյն ես էր մզում ինձ և դոչում որ չէր սիրում ինձ, չէր ուզում և չէր կարող:

Եւ սակայն տանջւում էր ծնկներիս մօտ, գալարւում գրկիս մէջ: Երբէք մի կին գրանից աւելի յայտնի նշաններ չէր կարող արտայացնել չերմ, արփոտ կրքի—սիրոյ:

Իսկ ես մի ծայրայեղութիւնից միւսն էի ընկնում, յոյս էի ստանում, յոյս սահատ լինում: Իր երկու փոքրիկ ձեռքերով բռնում էր թշերս, երկար, երկար նայում աչքերիս, սիրալիր կերպով զննում՝ գէմքիս բոլոր մասերը, յետոյ յանկարծ կատաղի կերպով ընկնում գիրիս և... այնպիսի ջերմ համբոցներ էր տալիս ինձ, որ սառսուռ էր ազգում ամբողջ մարմնիս... Այդ բոլորի միջուցում յանկարծ թողնում էր կիսատ համբոցը, ես էր քաշւում, խլում-հեռանում գրկից, ճակատը շփում, ունքերը կիսում, նայում էր շուրջը նոր զարթնողի աչքերով, յետոյ դառնում ինձ և գոշում:

—Հեռացիր, զնամ... կարծում ես թէ սիրմամ եմ քեզ, սիսալ-ւում ես... այն, ես քեզ չեմ ուզում:

Ընդհատում էր, ձեռքը կոկորդին տանում, օձիքը քաշում խեղուողի պէս, ինձ նայում մի վայրկեան, յետոյ յանկարծ յար-

ձակուում վրաս, բռնուում թեւերիցս, մի բռպէ դէմքս զննում և նորից համբոյըներ, նորից...

Ախ, Ասուած իմ, որպիսի ներդաշին հիւսանդու տեսարաններ էին այդ բոլորը:

Մի ժամ ամբողջ Աննան տանջւեց ացլպէս, տանջեց ինձ իր հեռ և միշտ կրկնեց որ չէր սիրում ինձ, որ չէր ուզում սիրել:

Վերջապէս քիչ հանդարաւեց, յոդնածի տես ընկաւ դիւսանի վրաց, քաշեց ինձ իւր կողքին, բռնեց ձեռքս և ասաց մեղմ, դադարածի ձայնով.

—Լսիր, ճշմարիտ եւմ ասում, գիտես. ես քեզ սիրել չեմ կարող:

—Արովհեակ ուրիշի ես սիրում, այնպէս չէ, գիտեցի ես կծու կերպով:

Ցնցւեց, գարձաւ և այնպէս նայեց ինձ, որ քիչ մնաց չոգեի և ներղութիւն ինսդրէի կատկածիս համար: Մօտեցայ, խանդաղատանօք գրկեցի և քաշեցի դէսի ինձ:

Ես մզեց, տանջւողի պէս կնճռեց դէմքը, բարձրացաւ տեղից և մօտ գնաց լուսամուտին, այնտեղ դէմքը կացրեց լուսամուտի ապակուն և մնաց պահ մի:

Սկսել էր ձիւնել գրառում, քամին նրանից խոշոր հատեր բերում շպրառում էր ապակիների դէմ:

—Այն, մամուաց նա առանց ինձ նայելու—չեմ ուզում...

Ցեաց թողեց լուսամուտը, մօտ եկաւ սեղանին և շարունակեց.

—Եթէ քեզ սիրեմ, նա կը մեռնի, անշուշտ կը մեռնի... ապրել չէ կարող այլ ես, ալդպէս է նա, հասկանում ես:

—Հասկանում եմ, պատասխանեցի ես—ահա թէ բանը ինչումն է. նրան խօսք ես ուել և չես ուզում խախտել խոստուհի. ապա թէ ոչ՝ սիրոց մէջ իրեն զոհել իր սիրածին!

—Ով ասաց որ ես նրան չեմ սիրում, միջահատեց Աննան բարկութեամբ—նախ թող այդ կծու հեգնութեան վիշտը, զզւելի է... և երկրորդ ես չեմ ասել որ նրան առում եմ. ճշմարիտ է, ես նրան չեմ սիրում այնպէս, որպէս... բայց չեմ ասում, չէի ուզիլ մահաւանդ որ նա մեռնէր... իսկ նա կը մեռնի եթէ ես ուրիշին սիրեմ. ուրդէն տանջւում է երբ նկատում է որ ես այլ ևս չեմ սիրում նրան:

Նստեց, շալովլ փաթաթեց մի թել, առաւ մի գիրք ու սկսեց ջղանութեամբ թղթատել նրան. յետոյ կանդ առաւ ու շարունակեց կցկառը կերպով ու հետզհետէ յուզով ձայնով:

—Երկու տարի է, ասաց նա—երկու տարի, որ պաշտում է ինձ... այն, այլպէս սիրել անհնար է, մի՛ երազիլ որ այդքան դու կարող ես ինձ սիրել. առանց ինձ ապրել չէ կարող, չնչել չէ կարող... Կազան<sup>1)</sup> էր գնացել մի վեց ամիս և շաբաթը երկու անգամ երկար նամակներ էր գրում... այդքան ջերմութիւնը սառեցնում է ինձ... քանի սառն եմ վարում, նա այնքան աւելի պաշտում է ինձ... կը մեսնի, անշուշտ եմ որ կը մեսնի, եթէ իմանայ որ ուրիշի եմ սիրում... հպատակւում է ճակատագրին, եթէ իրենից սառում եմ, բայց կը սպանեմ նրան, եթէ սիրեմ ուրիշի... այդ նա չէ կարող տանել, լաւ գիտեմ:

—Աւրեմն իրեն չես ասել, միջահատեցի ես—չես ասել որ այլ ես չես սիրում իրեն. այդ յայտարարութիւնը գոնէ, նրա անձնասիրութիւնը գրգռելով կարող կը լինէր մոռացնել տալ սէրը, այդ յայտարարութիւնը նոյնակս քեզ ազատ կը կացուցանէր...

—Ախ, ինչեր ես ասում... ասել նրան. ինքը լաւ է զգում և տանջուում է, խիստ տանջուում... ամեն նամակի մէջ գանդատուում է որ սառն եմ դէպի իրեն, որ սպանում եմ իրեն իմ բացակայութեամբ, իմ սառնութեամբ... «առանց քեզ, ասում է նա, ամեն ինչ չոր է, չոր և գատարի». գանդատուում է որ չգիտէ թէ ինչ յանցանք է գործել իմ դէմ... յանցանք... ինչ յանցանք, հրեշտակի պէս տղայ է, ազնիւ, մաքուր... չգիտեմ, ես էլ չգիտեմ, թէ ինչու այլ ես չեմ սիրում նրան:

Ասաց Աննան և զլուխը խոնարհեցրեց տիրութեամբ ձախ թեով լայն բաց արած շալի մէջ: Այլպէս նա մնաց լուռ մի քանի բոսէ, յետոյ զլուխը հանեց և շարունակեց.

—Գուցէ միմեանց հետ շատ ենք եղել—նրա համար... ասաց աչքը ճրադին յառած—գուցէ սովորական է եղել... անազնուութիւն է արածս, գիտեմ, բայց ուզզակի նրան ասել որ ուրիշին եմ սիրում—այդ չեմ կարող, գիտեմ որ կը սպանեմ նրան: Երկու յոյսով

<sup>1)</sup> Քաղաք Խուստատանում:

այդ չեմ անում. մտածում եմ որ գուցէ ապագայում՝ ես կարող լինեմ էլի սիրել նրան, երբ բաւական ժամանակ հեռու մնամ նրանից... միւս յոյա այն է, որ նա ինքը գուցէ ինձ հեռու ունենալով՝ մոռանաց, վարժւի ինձ կորցնելու մոքի հետ և հաշաւի ճակատագրի հետ... այն, երկուսից մէկը: Երբեմն ուզում եմ, կամենում եմ նորից սիրել նրան, բայց չեմ կարողանում, սառնութիւն եմ զգում գէպի նա... կարծես կշատցել եմ նրանից ու չգիտեմ, գուցէ մի տարի այստեղ մնալուց յետոյ սկսեմ սիրել նրան. սիրելու տղայ, սիրուն, ազնիւ, զարդացած... միայն թէ շատ յաճախ է ինձ զրում և յաճախ է խօսում իր զգացմունքների մասին... ձանձրացնում է. վախենում եմ որ այդպիսով լիովին արգելք լինի ինձ վերստին սիրելու իրեն: Մնում է շատ սակաւ զրել նրան և սառը զրել... այն, այդպէս պիտի անել:

— Իսկ եթէ ուզզակի, կտրուկ կերպով մերժէք նրան, գիտեցի ես—զա չի սպանիլ նրան. սպանում է անորոշութիւնը, իմ կարծիքով:

— Ե՛ս, պատասխանեց Աննան արհամարհանքով—այդ ճիշդ չէ. մարդս գերազատում է աւելի անորոշութեան մէջ մնալ այդպիսի զէպքերում: Ճիշտ է, որ քանի անորոշութեան մէջ է, ձգտում է որոշութեան մէջ մտնելու և տանջւում է աւաջին դրութիւնից, բայց երբ ամեն ինչ որոշում է և այդ որոշութիւնը նրա համար աննպատճ է լինում, այն ժամանակ նա հազար անգամ երանի է տալիս իր նախկին անորոշ դրութեանը, ուր նա գոնէ յոյս կարող էր տածել... նոյն իսկ եթէ այդ յոյսը յաւիտենապէս միմիայն յոյս մնար... այն, յոյն է, յոյսը միայն որ այս կեանքը մեզ փոքր ինչ տանելի է անում:

Պահ մի լոեցինք երկուսս էլ. նա դիտողութեամբ գլուխը ձեռքին կոթնեցրած, նայում էր ճրագին:

Քիչ լուսթիւնից յետոյ, վաստահութեամբ և մեղմ ձայնով յարեցի.—իմ կարծիքով երբ այլ ևս չես սիրում մէկին, պիտի յայտնել: Խնչով մեղաւոր ես եթէ այլ ևս չես սիրում նրան...

— Դու ինձ չես հասկանում, գոչեց Աննան նեղացած ձայնով— Կոլեան գիտէ որ ես իրան չեմ ատում, որ ես կուզէի սիրել իրան, բայց ես ինքս տեսնում եմ որ նրան սիրելու զգացմունք չկայ իմ մէջ այլ ևս... ապագայում—չգիտեմ. գիտեմ միայն որ նա ինձ գժի

պէս է սիրում... մի քայլ չէ ուզում՝ անել առանց ինձ... նրան ասել որ ո՛չ միայն յոյսը կտրի որ իրան սիրելու եմ, այլ և որ ուրիշն եմ սիրում... ո՛չ, հազար անգամ ո՛չ, նա չի դիմանալ զբան, իսկոյն կը մեռնի... թոքախոր վաղուց է որ պակասեցնում է նրա օրերը...

## III

— Թոքախոր վաղուց է որ կրծում է նրա օրերը, ասաց Աննան տիտոր, խորապէս մելումաղձոս շեշտով:

Յուզի եցի: Թոքախոր մի այնպիսի պատկառելի դժբախտ է, որին պարտաւոր են խնայել բոլորը: Ընկածին այլ ևս չեն զարնում:

— Այն, շարունակեց Աննան—առանց այն էլ նա զգում է որ էլ չեմ սիրում իրան և մաշւում է, մաշւում:

Ասաց, մեքենայօրէն բարձրանալով մօտեցաւ ինձ, կանգնեց առջևս, ժապտեց գունաթափ ժապտով, յետոյ բռնեց ձեռքս և սկսեց սեղմել: Թոյլ տի, ես էլ սկսեցի ժապտել:

— Ինչո՞ւ ես ժապտում, ասաց նա ջղաձգութեամբ ձեռքս սղմելով—չես հաւատում, կարծում ես թէ դիտմամբ եմ այդպէս ասում: Թոյլեց ձեռքս և նստեց կողքիս:

— Ասուած իմ, գոչեց նա—զու ինձ չես էլ հաւատում...

Որպիսի յուսահաս կերպով արտասանեց նա այդ բառերը, յետոյ յախուռն կերպով լնկաւ առջևս և դէմքը թազցրեց թևերիս վրայ:

Կուացայ, բռնեցի գլուխը. Մթունքներս կացրի մազերին և ասացի.

— Իմ խեղճ Աննա:

Յնցւեց, վեր թռաւ:

— Ի՞նչպէս, զոչեց նա—խեղճ... ուրեմն զու ինձ խղճում ես այժմ էլ: Դու ինձ չես հասկանում, ո՛չ, զու այն չես ինչ որ կարծում էի:

Ես ժապտացի հեգնօրէն, ընդհակառակն հասկանում էի իրեն իմ կարծիքով և կարծում էի այն ժամանակ, թէ այդ ջղային աղջկայ արածը ո՛չ այլ ինչ էր եթէ ոչ կոկետութիւն:

Բայց նա դողում էր. ջղացին մի տեսդ պաշարում էր ամբողջ օրգանիզմը: Մօտեցաւ նա վառարանին. քանի տաքանում էր, այնքան աւելի ակնել և կերպով դողում էր. ատամներն անդամ հնչին կերպով կարկափում էին:

Փաթաթւում էր շալով, մօտենում էր կրակին:

Ցուրտ է... մրմուաց նա—ցուրտ... զարմանալի է, այո որքան դողում եմ... և սակայն դու դեռ ինձ չես հասկանում... Ասուած իմ:

Մի պտոյտ դործեց զառարանի շուրջը. յետոյ կանգ առաւ դողում էր սասաիկի: Վերջ ի վերջոյ մի քանի անգամ ձեռները կրակին տարաւ ու երբ մի քանի անգամ ունելիքով խառնել էր կրակը, դարձաւ կիսովին ինձ ու ասաց.

—Ժամը քանին է:

Տասներկուսը... թէյ կուզես:

—Ո՛չ, գնամ պառկեմ: Թէւդ տուր ինձ, դողում եմ: դու ինձ պիտի հաւատաս, չը որ ես քո մօտ երեկք չեմ ստել... թէւդ տներ, այժմ գնանք ինձ մօտ, բայց շուտով վերադարձիր, ես ու զում եմ պառկել... իսկ դու ինձ անպատճառ պիտի հաւատաս:

Թէս տւի նրան և տարայ իր սենեակը՝ այնտեղ նա, փոխանակ թէս թողնելու, սեղմեց և ասաց մրմնջելով.

—Մնա, դեռ մի՛ գնալ... նստիր ինձ մօտ, ահա այստեղ... մօտ նստիր. տուր ձեռքից... ծ, տաք ես դու, իսկ ճակատով... էլի տաք է, ուղեղդ շատ է դործում:

Նստեց դիւանի վրայ, նստեցրեց ինձ կողքին, բռնեց ձեռքս, շոշափեց ճակատս, յետոյ երկար նայեց դէմքիս, կաթոզին ժպանց և կամաց մօտ եկաւ. գլուխը իջեցրեց թէխս վրայ ու մրմուաց հազիւ լսելի ձայնով.

—Ո՛... մրմուաց նա—Ասուած իմ, որպէս լաւ է, այո... էլ չեմ դողում. դու շատ լաւ, շատ լաւ տղայ ես... խելօք... ես կողէի քեզ համբուրել, քեզ սիրել...

Կոացայ դէպի նա և ուղեցի համբուրել:

Յանկարծ ցատկեց, ետ մղեց ինձ ու գոչեց.

—Ո՛, ո՛չ, ետ գնայ... ես չեմ կարող:

Ոկսեց հրել ինձ ուժգնութեամբ և կատաղութեամբ շարունակեց:

— Դուրս գնա... դուրս գնա այժմ; թող ինձ, գնա:

Դուրս գնացի—զգխեմ ինչու: Աննան հիւանդ էր, պկոք էր նրան թողնել—այդպէս դատեցի այն բովէին—գուցէ սիալ դործեցի, բայց դուրս եկաց և տանտիկնոջը ուղարկեցի նրա մօտ:

Տանտիկինը հանւեցրեց նրան ու պառկեցրեց, և երբ դուան ետևից նրան հարցնում էի Աննացի մասին, լսեցի որ Աննան անկողնի միջից ասում էր զրեթէ զառանցելով.

— Անպիտանութիւն է այս... ուզում է Կոլեացին սպանել, չի հաւատում ինձ... Ասուած իմ...

Բարեբաղդաբար տանտիկինը չէր հասկանում՝ նրա խօսած լեզուն:

#### IV

Աննան հիւանդ մնաց մի ամբողջ շաբաթ: Ներս մտնել նրա մօտ—չէի կարող, անկողնի մէջ էր: Իմաց տւի իր ընկերուհուն և մի քանի ուրիշ ուսանողուհիների, որոնք գալիս և խնամում էին նրան:

Զղացին ցնցող տենդ ուներ:

Երբ առողջացաւ, մի առաւտո, իր սովորութեան համեմատ, տանց բաղխելու, զոււըս բաց արաւ և մեղմութեամբ ժպիալ զէմքի վրայ.

— Բարեւ, ասաց նա—որքան ժամանակ է չեմ տեսել քեզ, ինչպէս ես:

Եւ աթոռն առնելով նստաւ դիմացս:

— Լաւ եմ, պատասխանեցի—իսկ զ՞ուք. յոյս ունիմ որ այժմ լաւ էք:

— Յոզնակի խօսելը թող, ասաց նա ձեռքս բռնելով—տուր ինձ ձեռքդ, միթէ, ասա ինձ, մենք չենք կարող բարեկամ իսկ մնալ:

Զպատասխանեցի և ակնարկս մի ուրիշ կողմ՝ դարձրի:

— Խօսիր, պնդեց նա, մեզ հնարաւոր չէ բարեկամ լինել միթէ:

— Ոչ, Աննա, պատասխանեցի ես վերջապէս—ես մի տարօրինակ մարդ եմ. երբ սիրում եմ մէկին, այդ սէրը յետոյ բարեկամութեան իջեցնել անհնար է լինում ինձ... կամ ամեն ինչ, կամ ոչինչ:

Վերկացաւ և քիչ հեռու գնաց:

—Այդ լաւ չէ, գիտեց նա—ես կուզէի քեզ հետ բարեկամ մնալ... հայ, գիտես, ես մի բան պիտի յացոնէի քեզ, մի նորութիւն: Կանդ առաւ, վարանում էր:

—Օլգան, շարունակեց նա դժւարութեամբ—ընկերուհիս, գիտես... մի ուրիշ սենեակ էր վարձել իր կողքին ինձ համար, այնաեղ լաւ կը լինի ինձ համար, միշտ մի ընկերուհի կունենամ կողքիս, որ կը լինամէ ինձ, եթէ նորից հիւանդանամ:

—Ե՞նչ, ասացի ես զունաթափ—ուրեմն ուզում ես հեռանալ արդէն:

—Հեռանան, ժայռեց նա—ինչու, բարեկամն, սենեակս հեռու չէ, կարող ես յաճախ գալ ինձ մօտ:

—Ո՞չ, ասացի ես—այնուղ շատ հեռու է և այսոեղի պէս չի լինիլ. հեռանալով այսոեղից, զգում եմ, որ ուզում ես ընդ միշտողնել ինձ:

Յուզեկց, մօտեցաւ ու մեղմութեամբ զրկեց վիզս:

—Լոիր, բարեկամ, իմ շատ սիրելի բարեկամ, ասաց սիրալիր—ես քեզնից հեռանալ չէի ուզիլ, բայց չեմ կարող քեզ սիրել և խնդրում եմ, աղաչում եմ, մոռցուր դէպի ինձ ունեցած այդ զզացմունքդ, այդպէս պէտք է:

Պահեց մի բոպէ ձեռքս իրենի մէջ, յետոյ յանկարծ թողեց նրան և մի քանի քայլ առաւ դէպի դուռը. այնուղ նա կանգ առաւ մի քիչ:

—Ախ, մոռացայ, ասաց նա շփոթւած և առանց երեսիս նայելու. մոռացայ որ դասախոսութեան պիտի դնամ... ցուեսութիւն, վազը կարող ես գալ ինձ մօտ:

Նուազով դուրս գնաց, դուռը ուժգնութեամբ փակեց, յետոյ գտնալիւմամբ մոռաւ իր սենեակը և մի բոպէից յետոյ արդէն փողոցումն էր:

Աշխատել էր այնպէս արագ հեռանալ, որ գալոշները չէր հագել և երբ մի քանի ժամից յետոյ հեռուից տեսայ նրան փողոցում, ցեխոտեել էր, բայց գնում էր առանց ուշադրութիւն գարձնելու դրան, ցուրտը կապտեցրել էր նրա ձեռքերը և նա մոռանում էր ձեռնոցն անգամ հազնել:

Եւ այսպէս Անհան հեռացաւ ինձանից։ Ինական է որ նախ սակաւ, և յետոյ մանաւանդ աւելի սակաւ սկսեցի՝ զնալ նրա մօտ, որովհետեւ երբէք մենակ չէի գտնում նրան։ Գիտէր գնալու ժամերս ու աշխատում էր մենակ չլինել։ Դուրս էլ չէր գնում, որովհետեւ ուղում էր, զգալի կերպով ցանկանում էր տեսնել ինձ, իսուել ինձ հետ։

Եւ զեռ տանջւում էր ամեն անգամ, երբ տեսնում էր ինձ, երբ ես սիրոյ վրայ խօսք էի բացանում։

Այդ միջոցին էր, որ, չնայելով ձմբան մօտենալուն, խոլերան կոտորածներ էր անում Ռուսաստանի ներքին գաւառներում։ Ռուսաց կառավարութիւնը հրաւէրներ էր կարգում բոլոր ոռուսահպատակ քժիշկ ուսանողներին, գնալ օգնելու առաջադապահական կամ օգնող խմբերին։ Ամեն կողմից գնում էին։ Պարիզից էլ գնացին ուսանողներ և ուսանողուհիներ։

Անայի լնկերուհին էլ չէր գիմանում կլիմացին և բժշկի խորհրդագով պատրաստում էր վերադառնալ հացրենիք։

Եւ ահա մի օր, երբ ես Անայի մօտ մտայ, գտայ այստեղ մի տակնուվրայութիւն։ Անհան կապկապում էր իր զրքերն և շորերը. մի քանի ուսանողուհիներ օգնում էին նրան։

Զարմացած կանդ առի շէմքի վրայ։

— Ի՞նչ է եղել, հարցը, էլի՞ սենեակ էք փոխում։

Անհան գլուխիլ բարձրացրեց, թողեց զրքերն ու մօտեցաւ ձեռքը պարզեց ինձ։

— Ո՞չ, ասաց յուզմամբ — Ռուսաստան եմ գնում։

Արիւնս մի բուռն հոսանքով վազեց գէսլի սիրոս. դունաթափւելս զգացի։

— Դնում էք, ասացի — և ինչու համար։

— Խոլերայի, ասաց նա — ուղում եմ մոնել նրա գէմը կուռղ բանակի մէջ։

— Բայց, գոչեցի ես անձկանօք — կուելու համար պառաստ չէք դուք, դուք ոչինչ չգիտէք դեռ։

— Սիալում էք, միջահատեց նա — ես այստեղ գալուցու առաջ բաւական բան գիտէի։

Յետոյ լոեց և նստեց. ինքն էլ գունաթափ էր։

—Երբ էք գնում, հարցրի դողդոջուն ձայնով:

—Կէս զիշերին, այսօր... երեկոյեան ուզում եմ գալ ձեզ մօտ.

տանը կը լինէք:

—Վեցից սկսած:

—Ժամը տասին կը գամ, ոչ աւելի շուտ:

Թոթափեց իրեն, բարձրացաւ, սիրալիր ժպիտով ձեռքը ինձ պարզեց և աւելացրեց:

—Նու, ցաեսութիւն, երեկոյեան, իսկ այժմ թողէք մեղ կապկպել:

Դուրս գնացի. ամբողջ օրը գտի սկս էի, դլուխս տեղը չէր. փողոցներում մօն էի գալիս առանց նպատակի, դասախոսութիւններ լսեցի առանց մի բառ. հասկանալու. շատերը ինձ հիւանդ կարծելով առողջութիւնս էին հարցնում:

Ժամը տասին եկաւ Աննան:

Ներիր, բարեկամ, որ չեմ կարող երկար կանգ առնել այդ յեմին ժամերի վրայ, ոյժ չկայ:

Խօսեց Աննան, թէ խմեց. շատ սիրալիր էր, գորովանօք էր դիսում ինձ. զգալի կերպով ճիզ էր դործում անվրդով մնալու. թոյլ չաւեց անգամ համբուրելու իրեն և եթէ ես մօտենում էի, նա մեղմաւթեամբ ետ էր հրում ինձ և քիչ նեղացած, բայց մեղմութեամբ ասում:

—Նու, ինչնու, ինչնու, բարեկամ, երբ ասացի որ չեմ ուզում որ ինձ սիրես... ոչ, մոռացիր ինձ, մոռացիր...

Ժամը 11-ին գնաց: Հեռանալուց առաջ բռնեց ձեռքս, սեղմեց ջղաձգութեամբ, երկար նայեց աշքերիս, յետոյ արտասւալից աշլքերով կպաւ կրծքիս, թոյլ չաւեց որ համբուրեմ իրեն, ինքն է-ինձ համբուրեց և ասաց մրմնջալով:

—Եթէ ապրեմ, բարեկամ, գիտցիր որ միշտ մի անկիւն կունենաս այստեղ:

Ցոյց տւեց սիրալ, խլեց գրկիցս և արագութեամբ զուրս փախաւ:

Խողրել էր որ կայսրան շգնամ, բայց գնացել էի:

Աչքին չերեւացի, հեռւից տեսայ թէ ինչպէս բազմաթիւ ուսանողներ և ուսանողուհիներ սեղմեցին նրա ձեռքն ու բարի ճանապարհ մաղթեցին:

Նա ժպտում էր տիտուր, գունաթափ ժպիտով. նայեց բոլորին, աչքերով փնտուց մէկին—ինձ էր փնտում, յետոյ ախ քաշեց և մոռւ վագոն:

Երրորդ զանգն էր հնում:

Լուսամուտից էլի նայեց. փնտում էր. քիչ մնաց երեան գայի, վագէի գէսլի նա, բայց դնացքը շարժւեց և տարաւ իր հետ իմ Աննացին, իմ՝ պաշտելի Աննացին...

Ամիսներ անցան. ոչ մեռած էի, ոչ կենդանի. սուերի պէս սպատում էի. ամեն մի կին տեսնելուն պէս հեռւից, կարծում էի թէ Աննան էր:

Ո՛չ մի լուր չկար նրանից: Խնդրել էի որ մի նամակ գրէր, բայց ասել էր որ չի գրի և չգրեց:

Եւ ահա մի օր եկաւ մի լրագիր, որի մէջ տպւած էր խօլերացի դէմ կուռզ նահատակւած զինւորների—ուսանողուհիների և ուսանողների—անունները:

Սրտարոփ կարգացի. ախ, շատերն էին մեռել. բաւական շատերը զոհ գնացել:

Եւ իմ Աննան, իմ Աննան էլ զրանց թւումը:

Հեռու, մի գաւառի հեռու անկիւնում մեռել էր նա իր գործի մէջ, նահատակւելով իւրացինների համար:

Եւ այն օրից, բարեկամ, յաճախ տեսնում եմ ես այդ նահատակին, որ սիրում էր ինձ. այդ չքնաղ ոգուն, որին պաշտում՝ էի ես. տեսնում եմ յաճախ, հեռու... ամսերի վրայ թառած, Ասֆայէլի նկարած հրեշտակներից մէկի պէս գլուխը թւերի վրայ, ոսկէզօծ լուսով թաղթաղուն. և իր երկնացին զիւթիշ ժպիտը՝ գողարիկ, սիրուն դէմքի վրայ:

## ՀԵԼԵՆ ԿԵԼԼԵՐ

(ՄԻ ԿՈՅՐ, ՀԱՄԲ ԵՒ ԽՈԽԱ ԱՊՀԿԱՅ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ)

Ֆրանսերէնից թարգմ. Ա\*\*\*

Ամերիկական „Volta bureau“-ի հրատարակած մի ալբոմում գտնվում է Հելեն Կելլեր անունով մի կոյք համբ և խուլ աղջկաց կրթութեան պատմութիւնը։ Այդ աղջիկը այժմ 13 տարեկան է։ Նա արտայայտում է իր բոլոր ուղածները՝ խօսելով, կարողանում է ըմբռնել ուրիշների խօսքերը շոշափմամբ և խմբագրում է անգլիերէն նամակներ պարզ ու հաստատուն ձեռագրով<sup>1)</sup>։

Այդ իրողութիւնը, որ իսկապէս շատ զարմանալի է, ամբողջ Միացեալ նահանգների ուշադրութիւնը հրաւիրելուց յետոց, շարժել է նաև Եւրոպացինը։ „Journal des Débats“ թերթը մասնաւորապէս կարևորութիւն է տւել դրան։

Եւ իսկապէս մարդ կարող է խկոյն ըմբռնել այդ գէուքի կարևորութիւնը, կարդալով այդ կոյք-համբ-խուլ աղջկաց գրած հետեւալ նամակը, որ ուղղւած է իր կրթութիւնը ստացած հաստատութեան աեւզուհի՝ Միսս Ֆիւլէրին։ Նա Խակը գրւած է 1890 թ. հոկտեմբերի 20-ին, այն ժամանակ, երբ կրողը գեռ ևս 10 տարեկան էր միայն։

«Ալլելլի օրինրդ,  
0', ոչ, ես ձեզ չեմ մոռացել, ամեն օր մասածում եմ ձեզ վլակ և միշտ

1) Helen Keller. Souvenir of the first summer meeting of the American association to promote the teaching of speech to the deaf. Washington. D. C. Volta bureau. 1892.

աւելի և աւելի սիրում եմ ձեզ Ռուսմ եմ ձեզ պատմել թէ ինչու մինչեւ աչժմ ձեզ նամակ չեմ գրել:

«Տուն վերադառնալուց յատը, ես հիւանդ էի և բժիշկը ինձ պատ վրել էր շատ հաճարած մնալ, եթէ չի ուզիլ ծանրապէս հիւանդանալ: Այն ժամանակ բոլոր միասին սարը գնացինք: Անտեղ օրը անալէս ախոր մելի և թարմ էր որ և ես ուրիշ բան չի անում եթէ ոչ զւարճանալ և իմ էշին առաջնորդել արածելու: Ես մազլցեցի աճողէս կածաններից, որ շատ դժւար անցանելի էին և քաղեցի շատ վարենի ծաղիներ: Իմ փոքրիկ շուն Լէօնէսը միշտ ինձ բնկերանում էր, Նթէ հոգնում էինք, նըստում էինք հանգստանալու մի ծառի կոճղի վրայ, իսկ շունս էլ զրանից օգաւելով զլորոտում էր չոր խոտերի մէջ և կամ օրակում էր մեր տոքերի մօս: Աթէ անձրեսմ էր, մենք մնում էինք տանը և խաղում: Միլտրիզը և մեր փոքրիկ հօրեղբօր աղջիկ Վահիդ Աղամար շատ երջանիկ էին միասին, ևս նրանց զնում էի ճոճի մէջ ու օրորում և զւարճանում էի նրանց հետ: Ինձ լիովին համկանում էին նրանք և երրիմն էլ նրանց համկանում էի ձեռքերս զնելով նրանց բերինի վրաւ Զէք ուրախ որ աճողէս հեշտութեամբ խոռում եմ: Վենէսը ցատկում է գեղի ինձ երր ևս պարզ խոռում եմ: Ես շատ բան եմ սովորել Քրիստոսի և իմ Երկնաւոր Հօր մասին: ևս շատ, շատ երջանիկ եմ: Աստւած ուզում է որ մենք երջանիկ լինենք: Ես ապահով եմ որ նա ուզում էր որ դուք խօսել սովորեցնէիք, որովհետեւ նա զիսէր որ ես շատ էի ցանկանում խօսել ինչպէս ուրիշները: Նա չի ուզում որ իր որդին համբ լինի, և երբ ես երկինք կը զնամ, նա իր հրեշ տակներին կ'ասի որ նրանք ինձ երգել էլ սովորցնեն:

«Մտածում եմ թէ արդեօք զուք ձեր նոր զպրոցական շնչքը աւարտեցիք: Խոնդրեմ իմ սիրու բարեներս հաղորդէք բոլոր տղաւոց և ուսուցիներին, լուս ունիմ որ նրանք Հելենին մոռացած չեն լինիլ:

«Երբ ձեզ նորից տեսնեմ, ձեզ ասելու շատ բան կունենամ: Ամեն օր, ինչքան կարող եմ սովորում եմ թւարանութիւնից և բուսաբանութիւնից: Ես շատ եմ սիրում միշտ, հնազնեսէ աւելի լաւ ձանաչել մեզ շրջապատող այն հրաշալի բնութիւնը որ Աստւած մեզ պարզենէ է: Ես աճոքան երջանիկ եմ որ կուղինալի ասղել միշտ, որովհետեւ աճոքան սովորելու լաւ բաներ կան:

«Իմ վարժուհին ձեզ բարեսում է և իմ քուքս ձեզ համբուրում:

«Ձեր կտրօտալից փոքրիկ բարեկամուհի

«Հելեն Կիլլելի»:

Անկարելի է վերին աստիճանի զարմանալ կարդալով այս նամակը. մի աղջիկ, 10 տարեկան, կոյզ, համբ և խուլ, հասել է կըրթութեան այն աստիճանի որ գրել է մի այզպիսի նամակ: Հարց է

ծաղում թէ արգեօք ինչ միջոցներ է դրձակրւած այլպիսի արդիւնք ստանալու համար։ Այդ հարցի մանրամասն պատասխանը դանւում է նոյն իսկ վերոցիշեալ Valto bureau-ի հրատարակութեան մէջ։

Հեղեն Կելէր, մայիսոր Կելէրի աղջիկն է, ծնած 1880 թւին, Տուսկումբիայի մէջ, որ գանւում է Ալոմաբա կանոնում։ Նրա պապի պապը, Կասպար Կելէր, մի նշեցարացի էր, որ գնացել էր հաստատելու Ամերիկայում։ Արքան որ հնարաւոր է յիշել, Հեղեն Կելէրը ծնելու ժամանակ ունէր առողջ երեխայի բոլոր յատկութիւնները, բայց երբ 18 ամսական զարձաւ, վտանգաւոր կերպով հիւանդացւ և, երբ առողջացաւ այդ հիւանդութիւնից, նկատեցին որ նա կատարելապէս կոյր և միենոցն ժամանակ էլ խուլ էր։ 1887 թւին նա յանձնեց Բոստոնի Պերկինս կոշւող կոյրերի մի գորոյում, յայտնի ուսուցչուհի Միս Ֆիւլիւանի խնամքներին։ Այս ուսուցչուհու մեծ խնամքներով Հեղեն Կելէրի միոքը սկսեց մեծ արագութեամբ զարգանալ։

Միսս Միւլիւանը թող իր բերնով պատմէ ուրեմն թէ ինչպէս նա կարողացաւ իր աշակերտուհուն չարաբերութեան մէջ դնել արագքին աշխարհի հետ։

#### ՄԻՍՍ ՄԻՒԼԻՒԱՆԻ ՊԵՏՈՒԾՅԻ

«1887 մարտ ամսին ես Հեղենի ուսուցչուհին դարձակ և սկսեցի որքան կարելի էր շուտով հասկացնել տարրական ակրուբենը։ Դրա համար ես գործածում էի սովորական առարկաները, որոնց նա կարող էր դիպչել, և նրանց անունները ես ծանրութեամբ հեղում էի իմ մասներով։ և այդ ժամանակ նա բռնած ունէր իս ձեռքս ու հակում էր նրա ամենավոքը շարժումն իսկ։ Նա հասկացաւ հեշտութեամբ թէ ես ինչ էլ ուզում ասել և մկսեց նմաննեցնել իմ շարժողութիւնները մեծ ճշգութեամբ, կարծես թէ նա սովորեց ամերող ակրուբենը և գիտէր իսկ հեղել (մատներով խօսել) խօսքերը։ Եստու ես մկանցի լավերը, որոնց միաքը նա շուտով հաշատ խօսքերը։ Եստու ես մկանցի լավերը, որոնց միաքը էինք այսպիսի նականում էր, և աղջափառ քիչ լիսու մենք կազմում էինք այսպիսի նականում էր, և անդամութիւնները։ «Հեղեն սենեակումն է», Ալբկդը սեղանի վրայ է»։ Աղջբները ի հարկէ շատ ծանր էր քարշում զարծը, բայց խրաքանչիւր նոր հութագուառութիւն օգնում էր միւսի հասկանալուն, մանումկը շուտով սկսեց մեծ քանակութեամբ մաքեր ծանաչել և ես աշնունեսեն կարողանում էի ճիշտ զաղափար տալ նրան իր շուրջը անցածների մասին։

«Աղ տեղի էր ունենում 1887 թ. արդէն ապրիլ ամսին։ Աղ ժամանակից, և մի քիչ էլ զեռ առաջ, ես սկսեցի Հելէնի հնա պարապել Լառուա Բրիջմէնի մնթողի համաձայն, ալսինքն գործածում էի, նրա հնա խօսելիս, միան ան բառերը, որոնց նշանակութիւնը նա կատարելապէս գիտէր։ Բայց ես շուշառով նկատեցի որ աղ մեմորը իմ աշակերտունուա պէտքերին բաւականութիւն չէր տալիս, դրա համար էլ սկսեցի իմ խօսուակցութեան մէջ ներմուծել անսպիսի արտադաշտութիւններ, որոնց մասին բացի մոքի կապակցութիւնից <sup>1)</sup>։ ուրիշ ոչ մի բացարութիւն չէր տալիս Ես սկսեցի նկատել որ նա աղ գործածութեանը վարժուում էր և չաճախ առանց իսկ բառացի բացատրութիւնը հարցնելու։ Այս կրթութիւնից լետով ես սովորութիւն ունէի նրան ասել այնպիսի երկար նախադասութիւններ, որոնց նա հասկանալ կարող էր միմիայն արդէն իրան ծանօթ և գործածած խօսքերով։ Այդ արտադաշտութիւնները, որոնց միտքը կատարելապէս և մանրամասն բացատրւած չէր նրան, սկսեցին շուտով նրան ընտանի դառնալ։ Նա աղ արտադաշտութիւնները իր իւրաքանչիւր օրսավ խօսակցութեան մէջ գործածում էր և, չառաջ քան եռ ինձ հաշիւ տալը թէ որքան կարենորութիւն ունեցան իմ ալս բոլոր դասերը նրա համար, Հելէնը տէր եղել մի բառարանի, որի բառերի մեծ քանակութիւնը ինձ զարմացրեց։

«Հելէնը մեծ հեշտութեամբ սովորեց ան զուրս ցցած դրելը, որոնք գործածում են կողմէրի համար։ Նա շուտով սկսեց նախադասութիւններ կազմել բառերից, որոնք կտորեալու թղթերի վրակ էին տպւած։ Այդ կրթութիւնը նրան ուրախացնում էր և նա աղ անում էր դրելով իսկ, որութիւնն 1887 լուսին ամսին, իր զրի դասից մի ամիս լետով, նա արդէն բոլորովին մինակ ազատ կերպով մի նամակ էր գրում իր հօրեղբօր աղջիկներից մէկին, Նա այժմ գործածում է Բրայլլ սիստեմը և կամ թէ ծակելու գործիքով է գրում և եթէ նա գրում է մէկին, որ ծակած գրելը չէ հասկանում, ան ժամանակ նա գործածում է սովորական տառեր։

«Շատ անձեր, որոնք խուլերի վարժիչներ էին, ինձ հարցնում էին թէ ինչպէս է եղել որ Հելէնը ալդպէս շուտով վարժել էր լեզուն գործածել։ Ես կարծում եմ որ աղ եղաւ մասամբ Հելէնի բնական ձիրքի շնորհիւ, որով նա հասկանում էր լեզուն, նունակէս և շնորհիւ ան բոլոր մեծ քանակութեամբ բառերի, որոնք սովորեցրին նրան խօսակցութեան ժամանակ, չնորհիւ ընթերցանութեան և շնորհիւ շինւած գրքերի շարունակ գործածութեանը։

<sup>1)</sup> Contexte, մի չարակցութիւն մտքերի։ Իեզու չիմացողներին՝ լաճախ է պատահաւմ աղ—մի ոճի կամ բառի միաքը հասկանալ կողքի բառերի զօրութեամբ։

աՅս ոչ մի լատուկ մեթոդ չեմ գործածել իմ ուսուցման մէջ, ազ միշտ նկատել եմ որ վարկեանի մղումը եղել է իմ առաջնորդը Հեղենին վարժեցնելու. և դա եղել է մի շատ ապահով առաջնորդ. Նրա հետ բանակցելու իմ միակ միջոցը եղել է սովորական լեզուն. Այս նրան միշտ խօսել եմ այնպէս, որպէս թէ խօսում էի մի մանուկի հետ որ ինձ տեսնում էր և լսում և միշտ պնդել եմ որ ամենքն էլ ալզպէս պիտի անեն. Այդ մէկը ինձ հարցնում է թէ Հեղենը հասկանում է այս կամ այն, ևս անփոփոխ կերպով պատասխանում եմ. «Առեւ նրան միշտ և եթէ նա այդ բառը չասկանաչ կարող է գուշակել նախադասութեան միւս խօսքերից»:

«Ցանախ ինձ հարցնում են թէ ինչպէս ես նրան կարողացել եմ ըմբռնել տալ բարուական և կամ մտալին լատկութիւնների վերաբերեալ վերացական բառեր. «Դժւար է սակել թէ Հեղենը ինչպէս ակնկը էր հասկանալ ալզպիսի բառերը, սակայն ես կարծում եմ որ նա դրան հասել էր աւելի մտքերի միութեամբ (association) և կրկնողութեամբ, քան թէ բացատրութիւնով. Դա լատկապէս ճշտում է իր առաջին դասերի ժամանակից, երբ նրա բառերի թիւը դեռ շատ քիչ էր և իմ կողմից նրան բացատրութիւններ տալը համարեան թէ անկարելի էր լինում. Ես միշտ աշխատել եմ բարուական կամ մտալին լուզմունքներ և ազն արտալաւող բառերը լարաբերութեան մէջ դնել այդ լուզմունքները զրգուղ հանգամանքներ հետ».

«Ալզպիսով ես ոկում էի գործածել կարելի է, դիցուք թէ և այն ոճերը, հենց որ կարծում էի թէ նա կարող էր հասկանալ».

«Հեղենը միշտ սաստիկ փափագում էր մեզ հանդիպած անձերի անուններն իմանալ, իմանալ նաև թէ այդ մարդիկ ուր էին գնում, ինչ էին անում. և մեր պատբների ժամանակ ես նրան իմ ձեռքիս մէջ հեգում էի ինչ որ տեսնում էր».

«Հետեւալ խօսակցութիւնը ցուց կը տակ Հեղենի հետաքրքրութեան չափը որ նա ունէր գէաի իր շրջապատող անձերը, նաև գաղափար կը տակ այն ձեր մասին, որով հասկացւում էին նրան մի քանի բառեր».

«Հեղեն. Այս փոքրիկ տղակի անունը ինչպէս է».

«Ա, արժուհին. Զգիտեմ, մի օտար տղակ է, գուցէ ֆաք է նրա անունը».

«Հեղեն. Արդիօք ինչ կը խաղաէ նա».

«Ա, արժուհին. Հաւանական է որ հրապարակ է գնում միւս մասուկների հետ խաղալու համար».

«Հեղեն. Արդիօք ինչ կը խաղաէ նա».

«Ա, արժուհին. Կարծեմ զնդակ կը խաղաէ».

«Հեղեն. Արդիօք մասուկները ինչ են անում ալժմ».

«Ա, արժուհին. Կարելի է որ նրանք ֆաքին են սպասում».

«Երբ մի քանի խօսքեր նրան ընտանի էին եղեւ, Հելէնը նրանց գործածում էր իր շարադրութիւնների մեջ։ Սրբն կտորը նրա շարադրութիւններից է, շարադրութիւնը գրւած է 1888 թ., սեպտեմբեր ամսին»

«Այս առաւտու, իմ վարժուինքն և ևս նստել էինք լուսամուտի մօտ և փողոցն էինք նալում։ Մենք անսանք մի վորքիկ մանուկ որ մակթի վրավից գնում էր, վեց տարեկան կը վնէր, բայց գուցէ նրան իր մակրը ուղարկել էր ճաշի համար բան առնելու Նա ձեռքին մի տոպրակ ունէր, ևս կարծում եմ որ հէնց զրա համար էր այլը»

«Ես Հելէնի հետ խօսում էի մատներով և անքան արագ, որքան որ կարող էի խօսել ձայնով մի սովորական լոոզ մանուկի հետ։ Միակ զանազանութիւնը նրանումն էր որ ևս նրա հետ շատ էի խօսում և նա ամբողջապէս կախում ունէր ինձնից ամեն տեսակէտներով»

«Նյա բառերը շատացան փորձերով, որքան որ դեռ ևս փորձեյը սակաւ էին, նրա բառերի պաշարը՝ քիչ էր, քանի աւելի շատ ջշափում էր նա արտաքին աշխարհի հետ, այնքան աւելի իր դասովութիւնը ստանում էր ողջամտութիւն, արամաբանութեան կարողութիւնը ուժովանում էր, դասնում աւելի գործօն, աւելի նուրբ, և նրա լեզուն, որով նա արտազառած էր իր մատին գործողութիւնը, գաւնում էր աւելի պարզ և տրամաբանական»

«Ես համուլած եմ որ Հելէնը իր ուզածը տարտականելու կարողութիւնը ստացել է թէ իր կարդացած գրքերի և թէ իր լնական ձիրքի չնորհիւ կարդալ սովորելուց շատ առաջ ես նրա ձեռքն էի տալիս դուրս ցցւած տառերով գրքեր<sup>1)</sup>։ Նա ժամերով զւարձանում էր նրա տառերը շա շափելով և ուրախ ձիչեր էր արձակում երբ ճանաչում էր իրեն ծանօթ մի բառով։ Պատահում էր լաճախ որ նա մի նոր խօսքի բացատրութիւնն էր ինդրում ինձանից և երբ նրա միտքը հասկանում էր, աշխատում էր այդ բառից զտնել միւս երեսներում։ Աղղպէս հեշտութեամբ էլ նա համկանում էր իր ձեռքի տակ եղած պատմութիւնները և շատ էր զբաղում դրանով։

«Հելէնը սիրում էր նոյնայէս իր կարդացածների մասին ինձ հետ խօսել և միշտ խմ կարծիքն էր հարցում նրանց արժանիքի մասին։ Խօսակցութեան ժամանակ մենք լաճախ գործածում էինք գրքերի մեջ եղած բառերը և արդպիսով նա վարժում էր հասկանալ նաև այնպիսի ոճեր, որոնց միտքը նրան մինչև ալլ ժամանակ անհասկանալի էր միացել նրա ամենից սիրած գիրքն էր օր. Բիւրնխոտի Little lord Fauntleroy զիրքը։ Այդ պատմութիւնը անքան գրաւեց նրան, որ նա պ. Անանոսին ինդրեց որ նրան սպազրի զուրս ցցւած տառերով։

«Հելէնի համար գրքեր ընարելու ժամանակ ևս երբէք աչքի առջե

<sup>1)</sup> Պուրս ցցած տառերով մատների միջոցով կարգում են կորիերը։

չեմ ունեցել նրա մարմահաման պակասութիւնները, այլ վարել եմ ինչպէս մի սովորական մասնուկի հետ. նոյն օրէնքը պահպանուել եմ նաև գույք ցցւած տառերով տարւած գրքերի վերաբերութեամբ. Նա սիրում է ընթերցանութիւնը, շատ շուտ է ըմբռնում նրանց մտքերը և խրացնում է լաճախ հեղինակի կամեցած տեսդեսցիակի բոլորալին հակառակը:

«Հելէնի հետ եղածս առաջին տարին ես նրան կարդացի մի գողաբիկ զրոյց, որ կոչում է «Յակինթ» (Yacinthus). այդ պատմութիւնը նրան շատ հետաքրքրեց և նա դեռ շատ եթեար ակնարկներ էր անում նրա մասին թէ իր նամակների և թէ իր խօսակցութեան մէջ:

«Նա շատ զիւրութեամբ անդիր է անում և լաճախ մեղ գարմացրել է, երբ անդիր արասասանել է ամբողջ անապիսի երեսներ իր սիրած հեղինակներից, երեսներ, որոնց մասին մենք չգիտենք որ նա անդիր արած լինէր. Մեղ լաճախ թւում էր որ նա խրացնում էր հեղինակի մտքերը, նոյն իսկ խօսքերը և նրանց ամբարած պահուժ իր մտքումը մինչև այն ժամանակ, երբ մի մտապատկեր պատճառ էր դառնում նրանց վերաբարադրութեանը: Նա սասափիկ սիրում է բանաստեղծ Օլիւեր Ուանտիլ Հոլմեսին և նրա բանաստեղծութիւններից շատերը անդիր գիտէ: 1889—1890-ի ձմեռը որ մենք անցկացրինք Քոստոնի Պերկինս զալրոցում, Հելէնը սկսեց լսել կենդանաբանութեան զատեր: ՈՒ օր ուսուցչունին, օր. Բէնէտտը բացարաւմ էր Nautilus chamberé սոստրէի<sup>1)</sup> սովորութիւնները. ձեռքում բանած կենդանին, նա մսել էր այդ նկարագրութեան մէջ. Հելէնը կողքիս էր նստել և ես նրան կրկնում էի տառը մասներովս: Այբ նրան ավեն ոստրէն, նա շշափեց մելքութեամբ ձևոքով, իմուու բարձրացաւ տեղից և ծանրութեամբ մկնեց ասել Հոլմէսի այդ մասին գրած «The chambered Nautilus ստանալուր:

«1891—1892 թւականի ձմեռը մի օր ես նրան բագը տարալ, այնակ մի նուրբ ձիւն էր գալիս. այդ ըստ երեսթին նրան զւարձացնում էր և երբ ներս էինք մոնում, նա արտասանեց հետևեալ բառերը՝ «Ձմեռը իր հագուստի ամսաձեւ ծալքերից թոթափում է ձիւնը»: Ես նրան հարցի թէ որտեղ էր կարգացել այդ տաղը. նա չէր լիշում որ մի տեղ կարդացած լինէր: Դալրոցի ուսուցիչներն եւ լալտարաբեցին, որ ազդպիսի մի տող չէ զանուռմ կողերի համար տպած զրքերից ոչ մէկի մէջ. բայց օր. Մարտիթը ձեռնարկեց փնտուել այդ խօսքերը սովորական տառերով տպւած զրքերում և լաջողւեց մի քիչ աւելի ձևակերպւած՝ գտնել Լոնդոնի լուսական գրքերում համաստեղծութեան մէջ որ կրում է. «Զ իւնի քուլան երան վերնարդիրը Արեաց որ Հելէնը, լած լինելով այդ տողերը, անդիտուկցաբար նրան

1) Աստրէն վորքիկ կենդանի է կրկնակի խեցիներով:

տպաւորել էր իր ուղեղի վրայ և այդ առաւօտ նա, մի մտապատկերի շնորհիւ, վերաբաւագրեց <sup>1)</sup>.

«Բայց որովհետեւ Հելէնի համար մտալին երկու հաղորդակցութեան միջոցները լուսին փակւած էին իր ուսման սկզբին և իր չօշափելիք պլիմացւով մասներով աւրութեն էր նրա միակ միջոցը, այդ միջոցով էլ նա արտադատում էր իր մտքերը. Նա այդ բանը գործածելու շատ վարժուց, խօսակցութիւնները համեմատարար արագ էին հաղորդուում նրան և նա ինքն իսկ լաջողում էր մի բոպէի մէջ 24 բառ հեղել.

«Երեք տարւաչ ընթացքում ձեռով այբուբենը (մատներով) եղաւ նրա միակ հաղորդակցութեան միջոցը արտաքին աշխարհի հետ. Այդ միջոցով էլ նա տիրեց մի բառարանի, որ նրան թուլ աւեց խօսել աղաւութեամբ, կարդալ և գրել մաքուր անդղիերէն.

«Սական բնազդումը մղում էր նրան շարունակ խօսքերը բերնով արտասանելու և ես չեմ լաջողում նրան այդ արդելել մտածելով որ իմէն նոյն իսկ նա վարժւէր դրան, պիտի հանդիպէր մի անհաղթելի արգելքի, այն է ուրիշի շրմունքների շարժումը գոնէ տեսնելու անկարելիութիւնը.

«1888—1890 թւականի ձմեռը նա սկսեց նկատել որ իր խօսակցութեան ձեռ տարբերում է Պերկինս զպրոցի իր դասընկերուհիների ձեից և մի օր նա ինձ ալպիսի հարցեր տւաւ <sup>2)</sup>:

«—Կուր աղջիկներին ինչպէս է լաջողում խօսել բերնով. ինչո՞ւ ինձ չեք ստփորեցնում նրանց պիս խօսել:

—«Խուլ մանուկները խօսել կարող են:

«Ես նրան բացատրեցի որ խուլերին խօսել սովորեցնելու դպրոցներ կան, բայց նրանք կարող էին գոնէ իրանց ուսուցիչների բերանը տեսնել և այդ հեշտացնում էր գործը. Նա ինձ պատասխանեց որ ինքը գոնէ կարող էր զգալ իմ բերնի շարժումը իր ձեռքով. Մի քանի օր լետու նա ընդունեց մի տիկնոջ ալցիկութիւն. այդ տիկինը պատմեց նրան մի նոր վեգուհի կողը և խուլ աղջկաւ մասին, որ կոչւում էր Ուանհելլ Վետա, և որին սովորցրել էին խօսել, և հասկանալու համար էլ նա ձեռքովը չօշափում

1) Ալպիսի երեսթներ լաճախ են պատահում, շատ անգամ են մեր ուղեղի վրայ բնախուրուն կերպով տպաւորւում ախսպիսի խօսքեր կամ նախադասութիւններ, որոնց մենք ականջ չէինք զրել և սական որոնք տպաւորւել էին ինքնուրովնաբար և մի լարմար մտապատկեր նրանց վերաբաւարարում է ի զարմանս մեր:

2) Զայէտք է մոռանալ որ մինչև ձախով կամ բերանով խօսել ոսովորելը՝ Հելէնը միայն մասներով էր խօսում (հեղում) կամ հարցեր տալիս.

էր ուրիշի բերանը: Անկարելի է Հեղենի ուրախութիւնը նկարագրել երբ նա լսեց այդ նոր լուրը: «Յո չատ զո՞ն եմ, ասում էր նա ինձ—որովհետեւ այժմ ևս ապահով եմ որ կարող եմ խօսել ոսկորելու: Յո նրան խոստացալ իմ ծանօթի մի ավելիոց մօտ տանել որ զբարում էր խուզերին կըրթելով, հարցնելու համար թէ կարիքի է արդեօք նրան ել խօսելը սովորեցնել: «Ո՞հ, այս, գոչեց նա ուրախութեամբ—ես դիտեմ որ կարող եմ, քանի որ Ուանհնելզ Աւան կարողացել է այդ անելու: Ազ օրը նա այս նո չխօսեց այդ մասին, բայց երեսմ էր որ միշտ մտածում էր նրա վրայի ուրախութիւնը նրան չժմողեց քնելու այդ դիշեր:

«Իր խօսելու ցանկութիւնը անքան մեծ էր որ նա շուտով սկսեց բերնով բառեր արտասանել և ես տեսաչ որ լուրջ զատեր սկսելը չպէտք էր ուշացնել: Եւ ես նրան տարաք Քոստոնի, Newbury Street փողոցի մեջ գտնող խուզերի Հորաս զպրոցում օրիորդ Սարա Ֆիւլբրի մօտ, որ զըսդոցի տեսչունին է: Օրիորդը անքան հիացաւ Հեղենի ողերութեան վյաէ որ խորոն զործի սկսեց նրա հետ:

«Իր այլ մարդերի պէս խօսելու ցանկութիւնը չափանելուց մինչեւ աղպահ անելու համար դասեր սկսելը անցել էր Յ ասրիւ Նա առաջէնէր կարողանում բացի հնչւններից ուրիշ բան արտասանել և ցանկութիւնից վառ վառում էր որ կարողանար ամբողջ բառեր ասել:

Խօսքերի երկարութիւնը կամ նախադասութեան կազմութիւնը նրան երբէք հոչչեն կանոնեցնում: Մի շաբաթ էր որ նա սկսել էր իր դասերը երբ հանդիպեց իր բարեկամ Ռոտքանաքիին և փորձեց նրա անունը արտասանել և ետ չկեցաւ այդ մոադրութիւնից մինչև որ բոլորավին պարզ արտասանեց, թէս սաստիկ ներկութիւն կրեց: Նրա աշխաղը մի բազէ խոկչէր դադարում, և այս տարօրինակ պժը, որով նա զիմադրում էր եղած սոսկալի արգելքներին, ցողց էին տալիս նրա կամքի զօրութիւնը և ինչ լօքութիւնը, որով նա օժտած էր:

«Նրա ուրախութեանը մասնակից եղան նաև Հեղենին շրջապատող ները, երբ նա վերջապէս ձախով սկսեց բացառորել իր մտքերը և ցանկութիւնները, այդ զարգացումը հրաշալի էր, այդ չաջողութիւնը բոլորի սոլսասածից վեր եղաւ, նա բերանով խօսելը գերադասում է մատներով հեղելուց և վերջին ձեզ միան այն ժամանակ է զործածում, երբ ուղում է մի գաղտնի բան ասել: Նա չատ ուրախանում է երբ օտարները նրան կոմպլիանեներ են անում նրա խօսելու մասին: Յաճախ բարձր ձախով նա կարգում է Պերլինս զպրոցի մանուկների համար և մասամբ ել հասկանում է մեր խօսածը շշափելով մեր շրթունքները»:

Անա այդ է օր. Սիւլիւանի պատմութիւնը: Այժմ մէջ բերենք օր. Ֆիւլօրի պատմածը որ մեզ կը յաջոնի թէ ինչպէս է յաջողւել Հեղենին վարժեցնել բարձր ձախով խօսելու:

## ՄԻՍՍ ՖԻՒԼԷՔԻ ՊԱՏՄԱԾՀ

«1888 թիւ լունիսին Հորասի զպրոցում ինձ մօտ եկաւ Հելէն Կելէրը. նրան ընկերացիկ էին իր մայրը, պ. Անահնոսը և իր վարժուհին—օր. Սիւլիւանը. Հելէնը ացեղեց զպրոցի զասարանները, և որամինան ևս նկառում էի որ նա շատ հետաքրքրուում էր աշակերտուունիներով և մեծ հեշտութեամբ անդլիերէն լեզուն գործածում, մաքից անցաւ. թէ, արդիօք չէր կարելի վարժեցնել նրան ձախով խօսելու ևս ալդ իրան չ'ասացի, որովհետեւ ալդ միջոցին համաձայն չէին որ նա ալդ օրգանը գործածէր Բայց երկու աշարի լիտու մի տիկին նրան պատմել էր թէ ինչպէս մի փոքրիկ նորւեգուհի, որ կուր էր եղել և խուլ, սովորել էր խօսելու. Այս պատմութիւնից գրգռւած, Հելէնը իր մատերով հեղեց ահա էլ ևմ ուզում սովորել: Նրա ցանկութիւնը անքան սասաիկ էր որ ինձ խնդրեցին խօսին դասերը սկսել նրա հետ:

Ես սկսեցի նրա հետ, նախ սովորյնելով ան վոխաղարձ լարարելուութիւնները, որոնք գտնուում են բերանի և չնչափողի մէջ, լիսու նաև նրանց տեղը. Աւելի լաւ համելացնելու համար ալդ, ես նրան չօշափել տւի իմ դէմքի վերին մասը և նրա մատները զրի բերնումն օհաւու լեզուս այն ձեռք զրի, երբ մարդ արտասանում է ի տառը. ես նկատել տւի Հելէնին թէ ինչպէս լեզուն սպակում է ցածի ճնոտի վրայի ատամների ետևում և թէ ինչպէս երկու ծնոտները պէտք էր մի քիչ բաժանել միմեանցից. Երբ նա հ սոկացաւ իմ բացատրութիւնը, անուհետեւ նրա ցուցամատներից մէկը զնել տւի իմ ատամների վրայ, իսկ միւսը չնչափողի—վզի ամենացած մասի վրայ—և մի քանի անգամ արտասանեցի ի տառը. Այս բացատրութիւնների յամանակ, Հելէնը իմ դէմ ու զէմս էր զանուում և իսխաս մեծ ուշադրութեամբ հետեւում էր ինձ. Երբ ես զաղարեցի ձան հանելուց, նա իր մատները զրեց կոկորդիս և ատամներիս վրայ, իր լեզուն և ծնոտներն էլ արեց իմինիս պէս—ինչպէս որ նա չօշափելով իմացել էր—և մաքուր կերպով արտասանեց ի տառը, անքան մաքուր, որ կարծես թէ իմ արձագանքն էր. Երբ իմացաւ որ իր ալդ առաջին փորձը լաջող եղաւ, մի քանի անգամ կրկնեց:

«Անուհետեւ ես մատներով համելացրի նրան թէ ինչպէս ատառը հնչելու համար հարկաւոր էր լեզվի մէջտեղը փասացնել և ծնոտները իրարուց շատ հեռացնել: Երբ ես արտասանում էի ալդ տառը, նա իր մատները զրած ունէր իս ատամների և կոկորդի վրայ և ինքն էլ սկսելով արտասանել ինձ պէս, քիչ լիսու չաջողուեց կատարելապէս հնչել և տառն էլ. Անուհետեւ մենք հերթով կրկնեցինք ի և ատառերը, միմեանց հետ համեմատելու համար. ալդպէսով անցանք և տառին, որը նա հեշտութեամբ սովորեց:

«Ազդ ժամանակ Հեղենը ինձ հարցրեց թէ, ի՞նչ էին նշանակում այդ տառերը և թէ արդեօք նրանք խօսքեր են կազմում, ես պատասխանեցի որ զրանք միան տառեր էին:

«Էստ անուռնեան և արտասանելու սրոշ դիրքը տւի բերնիս և մինչդեռ Հեղենը մատներովը հետևում էր իմ բոլոր շարժւածքներին, արտասանեցի առաջ (բազուկ) բառը, առանց վարանելու նա կրկնեց և հիացաւ երբ նրան չափնեցի որ արտասանածը մի բառ էր:

«Յետու ես նրան ասել աւի րարա, տամա (պապա, մամա) բառերը որ նա փորձել էր սովորել իրանց տան իսկ՝ Նա խկոն բաւական զօրիդ կերպով արտասանեց բորբար, տապաւում. ես նրան խորհուրդ ստի խօսել աւելի մեղմութեամբ և երկար կանգ առնել վանկերից առաջինի քան երկրորդի վրաւ. Ազդ երկու խօսքերը կրկնեցի աւելի յաճախ և միևնուն ժամանակ իմ մատներովս չօշափեցի նրա ձեռքի երեսը՝ նրան ըմբռնել տալու համար վաճ կերի չարաբերական երկարութիւնը. Մի բոլեից վետոյ նա արդէն արտասանեց րարա և տամա բառերը երաժշտական մեղմութեամբ:

«Յ. սպէս անցաւ Հեղենի առաջին դասը. Մի աննման աշակելսուհի էր նա որ մեծ ուշագրութեամբ հետևում էր զատերին և ոչինչ չէր մոռածում. Նա միան 10 դաս առաւ և ահա անուռնեան կարող եղաւ լեզվի գլխաւոր տարբերը բաղադրել. Երբ հեռացաւ ինձնից՝ նա չնորհքով խօսում էր:

«Իր առաջին դասը սկսեց 1890 փետրար 26 ին, իսկ մարտ 19-ին նա բերանացի պատմում էր իր բարեկամուհիներին դոքտոր Հոլմեսին արած ացցելութեան մասին. Մինչդեռ նա պատմում էր ալզ, ես նրա կողքին նոտել էի և զննում ու լուսում էի նրան ուշագրութեամբ. Միտին 4 բառ եղաւ, որոնց միտքը ես չհստիացակ և որ խնդրեցի նրանից մատներովը կրկնել. Անա նրա պատմածը:

«Մի քանի շաբաթ որպանից առաջ, մի կիրակի, գեղեցիկ կէսօրից հետու էր երբ ես գնացի տեսնելու մի սիրելի բանաստեղծի որ կոչում է «դ-ր Հոլմէս» Ես նրան գտայ նստած իր շքեղ գրադարանում, շրջապատուած «գրքերով ե լուսաւորւած մի պակածառ լուսուի. Պէտք է որ նա շատ հիկ լինի գտնելով ալզպիսի բարեկամների մէջ. Խմ վարժուհին ասաց «որ Շատը գետակը հասում էր գրադարանի լուսամուտի տակից. Պոքտորը և շատ էր սիրում ալզ գետակը».

«Դոքտորի բանաստեղծութիւններից մի քանիսը կարդացել եմ ևս «և մի քանիմները անգիր գիտեմ. Շատ եմ սիրում ալզ բանաստեղծութիւնները, ես նրանց սիրում էի չառաջ քան առիթ ունեցակ իմ բառ «զուկներս վաթաթել բանաստեղծի վզով և նրան ասել որ նա ինձ սատ «տիկ ուրախացնում է, նունպէս և բոլոր կողք մանուկներին, որովհետեւ «նրա գրւածքները տպւած կան դուրս ցցւած տառերուի».

« Դոքտոր Հոլմէսը մի ծեր մարդ է. միասին խօսեցինք, նա ինձ « շատ լաւ բաներ ցուց տւեց, իր տան լուսանկարը և իրենն էլ ինձ տւեց: « Այս այն տունն է որի մասին նա խօսում է իր Դաշնամուրի « մուտքը գրւածքի մէջ»:

«Նելէնը այդօր զարմանալի դիւրութեամբ խօսում էր: Նա ինքը գիտակցութիւն ունէր որ մի նոր զօրութեան տէր էր եղել և զրանով էլ կատարելապէս ուրախանում էր: Տուն վերադառնալիս ինձ ասաց, «Այժմ ես այլ ևս համր չեմ: Նելէնի ինձ զրած :891 թիւ ապրիլ և հոկտեմբ: <sup>1)</sup> ամսւալ նամակների մէջ կարելի է կարդալ թէ ինչու աղջիկը կամինում էր սովորել խօսելը և թէ ինչպէս նա երջանիկ եղաւ զրանով: Ահա այդ նամակներից մէկը:

### «Սիրելի օրիորդ Ֆիւլլի:

«Եկու առաւաօտ սիրոս ուրախութիւնով լցւած է, ես սովորեցի մի քանի բառ. էլ արտասանել և կազմել մի քանի նախադառութիւններ»

«Երէկ երեկոյ ես գնացի բագը և անտեղ լուսնի հետ խօսեցի: Նա « նրան ասացի, «Ո՛վ լուսին, եկ ինձ մօռւ կարծում էք որ իմ խօսելս « նրան զւարճութիւն պատճառէր:

«Նշացէս մայրս զո՞ կը լինի. ես կարող եմ զիմանալ մինչև լունիս « ամիսը, ես ալժմեանից ուրախանում եմ նրան խօսելուս համար, նոյն « պէս և երբ փոքր քրոջս հետ կը խօսեմ: Միլդրէտը ինձ չէր հասկանում « երբ ես նրան մատերով խօսում էի, բաց այժմ ես կարող կը լինեմ առ « նել ծնկանս վրայ և նրան երկար պատմութիւններ պատմել, նա կը « զւարճանալ և մինչք երկուս էլ երջանիկ կը լինենք: Դուք էլ զո՞ չՔք « պաքան մարդկանց երջանկութիւնով, ես ձեզ գտնում եմ աճնքան բարի « և համբերող և ձեզ սաստիկ սիրում եմ»:

«Անցեալ երեքշաբթի, վարժուհիս ասում էր որ դուք ուզում էք իմանալ թէ ինչպէս է եղել որ ես ցանկացել եմ ձախով խօսելը սովորել ևս ձեզ կը պատմեմ, որովհետեւ պարզ կերպով լիշում եմ իմ մտածութիւնները այդ մասին:

«Երբ ես փոքր էի, ամբողջ օրը զրիթէ մօրս ծնկների վրաէ էի անց « կացնում, որովհեան շատ վախկոտ էի և չէի սիրում որ ինձ մենակ թող՝ « նէին, ևս սովորութիւն ունէր իմ փոքրիկ ձեռքը դնել մօրս զէմքի և « շրթունքների վրաէ երբ նա խօսում էր. և այդ ինձ զւարճացնում էր « երբ զգում էի որ շարժում էին նրանք: Ան ժամանակ չգիտէի թէ նա « ինչ էր անում, որովհետեւ ես չէի իմանում ինչ որ շուրջս կատարւում « էր: Երբ աւելի հասակաւոր եղաւ և խաղում էի իմ գալեակի և փոքրիկ « նեղրերի հետ, նկատում էի, որ նրանք շարժում էին իրանց շրթունք « ները աճնպէս ինչպէս մալրու Մի քանի անդամ ինձ զւարճացրեց այդ « ևս փորձում էի նրանց պէս անել ուրիշ անդամ էլ դա ինձ սաստիկ

« բարկացնում էր և ես համբուրում էի խաղընկերների բերանը, ես « ի հարկէ չէի կարծում որ արածո չարութիւն էր:

« Ետա լետոց մի վարժուհի եկաւ և ինձ սովորեցրեց մատերով լաւտ- « նել միտքս, դա ինձ շատ ուրախացրեց և ինձ գոհացրեց, երբ ես Բոս- « տոնի զպրոց գնալիս հանդիպեցի խուլերի, որոնք իրանց բերնով էին « խօսում: Մի օր էլ մի տիկին տեսալ որ Նորսեգիալումը եղել էր և պատ- « մեց ինձ որ նա այդ երկրում տեսել էր մի կոյր և խուլ աղջկայ, որին « ոռվարցրել էին ուրիշներին հասկանալ, Այս լաւ լուրը ինձ հիացրեց և « այդ օրից ես համոզւեցալ որ ես էլ պիտի կարող լինէի սովորել:

ԱՅդպէս փորձեցի ես իմ խաղընկերներիս պէս խօսել բայց վար- « ա ժուհիս ասաց, որ ձանը մի շատ նուրբ զործիք է և որը ես կարող « էի փշացնել եթէ գործածէի առանց ուղղութեան: Նա ինձ խոստացաւ « տանել մի շատ խելօք և սիրելի ատիկնոչ մօտ, որ պիտի կարողանար սո- « վորցնել ինձ խօսելը, Այդ տիկինը դուք էք: Այժմ ես այնքան ուրախ « եմ որքան փոքրիկ թռչունները, որովհետև խօսել գլուխմ: Գուցէ մի օր « էլ երգել սովորեմ: Այն ժամանակ ահա իմ բարեկամուհիները կը զար- « մանան և գոն կը լինին:

« Զեր փոքրիկ աշակերտուհի, որ ձեզ սիրում է.

Հ. Ա. ԿԵԼԼԵՐ»:

Օրիորդ ՈՒ ԱԼԻՒԹԵԱՆԸ իր պատմածի մէջ խօսել է ՀԵԼԷՆ ԿԵԼԼԵՐի նշանաւոր ցիշողութեան մասին և այն միջոցի մասին, որով մա- նուկին յաջողուում էր միաը պահել իր սիրելի հեղինակների զոր- ծերից ամբողջ երեսներ: Այդպէս շատ էր պատահում ՀԵԼԷՆին և նա յանկարծ զործածում էր բանաստեղծական այնպիսի նախադա- սութիւններ, որոնց որաեղից ցիշելը չփառէին. նա աւելի հեշտու- թեամբ միան էր պահում բանաստեղծական և երեակայութեան լեզուն և իր ողին աւելի հակւած էր դէպի այդ կողմը:

Վերջին տարիներումն, քանի որ ՀԵԼԷՆը ծանօթացել է շա- տերի հետ և միջոց է ունեցել աւելի դիւրութեամբ խօսել նրանց հետ, իւրացրել է շատ բան գրականութիւնից: Դուրս ցցւած տա- ռերով գրքերի մէջ անգամ նա իր բանաստեղծական ծարաւին յա- գուրդ տւող շատ ճարակ է գտնել: Վրբերի երեսները, որ նա կարդում է, ընդունում են պատկերների կերպարանք, և նրա վառ- երեակայութիւնը այդ պատկերներին ոչ միայն կեանք է վերա- գրում, այլ և գոյներ: Նա մոքով անմիջադէս փոխադրւում է այն- աեղ, ուր տանում է նրան ընթերցանութիւնը կամ պատմութիւնը,

և բնաւորութիւններն ու նկարագրութիւնները նրա համար կենդանանում են։ Այն պատկերները որոնք գծւում են նրան, իւսողնում են նրա ցիշողութեան մէջ անջնջելի հետքեր և յաճախ է պատահում, որ նա, մի բան պատմելիս, որ նման է իր կարդացածներին, որ նա գործածում է ամենայն ճշգրութեամբ հեղինակի ոճը և լեզուն։ Պատահել է որ նա իր բարեկամուհիներից մէկին նամակ է գրել՝ գործածելով Հոլմէսի մի բանաստեղծութեան բառերը, բառաւ բառ։

Մի օր, երբ նա Ալաբամայում ջրվէժների եզերքներին պայցու էր գործում, յանկարծ աղաղակեց. ձեւաները ժողովում են ջրվէժների եզերքում, դիտելու համար իրանց սիրուն տեսքը, որպէս հայելու մէջ։ Անկարելի եղաւ գանել թէ որտեղից էր հանում նա այդ ցիտատը, որովհետեւ պարզ երևում էր որ նա այդ ֆրազը կարդացած պիտի լինէր մի տեղ։

Մի օր էր երբ հիւսիսումն էր, մի գորնանային օր, զգալով օդի բուրմունքը այնպէս որպէս արտայախտում է Լոնդֆելլո իր «Հիավաթա» գրւածքի մէջ, Հելէնը իր նամակիներից մէկում գրում է սոյն տողերը։

«Երկիրը սարսում էր մի նոր կեանքի գործողութիւնից, սիրոս ուրախութիւնից երգում էր։ Ես երազում էի հօրական տունը, ես գիտէի որ այդ արեգակնային երկրում գարունը իր բոլոր շքեղութեամբ փայլում է։ Ես մտաբերում էի բոլոր թաշունները, բոլոր ծաղիկները, ամբողջ մարգերն ու արօնները։»

Հելէնին ոգեսորութեան մէջ էր ձգում հրով եպիսկոպոսի պատմութիւնը, որ գովարանում էր Աստուծոյ բարութիւնը։ Նամակներից մէկում եղիսկոպոսը, կամենալով ցոյց տալ Աստուծոյ զէսպի մեզ ունեցած սիրոյ ձեզ, ասում է՝ ճնա մինչեւ իսկ մեր բնակւած տան պատերի, այսինքն բնութեան պատերի վրայ՝ արձանագրում է որ նա մեր Հայրն է։ Յետագայ տարին Հելէնը ասում էր. Թնձ թւում է որ աշխարհս բարութեամբ, գեղեցկութեամբ և սիրով լիքն է. որքան երախտապարտ պիտի լինենք մեր Հօրը երինաւոր, որ մեզ տւել է այդքան ուրախութիւն։ Նրա սէրն և խնամքները արձանագրւած են ամեն տեղ, բնութեան պատերի վրայ։

1891 թւի աշնան ընթացքում, օր. Սիւլիւանը երկար բա-

ցատրել էր թէ ինչպիսի գեղեցիկ գոյներ են սուանում տերևները ձմեռւաց մօտենալու ժամանակ։ Այդ պատմութիւնը Հեղենին սաստիկ հետաքրքրել էր և քիչ յետոյ նա, իր բարեկամ այ. Անայնոսի տարեղարձի առթիւ, շարադրեց մի զրոյց, որ կրում էր Սառուցի թագաւորը (King Frost) խորագիրը. տաճնեհինդ օրւայ մէջ զրեց նա այդ զրոյցը։ Անկարելի է թւում որ այդ զրոյցի մէջ յայտնած մոքերն ու պատկերները նրա երեւակացութեան արգիւնքը լինեն, մանաւանդ զարմանալի է թէ ին։ գեր են խաղում գոյները մի կոյր մանուկի գրւածքի մէջ։ Երբ հարցաքննեց Հեղենը այդ զրոյցի մասին նա ասաց. «Ես ոչ մի տեղ չեմ կարգացել այդ զրոյցը, ես եմ գրել նրան Պ. Անայնոսի համար»։ Աշխատութիւնը ուղարկւեց ում համար որ յատկացրած էր։ Երկու լրագիրներ Gazette Goodson և Mentor-ը հրատարակեցին այդ զրոյցը, մենք կտալիս ենք նրա թարգմանութիւնը այստեղ, յուսալով որ նա բաւական հետաքրքրէր կը լինի ընթերցողի համար։

### ՍԱՌՈՒՅԹ-ԹԱԳԱԽՈՐ (The Frost King)

ԱՄԱՌՈՒՅԹ-ԹԱԳԱԽՈՐ ապրում է հիւախում մի պալատի մէջ, չափանական ձիւների երկրում։

Այդ պալատը, որ ամենաչքեղն է, սրանից դարեր առաջ են շինւել, Սառնապատ թագաւորի իշխանութեան օրով. Հեռւից նա նմանում է մի սարի, որի ծալը հասնում է մինչեւ երկինք, ընդունելու համար վերջացող օրւակ համբուրները։

«Բայց մօտից կարելի է տեսնել որ ալդ ցցւածքները բոցարձակ գունդեր են իսկապէս։ Պալատի ճարտարապետութիւնը աննման է. պատերը շինւած են սառցի մեծ կտորներով և վերջանում են աշտարակներավ։ Պատի մուտքը շինւած է մի կամարաձե անցքի ծալում և պահպանւած է գիշեր-ցերեկ արթուն մնացող 12 սպիտակ արջերով։

«Հէնց որ առիթ ունենաք, հարկաւոր է ձեզ գնալ Սառույց - թագաւորին ալցելելու որ ինքներդ տեսնէք նրա սքանչելի պալատը։ Ծեր թագաւորը ձեզ շատ լաւ կընդունի, որովհետեւ նա մանուկներին սիրում է և իր ամենամեծ ուրախութիւնը նրանց հաճուք պատճառելն է։

Անզ, պիտք է զիտենաք որ ալս թագաւորը, ինչպէս ընդհանրապէս բոլոր թագաւորները, ունի իր պալատում մի մեծ զանձ, որ բաղկացած

<sup>1)</sup> Այն սուրբը, որ իրը թէ ընծանել է բաժանում Ծննդեան գիշերը.

է մեծ քանակութեամբ ոսկուց և քարեղիներից. բայց որովհետեւ նա մի ազնիւ թագաւոր է, աշխատում է լաւ գործադրել իր հարստութիւնը. Բոլոր գետերի վրա չինել է տալիս ապահու պէս թափանցիկ և երկաթի պէս ամուր կամուրջներ, թափ է տալիս ծառերը անքան, որ ընկուզները ընկնեն մանուկների ոտքերի մօտ, իր ձեռքի մի թեթև հպումով նա քնեցնում է ծաղիկներին և վախենալով որ չինի թէ մենք ցաւինք, ծառերի տերեները ներկում է ծիրանի և սոկեղուն գեղին գոյներավ. Այդ ժամանակ անտառները անպէս գեղեցկանում են, որ մեզ միսիթարում են ամառակ կորստի համար:

«Յոս ուղում եմ ձեղ պատմել թէ ինչպէս Սառուց-թագաւորը ներկելու մտածեց ծառերի տեխները. Մի հետաքրքիր պատմութիւն է այդ:

«Մի օր, երբ նա իր գանձն էր զնում և մտածում էր թէ ինչպէս գործադրի լաւ բաների համար, չանկարծ միտքը բերեց իր գւարթ զրացի սուրբ Նիկողայափին ¹), Նրան կուզարկեմ իմ հարստութիւնները, մտածեց նա, այդ մարդը գիտէ թէ որտեղ են բնակում խեղճերն ու թշւառները և նրա վափառկ սիրտը միշտ լիքն է նրանց օգուտ տալու ծրագիրներով:

«Յառուց թագաւորը կանչեց խմիոն զւարթ փոքրիկ հիւրիների, էտու ցուց տւաւ նրանց գանձ սպարունակող ամանները և սասաց՝ «Ճարէք աշ բուլուր սուրբ Նիկողայոսի մօտ. դէ՞հ, շուտ արէք»:

Հիւրիները խստացան հնազանդել և շուապեցին ճանապարհ ընկնել, քաշելով իրանց հետ իրանց ծանն ընսները՝ նրանք մրթմրթում էին և գանգաւուում որ ալդքան գործ տւին իրանց, որովհետեւ նրանք փոքրիկ ծռը հիւրիներ էին և աւելի լաւ էին համարում խաղը քան աշխատելը:

«Քիչ վնասով նրանք հասան մի անտառ և, անստեղ լոգնած զգալով, կանգ առին մի քիչ կազին քաղելու իրանց ճանապարհը չարունակելուց առաջ, Բայց, մտածելով որ կարող էին զողացնել տալ իրանց կրած հարստութիւնները, նրանք տարան ամանները և պահեցին ծառերի տերենների մէջ անպէս որ ոչ ոք չէր կարող գտնել պահւածների տեղը:

«Ետոյ սկսեցին մազլցել ծառերի վրա և վնասով կաղիններ, անուհետեան սկսեցին խաղալ և ցատկուելու. Անքան զւարճացան ալդ չար փոքրիկ հիւրիները, որ մոռացան իրանց գործը և թագաւորի շուապեցնելու պատէրը. Բայց շնորով իմացան թէ ինչու Սառուց-թագաւորը պատվիրել էր նրանց շտապելու. Նրանք կարծում էին թէ լաւ թագցերել էին դանձը, բայց մեծ թագաւոր Արեգակը գտել էր ամանների տերենների միջում և, որովհետեւ կուած էր Սառուց-թագաւորի հետ և նրա բարեգործութեան ձեի հետ երբէք չէր համաձայնուում, այդ առիթով գոհ եղաւ և ուզեց մի խաղ խաղալ իր հակառակուողի դլխին:

«Արեգակ թագաւորը ժպտում էր մեղմութեամբ, տեսնելով թէ ինչ-

պէս գանձի ամանների բարակ պատերը հալւում կոտրում էին և քարեցինը ու ոսկին հալելով, ողողում էին ծառերն ու թփերը իրանց հեռակով:

«Սական չարաձճի հիւրիների մտքովն անգամ չէր անցնում եղածը, որովհետև նրանք ալժմ պառկել համազատանում էին խոտերի վրա մեծ կոճղների մօսու Վերջապէս նրանք պարզ կերպով լսել սկսեցին կաթիլների ձաւնը, կաթիլներ որոնք սահելով տերեւ առ տերեւ թափում էին ծառերի ստորոտների թփերի վրայի Սաստիկ շփոթւցին, երբ նկատեցին նրանք որ ալդ անձրեւ ոչ ալ ինչ էր եթէ ոչ հալւած քարեղէն և ոսկի, որ գալիս պնդանում էին տերմների վրայի նրանց ներկելով ամենագեղցիկ կարմիր մի գոյնով: Իրանց շուրջը նաևելով, հիւրիները տեսան որ ամբողջ գանձը հալել էր, որ բոլոր եղնինի և ալ ծառերը անտառի մէջ ծածկել էին նրանով և ցոլացնում էին սքանչելի գոյներ:

«Տեսարանը աննման էր, բայց փոքրիկ անհնազանդները շատ էին սարսափել և չէին կարողանում զմայլել նրանով: Նրանք վախենում էին որ Սառուց-թագաւորը նրանց պատժէր, դրա համար էլ վախան և պահւեցին թփերի մէջ և զողալով սպասում էին թէ ինչ էր լինելու նրանց վախը իրաւացի էր, որովհետև նրանց երկար բացակալութիւնը թագաւորին երկմտեցրեց, նա հեծաւ հիւրիսակին Քամու վրա և սկսեց ուշացող-ներին վնտուել Հասնելով անտառին, նա իսկոն նշանարեց ծառերի նոր տեսքը: Գտնելով նոյնպէս կոտրած ամանները, որոնուից զեռ կաթկթում էին կորած հալով հարստութիւնները, նա հասկացաւ ամեն ինչ:

«Սկզբում նա սաստիկ բարկացաւ և հիւրիները վախից զողում էին իրանց թագստոցների մէջ, Յաւտնի չէր շատ թէ դրա վերջը ինչ էր լինելու, եթէ ալդ միջոցին փոքրիկ տղաների և աղջիկների մի խումբ չխուժէր անտառի մէջ:

«Երբ մանուկները տեսան ծառերի ալդպէս վիալուն տեսքը, ուրախութիւնից վեր վեր թռան և սկսեցին մեծ-մեծ հիւրեր կտրտել՝ տուն տանելու համար: «Ճերեները ծաղիկների պէս գեղեցիկ են» գոչում էին նրանք ուստիկ ուրախացած:

«Նրանց ալդքան ուրախութիւնը մեզմացրեց Սառուց-թագաւորի բարկութիւնը և ջնջեց թագաւորի կճճիւը: Նա ինքն էլ սկսեց հիանալ ծառերի ալդքան պերճ զարդարանքի վրա և ասաց, «իմ գանձերը կորսած չեն քանի որ նրանք փոքրիկ մանուկներին վարձութիւն են պատճում: իմ ծով հիւրիները և իմ մահացու թշնամին ինձ սովորեցրին բարութիւն անելու մի նոր ձեռ:

«Երբ չար հիւրիները լսեցին թագաւորի ալդ խօսքերը, զուլու նկան իրանց թագստոցից և նկան ներտղութիւն խնդրեցին:

«Ալդ օրից, Սառուց-թագաւորը հաճուք էր զգում ամեն աշուն զար-

գարել ծառերի տերեները, և եթէ զրա համար նա չէ զործածում ոսկի կամ թանկագին քարեր, ես չգիտեմ իսկապէս թէ ապա էլ ինչ է անում աղպիսի դոցներ արտադրելու համար խակ գուշք, գիտեք արդեօք»:

Երբ այս զրոյցը հրատարակեց, ընթերցողներից մի քանիս ները ցիշեցին որ զրա նման մի զրոյց, որ կոչում էր «Յ ը տ ի հիւրիներ» (The Frost Fairies) կարգացել են զրոյցների մի հաւաքածուի մէջ: Հաւաքածուի հեղինակն է Մարգարիտ Կէմբի և զրքի վերնագիրն է «Յ իւրդի և իր բարեկամուհի հիւրիները» (Birdie and his fairy Friends): Երկու զրոյցները միմեանց ոչ միայն մոքով նման են, այլ և իրարու բոլորովին համապատասխան են նոյն իսկ արտացայտութիւնների մէջ: Հաշակւեց ուրեմն որ մի պղագիստ (զողութիւն) է եղել և կասկածն էլ բնական էր: Օրիորդ Սիւլիւանը, սակայն, նաև ընտանիքի ոչ մի անդամ չէր ցիշում որ հարդացած լինեին այդ գիրքը: Հարց ու փորձ արեցին բոլոր այն անձերին որոնք Նելէնի հետ զբաղւել էին: Երկար ժամանակ անկարելի եղաւ բացատրութիւնը գտնել: Վերջապէս տիկինն Հոպկինս, որի մօտ Նելէնը անցէրկացրել իր 1888 թւի ձմեռայ կէսը, ցիշեց որ ունէր այդ զրքից մի օրինակ և որ սովորութիւն ունեցած լինելով կարգալ նրանից կարներ Նելէնին, անշուշտ կարգացած պիսի լինէր նաև «Յ ը տ ի հիւրիներ» զրոյցը: Այդ զրոյցը անշուշտ շատ հետաքրքրել էր մանուկին և այնուհետև մոռացութեան մէջ մնացել, մինչև որ երբ օր. Սիւլիւանը նկարագրել էր նրան տերեւնեցել, մինչեւ որ Նելէնը աշխատացին տեսրը, որ, իբր մտապատկեր, իսկոյն վերարտագրել էր անդիտակցաբար ամբողջ զրոյցը. այդպիսի անգիտակցական վերաբատրութիւններ յաճախ են, բայց հազիւ թէ այսպիսի պայմաններում յայտնեն:

Օրիորդ Սիւլիւանը թղթակցել սկսեց օրիորդ Կէմբի—զրոյցի հեղինակի—հետ, որ նրան ուղարկեց իր գրքերից մէկը. և շուտով նկատեցին որ Նելէնը այդ զրքից փոխ էր առել ուրիշ շատ զրոյց. ներ էլ, բայց էլի անգիտակցաբար, ոչ զիտմամբ (inconscient): Երբ նրա առաջ կարգացին «Յ ը տ ի հիւրիներ» զրոյցը, նա իսկոյն ճանաչեց նրան իբր իր գրած, միայն մի քանի փոփոխութիւն. ներով. և շատ զարմացաւ երբ նրան ասացին որ զրոյցը տպւած է եղել նրա ծնւելուց շատ առաջ: Նա գեռ չհամազւեց որ իր

դրածը փոխառութիւն էր և երբ իմացաւ որ նրան մեղադրում էին պլազմիատի մէջ, նրա ցաւը մեծ եղաւ, այնքան մեծ որ նա արտացայտնեց իր ցաւը իր յուշատերի մէջ հետևեալ խօսքերով։

30 յունուար 1892թ.

«Այս առաւտա բաղնիք գնացի, և երբ վարժուհիս եկաւ մազերս չըտկելու, շատ տխուր լուր էր բերել»

«Մի մարդ զրել է պ. Անախնասին որ իմ շարադրած զրոյցը որ նւիրել էի իր ծննդեան տարեղարձի օրը, իմ զրածը չէ, որ ես նրան վերցրել եմ մի տիկնոջ հեղինակութիւնից. Այդ մարդը ասում է որ այդ տիկնոջ պատմութիւնը կոչում է «The Frost Fairies». Ես հաստատ գիտեմ, որ այդ զրոյցը երբէք չեմ կարդացել։

«Ինձ շատ է տխրեցնում երկ մտածում նմ որ կան մարդիկ, որոնք մեղադրում են ինձ շարութեան և կեղծութեան մէջ։ Սիրոս դառնութեամբ լիքն է, որովհետեւ ես սիրում եմ գեղեցիկ ճշմարտութիւնը, սիրում եմ նրան ամենալին հոգով։

«Ես սաստիկ վրզովւած եմ և չգիտեմ ինչ անեմ. Ես երբէք չէի կարող մտածել որ կարող էի այդպէս մի մեծ սիսալ գործել. Կատարելապէս ապահով եմ որ այդ պատմութիւնը ես ինքս եմ զրել. Պ. Անախնոսն Ել տխուր է և սաստիկ ցաւում եմ որ նրա տխրութեան պատճառ գարձակ։

«Այս զրոյցը զրելու մտածութիւնը եկաւ ինձ ալս աշնան, երբ վարժուհիս ինձ նկարագրում էր եղանակի տերենների գեղեցկութիւնը, երբ մենք պտուս էինք զործում Fern Quarry-ի մէջ։ Ես երեակալում էի, որ հուրիմները միան կարող էին նկարել այդպէս և որ Սառուց-թագաւորը պիտի որ ունենար մի մեծ գանձ, քանի որ բոլոր թագաւորներն էլ ունին. Յւ որովհետեւ աշնան տերենները ուկեզօծ են, կարմիր, կանաչ, ես մտածում էի որ այդ գունները պէտք է որ թանգարին քարեր լինէին. Ես գիտէի որ այդ գեղեցիկ տեսարանը սարտիկ զւարձացնում է մանուկներիս, քանի որ ես, որ չեմ սեսնում, կարողանում եմ սական հանուք զգալ զրանից. ես ամենքին էլ ինձ նման էի կարծում։

«Ես շատ մտածեցի այդ տխուր լուրերի վրայու»

1892թ., մարտ 9-ին Սարգարիս Կէմբին Հելենի վարժուհուն գրում է զրոյցի արտադրութեան մասին այսպէս։

«Որպիսի զարմանալի գործունեակ ոգու տէր է ալս աղջիկը! Աթէ նոյն իսկ պատմութիւնը կարդալուց անմիջապէս քսով էլ զրէր, նորից դա զարմանալի կը լինէր, ի նկատի ունենանով իր վիճակը. Բայց որ այդ հուրիմների պատմութիւնը նա կարդացել կ Յ տարի առաջ և այժմ նրան արտադրել է այդպէս կենդանի և կատարեալ, աւելացնելով նրա վրա արտադրել է այդպէս կենդանի և կատարեալ, աւելացնելով նրա վրա»

անփական այնպիսի փոփոխութիւններ, որոնք զբուցը աւելի կատարեալ են անում—ազդ երևովթը շատ տարօրինակ է:

«Հելէնից հասակաւոր մի անձ, իր բոլոր զգալարանքներով օժտւած և մեծ տաղանդի տէք անգամ, չատ մեծ դժւարութեամբ պիտի կարող լինէր անել ալղպէս:

«Ես գանում եմ շատ անիրաւ և անարդար, որ Հելէնին դատապարտում են պլագիատի մէջ. այդ երևովթի պատճառը իր չիշողութիւնն է. իր աշխատաւթիւնը մի անձնական լատկութիւն ունի և նողնը կը մնայ եթէ շարտնակի նա աղղպէս արագ և լաւ զարգանալ:

«Ես շատ մանուկներ եմ ճանաչել, իմ ամբողջ կեանքո նրանց մէջն եմ անցկացրել: Ինձ ամինից շատ հետաքրքրել է նրանց զբաղեցնելը և զւարձացնելը և նրանց բնաւորութեան զանազան զծերն ուսումնատիրելը: Ես սիան մի մանուկ եմ ճանաչել, որ Հելէնի չափ ուսանելու ծարաւ է ունեցել և նրա չափ էլ ունեցել է մեծ կրթութիւն ու շարադրելու մեծ տաղանդ: Ազդ մանուկը խակապէս մի Փէնոմէն էր:

«Ծնորհակալ եմ, որ Հելէնի լուշաեարը ուզարկել էք. ես այժմ աւելի ճիշտ եմ ըմբռնում Հելէնի ցաւը քան առաջ. Իմ սիբու բարեներս նրան և ասացէք որ էլ չմտածի զրա վրայ:

«Ոչ ոք իրաւոնք չունի մտածելու, որ նա չանցաւոր է, և որ կը գաչ որ նա կը գրի մի անպիսի սիբուն պատմութիւն կամ անպիսի լաւ բանաստեղծութիւն, որ շատերին ուրախութիւն կը պատճառի:

«Ասացէք նրան որ առանց խառնուրդի խմելիք չկաէ և որ պիտի գիտենալ վարելել անուշ կաթիւները, համբերութեամբ տանելով զառների դառնութիւնը»:

Մարգ. Աշմբիոյ:

Հելէն Կելէրի զարգացման այս պատմութիւնը բաւական կարող է զարմանք պատճառել. այդ զարմանքը սկեպտիկականութիւնից էլ զուրկ չի եղել: 1893թ. ապրիլ 29-ին ամերիկական միլլագիր, The Palmetto Leaf, յայտարարեց որ անկարելի է չնկատել, որ այդ բոլոր պատմութիւնը եթէ ոչ կեղծ է, գոնէ շատ շափազանցրած է: Պատասխան տրւելը չուշացաւ. 1893թիւ յունիսի «American Annals of the Deaf» հանդէսի մէջ խմբագիրը հետեւեալ վկաչութիւնը աւեց. «Երկար տարիներ զբաղւած լինելով խուլերի կրթութեամբ, ինքս ինձ համարեցի Palmetto Leaf թերթի ասածները ճշգրտելու և զրա համար էլ անձաւրի գնացի Հելէն Կելէրի մօտ և, նրա հետ երկար խօսակցու-

թիւն ունենալուց յետոց, պնդում եմ որ Volta bureau-ի պատմածը լիովին ճիշդ է»։ Նա պնդում է նաև որ պատմւածի մէջ չկայ ոչ մի չափազանցութիւն և որ Հեղէնը շատ դիւ բութեամբ խօսում է և ուրիշներին էլ հասկանում է շօշափելով խօսողի շըրթունքները։ Նա եզրակացնում է որ այդպիսի տարօրինակ ֆէնոմէնները կարելի է վերագրել երեք պատճառների։ 1) Մանուկը ունի մտաւորական մի շատ արտաքոյ կարգի ընդունակութիւն։ 2) որ տարօրինակ կերպով զարգացած է նրա շօշափելիքի զգացողութիւնը և 3) որ մանուկը ունի ճարպկութիւն, համբերութիւն և սէր դէպի իրեն կրթողները։

Ի հարկէ սխալ կը լինէր զրանից եզրակացնել, որ բոլոր կոյր և խուլ մանուկները կարող են Հեղէն Կելէրի աստիճանին հասնել. բայց այս բացառիկ դէպքը թույլատրում է կազմել մի այսպիսի կարեոր միաք, որ մարդկացին ոգին կարող է, իր բնական պայմաններից դուրս, ուրիշ պայմաններով էլ զարգանալ, քանի որ մի աղջիկ, զրկւած լսողութիւնից և տեսքից և միմիայն ունենալով շօշափելիք, կարողացել է ամենազարգացած մանուկների չափ առաջ գնալ<sup>1)</sup>։

---

<sup>1)</sup> Այս գրւածքը վերցրած է Փրանսերէն ամսագրից՝ «Bibliothèque Universelle», տարբերակ 1894 թ.։

\* \*

## ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

### I

Ես պատահմամբ հրապուրւեցայ  
Տեսնելով քեզ, ազնիւ վարդ,  
Ալ այտերըդ—նուրբ թաւիշեայ,  
Դրբեւ փլթթած մի դրախտ:

Ես ասացի—ինչ գեղեցիկ  
Նա վառւում է հեռւից,  
Ո՛հ, ի՞նչ սիրով շքեղ փնջիկ  
Ես կը կազմեմ նորանից...

Մինչ այս բերնիս, ես սիրառենչ  
Սլացայ դէալ՝ քեզ—սիրուն վարդ,  
Բայց շատ ափսոս... տեսայ ես ի՞նչ...  
Ո՞հ, մի անհոտ ժանդավարդ:

25 մայիսի, 1894 թ., Թիֆլիս.

### II

Ինչու, ասա, այնքան սիրով  
Բորբոքւած ինձ մօտեցար,  
Ինչու բուռն վարդ-յոյսերով  
Երջանկութիւն խոսացար:

**Ինչու,** ձեռքս քնքոյշ սեղմած,  
Մի հայեացքովդ դիւթեցիր,  
Եւ անարգել սիրոյ դռներ  
Մատաղ սրտիս բացեցիր:

**«Ս**տիր անվախ— այնտեղ եղեմ  
Քեզ է սպասումն, ասացիր,  
Նորից տւիր ահեղ խօսուում,  
Բայց վերջն էր խաբեցիր:

**Միթէ,** անգութ, նորա համար,  
Որ սրտիս հետ խաղացիր—  
Եւ, ջարդելով սիրոյ քնար,  
Իմ տանջանքով խնդայիր:

**Ա՛ս,** տմարդի, դու կամեցար  
Նիւթել ինձ սև դերեզման.  
Բայց տես, երգիչն ծաղրում է այժմ  
Քո վարմունքըդ դիւական:

**Եւ** այս երգով նա անվեհեր  
Կառուցում է սև արձան,  
Ուր քանդակած քո արատներ  
Պիտի յիշւին յաւիտեան:

## ՍԱՆՉԱՐՉԱԿ ԱՆԱՍԻՒՆԵՐԻ ԶԲՈՍԱՆՔԸ

(Պ Ա Տ Կ Ե Ր)

### Յ. Գ Ո Ւ Բ Բ Ս Խ Ե Ա Ն Ե

Որրանում՝ մանկիկը մորթւեց...  
Փողոցում՝ աղջիկը պղծւեց...  
Լաց լինելուց՝ մօր աչքերը կուրացան...  
Բեռ կրելուց՝ հօր կռները գոսացան...  
Եւ դու... լուել ես... նախախնամութիւն.  
Միթէ... ախ, միթէ զու ես հրամակում...

Աղօթարանը նոր-նոր էր բացւում...  
Գունատ լուսինը, փայլուն ասաղերը՝ արևամուտ հորիզոնից  
հետզհետէ ցած էին զլորւում։  
Անկայուն ամպերը, մոխրագոյն վերարկուների մէջ պօղւած,  
երկնակամրի շուրջն էին թափառում։

Լաց էին լինում՝ կոկոնները.  
 Արևի շողիկներին փափադում էին կոկոնները...  
 Զեփիւռը թռաւ, կոկոններին գրկեց,  
 Լոյս շողիկներից՝ բարեներ բերեց:  
 Կոկոնները սիրտ առին.  
 Միրամ վառւեց, աէր գառաւ,  
 Սէրը, կրծքում պարփակւած,  
 Միրահարին էր կարօտ...  
 Դլսիկը դրած զեփիւռի թռերին,  
 Տարփատենչ դէտակլը <sup>1)</sup> յառած երկնքին,  
 Կոկոնները, զեփիւռի հետ գիրկ ընդ գիրկ,  
 Նիրհ առնելով <sup>2)</sup> օրօրուում էին,  
 Լոյս շողիկներին՝ երազում էին...  
 Զեփիւռը կոկոններին օրօրում էր,  
 Հմայուն սօսաւիւնով գեղգեղում էր.  
 Զեփիւռը քնարում էր՝  
 —Տենչալի շողիկի համբոյըը՝  
 Ամօթխած կոկոնին կեանք կը տայ.  
 Կեանք ճաշակող կոկոնը՝  
 Երկնային զարդ կը գառնայ.  
 Թռէք, թռէք, ձեզ են սպասում,  
 Ո՞վ սիրավառ, լոյս-շողիկներ...  
 Լաց էին լինում կոկոնները,  
 Սէր էին ինդրում կոկոնները...  
 Զեփիւռը քնարում էր՝  
 —Տենչալի շողիկի համբոյըը՝  
 Ամօթխած կոկոնին կեանք կը տայ.  
 Կեանք ճաշակող կոկոնը  
 Վարդ-թագուհի կը դառնայ.  
 Վարդի տեսքը, վարդի բոյը՝  
 Հրեշտակլը միայն կունենայ.

<sup>1)</sup> Ուշադիր նապահածք:

<sup>2)</sup> Նիրհ առնել—մրափել և զարթնել պարթերաթար:

Թռէք, թռէք, ձեզ են սպասում,  
 Ով սիրածին, լոյս-շողիկներ:  
 Երգեց զեփիւռը.  
 Լոեց զեփիւռը.  
 Նրա զեղգեղանքը և հհամար ելեէջների բեկրեկւց,  
 Մթնոլորտի հեռու խաւերում՝ գնաց ու մարեց,  
 Շողիկներին՝ լուր չտարեց...  
 Արևելքի դռներում՝  
 Երինազաշտի տափերում՝  
 Ա՛լ վարդ-դիպակ սփռեցին...  
 Երինք, գետին գրկաբաց՝  
 Լոյս արևելի շողերին՝  
 Փափագ-փափագ են սպասում...  
 Կոկոնները սիրոհար շողերի մօտալուտ դալուսալ զգացին.  
 Սասարիկ ամօթից՝ սիրու բոցերից՝ շառագունեցին.  
 Զքնագեղ զէմքից՝ դալար քօղերը մէկ-մէկ իջուցին,  
 Նրբասուն այսուրը արշալու սին զէմ արին...  
 Զեփիւռը կոկոններին օրօրում էր,  
 Հմայուն սօսաւիւնով զեղզեղում էր,  
 Զեփիւռը քնարում էր՝ —  
 — Տեսչալի շողիկի համբոյը՝  
 Ամօթխած կոկոնին կեանք կը տայ.  
 Կեանք ձաշակող կոկոնը՝  
 Վարդ-թագուհի կը դառնայ.  
 Վարդի տեսքը, վարդի բոյը՝  
 Հրեշտակը միայն կունենայ...  
 Թռէք, թռէք, մի՛ ուշացէք,  
 Ով սիրավառ, լոյս-շողիկներ...  
 Դողդողում էին կոկոնները...  
 Արշալուսին դարձնում էին կիսաբաց նուրբ շրթունքները...  
 Երկնային տարփաւորի կենսատու համբոյըներին փափագում  
 էին հոգեակները...  
 Մի՛ բուդէ եւս և ահա երկնային սիրով պէտք է յափշտակւէին  
 իմ ամօթխած կոկոնները...

Լոյս շողիկների գրկերում պէտք է փայփայւէին իմ ամօթիած կոկոնները...

Անդրերկնային հաճոյքներից պէտք է ճաշակէին...

Հրեշտակի տեսք, հրեշտակի բոյր պէտք է վաստակէին...

Տոպէն՝ խորախորհուրդ էր...

Բայց ախ... Վայ տւեցէք զլիներիդ, ով անբաղդ էակներ... այդ խորախորհուրդ բուպէին՝ ամօթխած կոկոնների թփիկների մօտ՝ անասնական փռնչոց լսւեց...

Փալանները շուռ ուած էշերի մի խումբ՝ սանձարձակ տռճիկ էր տալիս, իշական գւարճութիւններ էր վայելում...

Անասունների այդ խումբը՝ աքացի տալով, արմատախիլ արեց իմ սուրբ կոկոնները...

Սմբակակոխ արեց նրանց ամօթխած թշերը...

Փոշի դարձրեց բուրալի կրծքերը...

Աղքի հետ խառնեց պաշտելի մասունքները...

Զեփիւռը կոկոններին այլ ևս չէր օրօրում...

Նմայուն սօսաւիւնով այլ ևս չէր գեղգեղում...

Անգութը այժմ միայն փչում էր...

Աղք և կոկոն միմեանց էր խառնում...

Տեսնող աչքերից՝ հեռու էր տանում...

Նենդաւոր զեփիւռ...

## ԴՊՐՈՑԱԿՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑԻ

(Շարունակութիւն՝ <sup>1)</sup>)

V

ԼԵՒՈՆԸ ՍՄԲԱՏԻՆ

Здесь мною входятъ въ смертный градъ къ мученіямъ,  
Здѣсь мною входятъ къ мукѣ вѣковой,  
Здѣсь мною входятъ къ падшимъ поколѣніямъ...  
Оставь надежду всякъ, сюда идущи! <sup>2)</sup>).

Սիրելի Սմբատ! Այս տողերն եր կարդում Գանտէն դժովքի  
շրան ճակատին. այս տողերն են սազում և ձեր կրթարանի մուտքի  
վրայ: Այնպէս չե, բարեկամն?

Ես շատ խղճացի արտաքսւած աշակերտին: Թշւառը զոհ է  
զնացել տղիսութեան և ֆանատիկոսութեան: Ասելով թէ «այստեղ

<sup>1)</sup>Տես «Մուրճ» 1894 թ. № 3:

<sup>2)</sup>Այս տողերը ես բերում եմ ոռոսերէն թարգմանութեամբ, որով-  
հետեւ սա աւելի հասկանալի կը լինի, քան հետեւալ գրաբառ թարգմա-  
նութիւնը,

Ընդ իս երթալ է 'ի քաղաքն աշխարհահեծ,  
Ընդ իս երթալ է գաշխարհն լաւիտենից,  
Ընդ իս երթալ է 'ի գատակուըն կորստեան.  
Օհ անդր 'ի ձենջ, որ մոտանէքդ, ամենաչն լուա:

շատ բաներ թատրոն են ցիշեցնում», աշակերտը անգիտակցաբար մի ճշմարտութիւն էր յայտնել Ձեր Դրակոնին, ի հարկէ, անյատ է եղել, որ քրիստոնէական թատրոնը առաջ է եկել եկեղեցական արարողութիւններից (միստերիա), ուրեմն կրօնական ծագում ունի նա չգիտէր նմանապէս, որ թատրոնը, ինչպէս և գովրոցը, ծառայում է բարոյականութեան:

Իսկ ձեր վերակացուները... Ինչպէս տեսնում եմ, ձեր մեծապատիւ խալիքացի ստորաքարշ սարուկներն են դրանք: Հրէշներ! Երանի թէ, նրանք իմանալին թէ որքան է ձգում նրանց վարկը լրակելու սովորութիւնը!

Գանք այժմ մեր ուսումնարանին:

Այսուեղ հիմա մի նոր մտաւոր շարժում է աչքի լնկնում: Այժմ բոլորեւեան կարդում են ընթերցանութեան գրքեր՝ սկսած ստորին լասարանից մինչև ամենաբարձր դասարանի աշակերտները: Առաջ աւարտում էին բոլորովին անզարգացած և առանց մի որոշ աշխարհայնացքի: Կարդում էին անզիտակցաբար, առանց առաջնորդի, ինչ որ ձեռներն էր ընկնում: Ընթերցանութիւնից շատ քիչ օգուտ էին քաղում, որովհետև թէ անկանոն էին կարդում և թէ սակաւ:

Ընթերցանութեան վրայ այժմ լուրջ ուշադրութիւն է դարձնում մեր ուսուցչական խումբը: Անցեալ օր, օրինակ, այդ առիթով երկար խօսակցութիւն ունեցայ աշակերտներիս հետ:

— «Պարոններ, ասացի, — ինձ շատ հետաքրքրում է մի բան, մինչև այժմ ինչպէս էք վերաբերել ընթերցանութեանը? Արդեօք շատ գրքեր էք կարդացել? կամ զգում էք, որ կարդացածից օգուտ քաղել էք?

Հարց ու փորձից ես եկայ խիստ անմիտար եզրակացութեան: Բանից երեաց, որ ոմանք զբեթէ ոչինչ չեն կարդացել, և զարգացողութիւնը անհամապատասխան է հասակին և դասարանին: Աշաշերանիրից մէկը մինչև անգամ չիմացաւ թէ ում գրածն է «Պևազօք»-ը և ինչ բան է: միայն ասաց թէ դա կոլեգիա է (ուզում էր ասել՝ կոմեդիա): Միւսները կարդացել էին մի քանի քննազառական յօդւածներ և արդէն իրաւունք էին համարում իրանց համար հեղնութեամբ խօսել ՚ի քանի նշանաւոր հեղինակների մասին. Պուշ-

կինը, օրինակ, այդպիսիների համար շատ ամնուշան բանաստեղծ էր, թէպէտ սրա երկասիրութիւններից շատուրը անյացտ էին նրանց: Կաչին և ուրիշ տեսակները: Սրանք կարդացել էին Դրեպէր, Սպենսէր, սիրում էին վիճել քարձը փիլիսոփայական թեմաների վրայ, օրինակ, հոգեկան ընդունութիւնները բնածին են թէ սասացական. յաճախ գործ էին ածում այնպիսի տերմիններ, որոնց իմաստը մութ կերպով էին ըմբռնել կամ ամենուին չէին հասկացել: Սրանք հակառակ էին բանաստեղծական գրւածներին և արհանարում էին վէպը: —«Ոտանաւորը—յիմար բան է, իսկ վէպի վրայ միթէ արժէ ժամանակ կորցնել?» —Ինչ որ կար սրանց մէջ գրական, թերի էր, իսկ բացասականը՝ սաոր քննադատութիւնից: Մինչ այն աստիճան անհնամ՝ էր թողւած այսուեղ ընթերցանութեան զործը!

—«Զարմանալի է, պարոններ, որ ձեզնից շատերը մինչեւ այժմ գեռ չեն կարդացել ուսուաց և եւրոպական հեղինակների ընտիր երկասիրութիւնները: Ահա աւարտում էք, բայց ձեզ համար, կարելի է ասել, գրեթէ գոյութիւն չունին Շեկսպիր, Մոլիեր, Դիկինս, Վալտեր-Սկոտ, Գոդու և ուրիշ շատերը: Զղիտէք նրանց գրւածների բովանդակութիւնը, չէք իւրացը նրանց գաղափարները, յայտնի չեն ձեզ նրանց նկարագրած ճշգրիտ և կենդանի տիպերը. մինչդեռ նրանց երկերի ամենաընտիր տեղերը գուք անգիր պիտի իմանալիք այժմ:

«Ես ինքս բաւական կարդացած եմ: Բայց երբ համեմասում եմ կարդացած օգտաւէտ գրքերի այն մեծ քանակութեան հետ որ գեռ մնում է, ես խիստ ափսոսում եմ: որ մի առաջնորդ չեմ ունեցել: Ես շատ ուշ հասկացաց ընթերցանութեան նշանակութիւնը: Միայն այժմ եմ աշխատում լրացնել անցեալի պակասը և թերութիւնները: Դուք համեմատաբար աւելի բախուար էք, որովհետեւ յանձին ձեր ուսուցիչների գուք ունիք ընթերցանութեան առաջնորդներ:

«Դուք սովորած էք կանոնաւոր գրել խօսել. կարողէք ամենաբարդ թւերի վրայ ամեն տեսակ գործողութիւններ կատարել. գիտէք երկրագնդի բոլոր երկիրները, քաղաքները, գետերը. ձեզ յայտնի է ազգերի գարաւոր անցեալլ, պատմութիւնը: Դուք ծանօթ էք և ուրիշ շատ գիտութիւնների, որոնք բոլորն էլ ներդործել են

ձեր մոռի վրայ և լայնացրել են ձեր մտաւոր հորիզոնը։ Նրանք կարևոր են եղել, և դուք, երեխ, ամենայն բարեխղճութեամբ նրանց ուսումնասիրել եք։

«Բայց ձեզ յացնի է թէ ինչպէս են ապրում մարդիկ այժմ՝ ձեր հայրենիքում? Դիտէք այս կամ այն ազգի սովորութիւնները, հաւատալիքը, նիստ ու կացը, բարք ու վարքը? կարող եք ասել, որոնք են եղել մարդկացին իդէալները այս կամ այն դարում? Որոնք են եղել մարդկութեան ցաւերը և ինչ է եղել նրանց սկառածառը? Որ աւտիճանի կարողացել է բարձրանալ մարդու հոգին և մինչ որ աստիճան լնիել? Ծանօթ են եղել մարդկացին հոգու ամենաբարձր ձգութիւնները և ամենաստոր հակութները? Գիտէք թէ ինչպէս է արտայացուում և ինչ հետեանք է ունենում չար և բարի տարրերի մաքառումը կեանքի մէջ?»

«Այս տեսակ շատ հարցերի պատասխանը կարող է տալ միմիայն կանոնաւոր ընթերցանութիւնը։ Առանց սրան՝ կրթութիւնը անկատար է, թէկուղ աւարտման վկայականի մէջ հինգեր շարւած լինին։»

Սինուհետեւ ևս ցոյց տոի թէ ինչպէս պէտք է կարդալ։ Ընթերցողը, ասացի, այնքան ուշադիր պէտք է լինի, որ կարողանայ ցիշել կարդացածի բովանդակութիւնը, կարողանայ լոյրոնել այն գաղափարը, որ արծարծում է հեղինակը, հասկանայ տիպերը, որ նկարագրւած են երկասիրութեան մէջ, և, վերջապէս, ամենայաջող տիպերը անդիր իմանայ։

«Կանոնաւոր ընթերցանութեան օգուտը ակներեւ է. մի կողմից կրթուում է մարդուս գրական ճաշակը առհասարակ, միւս կողմից՝ լայնանում և խորանում է աշխարհայեցքը։ Բայց ակներեւ է և անկանոն ընթերցանութեան վասակար լինելը. նա դարձնում է մարդուն կամ անսանձ երևակացող կամ իմաստակ՝ առանց մտաւոր պաշարի, առանց զարգացողութեան։ Եթէ շատ վատ է տարւած ընթերցանութեան գործը, այն ժամանակ թշւառացածը նման է այն կարճատես մարդուն, որ կամենում է խնձորնել։ Հաւաքել ծառի տալից, բայց օձի գլուխ է ընկնում ձեռը։»

Ամբողջ ժամ ևս խօսում էի ընթերցանութեան մասին։ Իմ ոգեստութիւնը անցնում էր և աշտկերտների վրայ։ Իմ դէմքի և

ձեռներիս շարժումները այնքան վարակել էին, որ շատերը ինձ հետ միասին բարձրացնում էին գլուխները, աչքները բաց անում, երեսների արտայայտութիւնը փոխում, այնպէս որ ժաղիալ յանկարծուեղի էր տալիս լուրջ և մոտախոհ կերպարանիքի:

Ես ընտրւած եմ զրադարանապես: Օգնականներս են բարձր դասարանի մի քանի աշակերտները: Առ այժմ մենք կարգի ենք բերում զրքերը և զասաւորում պահարանների մէջ ըստ մանագիտութեանց: Միեոյն ժամանակ մենք կազմում ենք զրքերի ցուցակ իւրաքանչիւր դասարանի համար. ցանկացողը, սակայն, կարող է կարգալ և իւր դասարանի ցուցակից գուրս, բաց միայն թողարկութեաբ ուսուցչին Գրադարանում, պէտք է ասել, կան բաւականին մեծ թւով այնպիսի զրքեր, որոնք միայն աւելորդ տեղ են բունում. նրանց հարկաւոր է գուրս տանել: Իւրաքանչիւր ուսուցչին ներկայացրել է կարևոր զրքերի ցուցակ, ընդամենը մօտ երկու հազար մանէթի: Դպրոցական վարչութիւնը արդէն կարգադրութիւն է արել բերւելիք զրքերի մասին:

Ընթերցանութեան վրայ հսկում է մանկավարժական ժողովը, որ գումարւում է ամեն շաբախ: Իւրաքանչիւր աշակերտ, մի զիրք կարդալուց յետոց, կարող է, ըստ իւր ցանկութեան, հաշիւ տալ իւր կարգացածի մասին: Այդ տեսակ զեկուցումներ աչքի են առնուում մանկավարժական ժողովի նիստերում:

Սիրելիս! ներին ինձ, նամակս երկարացաւ: Բայց մեղաւորը ևս չեմ, այլ զրիչս, որ տաքացած ձիու պէս թռչում է առանց ետնայելու:

Ինչ դրութեան մէջ է ձեր զրադարանը, և այդտեղ ուշադրութիւն դարձնում են արդեօք ընթերցանութեան վրայ?

Քո Լեռն

## VI

### ՍՄԲԱՏԼ ԼԵԽՈՆԻՆ

Սիրելիս! Դու ինձ հարցնում ես թէ ինչ դրութեան մէջ է ընթերցանութեան գործը մեր ուսումնարանում: Ինչ ասեմ? Նաև և շատ վատու կարդում են թէ ոչ, օդուա քազում են ընթերցա-

նութիւնից թէ ոչ, հարուստ է գրադարանը թէ աղքատ, պէտք է նոր զբքեր բերել թէ ոչ, այս տեսակ հարցեր մեզ չեն զբաղեցնում:

Դասերդյ լաւ պատրաստիր, ուսուցչիդ մի՛ հակառակիիր դասարանում, փողոցում հանդիպելիս՝ խոնարհ ողջունիր,—և դու ամենաշովելի աշակերտներից մէկն ես: Սամերի մաքի զարդացման վերայ ուշադրութիւն գարձնող չկայ:

Մեր զբադարանապետն էլ մի Աստծոյ պատիժ է մեր դպրոցի համար: Թէ ինչպէս են սիրո առել այսպիսի մի թշւառականին յանձնել մատենադարանի բանալիները և հազարաւոր զբքեր, այդ ոչ ոք չէ կարող հասկանալ: Այսքանս է միայն յացնի, որ նա մեր զբակոնի քրոջ որդին է:

Մօտ քառասուն տարիկան, կարծահասակ, կուպիտ գծագրութիւններով մի մարդ է մեր Գաճեանը, գրադարանապետը: Իւր ասելով, ուսումն աւարտել է տասն և հինգ տարի առաջ: Վարել է զանազան պաշտօններ՝ գրասենաեակներում, գովրցներում, երկաթուզային կայարաններում: Պաշտօնավարութեան ժամանակամիջոցը ամենայաջող դէպքում եղած է տարի և կէս: Պատահել է շատ անգամ որ անգործ պարապ շրջել է գիւղից գիւղ, քազաքից քազաք, անտուն, անտէր, ամեն տեղ ծաղրւած, հալտծւած, սովի օրեր քաշած: Չնայած այս բոլորին, նա մնացել է անուղղելի օպտիմիստ:

Եկատ թէ չէ մեր ուսումնարանը, սաների ուշադրութիւնը նա զարձրեց իւր վերայ իւր հնամաշ սիջակով, որ պապղում էր կեղարից, մավլաճառի շորի պէս, բաց մանաւանդ իւր կովի աչքերով: Նորան այնպէս էր թւում, թէ բոլորեքեան թափանցեցին նորա հոգին, իմացան նորա անցեալը և սրաներումն արդէն ծիծաղում են վերան: Ահա ինչու կասկածամութեամբ և անհանգիստ նայում էր սորա կամ նորա երեսին, կարծես ուզում լինէր ասել. «Ի՞ո ինձ չէք ծաղրում? Տո բան չէք լսել իմ մասին?»: Եւ արդարեւ, աշակերտները կարծես բնազգմանը հասկացան թէ ում հետ գործ պիտի ունինան և որքան զւարձաւթիւններ պիտի պատճառէ իրանց այդ տարօրինակ մուրիբ: Խորոցական պաշտօնեացի ոչ մի արժանաւորութիւն ուս չունի: Բայց այն բոլոր յատկութիւնները, որոնք կարող են մարդու յարգն ու պատիւլ ձգել նոյն խոկ երեխաների առաջ, բնութիւնից ստացել է նա առասպէս: Խելք առած բանը

չունի, բայց տեսէք թէ ինչպէս իրան խելօք է կարծում։ Արժէ անցնել չարաձնի աշակերտների մօտով, երբ որ նոքա գրադարանապետի մօտ խմբւած՝ լսում են նորա խրամները։ Ինչպէս են միմեանց ականջին փափսում, իրար աչքով մնում, միամիտ հարցեր առաջարկում և յիտոյ իմաստուն Խիկարի գատողութեան վերայ հոմերեան ծիծաղով ծիծաղում։ Մի զարմանալի բան եւս։ Այդ մորդը կարծում է, թէ մեծը պարտաւոր չէ յարգել փոքրին, և տեսէք թէ ինչպէս է նա գէմքը ծոռում, երբ աշակերտը յարգանքի ողջոյն չէ մատուցանում։ Նորան Այգափիսի գէպքում նա խկոյն տեսչին է զիմում։ Սորա համար առհասարակ անտանելի են այն աշակերտները, որոնք մեծի հետ խօսելիս՝ զլուխները բարձր են պահում, ուղիղ նայում են մարդու աչքերին և տւած հարցերին համարձակ սբատախանում են։ Այգափիսիները «ըմբոսա» են հոչակւում. այգափիսիների գէմ է սրում՝ իւր ասամները մեր գրակոնը իւր արբանեակներով։

Ահա մեր գրադարանապետը։ Գրքեր է ցուցակագրում, գրացուցակ չկայ և չի էլ լինելու։ Ամենաընտիր գրքերը կորչում են։ Առանց մի յարգելի պատճառի նա կարող է չտալ աշակերտին այս կամ այն գիրքը։ Եւ ընդհակառակը, երբեմն տալիս է նա աշակերտների ձեռքը այնպիսի դրգեր, ըրոնք բոլորվին անհամապատասխան են թէ նոցա զարգացմանը թէ նոցա հասակին։ Երրորդ գասարանում ես տեսել եմ՝ մի երեխայի ձեռքին Ալարկոնի «Մէրը» – ազատ սիրոյ վէա։ Զորրորդ գասարանում աչքիս են լոկել Հիւզօփի «Տորկւեմաղան»։ — անմատչելի, Արիստոտելը — աւելի ես անմատչելի տասն և վեց տարեկանի համար։

Ոչինչ չէ խոնգարում գրադարանապետին ամեն օր բաց պահել գրադարանը։ Բայց չգիտես ինչու, շաբաթւայ մէջ միայն երկու օր է բաց լինում։ Բնական է, որ նշանակւած օրերում աշակերտները տասնեակներով պիտի պաշարեն գրադարանը։ Իսկ երբ մարդիկ խմբւում են, կարդ պահելը դժւարանում է։

— Բացէք գուոը! լսում են ձայներ սաների միջից։

— Գիրք ենք ու գում! գոչում՝ են միւսները։

Գոյւած գրան ետեից լսում է, Գաճեանի մրթմրթոյը, բայց գուոը չէ բացւում։ ինչ է անում, Ասոծուն է յայտնի։ Անհանգիստ

աշակերտները հրում՝ են դուռը. ծիծաղը տեղի է տալիս բարկութեան. աղմուկը սասականում է:

—Սուս կացեք! այս ինչ աղաղակ է? չէք ամաչում? բարկացած յանդիմանում է վերակացուն:

Վերջապէս բացւում է գրադարանի դուռը, և աշակերտները հեղեղասի պէս ներս են թափում:

—Տւէք ինձ Դարւինի... կամենում է խօսել աշակերտը:

—Զհամարձակւես այդ անսասւածի մնունը տալ այս սուրբ յարկի տակ, —պատասխանում է գրադարանապետը:

—Բայց նի առաջին հատորը, պահանջում է մի ուրիշը:

—Ինչիդ է պէտք Բայցնը? կարգա կիկերոնի երկասիրութիւնը և ասան ծերութեանն: Այս ասելով, վեր է կենում բերելու յիշւած գիրքը:

—Ես Բայցն եմ ուզում:

—«Ամէկը», Խաֆֆու վէպը, խնդրում է երրորդը:

—Որքան քի: կարդաք Խաֆֆու վէպերը, այնքան աւելի լաւ. նա բողոքական բաներ է քարոզում: Կարգալ ես ուզում, վերցրն ս. Աւզուստինոսի երկերը, կարգա Ասկերերանի ճառերը ու «Ոռփերք հացկականք», գրաբառ էլ կը սովորես:

—Վոլոկի վէպիկները, լսում է սաների միջից:

—Դու չգիտես, որ այդ խստիւ արգելւած է? կարգա «Պօղ և Վիրդինէ», կարգա «Տելեմաք»: Այս այս տեսակ գրքեր կարդացէք: Լաւ լսւ բարոյական խրառներ, ինչքան ուզէք, կարող էք գտնել:

Այսպիսով գրադարանապետը կապում է մէկին «Վասն ծերութեան», միւսին «Ասկերերանի ճառերը», երրորդին «Պօղ և Վիրդինէ»: Նոքա, ի հարկէ, տանում են, թերթում առաջին էջերը, յետոյ փակում և սպասում, մինչև որ կը գայ նշանակւած օրը, գրադարանը կը բացի ի, կը վերադարձնեն վերցրածը և կը ստանան նորը, ցանկացածը: Եթէ այդ ցանկացածը կրկին չստանան, նոքա գիտեն այն ժամանակ թէ որտեղից ձեռք կը բերեն:

Ահա այսպիսի պայմանների մէջ է մեր Դրակոնը կրկնում ամեն օր—կարգապահութիւն, պարոններ, կարգապահութիւն!

Կարգապահութիւն—բարելթնեան խառնակութեան մէջ:

Գրադարանապետը խիստ վատ է պահում իրան աշակերտների

վերաբերմամբ. կոպիս է, հայնոյում է, անարդար է, քմահամ է: Սնախորժ դէսլքերը մեր գպրոցական կեանքում աւելի ևս յաճախ են կրկնւում սորա պատճառով: Վեցերորդ դասարանի մի աշակերտի արձակեցին այն պատճառով, որ ձեռք էր բարձրացրել Պահանի վրայ (սա անւանել էր նորան «լիրը»): Մանկավարժական ժողովում ես ուղղակի յացտնեցի, որ զբագարանապետին հարկաւոր է արձակել, որովհետև նա միանգամացն անընդունակ է իւր պաշտօնին, ըմբուռական հակումներ է առաջ բերում սաների մէջ, մասսակար է աշակերտների թէ մուտոր թէ բարոյական գարդացման գործին: Տեսուչը ինձ յանդիմանեց: Նորա հետ ձայն ուին բոլոր պաշտօնակիցներս: Խմ՝ ձայնը խլացաւ: Ես պահանջեցի արձանագրել իմ ասածը դրագարանապետի նկատմամբ: Տեսուչը ինձ յանդիմանեց: Նորա հետ ձայն ուին պաշտօնակիցներս: Խմ՝ ձայնը խլացաւ:

Այսօր Դրակոնը եկաւ ուսումնարան և ողջունիս չպատասխանեց: Ես գիտեմ, թէ ինչ անհամբեր նա սպասում է տարին վերջանաց, որ կարողանայ վրէժն առնել ինձանից, դրելով թէ աղոտ կացուցանեմ ի պաշտօնէ:

Իայց թող խաղաղ վիրջանաց այս տարին, չանքախտանան տամնեակ աշակերտներ, ինչպէս պատահում էր Դրակոնի տեսչութեան անցած գնացած տարիներում, — էլ ուրիշ բան չեմ կամենում: Թէ ոչ, երկարակութեան ոգին թափ է տալիս իւր թեկը մեր ուսումնարանի վերայ, ու օրեր գուշակում մեր անինամ՝ զբացցի համար:

Սրտիս վիշտը գնալով մեծանում է, և ես արդէն զգում եմ թէ որքան նա ճնշում է ինձ: — Եուս մի նամակ գրիր: Երբէք ես այնքան շեմ կարօտել քո մսիթարական խօսքին, որքան այսօր:

Քո Ամբատ:

## ԲՆԱԿԱՆ ՀԻՊՆՈՏԻՍՄ

ԲԺՇԿ. Վ.Ա.ԱՆ ԱԲԾԲՈՒՆՈՒ

(Հարունակութիւն<sup>1)</sup>)

### ԿԱԽԱՐԴՈՒԹՅԵԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐ

Հաւաքական դիւականութեան պատմութիւնը սկսում է հռչակաւոր Յովհաննա գ'Արկ կոչուց, որը փրկեց Ֆրանսիան և որին նոն իսկ Փրանսիական հայուրականութիւնը մահի է զատարարաբառմ (1431թ.), առարկելով, որ կոչուը այս հրաշքը կատարեց սատանալի օգնութիւնով<sup>2)</sup>: Այս զազրելի ու մինուն ժամանակ անմիտ եղեռնագործութիւնը չէր կարող անհետանք մնալ ժամանակակիցների հոգեկան զրութեան վրա: Աւ ճշմարիտ որ, հրամանափումն սարսափելի էր: Ան կոչու, որի բերանով Աստուածամարդն էր խօսուեմ, որը Մարիամ կոչու հրամանով էր որ ամբողջ Ֆրանսիան կո րըստից փրկեց և խորտակած գաճը վերականգնեց, որին բոլորը պաշտամ էին իրեն երկնքից առաքւած փրկուհու, իրեն մի սրբութիւն, — լանկարծ ալո աղջիկը զատապալաւում է բարձրագուն հոգեսոր իշխանութեան կողմից, իրեն դիասպաշտ...! Որքան զօրել պէտք է լինէր սատանան, որ ակդպիսի հրաշքների է զործում և ալսու արհամարհում է Աստծու զօրութիւնը!

Այս անտարգարսութեան ազգեցութիւնը մեծ էր ժամանակակից ողիների վրա: Հինգ տարի շանցաւ ու լանկարծ լուր տարածւեց, թէ Վ. կոչւած անզում մեծ թւով կախարդներ են երեացել, որոնք ուսում էին նախ իրանց երիսաներին և ինտու ուրիշների: Հազարից աւելի կախարդներ սարսաւիկներ մէջ ընկած խառավաճւեցին, թէ մարդու միս եփում էին, և կուրացած ինկվիզիցիան հազարից աւելի կախարդ ենթա-

1) Տես «ԱՄՈՒԲՃ» 1894թ. № 5:

2) Կետն կաթոլիկ եկեղեցին ամեն 1894թին Կորան ուրիմի շարքն ընդունեց:

դրածներ սպանեց։ Քուան տարուց չետով մի նոր համաճարակ տարածւեց Ալբա քաղաքում։ — Կանաչք խոստվանում էին, թէ իրանք չարաբերութիւններ ունին զների հետ և Սարբա են գնում, չ'ըկնչելով այն զարհութելի տանջանքներից և մահից, որոնք սպասում էին նրանդ։

Աչուհետեւ սկսում են մի շարք նոր վա աւկիչ ներդաշխն հիւանդութիւններ, որոնք չափանի էին միջին դարերում ընդհանուր «Ախարդութիւն» կոչումով Եւլոպակի ամեն երկրներում։ Ամենից զարմանալին են Կամբրէկ մերժատանի էպիդեմիան։ այս մենատանում կուտերը չանկարծ սկսեցին կատու նման մւալ, լալ վազել, բարձրանալ ծառերի գլուխ և թաւալ տալ գետնի վրա։ Կախարդութեան մի ուրիշ նշանաւոր համաճարակ ծագեց Լոմբարդիակում։ — Նա չափանի է Կոմեան էպիդեմիա անունով։

## 2. Գ Ի Ւ Ա Հ Ա Ռ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Սաղրիդի դիւանարական համաճարակից։ — Նուգէնի ու Նուգինի դիւանարարութիւնները։

Կախարդը պարման է կապում սատանակի հետ, նա յօժար կամքով իր հոգին ծախում է զենքին։ բայց սատանան կարող է մտնել մարդու մէջ առանց նրա յօժարութեանը, մինչև անգամ հակառակ նրա կամքի։ Այս վերջին դէպքում մարդ դառնում է զիւահար, կամ ախանար կամ ըմբռնած դիրց (օգրջաման, քոսքէն)։

Դիւանարարութիւնը չափանի էր նոյն խոկ Քրիստոսից առաջ։ Ունանը իր «Յիսուսի կենաքի» մէջ ասում է հետեւեալը։

«Ոչ միան Հրէսաստանում, այլ և ամբողջ աշխարում հաւատում էին, որ գու ըը կարող են տիրել որոշեալ անձերի մարմնին և նրանց իրանց ցանկութեանը հակառակ դործել տալ։ Աւետարանի մէջ լաճակի լիշտատակւում են աղսահարներ, որոնց բժշկում էր Յիսուս Յաճախ վլշում է Ասողէի անունը։

Այս նոյն դիւանարարութիւնն է, որը սարուափելի համաճարակի ձեռվ անցաւ Եւրոպակի վրայով 16 և 17-երորդ դարերում։ «Դիւանարարութիւնը ԽVII դարի ցաւն էր, ինչպէս կախարդութիւնը ԽVI դարին էր, և մեծամտութիւնը մեր դարին» (Պենիար)։

Դիւանարութեան առաջին համաճարակը երեսց Մաղրիդի մենաստանում։ Հիւանդութիւնը սկսեց կոչսերից մէկից, որը չանկարծ սկսեց սարսափելի ձիչեր արձակնել, զետին խփել, լալ և անհասկանալի խօսքեր արտասանել։

Նրա բոլոր մկանները տաստիկ ձգձգման մէջ էին ընկնում, այնպէս որ նա թաւաէր տալիս գետնին, փրփուրը բերեին, և երբեմն լինւելով միան զագաթի ծալիքն և կրունկների վրա։ Նրա ամբողջ մարմինը կա-

մարի ձև էր ընդունում և կախուամ օդի մէջ։ Այս ողորմելի կոչը չափարարուամ էր, թէ Պերեգրինո զեն է նրան տաճջողը։ Ազդ բաւական էր։ Մենաստանի միւս կովսերը նունպէս բռնւում են զանազան գեերից և սկսում են նոյն երեղիթները ներկայացնել։ Կուսանոցը զառնում է դժոխք. — կուսերը ամբողջ գիշերները մինչև լուս գոռում են, հաջում, մլաւում և սարսափելի ձգձումների մէջ անցկացնում։ 1609 թվուն, մի գեղեցիկ աղջլիկ, Մաղըլէն Մանղոյ տարփական սէր է տաճում դէպի Մարտէլիք քահանայ Գոֆրիտն և անձնատուր է լինում նրան։ Մաղըլէնի ծնողները փակում են նրան Ա. Ռուսուի մենաստանը։ Աղջիկը չափանում է, թէ Գոֆրիդին կախարդել է նրան։ Այս լոկ մեղադրանքի վրա քահանացին այրում են։

Աւելի նշանաւոր էր Լուգէնի համաճարակը (1632—1639 թ.) Լուգինում կար մի կուսանոց, որը բաղկացած էր նշանաւոր տիկնանցից և օրիորդներից։ Մեռնում է մենաստանի քահանան, աբբայ Մուտոն։ Մի գիշեր կովսերից մէկը վեր է թուշում անկողնու միջից, ճիշեր է արձակում, զարթեցնում է ամենքին և պատմում է, թէ նրան երեցաւ աբբայ Մուտոնի դիակը, որը մօտեցաւ նրան։ Այս բաւական էր ինչպէս միշտ, մէկի ցնորքը անցնում է միւսին, վետով երկրորդին և ալսապէս ամբողջ մենաստանը հաւաքական ցնորքներ են ունենում և Մուտոնի դիակը երեսում է բոլոր կանանց աչքին։ Կովսերը զարհուրելի ճիշեր են արձակում, և սկսում են խոստովանել, որ իրանց մէջ զի է մանել։ Յանկալծ բոլորն էլ գիւտհարեցին։ Դեերն էին Աստարատ, Բեգեմոտ, Խսակարում, Դագոն, Մագոն և ուրիշները։ Իր ցնցումների և ցնորքների մէջ կովսերից մէկը չափանում է, թէ նրան կախարդողը ու նրա մէջ զի մտցնողը Գրանդիէ քահանան է։ Այս Գրանդիէն մի գեղեցկադէմ, խելացի տղամարդ էր, որը մեծ համարում ունէր հասարակութեան մէջ։ Ալդ կինը պնդում էր, թէ Գրանդիէն ամեն գիշեր պատի միջով թափանցում է նրա ննջարանը և սիրահարութիւններ անում նրա հետ։ Գրանդիէի բազմաթիւ թշնամինները օգտւեցին այս կիսախելազար կնոջ ցնորքներից և կենդանի ալբեցին անմնեղ քահանացին։ Սական Գրանդիէի մահը վերջ չտևեց դիւահարական համաճարակին, որը օրէց օր տարածում էր երկրի մէջ։ Յափշտակումն անքան սաստիկ էր, որ Գրանդիէին դաստապարտող հոգերականները, նրան փորձող բժիշկը և ալբոզ վինորը—բոլորը դիւահարւում են և մեռնում սոսկալի ցնցումների, տաճջանքների մէջ, հասնելով կատարեալ խելազարութեան։

Լուգէնի սոսկալի պատմութիւնը դեռ չէր մոռացւած, երբ Լուգիէի սուրբ Նղիսարէթի մենաստանին տիրապետում է մի նոր դիւահարութիւն (1642 թ.)։

Լուգիէի քահանան, կիսախելազար Պիկարը, ճգնաւորի կեանք և վարում, կովսերը աշխատում էին իրանց հոգեոր հօրը նմանւել աստւածապաշտութեան մէջ, «Նրանք շաբաթներով ծով էին պահում, ամբողջ գի-

շերներ աղօթելով էին անցկացնում, տաճնջում էին իրանց և կիսամերկ ձիւնի մէջ թաւալ էին տալիս։ Հառկանալի է, որ Պիկարի մահը պիտի աւելի ևս բորբոքէր այս հիւանդ կանանց երևակայութիւնը։ Նրանք սկսեցին ցնորակոն տեսիլիներ տեսնել։ Սատանան Պիկարի դէմքով երեսում էր նրանց աչքին և ստրապում էր նրանց սրբազգութիւններ անել և, ինչպէս արդէն վիշած համաճարակումների մէջ, դիւահարները զարշում էին մեռունից, հայուղում էին նրանութիւնը և սարսափելի ցնցումների ու ձբդ ձբդումների մէջ ընկնում։ Խնկիզիցիան Պիկարի հոտած դիտկը հանել է տալիս դերեղմանից, կապում է միասին դիսակը և կենդանի մարդու ու ոտերից քաշ տալով Ռուանի փողոցներով՝ ալրում է նրանց այն հրապառակի վրա, որտեղ ալրել էին Օրլեանի կովախ։

Այս դիւահարտթիւնները գուցէ գեռ շարունակէին, եթէ Լուդովիկ ՏԻՎ—1762 թ. վերջ շտար այս անդութ խնկիզիցիական դատաստանին և պաշտօնապէտ չերքէր դիւականութիւնը։

Քացի առաջ, XVII դ. երեսեցաւ մի նոր տեսուկ հիւանդութիւն, որը լաւտնի է Զոօմորֆիոմ (Անառնականութիւն) անունով։ Մարդիկ սկսեցին երեակաւել թէ իրանք գալ, շուն, կատու, բռւ, աղւէս են դառել նրանք լարձակում էին ոչխարների, երեխանների վրա ու խեղդում էին նրանց։ Այս հիւանդներն էլ ալսահար էին կարծւում և պատշաճաւոր պատժի էին հիթարկում։

### Յ. ԿԱՐԱՐԴՈՒԹԵԱՆ, ԵՒ ԳԻՒԱՀԱՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԽՈԲ ՆՇԱՆՆԵՐԸ

Սատանակի կնիքը ենրու բացատրութիւնը։ Հիսուերիսալի երեսութիւնները դիւահարտթիւնն մէջ։—Ամսաբղների խոսումնանորը և ինքնաներջնչումը։—Խնկիզիցիան և դիւականութիւնը։—Խնկիզիցիակի հնարած տաճնջանքները։

Խնչպէս կը տեսնենք վետոչ, կախարդութիւնը և դիւահարութիւնը մահացու բանցանքներ էին համարւում։ Ցեսնենք ուրեմն ինչ նշաններով էին ճանաչում զատաւորները կախարդներին։

Նախ և առաջ չպէտք է մոռանալ, որ բաւուկան էր մէկ կամ երկու մարդու վկասութիւնը, որ կախարդ և դիւահար կարծածներին բանտարկեին, տաճնջանքների ենթարկեին և վերջը կենդանի ալրէին։ Բաւուկան էր, որ մէկ խելագար ասէր, թէ այս ինչ մարդը նրան կախարդեց, բաւուկան էր, որ մի երեխակ ցոյց տար մէկի վրա, իբրև իր մօր ու հօր հիւանդութիւնը պատճառողի, կամ նրանց տաւորի մէջ ցաւ զցողի կամ բանց հունձը վշացնողի վրա, —այդ ոպորմելին ջաղուկ եր լաւարարւած! Ունուհետեւ այդ երկում պատահած բոլոր անբախտութիւնները աղդ ենթագրած կախարդին կամ կախարդուն էին վերապրում։ Ում որ դիսէր նրա մատը—կաթուածահար պիտի լիներ, ում վրա որ հակացք դցէր—

այլտի հիւանդանաբ. ում վրա որ փչէր—պիտի դիւահարւէր!!! Եղիք ամբոխը հալածում էր նրան ու խորշում նրանից, մինչեւ որ ժամանակակից «արդարագառ» ինկվիզիտան չ'արէր նրան:

Բայց ամենամեծ հաստատութիւնը, որ այս խոկ կնոջ, կամ տղամարդու մէջ դեէ է նատած, համարւում էր «աստանալի կնիքը»—աւտինքն լիշած անզգալութիւնը ու կախարդունու իրա խոստովանքը:

Քննենք այս կետերը՝

1) Ա՞նգամ է ու թիւնը.

Մենք գիտենք այս ուսումնասիրութեան առաջին մասից, որ մարդ կարող է ինքն իրան ներշնչումներ անել. այս է ինքնաներշնչումն (ա. «Մուրճ» 1892 Նոյե 1 և 2): Եթէ մարդ համոզւած լինի, թէ այս ինչ կինը կախարդունի է և կարող է նրա թեր կամ ոտք թուլացնել, նա արգէն ինքնաներշնչումով կը թուլանալ, եթէ այդ կախարդունին դիպչի նրան: Նոյնը պէտք է ասել և զգացողութեան մասին: Եթէ մէկը համոզւած է, որ նա կախարդւած է, և գիտէ, որ կախարդւածների մարմինի մի մասը անզգայ է լինում, նա երկար իր ուշը մարմելի այդ մասի վրա կենտրոնացնելուց, վերջ ի վերջու կ'անզգալանաց: Երբեմն այդպիսի անձերը ամբողջ մարմնով անզգայ են դառնում և ան ժամանակ նրանք այլ ևս ոչինչ չեն զգում:

Բացի ինքնաներշնչումից առաջացած անզգալութիւնը, ուս նկատում է թէ մասնաւոր և թէ ընդարձակ կերպով նոյնպէս և Հիսուներիա կոչւած ներգալին հիւանդութեան մէջ: Հիսուներիկները սաստիկ ներգալին արարածներ գոլովի, ի միջի այլ ներգալին անկանութիւնների (դիւրագրդումներ, կութևածահարութիւններ, սաերի, թեների թուլութիւններ և աշխատում են նոյնպէս և անզգալութիւններ կամ ամբողջ մարմինի կամ մարմինի մի մասի: Այս անզգալութիւնը հիսուներիալի նշաններից մէկն է, մի հիւանդական երեսով է, որը ինկվիզիտան ընդունում էր, իբրև դիւականութեան ապացուց: Այս աղեմ կնիքը սրոնում էր զատարանի բժիշկը, որը սրածար փոքրիկ դաշոնով ծակծկում էր զատապարտւածի ամբողջ մարմինը մինչեւ որ գանձէր այդ անզգայ տեղերը: Այս նշանը բաւական էր, որ կախարդին արցէին, և սարսափելին ան էր, որ այդպիսի կէտեր միշտ գտնուում էին, որովհետեւ ինքնաներշնչման օրէնքով նրանց մարմինը անզգանաբնում էր այդ փոքրի միջոցին, եթէ արդէն անզգալացած չէր, իբրև հիսուներիկ:

Յաճախ գիւտիկիրները ամբողջ մարմնով անզգայ էին դառնում, աբնապէս որ երկար շիշեր խրում էին մարմինի մէջ և նրանք ոչինչ չէին զգում: Դիւակրութեան պատմիչները սարսափով և չարչարանքով լիշատակում են ան փաստը, որ երկեմն ամենասոսկալի տանջանքների մէջ կամ խարոչի վրա այդ ողորմելիները ծիծաղում էին, երգում, առանց դաւ զղալու:

Նորն անդգայութիւնը մահք կը գտնենք և կրօնական համաձարակների մէջ:

Դիւակրութեան երկրորդ կարգի նշանները այն բոլոր նեարդալին երեսութեան էին, որոնք լաւագնի են հիստերի կ անունով: Արանք են՝ միանների ծգձգութեան, անգամների քաշքաւելն, քարացումն, բոլոր մարժաւասերի լարումն և անկանոն շարժումները, սքանչացումն և ալն:

Այս բոլոր ներդային հիւանդական արտադրութիւնները առ աջանում են մի որե է սաստիկ ներդային զզրդումից, ինչպէս են սպասափ, մեծ կոկիծ, սեռական զրգուումն, զգաւարանքների և երեակալութեան սաստիկ հարւածումն, – վերջապէս ներշնչումից:

Այս բոլոր պակմանները գտնութիւն ունեն դիւականութեան դարերում: Ամբողջ Եւրոպա մի աննկարագրելի սարսափի մէջ էր: Հսոմի Պապը, անհասկանալի կուրութեան մէջ, ընդունել էր գիւակրութեան կարելիութիւնը և Խնճուկեատիու ՀՀ հրամանազրել էր անխնակ հալածել գիւահարներին: Ամեն երկրներում կրօնական անողոք զատարաններ էին չիմեւած, Ցիսուսի անունով ամենաանգութ եղենակարծութիւններ էին կատարում: Ամեն եկեղեցիներում քարոզներ էին կարդացուում սատանալի, զեների զրութեան մասին, բացատրում էին մոզովրդին կախարդութիւնը և դիւահարութիւնը: Խնչպէս տղէտ ամբոխը անզագոր ներշնչման մէջ էր, ուս ամեն տեղ զեներ էր տեսնում, ամեն վաս երեսութ, ամեն ներդային հիւանդութիւն սատանալի գործ էր համարում և նրա հոգեկան բալոր ուժերը զիւակրութեան գաղտնաբարի վրա կինարունացնելով, խեզ կինը ինքնանիքնչումով իրան ևս կախարդած ու դիւահարար էր երեակարսում: Եւ ալդ համոզունքը ալճքան արևատանում էր նրանց մէջ, որ նրանք ցնորքների մէջ էին ընկնում, տեսնում էին սատանաներին, խօսում էին նրանց հետ, երջանկանում էին նրանց սիրուց... և համոզւած պատմում էին այս բոլորը իրանց գատաւորներին:

Հետեաբար ժամանակի ընդհանութ արամադրութիւնը պատրաստում էր մի սարսափելի ներդային սերունդ, որին ամենաթեթև գրգռումն անող հիսուերիալի մէջ էր քըսում:

Հիմայ երեականեցէք, որ ալսպէս տրամադրւած մարդկանցից (որ աւելի լաճախ էր պատահում՝ կանանցից) մէկը բանոտարկում է և ինկուպիցիալի առաջ բերում: Ալդ անձը համոզւած է, որ նա կորած է, որ ինկուպիցիալի ճանկերից անհնար է պրծնել! Ինչ զարմանք, եթէ այդ խեղճը ներդային ցնցումներ ունենալ և ներկալացնի վերև վլչած բոլոր հիստերիկ դրութիւնները! Խնչ աւելի սարսափելի բան կար ալճ ժամանակ մարդուս համար քան ինկուպիցիան և ինչը կարող էր ամելի մեծ դզրդումն գործել նրա ներդային սիստեմի մէջ, քան ինկուպիցիան տանջանքների պերսպեկտիվը...!

Համաճարակ զիւականութիւնների մէջ մէկի ներդաշնութիւնը անցնում էր ամբողջ մենաստանին և հիստերիկ երեսլթները ընդհանուր էին գառնում, վերև վիշած զիւահարութեան համաճարակակների ժամանակ զեերից բանւածները ամենազարմանալի երեսլթներ են ներկազացնում՝ մարմնի ը նոստումն եր ով, անդամների կարկամումներով, իրանց անզգալութիւններով և ցնորքներով։ Այս մի խառնուրդ է քարացման, սոնամբուկիսմի և թուչութեան երեսլթների, որոնց միանում են և հիստերիկական կարկամումները։ Ազգմեան զիտութիւնը այս երեսլթները բացատրում է հիպնոսի օրէնքներով, և արդարագատութիւնը այդ երեսլթները ներկազացնող անձերին ուղարկում է հիւանդանոց, իսկ մեր պատմագրած ժամանակը այդպիսին երին կենողանի ալրում էին, իբրև զիւականներին...

Երկրորդ անէերքելի ապացոցը, թէ այս ինչ անձն կախարդ է և դեմ հետ չարաբերութիւններ ունի, համարւում էր զոհի խոստովանանքը, Այս, հազարաւոր մարդկի, զլխաւորապէս կանաչք, իրանք պատմում էին, թէ չարաբերութիւններ ունեն այս ինչ զեմ հետ, թէ երեխանների զիւակներ են հանում գերեզմաններից ու ուսում, թէ այս ինչ օրերը գնում են Սաբրա, ալսինք գեների ժողովարանը և աճնտեղ պոռնկանում քաջքերի հետ, պնդում էին, թէ այս ինչ անբախտութիւնը, որը հասել է երկրին, այս երաշատութիւնը, այս հիւանդութիւնը և այն - նրանց գործն է։ Այս, առանց երկնշելու իրանց սպասող սարսափելի մահից, նրանք խոստովանում էին, թէ նրանց մէջ այն ինչ զեն է նստած, և կուրացած զատաւորները հաւատում էին ու սպանում այդ մարդկանց։ Արկնում ենք՝ հազարաւոր մարդիկ, զլխաւորապէս (համարեա բոլորը) կանաչք, իրանք իրանց մահի էին դատապարտում իրանց խոստովանանքով։ Մենք ալրէն բացազրել ենք այս երեսլթը, որը նոյնպէս ներչնչման և ինքնաներշվնչման հետևանք է։

Եթէ մեզագրւածը չէր խոստովանում, այն ժամանակ կրօնական դատարանը, (ինկվիզիցիան) զարնուրելի տանջանքների էր մատնում նրան և զոռով խոստովանել տալիս ան չանցանքները, որոնց մէջ նա անմեղ էր։ Դատաստանական բարբառով այդ անւանում էր փոքր են թարկել կար ջրի փորձ, զաշոնի փորձ, խսպանական կօշիկների փորձ, փակտէ ձիու փորձ, և այն և այլն։

Այս տանջանքները, որոնք ինկվիզիցիաի արդարութեան գործիք էին, արձանագրւած են և մանրամասն նկարագրւած են պատմութեան էջերում արեան տառերով։ Միայն անսանձ կատաղութիւնը և վրէժը երեւակալական սատանակի զէմ, միաև կաթոլիկ կղերի անհուն տգիտութիւնը և զարմանալի անզթութիւնը կարող էր այս սասահճան կատարելագործութեան հասցնել մարդու տանջելու հնարները։ Ինկվիզիցիաի պատմութիւնը թերթելիս մարդ մի օտարուի ապշութեան մէջ է ընկնում,

նրա ուղեղը հրաժարում է հաւատալ այս դժոխալին՝ սոսկութիւններին։ իսկ երբ մարդ աշխատում է երևակալիլ անդամ տանջանքի գատապարտածներին՝ մի ներդալին ցնցում է զգում նա և սառառու է անցնում նրա ողնաշարի վրասպվ.. Ներոնի և Կալիգոռլահի խելագար կատաղութիւնը, Արենելան բռնականների անխղճութիւնը աւելի զարհուրելի տանջանքներ չեն հնարել, քան թէ ՎԵՐԻՄՈՒՄ գատառատանը։

Անկառելի է թւել անդամ այս տանջանքի միջոցները։

Տանջանքները սկսում էին նրանով, որ ակլորացնում էին կախարդ կարծւածներին ու գաշունով ծակսում նրա մարմինը մինչև որ սասառաւի կոփքը կը գտնէին, ալտինքն անզգակ տեղերը։ Ամենակարենոր փորձը «Սպական կօշիկների» փորձն էր։ Դատապարտածի սուր սեղմում էին կամ երկու սղոցների, կամ երկու տախտակների մէջ, որոնք ամբացնում էին պարանով և լեռու այս տախտակների և ոտի արանքը չւեր (խթան) էին խրում մինչև որ սաը տափականում էր և ջախջախւած ուկորի միջից սոկրուղեղը զուրու ցատկում։ Խեղճ Ռւրբէն Գրանդիէի երկու ուերը այնպէս ջախջախւցին, որ անբանք կախ էին ընկել փալասի նման, ոսկորի կառուները զուրու էին ցատկում ամեն կողմից։ Գահինը հրաժարեց շարունակել, այն ժամանակ Գրանդիէի թշնամի կապուցիները փիլոնները քշակցին և ահազին չաքուծներով սկսեցին։ Նոր չւեր խրել նրա ստերի մէջ։

Նթէ կախարդը դարձեալ չէր ուղում խոստվանել, նրան ձեռներից կախում էին օճորքից, ոսկերին քարեր կապում, լեռու վայր էին բերում և սարսափելի կերպով ձեծում էին մինչև որ խոստվանէր։ Նթէ այդ էլ չէր աղդում, նրան պարաններով բարձրացնում էին վեր և լանկարծ վայր զցում կրկնելով այդ տանջանքը մինչև խոստվանէրը։ Երբեմն նաև նուում էին փակուէ ձիան սուրբանկիւն մէջքին, ուներից ծանրութիւններ կախելով։ Առւրանկիւնը կամաց կամաց մանում էր մարմնի մէջ և կիսում նրան։ Մի 13 տարեկան աղջկա այս տանջանքին ենթարկեցին, և չետու կենդանի այբեցին։ Երբեմն կախարդին կապում էին աթոռից և ոտերը կրակի մէջ դնում, կամ «լզնոց» էին սեղմում շնչին (այս փակուէ վկնոց էր, որի վրա մեխեր էին ամրացրած, այդ մեխերը մտնում էին վիզը)։ Անգլիակի թագաւոր Յակոբ I-ը իր ձեռով փակուր էր խրում մեղադրւածի եղունկների տակը. շատերին ուղղակի զցում էին ջուրը, — եթէ անմեղ էր՝ պէտք է խեղդէր, իսկ եթէ չէր խեղդում, մեղաւոր էր և նրան այրում էին։ Արտափելի տանջանքներից մէկն էլ ան էր, որ արգելում է ին քնել։

Հասկանալի է, որ շատերը այս սոսկալի «փորձերի» մէջ խոստվանում էին չփորձած լանցանքներ, որպէս զի ժամ առաջ ալրեն նրանց և վերջ տրւի այս տանջանքներին։ Կալին և անպիսիներ, որոնք մինչև վերջին շունչը զոռում էին թէ արդար են, ինչպէս Գրանդիէն։ իսկ կալին և ալճալիսիներ, որոնք չափշտակման մէջ էին ընկնում, և տանջանքների

մէջ, անզգաք դառած, իրանց ցնողքներն էլն պատմում, իրանց սիրած դեմի հետ էլն խօսում...

#### 4 ԷՔԶՈՐՑԻՍՄ ԿԱՄ ԴԻՒԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Երբ զիւահարութիւնը վարակիչ հիւանդութեան ձև էր ընդունում, հոգեորականները, նախ քան խարովիներ կանգնեցնէին, աշխատում էին դուրս խրկել զիւերին պընտածներին մարմնի միջից:

Այս կոչում էր էքզորցիսմ (Յակլիանիէ), որը կարելի է դիւահանութիւն բառով թարգմանել:

Ունանի ասելով, հին աշխարհում էքզորցիսմը նոյն չափ կանոնաւոր արհեստ էր համարում, ինչ որ էր բժշկականութիւնը (Յիսուսի կեանքը):

Դիւականութեան դարերում լայտնի էքզորզիստներ կազին, Սրանք բարձրաստիճան հոգեորականներ էին: Հայր Յովսէփի, Ս. Խոնատիոսի և Ս. Մարտինի անոնները շատ լայտնի էին, Ռուբենսի և Յորդանսի վըրձնները անմահացրել են այս երկու վերջին դիւահանների կատարած հրաշքները:

Այս ծէսը կատարում էր մեծ փառակեղութիւնով:

Յաճախ այս ծէսը կատարում էր տաճարներում, ուր բերում էին դիւահարները, Դիւահանը նախ ազօթներ էր կարդում, պատարագ մատուցանում, լետավ հրամագում էին սատանալին դուրս գալ բռնւածի մարմնից և խոնարհիլ Աստծու ու սուրբ մեռոնի առաջ: Այդպիսի հրամաններ կրկնում էին, մինչև որ դիւահարը կամ կախարդը չոռքէին, չզզչալին և չպաշտէին Աստծուն: Բայց ցաւակցարար լաճախ այդ չը լաջողում, ընդհակառակ դիւահարը սարսափելի ցնցումներ, կարկամումներ էր ունենում, վայր էր ընկնում զետին և պատվուներ էր անում, թքում էր հազորդութեան վրա, հաջողում էր Ս. Նըրորդութիւնը, և, մի խօսքով սաստիկ ներդարին դպրումից ընկնում էր հիստերիաի մէջ:

Այս երեսվթները այն ժամանակները զեխն էին վերադրում,—դեն էր սրբապղծում, զեն էր գետին զլորում իր զոհին և ստիպում նրան հայնուել սրբութիւնները, զեն էր անզգաւ զարձնում կախարդին և ալճ:

Ալուպէս դիւահանութեան անմիտ ծէսը չէր համում իր նպատակին, այլ ընդհակառակը աւելի սաստիկ ներդալին զդրդում էր առաջացնում: Սական այդ ծէսը անել և լաւ հետևանքներ: Հասկանալի է, ի հարկէ, որ այն դիւահարները, որոնք հաւատով դիմում էին տաճար և դիւահանութեան ենթարկում, սրանք (ինքնաններչնչման զօրութիւնով) կարող էին բժշկել:

Առաջ բերենք մի դէպք դիւահանութեան մասին մի գաղափար տալու համար:

«Հայր Սիւրէնը մի դիւահար կոչսի մտցրեց մատուռը: Դիւահարը

հաճողեանքեր էր անում: Սիւրէնը հրամակեց կապել նրան աթուից և, մի քանի աղօթքներ ասելուց վետով, հրամակեց դև Խաաակարումին երկրպաշցել Յիսուս-Մանկան: Դեր հրաժարւեց, սոսկալի անէծքներ թափելով: Այն ժամանակ Սիւրէնը հրամակեց երգել Մագնիֆիա, և պատր Հօր և Որդւով»-ի ժամանակ ալդ խեղճ կինը, որի սրբար ճշմարիտ որ լիքն էր չար ողիներով, սկսեց հայոցել ալդ ամենը,

Եւ նա աւելի ևս կատաղի կերպով շարունակեց իր հաճոտանքը: Հայը Սիւրէնը կրկին հրամակեց Խաաակարումին երկրպագել Յիսուսին և ներողութիւն խնդրել թէ Յիսուս-Մանուկից և թէ Ս. Կովսից իր արտասանած հաճուանքների համար: Խաաակարումը չհնազանդւեց: Փորձը շարունակւում էր, այն ժամանակ կովսը անսպիսի ջղաձգութեան մէջ ընկաւ, որ սովորեցան արձակել նրա կապերը: Այժմ բոլորը կարծում էին թէ զեր սահնձած է, բայց Խաաակարում զեր չանկարծ գետին քցեց խեղճ կնոջ և հայոցեց սրբութիւնները: Դիւահանը հրամակեց, որ նա օձի նման թաւալի գետնի վրա և երեք անգամ համբուրի մատութի լատակը, ներողութիւն աղերսելով Աստածածնից, բայց նա չէր հպատակւում, մինչև որ սկսեցին շարականները: Այն ժամանակ զեր սկսեց ձախճուել, ծամթուել և սողալ: Նա մօտեցաւ մատութի դռան և, ահապին սև լեզուն հանած, սկսեց քարէ լատակը լիզել, գարշելի դէմքը ծումուելով, ոռնալով, սարսափելի կարկամման մէջ: Նոյնը արեց նա տաճարի առաջ, իսկ վետով ուղղեց, սպան չոքած մնալով, և սկսեց հպարտ իր շուրջը նախել, կարծես ուզում էր ասել, թէ չի կամենում վազր գալ ապստեղից: Բայց դիւահանը, սուրբ Հաղորդութիւնը ձեռին, հրամակեց նրան պատասխանել: Այն ժամանակ նրա զեմքը ալլանդակւեց և սարսափելի դառաւ ու լուեց մի ուժգին ձան, որը կարծես կրծքի խորքերից էր զուրս գալիս: «Երկնի և երկրի թագուհի, ներիր ինձ»:

Այս մի հիմնալի նկարագիր է այն ներքին կուին, որը կատարւում էր աբեղալից ստացած նոր ներշնչման և հին ինքնաներշնչման մէջ (զիւականութեան, քանի որ մենք տեսանք, որ դիւականութիւնը ինքնաներշնչման պատուղ է): Այս կուի մէջ խեղճ կովսը ընկնում է խտերիկալի մէջ մինչև որ էքպուցիւմը, այս նոր ձեի ներշնչումն, չաղթող է հանդիսանում:

### ԿԻՒԱԿԱՆՈՒԹԻՒԹ ԵԱՆ, ՊԱՏԻԺԻ

«Ճանջանքներից վետով դատաստանը իր վճիռը տալիս էր: Պատիժը զանազան էր, նրբեմն, երբ ոչ մի փաստ չկար, կախարդուհուն աքսորում էին, երբեմն էլ, բայց շատ սակաւ—գլխատում: Եղել են զէպքեր, որ նրան զցել են եռացող ջրի մէջ: Խակ ընդհանրապէս կախարդներին ազում էին, կամ նրանց խեղտելուց վետով, կամ կենդանի: Մի քանի դէպքերում նրանց ալլում էին մեղմ կրակով, որպէս զի տանջանքները երկար տեսն: Մի

քանի կախարդ կանակը կենդանի թաղւեցան, վալանսիենում մի 15 տարեկան աղջկաէ, կախարդութեան համար, կենդանի թաղում էին. խեղձի ճշերը այնքան սարսափելի էին, որ զահիձի ուշքը դնաց և նա հրաժարուց այց «գործը» շարունակել Ան ժամանակ անվրդով դատաւորը հրամակեց վերջացնել. Յաճախ կախարդներին կապում էին սալի տակը և քաշելով դիտնի գրա ջարդած, քարերին զիաշելով, ցեխով ու թողով ծածկւած հասցնում էին նրանց մահան տեղը» (P. Regnard).

Բայց միթէ հնարաւոր է թել անգամ այն բոլոր սամկութիւնները որոնք կատարում էին «Սուրբ զատարանի», ձեռով: «Կերեզմանից դիակներ էին հանում և ալրում, որպէս զի սպանեն նրանց մէջ զեռ ապրող սատանակներ:

1607-ին Կատալոնիակի դիւականութեան ժամանակ 30 հոգի կենդանի ալրեցին: Լոմբարդիակի համաձարակի ժամանակ ալրում էին տարեկան 1000 ից աւելի կախարդներ. Սափուում ալրում են 80 կախարդ, Տուլուզում 400, Արինիոնում նոլնքան: Դատաւոր Բեմին 900 կախարդ և դիւզում 21 կախարդ ալրեցին... մի օրւակ մէջ 600. Բերրիում մի օրւակ մէջ 21 կախարդ ալրեցին...

Ուստամաբան Միշըլին ասում է:

Այրբէք ալսպիսի կոտորած չի եղել: Ազ չեմ խօսում Խապանիակի մասին, որտեղ մարը և հրէան բոլորը կախարդ էին համարում, Տրեւում 7000 մարդ և կին են ալրում, Ժընէւում երեք ամուսէ միջոցում—500, Ալյարցուրգում—800 համարեա խմբով, 1500 Բամբերգում: Բանը աշնուելու է հասնում, որ նոյն խոկ Ֆերգինանդ II, աչս կրօնամուլ և անդութիւնքնակալը, ստիպւած եղաւ սահնձել իր հոգեսրականներին, որպէս զի նրանք չ'ալրեն բոլոր իր հպատակներին». Առաջ բերելով աչս տողերը Պ. Մարէնը աւելացնում է «Ֆրանսիացում 17 դարի սկզբին, ալրածների թիւը երեք հարիւր հազարից պակաս չէր»:

Ինիարը իրաւունք ունի ասելու: Որ ոչ մի պատերազմ աշնքան զո՞չ չուարաւ, ինչքան ինկվիզիսան: Աչս կատաղի կոտորածի մէջ չէին խնայում ոչ կուրերին, ոչ անդամալուցներին, ոչ ծերերին, ոչ մանուկներին: Դատապարտւածների թուում զանուում էին մեծ քանակութիւնով երեխաներ, որոնց մասին Բոհէն ասում է, թէ ալդակիսի փոքրերին չպէտք է կենդանի ալրել, աչս վազորօք խեղանել նրանց, երբ կը սկսեն զգալ կրակի զօրութիւնը (Ինիար): Աչս խեղանելը մի առանձին խնամք էր համարում: Դատաւորները վճռել էին խեղանել Դրանդին ալրելուց առաջ բայց երբ խարուկի բոցերը սկսեցին շրջապատել նրան, զափածը չկարողացաւ կատարել դատարանի հրամանը, որովհետեւ խեղձի թշնամիները պարանը կապ էին զցել «Մի քանի բոպէի մէջ, ասում է պատմաբանը,

բոցը լավեց Գրանդիէի շապիկը և կարելի է տեսնել նրա մարմնի կար·  
կամումն բոցերի մէջ»:

Ես կամեցալ մի հաւաք գաղափար տալ այն հիպնոսական բարդ  
երևվթի մասին, որը լաւո՞ի է Դիւականութեան անունով։ Այս մի վա·  
րակիչ հիւանդութիւն էր, ներչնչումից կամ ինքնաներշնչումից առաջա·  
ցած, «որ դարերի ընթացքում սարսափի մէջ պահեց ամբողջ Եւրոպան,  
սարսափ սատանալից, սարսափ ինկվիզիալի տանջանքներից։

Բայց ուսումնասիրելով այս տխուր պատմութիւնը, մարդ միւս կող·  
մից նոցնայէս ապշում է և սարսափում Եւրոսկալի կառավարիչների, զար·  
գացած հոգեորականութեան հիւանդական կատաղութեանվ րա, որը ոչ  
միայն մեռցրել էր նրանց մէջ խիղճը, այլ և խմլ էր նրանցից բանակա·  
նութիւնը, նրանց արիւն թափող մի կաղապար դարձնելով։

Անտարակոյս այս էլ նոցն աստիճանի հիպնոսական հիւանդութիւն  
էր, ինչ որ էր դիւակըութիւնը, և նոցնչափ արժանի էր ուսումնասիրու·  
թեան հիպնոտիսմի տեսակէտից։

(Կը շարումնակի)

ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ՀԱԽԱՔԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՌՈՒՍԱՏԱՆՈՒՄ  
ԴԺԲԱՂԴ ԴԵՊՔԵՐԻՑ

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵՅՆԻ

II

Մեր նախընթաց յօդւածում ասել էինք, որ բանւորների ապահովութիւնը մի գեղեցիկ հիմնարկութիւն է թէ բանւորի և թէ արդիւնաբերողի համար, առաջինին՝ իրեւ նիւթական բաւարարութիւն տուղ բանւորական կեանքում յաճախ պատահող դժբաղդ դէպքերի ժամանակ, երկրորդին՝ իրեւ ամեն մի պատասխանառութութիւնից ազատ կացուցանող միջոց։ Խոստացել էինք նոյնակէս խօսել այն մասին թէ ինչ պայմաններով են զեկավարում այդ ընկերութիւնները Ռուսաստանում, և ի՞նչ հիմունքների վրայ գոյութիւն ունեն նոքայ։

Այժմ ցանկանալով, որ բանւորների ապահովացման խնդիրը լայն ծաւալ ստանայ, զարգանայ, նոյն իսկ, եթէ կարելի է, տարրականանայ բոլոր խոշոր կամ միջակ արդիւնագործ-հիմնարկութիւնների մէջ, մենք հարկաւոր ենք համարում քաղւածօրէն առաջըերել այն պայմանները, որոնցից ընկերութիւնը օրէնքի համաձայն մի մազի չափ շեղւելու իրաւունք չունի և որի վրայ հիմնած գործում է մինչև այսօր։

Այդ պայմանների քաղւածքը մենք հանում ենք այն Ստավъ ից, (կանոնադրութիւն), որը ներկայացրած է Թագաւոր Կայսեր և հաւանութեամբ նորա հաստատւած է ներքին դործերի նախարարից<sup>1)</sup>։

<sup>1)</sup> Ընկերութեան կանոնադրութիւն (уставъ) ճակատին գրած է՝ Государь Императоръ Уставъ сей разматривать и Высочайше утвердить соизволилъ въ Петербургъ іюля 20 дня 1887 г.

Նախ սկսենք „Ռուսական լուսական գրադարանից, որից յետով կը դիմենք և „Պոմոզչ“ լուսական գրադարանից թեանը:

„Ռուսական լուսական գրադարանից ակտեց 1881 թւականից ակցիօներական սկզբունքով:

Գործունէութեան սկզբում՝ լուսական ակցիաների թիւը հասնում էր 16.000-ի ամեն մի ակցիան 250 ռուբ. արժողութեամբ. հետեւապէս լուսական գրամագլուխը իր գործունէութեան առաջին օրից հասնում էր 4.000.000 ռուբլու:

Սկզբում „Ռուսական լուսական լուսական առանձին առանձին անձերի կեանքի ապահովագրութիւն բնական մահւան գէպքերում, ծերութեան ժամանակ եկամուտների ապահովագրութիւն, ապահովագրում էր նաև գրամագլուխներ աղջկերանց օժիտի համար, թոշակ սանիկների համար և այլն. գորան կից լուսական գրութիւնը լուսական անհատականապէս կեանքի ապահովագրութիւնը դժբաղդ գէպքերից, որը բոլորովին կապ և նմանութիւն չունի կեանքի ապահովագրութեան հետ բնական մահւան գէպքերում. լուսական ապահովագրութիւնը Ազդապահովագրական ճիւղերով լուսական գործել է և գործում է մինչեւ այսօր:

1887 թւականից արդէն լուսական գրադարանը, տեսնելով իր գործունէութեան գործնական յաջող հետեւանքները, որի գրամագլուխը 4 միլիոնից հասել էր 13.500.000 ռուբլու, սկսեց բանալ մի նոր ապահովագրութեան ձիւղ, որը և անւանեց հաւաքական ապահովագրութիւն բանտորների և ծառացողների դժբաղդ գէպքերից: Հարկաւոր էր ի հարկէ այդ ձիւղը հիմնելու համար ևս թույլտութիւն խնդրել կառավարութիւնից, և թագաւոր կայսրը վաւերաց այդ և հաստատեց ներքին գործերի նախարարից:

Աւելորդ է այստեղ յիշել այն, որ ոռուսաց կառավարութիւնը կարեւոր համարելով այդ ձիւղի գործունէութիւնը, իբրև նախանձախնդիր իր երկրի արդիւնաշերութեան, թույլ տւեց նոր կտնոնադրութեան կողմելուն, որ և վերջնականապէս հաստատեց 1887 թ. 20-ն յուլիսի, նոյն ներքին գործերի նախարարից:

Ահա այդ կանոնադրութիւններից հանւած մի քանի յօդւած ներ, որ մենք քաղւածօրէն առաջ ենք բերում:

§ 1. Բանուորների հաւաքական ապահովացումը դժբաղդ դէպքերից մի պայման է (договоръ), որով ընկերութիւնը պարտաւորում է իր տւած վկալագրի (полисъ) համաձայն վճարել դրամական վարձատրութիւն այն բանւորաշխատաւորներին, որոնք իրանց սպարտաւորութիւնները ծառայութեան մէջ կատարելու ժամանակ՝ ենթարկում են վիզիքական վկասների և որոնց հետևանքը լինում է կամ մահ, կամ հաշմանդամութիւն և կամ վերջապէս ժամանակաւոր անընդունակութիւն հաց վաստակելու համար. իսկ դժբաղդ դէպք անւանում է այն միջանկեալ արտաքին արկածը, որը հակառակ ապահովագրեալի կամքի և ցանկութեան՝ անակնկալ կերպով պատահում է ի վեաս բանւորի առողջութեան:

§ 2. Հաւաքական ապահովագրութիւնը կատարում է ապահովագրող գործարանավարի համաձայնութեամբ, որը տպագրած թերթի (бланкъ) վերայ արձանագրում է իր բանւորների թիւը, օրակարձի քանակութիւնը, աշխատանքի տեսակը, դործարանում գտնուող բոլոր մէքենաների և դործարանացին պարագաների անունները և ապա, ստորագրելով այդ գեկուցումը, ցանձնում է կամ ընկերութեան վարչութեանը Ա. Պետերբուրգում; կամ մօտիկ գործակալներից մէկին. միենոյն ժամանակ նա վճարում է առաջին տարւայ տուրքի, կամ պակաս, չպիով բեհ (задатокъ), որի համար և ստանում է անդորրագիր:

§ 3. Ընկերութիւնը սակայն չի ընդունում ապահովագրութիւն այնպիսի բանւորների, որոնք դեռահաս են (жалопѣтніе) և որոնց, տէրութեան օրէնքով, արգելում է բանելը յայտնի աշխատանքների ժամանուկ. չեն ընդունում ապահովագրութեան համար նաև այնպիսի անձեր, որոնց տարիքը 65-ից անցնում է, կամ որոնք վիզիքական պակասութիւններ ունեն: Ապահովագրած բանւորը, հաշմանդամ գտամ գտնալով, ստանում է իրեն բաժին ապահովացրած գումարը և համում ապահովագրական բանւորների ցուցակից. սակայն կարելի է նորից անցկացնել ցուցակը և այսպիսիներին իբրև ապահովագրեալների, եթէ զործարանատէրը համաձայնի ընկերութեան առաջարկած մի քանի բացառական սպայմաններին:

§ 4. Հաւաքական ապահովագրութեան ժամանակ բոլոր բանւորները մի յայտնի արդիւնաբերութեան մէջ պատկանում են մի

ընդհանուր կատէգորիացի վտանգի տեսակէաից, այդ պատճառով ևթէ մէկի կամ միւսի աշխատանքը կատւած է առաւել կամ սպակաս վտանգի հետ, ընկերութիւնը նշանակութիւն չէ տալիս այդ բանին. բացասական դէպքերում միայն մասնաւորապէս մի քանի մատնացոյց արած անձեր հարկաւոր են համարւում առանձին պայմաններով ապահովագրւել:

Այն ապահովագրւ ածը, որը ապահովագրական պայմանաժամկետ ընթացքում թողնում է իր պաշտօնը, զրկւում է իրեն յատկացրած օժանդակութիւնից:

§ 5. Հաւաքական ապահովագրութիւն ընդունում է կամ ամեն մի բանւորի մի տարւայ ընթացքում ստանալիք եկամուտների չափով և կամ 2, 3, 5 անգամ՝ աւելացրած վարձագնով. առաջին դէպքում շատ անախորժութիւններ և գժւարութիւններ են առաջ բերում բանւորին վարձագրելու գործի մէջ, որովհետեւ հարկաւոր են լինում հաշւէգրքերով, ցուցակներով (տաել) ապացանել թէ որչափի է համարում բանւորի տարեկան վարձը, կամ որքան պէտք է աշխատէր նա մինչև տարին լրանալլ. վերջապէս տուրքի վճարման համար պէտք է սպասել մի տարի, որով որոշելու քանակութիւնը և այլն. այդ անախորժութիւնների առաջն առնելու համար ընկերութիւնը առաջարկում է բազմապատկման (երաժուտելու) սիստեմը, որով և բանւորն է միշտ գոհ մնում, և ապահովագրողի տուրքն է նշին առաւելութիւն կազմում:

§ 6. Բազմապատկման հաշիւը շատ վճռողական է. մի բանւոր եթէ ստանում է օրեկան 1 սուրլի, տարին 300 օր հաշւելով, այդ 300-ը 2, 3, 4, 5 անգամ բազմապատկելով կը ստանալիք 600, 900, 1200, 1500 ռ. և այլն, և համաձայն այդ բազմապատկումների՝ վիճանսների նախարարից հաստատած է տարիի, որը մէնք ցոյց տւինք երկու առաջին և վերջին թւերով «Մուրճ»-ի նախընթաց յօւում:

§ 7. Ընկերութիւնը, նախքան համաձայնութիւն կայացնելը, կարող է մերժել ապահովագրել ցանկացողի առաջարկութիւնը առանց բացադրելու պատճառները. այդ դէպքում նա վերադաշնում է ստացած նախավճարը:

§ 8. Մի անգամ որ արդիւնագործը ստորագրել է իր ներ-

կայացրած զեկուցումն, նա պարտաւոր է ընդունել ընկերութեան տւած պոլիսը և համաձայն կանխապէս յայտնած տարիֆի՝ վճարել տուրքը տարւայ սկզբին կամ միանգամայն, կամ մաս-մաս:

Ամեն մի պոլիսում, բացի տուրքից, նշանակւած են լինում և արքունի հարկ (բազեայ ոռալիա) ամեն ապահովագրած 1000 ռուբլուն՝ 50 կ. և գրոշմագին (գրեալ մարք) 80 կող. + 5 կ. կո իտանցիայի համար: Յ տարի շարունակ տուրք վճարելուց յետոյ ընկերութիւնը տուրքի չափը քշացնում է 5% գիվիդէնդի գոխարէն:

§ 9. Մի արդիւնագործութիւն, եթէ նա ինքը դադարում է արդիւնաբերել, կամ եթէ անցնում է ուրիշի ձեռք (ոչ ժառանգ-ների), ընկերութիւնը ոչ թէ միայն չէ վերադարձնում վճարւած տուրքը, այլ և ընկերութեան պատասխանատւութիւնը ժամանակաւագիս ընդհատուած է համարւում, մինչև որ այդ մասին առանձին տեղեկութիւն չէ տրւում ընկերութեան, որից յետոյ միայն նա հանդիսանում է նոյն պատասխանատուն, ինչպէս և նախկին գործարանատիրոջ օրերով: Սոյն պատասխանատւութեան ժամանակաւոր ընդհատումը տեղի է ունենում և այն ժամանակ, երբ գործարանատէրը սկսում է ընդարձակել իր գործարանը և քանի որ գործարանի ընդարձակելովը աւելանում է նաև գժբաղջացնելու վտանգը, հետևապէս փոխում է նաև տուրքի չափը:

§ 10. Խակ եթէ ապահովագրողը մի որ և է սպատճառով վերջնականապէս գալարեցնում է իր արդիւնաբերական գործունէութիւնը, այդ պէտքում ապահովագրութիւնը ոչնչացած է համարւում այն օրից, երբ ապահովագրող գործարանատէրը այդ մասին յայտնում է ընկերութեան գլխաւոր վարչութեանը, ներփակելով իր դոկումէնտները ի հաստատութիւն գաղարեցման: Այդ պէտքում ընկերութիւնը վերադարձնում է վճարած տուրքից մնացած ժամանակամիջոցի համապատասխան մասը:

§ 11. Երբ ապահովագրողը կորցնում է ընկերութիւնից տւած վկայագիրը (պոլիսը), ապահովագրողը ստանում է պատճէնը (ցիկատի) իր նախկին պոլիսի. բայց նախքան այդ՝ ընկերութիւնը պարտաւորւում է կորցրած պոլիսի մասին յայտարարել երկու մայրաքաղաքեան թերթերում ապահովագրողի հաշով:

Ահա սոքա են գլխաւոր կէտերը ընկերութեան կանոնադրու-

թեան։ Այնուհետև գալիս են կէտեր, որտեղ բացատրւում են վարձառքութեան եղանակները ճիշդ այնպէս, ինչպէս նախընթաց յօդւածում բացաղրել էինք։

Միայն հարկաւոր ենք համարում՝ այսուղ կցել և այն, որ ընկերութիւնը մի քանի կէտերում շատ է խստապահանջութեան զիմում դժբաղդ զէպքեր պատահած ժամանակ։ Օրինակ զըժբաղդութիւնը պատահած զէպքի մասին, ապա թէ ոչ ընկերութիւնը կարող է և զժգոհութիւններ յարուցանել, հետեւապէս նշանակած թոշակի կամ ապահովագրած գումարի քանակութիւնը պահանջնել։ Ընկերութիւնը իսկոցն և եթ պահանջում է ներկայացնել բժշկական վկայական վնասւածի դրութեան նկարագիրով հանգերձ, պահանջում է նոյն իսկ մանրամասնորէն զեկուցանել պատահած զժբաղդութեան տեսակը, վնասւած տեղը, ժամը, օրը, զժբաղդութեան յայտնի կամ ենթալլելի պատճառները, նոյնպէս և այն թէ ինչ միջոցների են զիմած եղել վնասւածի առողջութիւնը վերականգնելու համար։ Բայց եթէ այդ ամենը իւր ժամանակին չկատարելու համար յարգելի պատճառներ են եղել, այն ժամանակ ապահովագրողը ազատուում է նաև այդ պատասխանատութիւնից։ Սակայն այդ կարող է և պէտք էր ընկերութեան պարտաւորութիւնը համարէր։ մինչեւ վարչութեանը կամ մօտիկ գործակալութեանը զժբաղդ զէպքի մասին տեղեկութիւն տալը, գործարանատէրը պարտաւոր ում է հոգալ վնասւածի առողջութիւնը խնամելու մասին։

Այս կէտերը կարող են շատ էլ ձեռնուու չլինել և գործարանատիրոջ և բանւորի համար։ Պէտք էր, որ ընկերութիւնը ինքը անմիջաղէս խնամելը և բժշկեր վնասւածին, հետազրով պատփրելով իր հաւասարմասուր բժիշկներին, որոնց թիւը ամեն քաղաքում համարում է 1—3-ը. մինչդեռ այդ բանը ընկերութիւնը գործադրում է բաւականին ուշ, այն էլ երբ սկսում են քննել բանւորի զժբաղդութեան տեսակը։

Սակայն այսպէս թէ այնպէս, ընկերութիւնը միշտ աշխատում է բաւարարութիւնն տալ ապահովագրածին, և ձգտում է որ և է

պրետենդիա չյարուցանել իր գործունէութեան դէմ, որը կարող է վատ հետեւանքների հասցնել և տարածացնութիւնների առիթ տալ ի մեաս ընկերութեան շահերի:

Մինչև այժմ, չնայած լնիերութեան մի քանի խիստ կանոններին, չէ եղել մի դէպք, որ դժբաղդ դէպքերից համագումար ապահովագրող մի գործարանատէր անբաւարար համարած լինէր լնկերութեան որոշումը և որոշման համաձայն վարձատրութիւնը: Չնայած որ Առուսաստանում բազմաթիւ գործարանատէրեր ապահովացրած են իրանց բանւորներին, սուստիստիկալից երևում է, որ, թերևս մասսամբ շնորհիւ լնիերութեան աչալլջութեան, դժբաղդ դէպքեր քիչ են եղել և եղածներն էլ լիովին բաւարարութիւն են ստացել: Մեզ մօտ Կովկասում—Նորէլ եղբայրները, Կասպեան-Սևծովեան նաւթաքին և առևտրական ընկերութիւնը (Առոտշիլդ) թէ Բագրում և թէ Բաթումում ապահովացրել են իրանց բանւորներին. այնուհետեւ գալիս են մի շարք գործարանատէրեր, ինչպէս օրինակ Բաթումում Արիսներ, Ծովիանովներ, Թիֆլիսում կաշւեգործարանատէր Աղելիսանով, Բաքրում Թաղիեւ, Լէյբովիչ, Բէլօստոցկի, Գալապերին (Նաւթաքին գործարաններ), Տէր-Արգիսով, Տրետեակով, Պլեցէր, Ացզիկովիչ (Հինութիւնների կապալառուներ) և այն և այն, սոքա ամենքն էլ ապահովացրած ունեն իրանց բանւորներին: Աւրախալի է լսել, որ թուրք Դատաշեներն անգամ իրանց նաւերի գործավարներին այս տարի ապահովացրած են դժբաղդ դէպքերից: Եւ իրաւ, առւրքը մեծ արդիւնաբերութիւնների համար խոշոր գումար չի կաղմում: բայց խրախուսել բանւորներին և նիւթապէս և բարոյապէս—գա խակական արդիւնաբերի նշանաբաննը պէտք է համարւի:

Այժմ էլ մի քանի խօսք պետական վերահսկողութեան մասին: Մեր վերև առաջ բերած կանոնադրութեան կէտերը, ինչպէս յիշել էինք, հաստատւած և վաւերացրած են ներքին գործերի և Ֆինանսների նախարարներից, հետեւապէս ընկերութիւնը պարտաւորւած է իր կողմից անշեղ կերպով զեկավարւել հաստատւած կանոնադրութիւնով. հակառակ դէպքում՝ նա սպատասխանատու է և օրէնքի և ապահովագրողի առաջ: Սա արդէն ինքն ըստ ինքեան մի պարտաւորեցուցիչ կոնսորտ է, որից շեղւելով ապահովագրական լն-

կերութիւնը անկասկած պիտի տուժէ իր կլէնտներից բարոյապէս և  
իր շահերի տեսակէտից՝ նիւթապէս:

Ինչ վերաբերում է պետական կոնտրոլին, պէտք է խոսողվանւած,  
որ նա շատ թոյլ է կատարւել մինչև այժմ։ Այդ կոնտրոլը (եթէ կա-  
րելի է կոնտրոլ անւանել) կայանում է նրանում, որ ընկերութիւնը  
ամեն տարւայ վերջը տարրուելով իր տարւայ հաշիւը, անմիջապէս  
Յ տպագրած օրինակներ է ներկայացնում վերցիշեալ երկու նախա-  
րարներին քննելու համար։ Այդտեղ մանրամասնաբար ցուցակագրւած  
են մի տարւայ ընկերութիւնն մուտք ու ելքը, վեաս ու օգուտը,  
պետական տուրքի քանակութիւնը (կազենայ ուղևորակ) դժբաղդու-  
թիւնից առաջացած բոլոր դէպքերը և վարձատրութիւնը, վերջա-  
պէս նշանակւած է և այն, թէ ինչ գումարի է ընկերութիւնը փո-  
խանցել ապահովագրութիւններ մի այլ ապահովագրական ընկե-  
րութիւնն մէջ և այլն։

Այս տարի յուլիսի 1-ից, արդէն պետական վերահսկողութիւնը  
կը գործադրւի լիակատար կերպով և կը մտնի մի նոր նորմաի մէջ։  
Ընկերութեան ամեն մի քայլը, ամեն մի նոր օպերացիան  
կը քննելի պետութիւնից նշանակւած մի յատուկ կոմմիսարիացի կող-  
մից։

Եւ ահա այս մի ցանկալի երեսոյթ պէտք է համարել։

Այստեղ մէնք առաջ ենք բերում տարիիների ցուցակը, որով  
ապահովագրողը կարող է իմանալ թէ, 1000 ռուբլի տարե-  
կան վարձագնի համար, որքան տուրք է նշանակւած, եթէ ապա-  
հովագրողը ցանկանում է բազմապատկման սիստեմով ապահովա-  
գրել իւր բանւորներին։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԻՑՆԵՐ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՉԱԳԻՒ ՀԱՄԱՉԱՅՆ

I


Տարեկան տուրք նշանակւած ևն 1000 ռուբլու համար  
(ընդհանուր տարւայ վարձագնի համաձայն):

|      | Ա. Ա. |  | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| I    | 1 05  | 1 55  | 2 40  | 5 —   | 1 25  | 1 80  | 2 85  | 5 90  | 1 95  | 2 85  | 4 50  | 9 30  |       |       |       |       |       |       |       |       |       |  |
| II   | 1 20  | 1 90  | 2 90  | 6 —   | 1 45  | 2 20  | 3 45  | 7 10  | 2 25  | 3 45  | 5 40  | 11 10 |       |       |       |       |       |       |       |       |       |  |
| III  | 1 40  | 2 30  | 3 30  | 7 10  | 1 70  | 2 70  | 4 —   | 8 40  | 2 70  | 4 20  | 6 20  | 8 30  |       |       |       |       |       |       |       |       |       |  |
| IV   | 1 65  | 2 75  | 4 —   | 8 40  | 2 —   | 3 20  | 4 70  | 9 90  | 3 15  | 5 10  | 7 35  | 15 60 |       |       |       |       |       |       |       |       |       |  |
| V    | 2 —   | 3 30  | 4 70  | 10 —  | 2 40  | 3 90  | 5 50  | 11 80 | 3 75  | 6 15  | 8 70  | 18 60 |       |       |       |       |       |       |       |       |       |  |
| VI   | 2 40  | 4 —   | 5 70  | 12 10 | 2 90  | 4 75  | 6 65  | 14 30 | 4 50  | 7 50  | 10 50 | 22 50 |       |       |       |       |       |       |       |       |       |  |
| VII  | 3 3 — | 4 90  | 7 —   | 14 90 | 3 50  | 5 80  | 8 30  | 17 50 | 5 55  | 9 15  | 12 90 | 27 60 |       |       |       |       |       |       |       |       |       |  |
| VIII | 3 80  | 6 05  | 8 55  | 18 40 | 4 15  | 7 15  | 10 10 | 21 70 | 7 05  | 11 25 | 15 90 | 34 20 |       |       |       |       |       |       |       |       |       |  |
| IX   | 4 85  | 7 60  | 10 65 | 23 10 | 5 70  | 8 95  | 12 55 | 27 20 | 9 —   | 14 10 | 19 80 | 42 90 |       |       |       |       |       |       |       |       |       |  |
| X    | 5 15  | 9 65  | 13 50 | 29 30 | 7 20  | 11 30 | 15 90 | 34 40 | 11 40 | 17 85 | 25 5  | 54 30 |       |       |       |       |       |       |       |       |       |  |
| XI   | 7 80  | 12 30 | 17 10 | 37 20 | 9 10  | 14 45 | 20 15 | 43 70 | 14 40 | 22 80 | 31 80 | 69 —  |       |       |       |       |       |       |       |       |       |  |
| XII  | 9 90  | 15 90 | 21 40 | 47 20 | 11 60 | 18 70 | 25 20 | 55 50 | 18 30 | 29 55 | 39 75 | 87 60 |       |       |       |       |       |       |       |       |       |  |

II

Տարեկան տուրք ամեն 1000 ա.  
համար (ընդհանուր տարւայ վարձագնի համաձայն):

|       |       |       |       |       |       |       |       |       |       |       |       |       |       |       |       |       |       |       |       |       |      |
|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|------|
| Ա. Ա. |      |
| I     | 1 00  | 0 90  | 0 80  | 0 70  | 0 60  | 0 50  | 0 40  | 0 30  | 0 20  | 0 10  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00 |
| II    | 1 10  | 1 00  | 0 90  | 0 80  | 0 70  | 0 60  | 0 50  | 0 40  | 0 30  | 0 20  | 0 10  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00 |
| III   | 1 20  | 1 10  | 1 00  | 0 90  | 0 80  | 0 70  | 0 60  | 0 50  | 0 40  | 0 30  | 0 20  | 0 10  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00 |
| IV    | 1 30  | 1 20  | 1 10  | 1 00  | 0 90  | 0 80  | 0 70  | 0 60  | 0 50  | 0 40  | 0 30  | 0 20  | 0 10  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00 |
| V     | 1 40  | 1 30  | 1 20  | 1 10  | 1 00  | 0 90  | 0 80  | 0 70  | 0 60  | 0 50  | 0 40  | 0 30  | 0 20  | 0 10  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00 |
| VI    | 1 50  | 1 40  | 1 30  | 1 20  | 1 10  | 1 00  | 0 90  | 0 80  | 0 70  | 0 60  | 0 50  | 0 40  | 0 30  | 0 20  | 0 10  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00 |
| VII   | 1 60  | 1 50  | 1 40  | 1 30  | 1 20  | 1 10  | 1 00  | 0 90  | 0 80  | 0 70  | 0 60  | 0 50  | 0 40  | 0 30  | 0 20  | 0 10  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00 |
| VIII  | 1 70  | 1 60  | 1 50  | 1 40  | 1 30  | 1 20  | 1 10  | 1 00  | 0 90  | 0 80  | 0 70  | 0 60  | 0 50  | 0 40  | 0 30  | 0 20  | 0 10  | 0 00  | 0 00  | 0 00  | 0 00 |
| IX    | 1 80  | 1 70  | 1 60  | 1 50  | 1 40  | 1 30  | 1 20  | 1 10  | 1 00  | 0 90  | 0 80  | 0 70  | 0 60  | 0 50  | 0 40  | 0 30  | 0 20  | 0 10  | 0 00  | 0 00  | 0 00 |
| X     | 1 90  | 1 80  | 1 70  | 1 60  | 1 50  | 1 40  | 1 30  | 1 20  | 1 10  | 1 00  | 0 90  | 0 80  | 0 70  | 0 60  | 0 50  | 0 40  | 0 30  | 0 20  | 0 10  | 0 00  | 0 00 |
| XI    | 2 00  | 1 90  | 1 80  | 1 70  | 1 60  | 1 50  | 1 40  | 1 30  | 1 20  | 1 10  | 1 00  | 0 90  | 0 80  | 0 70  | 0 60  | 0 50  | 0 40  | 0 30  | 0 20  | 0 10  | 0 00 |
| XII   | 2 10  | 2 00  | 1 90  | 1 80  | 1 70  | 1 60  | 1 50  | 1 40  | 1 30  | 1 20  | 1 10  | 1 00  | 0 90  | 0 80  | 0 70  | 0 60  | 0 50  | 0 40  | 0 30  | 0 20  | 0 10 |



Գործարանները, վտանգի աստիճանների համաձայն բաժանւած էն հետևեալ դասակարգերի:

- I. Վ. ի մագրական գործատներ, ծխախոտի փաթռի-կաներ, ձեռնոցների գործարաններ, գլխարկիների ար-հետանոցներ և այլն:
- II. Գործարաններ, գիտակների, թաւիշի, գորգերի, ժամադրու-ների և այլն:
- III. Հայելիների գործարաններ, կաշւեգործարաններ, կազմարա-ներ, պանրագործարաններ, տպարաններ և այլն:
- IV. Ասեղների քորոցների, սոսինձի, միներալեան ջրերի, պաս-տանի գործարաններ և այլն:
- V. Օձառի, ապակեաչ, պարաների, քացախի գործարաններ:
- VI. Ալաբաստրեան ֆարբիկաններ, աղիւսի, արճճի գործարաններ, շաքարի, կարէմեքենաների գործարաններ, դարբնանոցներ, զինագործարաններ և այլն:
- VII. Խմիչքի, նաւթային, գործարաններ, նաւթահանքեր, մեխա-նիկական արհետանոցներ և այլն:
- VIII. Զրաղացներ, երկաթի ձուլարաններ, քարտաշներ, որմնագիր-ներ, կաթսայագործարաններ, մեխանիկական-չուղունէ գոր-ծարաններ, լուցկիների, բենզինի գործարաններ:
- IX. Սղոցարաններ, գարբնանոցներ և այլն:
- X. Կամուրջների կառուցանումն, նաւագործականներ (վերփա), սղոցարաններ (VIII և IX) և այլն:
- XI. Շոքենաւեր, շոքեմեքենաների գործարաններ և այլն:
- XII. Հանքեր անտրացիալի, երկաթուղային շինութիւններ, քարէ-ածխային հանքեր, սղոնձի հանքեր, աղահանքեր և այլն:

Մի քանի դեսքեր վարձատրութեան, որը վճարել է ապահովացրածներին „Россия“ ընկերութիւնը և որը քաղում ենք ընկե-րութեան առանձին գրքոցիներով հարատարակած բրոշիւրներից:

- 1) Որմնագիրը երկրորդ հարկից ընկնելով սոսացել է ծանր դիասներ և վերջը վախճանելով—վարձատրութ. նորա այրին 2.900 ռ. լից և ջարդել գանգը—վարձատրութիւն ընտանիքին 1.700 ռ.:
- 2) Առաղջագործը բանելով Պ.-ի գործարանում՝ ընկել է կոռ-լից և ջարդել գանգը—վարձատրութիւն ընտանիքին 1.700 ռ.:

3) Մեխանիկոս Վ. ճախարակի վրայ բանելով կորել է աջ ձեռքի ցուցամատը—վարձատրութիւն 200 ռուբլի:

4) Փականագործը բանելով Թ.-ի թիթեղեայ արկղների գործարանում, մի պաստիկ հարւածի ժամանակ թուշում է երկաթի կտոր և կաշելով ողնաշարին՝ վնասում է մէջքը—վարձառ. 510 ռ.

5) Մշակը քար կտրելու ժամանակ գլորւում է ցած ռուբի տակի փխրուն հողից և մեռնում—ընտանիքին վարձառ. 930 ռ.

6) Բանւորը Շ. Բ. Լ. թելի գործարանում բանելու ժամանակը ընկնում է անիւի տակ և ջ սխջախուում—վարձառ. 1.600 ռ.

7) Բանւորը բրդեայ գործարանում բռնուում է բուրդ ծեծող երկաթեայ ձողից և մեռնում—վարձատրութիւն 1.500 ռուբլի:

8) Մշակը ասպրանք կրելու ժամանակ գլորւում է նաւի տախտակամածից և ընկնում մեքենայական բաժինը ու ջարդւում. վարձարութիւն ծնողներին 420 ռուբլի:

9) Բանւորը Գ. Ն.-ի կաթսայագործարանում, նաւի վրայ բանելու ժամանակ ընկնում է ջուրը ու խեղտուում—վարձատրութիւն ընտանիքին 770 ռուբլի:

10) Արհեստաւորը ցէմէնտի գործարանում ընկնում է ցէմէնտի վառարանը և այրւում—վարձատրութիւն ընտանիքին 1.400 ռ.

11) Բ.-ի նաւթահորի վրա բանող արւեստաւորը, ընկնելով վիշիայից, կտրում է ձախ ոտի մեծ մասը—վարձառ. 420 ռուբլի:

12) Առաղձագործը շռէսղոցարանում ուսխտակի ահագին կրծքին հարւածից մեռնում է և ստանում է ընտանիքը 2.200 ռ. վարձատրութիւն:

13) Բանւորը տպարանում բռնուում է կաշէ փոկից (քեմեյ) և ջախջախուում անիւի մէջ—վարձատրութիւն ընտանիքին 400 ռ.

14) Դարբինը (մօլոցօյեց) ջախջախուում է ձախ ձեռքի թաթը (կիտի) շռէ մուրճի (պօրօօ մօլոտ) տակ, վարձ. 1000 ռ.

15) Կին բանւորը, ասեղի գործարանում, լամպարի պաշթումից այրւում է և ստանում է ծանր վէրքեր, որին հետեւում է մահ. վարձատրութիւն ծնողներին 900 ռուբլի, և այլն և այլն:

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԼԵՒՈՆԵԱՆ Գ. Զ. — «Հայ աշուղներ». Նրան. «Եիրակ» գրավաճառաւա-  
նոցի. 1892, 151 էջ, դիմք 30 կուլ. in<sup>1/8</sup>:

Ո՞վ չէ տեսել արդեօք Հայաստան  
նում և կոմիլասի ու մինչև անդամ  
թուսաստանի հայաբնակ քաղաքնե-  
րում թափառող մեծ մասամբ երկու  
աչքով կուր, վտառ ու թուլակազմ,  
խուպոտ ձայնով հայ աշրւղին. Աչքե-  
րի կորութիւնը պատճառ է եղել  
աշուղի լսողութեան և չօշափիւրիքի  
զգալարմների և չիշողութեան ու  
երեակաչութեան զարգացման. Նրա  
նուրբ մատներն արագ խաղում են  
երաժշտական գործիքի վրաէ. նա  
շուտով ըմբռնում է երկար ժամա-  
նակ լիշտում է երգերն ու եղանակ-  
ները. նա ինքը ջորինում է երգեր,  
ինքը սազացնում է նրանց եղանակ  
և ինքը երգում ու նւազում է ազդ  
երգը. Այսպիսով աշուղը մեզ ներկա-  
լացնում է իրրե մի կատարեալ ար-  
տիստ Յունաստանի հին բապտողնե-  
րի նման, իրեն բանաստեղծ, կոմպո-  
զիտոր և երաժիշտ:

Աչքովի երգը դարերի ընթաց-  
քում մեր ժողովրդի մտաւոր, գրա-  
կանական-երաժշտական մնունդի ա-

մենադլխաւոր աղբիւրներից մէկն է  
եղել. Ազդ երգը—սկզբները մեծ մա-  
սամբ կրօնական—ներբողական և  
խրատական, իսկ հիմա՝ ազգավին—  
առաջադիմական ուղղութեամբ մեծ  
զեր է կատարել մեր ժողովրդի կրօ-  
նական-ազգավին ինքնաճանաչու-  
թեան գործում. Առաջ աշուղն եր-  
գում էր թուրքերէն, բայց նրա եր-  
գի հերոսները՝ աշուղի փոքր «օխտն  
անւանի Մշու Սուլթան սուրբ Կա-  
րապեաը», Լուսաւորիչն ու Աստա-  
ծածինն աւելի խոր են մտել ժողո-  
զովրդի ուղեղում, քան մեր տէրտիք-  
ների մեծ մասամբ անմիտ ու ան-  
կապ քարոզներն, մեր շարականների  
մազթանքների խրթին իմաստները՝  
իսկ հիմա, երբ աշուղն երգում է հա-  
ջերէն և ազգավին ու ժամանակին  
չարմար բալանդակութեամբ երգեր,  
ով չէ տեսել թէ ինչպիսի ոգեսրու-  
թեամբ, ինչպիսի լավշտակութեամբ  
լսում է նրան ժողովուրդը. Ո՞վ կա-  
րողէ ուրանալ, որ մեր ժողովրդական  
երգին ամելի է առաջադիմել, քան

## Քահանան:

Աշուղների երգերը հիմա արդէն տպւած բազմաթիւ օրինակներով շըրջում են ժողովրդի մէջ և ժողովուրդն երգում է նրանց: Տարաբաղդաբար մեր բանասէրներից մէկն է գուրու եկել միանի հանդուցեալ Դէօրգ Հախուրդնեանը, որ հետաքրքրուել է նրանցով և տաել է լուրջ քննադատութիւն նրանցից մէկի՝ Սալեաթ-Նոռվափի մասին, աճմահացրել է նրան և հետաքրքրել նրանով ոռու օտարազգի բանաստեղծներին և բանասէրներին<sup>1)</sup>:

Պ. Պ. Կենոնեանը ցանկացել է ի մի հաւաքել հաւերի մէջ գործող բոլոր (sic!) անցեալ ու ներկայ աշուղների մասին կենազրական տեղեկութիւնները և նրանց երգերից միմի համար, որպէս զի ընթերցողներին հաշակ տալ նրանց արտազրութիւնների մեջ տեսակի և ուժեղութեան մասին: Մէջ բերած 225 աշուղների կէսից աւելին վիշտում է միանի անումներով, մնացածների մասին դրում են կենազրական կարճ տեղեկութիւններ, որոնցից մեծ մասն առավելական բնաւորութիւն է կրում: Մէջ բերած երգերից շատերը չեն բնորոշում հեղինակին: Աշուղնե-

րի կենազրութիւններն սկսել է պրեն. Լեռնեանը ժամանակագրական կարգով, բաց հէնց սկզբից շփոթել է ալդ կարդը, օրինակ՝ Սալեաթ-Նոռվափին առաջ է դրել Դոստի աշուղից, ան ինչ վերջինս առաջ էր Սալեաթ-Նոռվափից և նրա ուսուցիչն էր: Շատ աշուղների ապրելու ժամանակը սըխալ է որոշում, օրինակ՝ Շամչի-Մելքոնի մասին առում է, որ նա բնակելում էր «1740-ական թւականներին»: Ապացուց որ նա ապրում էր 1790-ական թւականներին և մինչեւ անգամ XIX դարի սկզբներում, կարող է ծառակել նրա՝ Աղա-Մահմադ խանի ձեռքով Թիֆլիսի ամերման նկարագրին ու ալդ սատիրիկ-բանաստեղծի եղեցրում շատ տեղ վշտով «պոլիցէն» ու դեսետնիկները»: Մի քանի աշուղների ոչ կենազրութիւններն է լայտնի պ. Լեռնեանին, ոչ նրանց երգերը, այն ինչ ալդ բաները դժւար չէր գտնել: Օրինակ՝ Լազաթ-Օղլանի մասին ասում է միան: «որսա մասին կենազրական տեղեկութիւններ չեն հանել մեզ, միան որտ երգերից լայտնի է հետեւեալ կտորը, մեռնելուս օրն քիչ գուղեմ վրէս քար ածես ինձ ամառ Թիֆլիսում շատերին կարծեմ լայտնի կը լինի, որ Լազաթ-Օղլանը, Սալեաթ-Նոռվափի ալդ ամենամեծ հետեղը, վրացի էր, անունը՝ Պէտիկօ (Պետրոս) Բէցիա-շւիլի, լայտնի է նրա արագիկական մահը—նշանածին ալցելութեան ժամանակ Ախալցիակի գետում խեղգւելը... Սրա երգերից լայտնի են «Ոնչ գուղէ վարթըն ճմէկի» դու բաց արած ևս ինձ ամմա (տպւած) և «Ելուգիլ իմ կրա-

<sup>1)</sup> Ընթերցողների առանձին ուշագրութիւնն եմ զարձնում ներկայ ժամանակի ամենամեծ ոռու բանատեղներից մէկի՝ Ա. Պոլոհեկի լողածների վրայ Սալեաթ-Նոռվափի մասին «Կառաջ» ի վիճական թւականների համարում Յօդւածների մէջ մեծ աեղ են բանում Պոլոնսկու արտօ թարգմանութիւնները Սալեաթ-Նոռվափից:

կըն, կանչում իմ հարա, եար, Է՛ կըն, կանչում իմ հարա, եար» (անտիպ) և ազն։ Մի քանի աշուղների հակերէն երգերը լայտնի չեն պ. Լեռնեանին և նա մէջ է բերում նրանց թուրքերէն երգերը։ Օրինակ՝ Փէշիկ-Նովալից մէջ է բերել նրա մի թուրքերէն երգը. այն ինչ նա լայտնի էր իր հակերէն միս տիկալան երգերով։ Սրա երգերից թիվլիսում մի ժամանակ հոչակւած են եղել «Փշուի էսպէս ժամանակըն», չուս ու հաւատու սէր չկայ» (տպւած, «Հաքիլ ես ծիրանին») (Աստւածածնի երգը), «Ուսու պօիծար իշման տիզըն» (Լուսաւորչի և Հռիփիմեանց պատմութիւնը) և ազ անտիպ երգերը... Առ հասաբակ պ. Լեռնեանը իրան հեռու պիտի պահէր թուրքերէն երգերից և մինչեւ անդամ նրանց հեղինակներից, եթէ ոչ մենք կարող կը լինէինք մէջ բերել շատ և շատ թուրքերէն և մանաւանդ վրացերէն գրող աշուղներ, որոնք պ. Լեռնեանի երեխ մաքով անդամ չեն անցել...

Պ. Լեռնեանը «աշուղ» անունը տալիս է նրանց, որոնք պարապում են միաչն աշուղութեամբ, ալտինքն աշուղութիւնը իրանց արհեստ են արել, և ցանկանել է ծանօթացնել միան նրանց հետ։ Ալտինով իրան արդարացնում է այն քանի համար, որ Գիւրջինաւէի, Քեանհանի և այլ «Ալալամ Ղովէրէսիոների (գրչով քանաստեղծների) մատին ոչինչ չի առել, այն ինչ գրքի ամեն մի երեսի

վրաց պատահում են աչնպիսի անուն-ներ, որոնց համար աշուղութիւնը երկրորդական զբաղմունք է եղել. ալդպիսիների թում մտել են մինչեւ անդամ տէրտէրներ և վեղարաւոր-ներ, Գրքի մէջ պատահում են հետաքրքրական, թէպէտ և ոչ բարորդին նոր տեղեկութիւններ աշուղական կեանքի մասին։ Գրքի վերջում «աշուղական երգերի ձեերից և անուն-ներից» 64—83 վիշել է միան 31-ը, այն էլ եղանակն ու չափարերական կանոններն իրար հետ խառնելով։ Առհասարակ թէ գրքի հեղինակը և թէ ինքը գիրքը շատ խ ամ տպաւորութիւն են գործում։ Աշուղների մասին լայտնի, ապւած կենսագրութիւններից պ. Լեռնեանը բաւարար ամփոփումներ չեւ անում, իսկ ան-լայտնիների մատին զրած կենսագրական տեղեկութիւնները ցուց են աալիս, որ գրքի հեղինակը ընդունակ չէ քննագատորէն նավել իր գրւածքի վրան։ Գիւրքը չամենալն դէպս կարող է մի փոքր ծառալութիւն մատու-ցանել, այն է իրեն թէ ցուցակ տե-ղեկատու հաւ աշուղների մասին, այն էլ կիսատ կերպով, որովհետեւ որոշ սիստեմ չկատ անունների դասաւուրութեան մէջ—ոչ ժամանակագրա-կան ոչ ալբուբենական կարգ։ Գիւրքը կազմում է նաև լեզւի կողմից, և շատ տեղ անգրագիտորէն է գըր-ւած։

Պ. Ա.Ս.

Լեկրեբի, Ժիլ. — «Հանսապարհորդութիւն Արարատի վրայ»: Պարիզ, 1892 թ.

Voyage au mont Ararat par Jules Leclerque Paris E. Plon Nourit et. C-cie, 1892. զին է 4 ֆր.:

Պ. Ժիլ Լեկրեբ արդէն լաւանի է Փրանսիական գրականութեան մէջ իր մի շարք տաղանդաւոր ճանապարհորդական գրւածքներով, սրոնք գլխաւորապէս վերաբերում են Կովկասին, Պարսկաստանին և Տաճկաչալաստանին:

1890 թւականին, օգոստոսու ամսին մէջ պ. Ժ. Լեկրեբ սկսեց իր ճանապարհորդութիւնը դէպի Արարատի գագաթը, չվախմենալով բազմաթիւ վտանգներից, սրոնց նա կարող էր հանդիպել ձիմնալին անդունդներում և այն նախապաշարմունքներից, որ ախրում են տեղական բնակիչ քիւրդերի մէջ, նախապաշարմունքներ սրոնք ամեն մի քաջում արգելք են հանդիսանում այդ նպատակի իրագործման: Դժբաղզաբար նրան չէ լաջողում իրականացնել իր ծրագիրը, այն է բարձրանալ սուրբ լեռան գագաթը, չնայելով այն բոլոր եռանդին որ նա գործ է դնում: Ազդանալութեան զլխաւոր պատճառն է լինում բեռնակիր քիւրդերի ապատամրութիւնը, 4760 մետր բարձրութեան վրայ, մասսամբ և Փիզիքական ան թուլութիւնը որը նազգացել է չնորհիւ Երեանի դաշտում ախրող անտանելի տօթին, մինչդեռ սարի վրայ ջերմաչափը ցուց էր տալիս մի քանի ժամանակ 0-ից էլ ցած չեղինակը անկեղծ կերպով խռառ-

վանում է, որ նախապէս չէր պատրաստել այդպիսի դէպիքերի առաջնառնելու համար:

Անու ամենայնիւ համելով մի լաւանի բարձրութեան, համեմատաբար գագաթի բարձրութիւնից ոչ աչնքան էլ ցած (միայն 440 մետր տարածութիւն էր բաժանում նրան գագաթից), նա բաւականում է այդտեղից ուսումնասիրել «Աւետիւց աշխարհը» և վերադառնալ, ինքնիրան միսիթարելով որ գոնէ ողջ և առողջ գուրու է զալիս աղջ վարդենիթէ բնութեան և թէ մարդկանց ձեռքից, թեթև սրոտով և թեթև գրպանով, որի պատճառը նրա ուղիկիցների անուանման ազանութիւնն էր, որոնք, ինչպէս ուզում է հաւատացնել հեղինակը, մինչեւ անգամ պատրաստ էին նրան սպանելու, եթէ նա համարձակէր ընդդիմադրելու աղջ վարենիների պահանջներին:

Ազգբներին տիրում էր մի աւանդութիւն—ալժմ նա և կորցրել է իր հշանակութիւնը... եթէ Արարատի գագաթը անմատչելի է մարդկանց, զորապատճառը լեռան զառիվերները չեն, ինչպէս տում է հեղինակը, որոնք ընդհանրապէս մատվելի են, աղջ կանազան կողմնակի պատճառներ, օրինակ լաւայի հոսանքների վրավեց անցնելը, բարձրութեանց վրայ օդի հօսրութիւնը, վերջապէս սաստիկ

ցուրտը, որը անմիջապէս փոխարինում է արեալարձի (tropique) տաքութեան:

Ահա այս զանազան պակմանները, որոնք միացած կանգնեցնում են բուսահամեցնում են բաղմաթիւ ճանապարհորդներին, որոնք սկսում են իրանց գործը ալդ հռչակւած լեռան դագաթին համակարգութիւնով ամենաճշխիւ ոմանց լազողւել է, չնայած խոչընդուներին՝ բարձրանալ մինչև դագաթը: Պ. Լեկը որը իր գրւածքի մի զլուխը ամբողջապէս չատկացրել է մասնաւորապէս զլխաւոր փորձերի նկարագրութեանը, մասնացուց է անում պ. Ե. Մարկովի վրայ, որին չաջողել է 1888 թւին օգոստոսի մէջ բարձրանալ ո. Սարի գալաթը և ի վիշտավել իր ալդ չաղթութեան կանգնացրել է քարե կուտերից մի պիրտումիդ 5 ռածաչափ բարձրութեամբ: Գագաթի հասնելու համար նա գործադրել է երկու օր:

Ազդ հեռագրական հատորում պ. Լեկերը չէ սահմանափակւել միանադան պատահարների նկարագրութեամբ: Իր աշխատութեան մեծ մասը նվիրած է Մասկովի բնութեան և կենդանական կեանքի նկարագրութեան: Պակաս գիտական նշանակութիւն չունին նրա տած տեղեկութիւնները քիւրդ ցեղերի մասին, որոնց նա գիտել է սկսած Արագածից (Allahegaz) մինչև Բաղդատի և Հալէպի շրջակարքը (հիւմիսից հարաւ) և Ուրմիակ լճից մինչև Անատոլիակի սարերը (արեելքից մինչև արևմուտքը):

Նա վերջացնում է իր գիրքը մի հետաքրքրական հավեացքով Հայաստանի և հայկական հարցի վրայ Գիրքը զարդարւած է Արարատի գեղեցիկ նկարով, Կովկասի, Վաստանի և Պարսկաստանի աշխարհագրական քարտեզներով:

Ե. Մին.

ՊՐԻՄ, Ֆերդինանդ.—«Երկրագունդը, Տովերը և ցամաքները»: Պարիզ, 1892, գինն է 10 ֆր.

Priem, Ferdinand.—La Terre, lesmers et les continents  
Paris S.-B. Boilliére, 1892—Prix 10 fr.

Վերջիս լուս տեսան «Բնութեան հրաշալիք» անւան տակ հրատարակ լող ժողովածւի երեք հատորը: Ալդ ժողովածւի Ա. հատորը նվիրած է անասունների կեանքին «La vie des animaux»—par Sb. Breliem: որը այժմ

հրատարակում է ժողովրդին մատչելի գնով նաև ռուսերէն լեզուի Երկրարդ հատորը նվիրած է մարդկային ցեղերի «Les Races humaines» նկարագրութեան: միրջապէս վերջին հատորը նվիրած է մեր երկրա-

գնդի ֆիզիքական նկարագրութեան, թէն մի քանի զլուխներ նսփրւած են երկրագնդի դանազան շրջանների բռառականութեան և կինդանիների (Ֆլորա և ֆրառւն) նկարագրութեան:

Այս մնօ հասորը, որ զարդարւած է բաղմաթիւ նկարներով, անշուշտ պիտի բոնէ վակելուչ տեղ ժողովրդականացրած դիտական գրքերի շարքում: Հեղինակը աշխատել է ոչ թէ զանազան կտորներից կազմած մի անկապ ժողովածու տալ ինչպէս ընդհանրապէս սովորութիւն է դարձել ժողովրդական ընթերցանութեան համար գրքեր հրատարակողների մէջ, նրա դրւածքը առաջին երեսից մինչև վերջին երեսը կրում է ինքնուրողնութիւնն և թողնում է մի ամփոփ տպաւրութիւն: Բացի դրանից այդ գրւածքից պարզ երեսում է որ պ. Պրիմ շարունակ հետեւում է իր մասնագիտութեան վերաբերեալ նոր հրատարակութ հեղինակութիւններին: նա, եթէ կարելի է ասել, երկրագիտական գիտութեան վերջին խօսքը միայն ժողովրդականացրել է, բայց մի քանի ստատիստիկական տեղեկութիւններից, որոնք արդէն բաւարար հին են և սխալ՝ համեմատաբար վերջին հետազոտութիւններին: Զէ կարելի աննկատելի թողնել այն պարզ ոճը որով նա պատմում է դիտութեան դժւարին տեղերը:

Առաջի մասում պ. Պրիմ տալիս է մեզ երկրաբանութեան պատմու-

թիւնը, ապա հայեացք է ձգում երկրագնդիս և միւս երկնակին մարմինների մէջ եղած լարաբերութիւնների վրա: վերջապէս մասնաւրելով իր նիւթը մանրամասն կերպով զրադւում է երկրագնդի զանազան տարբերի, ինչպէս մինոլորտի, ցամաքների և ծովերի նկարագրութիւններով: Հեղինակութեան ահազին մասը նւիրւած է երկրագնդի մակերևութի վրայ շարունակ կատարւող փոփոխութիւնների և նրանց բնական պատճառների պարզաբանութեամբ: Նատ մատչելի կերպով բացատրում է թէ ինչպէս չըի և երկրագնդի կարծր կեղելի տակ ամփոփւած հաւած տարբերի ագդեցութիւնների տակ առաջ են եկել ծովերի անվերջ անգույնները և միւս կողմից ահազին լեռնային շղթաները իրանց ծիւնապատ զագաթներով: Նույնպէս մանրամասն անգեկութիւններ են տրւում սառցաբանների (լեռների), հրաբուխների և երկրաշարժների մասին: Վերջապէս հեղինակը աչքի է անցնում զանազան ժաշուերը, հանքերը և թանկապին քարերը, մասնացուց է անում նրանց լառաջ զալու պատճառները և մի առ մի ցուց է տալիս նրանց հատկութիւնները:

Գարձնում ենք հաւթարգմանիշների ուշադրութիւնը այս գրւածքի վրայի որը կարող է մի շարք ժողովրդական բրաչիւրների նիւթ և աղբիւր լինել:

Ա. ՄԵՐ.

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԻՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դատաստանի ամիս էր այս յունիս ամիսը, գատաստան հասարակաց կարծիքի: Եւ ահեղ էր այդ գատաստանը. բայց ոչ առաջին, ոչ երկրորդ և ոչ երրորդ անգամն է որ հասարակութիւնները գալիս են իրանց քւէն տալու յօդուտ մէկ կուսակցութեան, ընդդէմ միւս կուսակցութեան և ոչ միայն Թիֆլիսում, այլ և Երեւանում, այլ ե. Շուշիում, այլ և ո ըիշ կենդրոններից շատերում: Ումն ենք հաւատում—ահա թէ ինչ հարցին է գալիս պատասխանելու ժողովուրդը ընդհանուր ընարութիւնների ժամանակ: Նա ոցիտեղ մի կողմն է թողնում մասնաւոր խնդիրները, նա պատասխանում է այս ընդհանուր հարցին—ումն ենք հաւատում, ումն ենք հաւատ լնծայում:

Սա մի հատ հարց է, բայց բազմաբովանդակ է նա: Հասարակաց կեանքում չկայ ոչինչ որ աւելի դժւարութեամբ կարողանայ ձեռք բերել քան բազմանդամ հասարակութիւնների վասահութիւնը. Նոցա հաւատը ձեռք բերելը երբէք մի օրւայ, մի տարւայ գործի կարող լինել, նա կարող է արդիւնք լինել երկարամեայ գործունէութեան, մի գործունէութեան, որը իւր ոյժը ցոյց է տւել կեանքի բազմատեսակ պարագաների մէջ, մի գործունէութեան, որը արտայացուել է խօսքով, գրչով, գործով և ժողովրդի բոլոր խաւերի և բոլոր անհատների քննադատութեանը մատչելի ձեռվ: Երկարտարինների ընթացքում՝ հասարակութեան բոլոր խաւերը ականատես են եղել երկու ուղղութիւնների մրցմանը, նոքա ժամանակ են ունեցել փորձելու ամեն մէկի օղտակարութիւնը և վլասակարութիւնը: Այդ կուին մասնակից են եղել մոքի, գաղափարի տէր

մարդիկ, հին ու նոր սերունդներից այն ամենքը, ովքեր որ և է չափով կոչումն են զգացել լուսաւորութեան և ժողովրդական բարօրութեան խնդիրներին մերձենալու. և եթէ այսօր ժողովրդի մի սուսար բազմութիւն հաւատով է վերաբերում դէպի մի կուսակցութիւն և իւր անվատահութիւնն է յայտնում միւսին, — դա ինքն ըստ ինքեան մեր ժամանակւայ հայոց կեանքի մէջ յառաջդիմութեան նշանաւոր յաղթութիւններից մէկը և նոյն իսկ գլխաւորը պէտք է համարել. և իրը այդպիսին՝ այդ եթեոյթը ջերմապէս ողջունելու արժանի է բոլոր լուսաւոր մարդկանց կողմից:

Ահա, խնդրի վրայ այս բարձրութիւնից դէպի վար նայելով միայն՝ մարդիկ կարող են լաւ ըմբռնել ողորմելիութիւնը այն ճիշերի, որ խաւարամիտ, դատարկապորտ և փարիսեցի մարդկանց մասնութը արձակում է յառաջդիմական կուսակցութեան մէկը միւսի վրայ կնկնւող ընտրողական յաղթութիւնների առիթով: Եւ ոչինչ չկայ զարմանալու, եթէ ուղեղով և ոսկրով փոտած այդ սերունդը, մի սերունդ, որ իւր ձայնը լսելի է կացուցանում միմիացն շնորհիւ իւր նմանութեանը դատարկ կարասին, ոչինչ չկայ զարմանալու, առում՝ ենք մենք, եթէ այդ սերունդը ամեն տեսակ արգելքներ է ուզում հնարել հասարակաց կարծիքի արտայացութեան միջոցների դէմ: Բոլոր մութ մարդիկ վախենում են ընտրութիւններից, և մեր յետադէմ մամութը այսօր ոչ մի բանից աւելի չի վախենումքան եթէ ժողովրդական ընտրութիւններից:

Երբ որ ներկայ ամսւայ հոգաբարձական-ծխական ընտրութիւնների հետևանիքների վրայ կը նայէք մի աւելի քան երեսուն տարւաց յառաջդիմական շարժման պատմութեան տեսակից, այն ժամանակ աւելի ևս խորը կը զգաք թէ ինչ մեռած ողիններից են բղասում յառաջդիմական կուսակցութեան յաղթութիւնների դէմ ուղղած թշնամական բանակների բաւառոցներն ու ճղաւոցները և այն ճիգերը որ նոքա թափում են՝ բծեր և արատներ զրոշմելու այդ ընտրութիւնների բնաւորութեան վրայ... Այդ ամենը հասկանալի է, զոքա խեղղւող խաւարամիտների և փարիսեցիների կարծեցեալ փրկութեան միջոցներն են, միջոցներ, սակայն, որ նք երբէք ոչ ոքի փրկել չեն կարող: Ազլապէս պէտք էր հերքել պատմութիւնը:

Թողած գլխաւորը, թողած այն առողջ ոգին, որը յաջողու-

թիւնների է տանում՝ յառաջդիմական կուսակցութեանը, թշնամիքանակները, երբէք չխրատելով ժողովրդի տւած դասերից, աշխատում են արգելք լինել ընտրողական դործին, իսկ երբ, չնայած իրանց տւած խորհուրդներին, ընտրութիւնները այնու ամենայնիւ կատարում են, նոքա ամեն կերպ աշխատում են արատներ կողմնել եղած ընտրութիւններին, շարունակելով իրանց ինտրիգները ընտրողական դործերի զարգացման և կանոնաւորման դէմ:

Յայտնի է, որ այս վերջին 4—5 տարիններում, երբ Ներսիսեան հոգևոր գոզգանոցի հոգաբարձութիւնը կառավարում էր գործերը հակառակ կանոնադրութեան, այսինքն առանց վերընտրւած լինելու, այդքան տարինների ընթացքում այդ բանակների երկու թերթերից և ոչ մէկը չէր պահանջնում կանոնադրութեան պահանջների կատարումը: Պահանջնում էր այդ միայն յառաջդիմական մամուլը: Յայց ահա այժմ, բարձր հոգևոր կառավարութիւնը յարգելով իւր իսկ սեփական օրէնքը, յարգելով նաև յառաջդիմական մամուլի արդարացի պահանջը, վերջապէս տնօրինում է ընտրութիւնը կատարել: Եւ իսկոն, բոլորովին սոււտ տեղից, այդ մամուլը յայտնում է թէ ինքը վազուց ցանկացել է որ ընտրութիւններ կատարւեն: Եւ այդ ասում է նա, անամօթարար, այսինքն ստաբար, ստախօսելով, քանի որ ամբողջ տարինների ընթացքում նա երբէք այդպիսի բան չէր պահանջել:

Եւ այդ մամուլը շարունակում է իւր խաղը, պահանջելով որ ընտրութիւնները գոնէ յետաձգւեն մինչ սեպումքեր ամփար: Նա այդ բանը յայտնում է մամուլի միջոցով, նա այդ կրկնում է աղերսական հեռագիրներով՝ Վեհափառին ուղղած: Յայց հոգևոր կառավարութիւնը, արդէն ճանաչած լինելով այդ կուսակցութեան խրանակների և խորհուրդների արժեքը, ըստ արժանույն գնահատում է նաև նորա ներկայացուցիչների խնդիրը, նա մնում է անդրդւելի իւր վճռի վրայ. ընտրութիւնները կատարւում են: Եւ կատարւում են ոչ այն կանոններով, որ նախօրոք մշակւած էին յետագիմականների ջանքերով, այլ յարմարւելով այն քննադատութիւններին, որոնց ենթարկւեցին այդ «կանոնները» յառաջդիմական մամուլի օրդանների մէջ (տես «Մուրճ» № 4):

Այդպիսով ուրեմն հակառակորդներին չաջողւեց ընտրութիւն-

Դերի մասին բարձրագոյն հոգևոր իշխանութեան հրամանին արդելք լինել. այդ պարտութիւնից յետոյ՝ նոքա պէտք է մի այլ պարտութիւն կրէին, ահանելով որ այդ ընտրութիւնները պիտի կատարեէին ոչ իրանց խորհրդով մշակած կանոններով, այլ այն ձեռվ որ միակ նպատակաշարմարն է հասարակութեան բոլոր խաւերի կամքը ազատայտելու համար...

Այդ պարտութիւնները նրանով նշանաւոր էին, որ մէկ կողմից լաւ դաս տրեւց նոցա, ովքեր կարծում էին թէ շրջոքորժութիւններով և ծածուկ միջամտութիւններով հոգևոր իշխանութեան առաջ կարող են չեզոքացնել հասարակութեան յառաջդիմական մասի և մամուլի ազգեցութիւնը. իսկ միւս կողմից հոգևոր իշխանութիւնը մեծ բարոյական վաստակ ունեցաւ, փարատելով հասարակութեան յառաջաւոր մասի և ժողովրդի կասկածները այդ իշխանութեան տրամադրութիւնների մասին:

Մնում էր հակառակորդներին ուրեմն հպատակւել և ընտրութիւննեին պատրաստել: Եւ մասնակցեցին իրանց ամբողջ ովով, եթէ միացն եղածը ոյժ կարելի է համարել: Բայց այժմ անհերքելի կերպով ասպացուցած պէտք է համարել որ ուղիս քահանաները, որոնք կողմում են ծխականների, ուրեմն և ընտրողների ցուցակը և որոնց միջից նշանակում են ընտրողական ժողովների նախագահները, զրեթէ ամենքը պահպանում էին մեր հակառակորդների կողմը: Դա ապացուցած է բազմաթիւ գէպքերով, որոնք պատահել են զրեթէ բոլոր ընտրողական ժողովներում, և այդ հայդամանքը պակաս լոյս չէ սփսում՝ մեր ժամանակի հոգևորականների կազմի վրայ, հոգեորականների, որոնց ապացուցած օրինագանցութիւնները և չկամութիւնները համերգ էին կազմում մեր հակառակ բանակների լրագրական խարդախութիւնների հետ: Այդ զեղծումները եղել են 1) կեղծ անուններ մատնել ընտրողական ցուցակների մէջ և այդ կեղծ անուններով ձայն տալլը ոչ ծխականներին (տասնեակ գէպքեր ս. նշան եկեղեցում, յուլիսի 3-ի վերը ընտրութեան ժամանակ): 2) Ոչ բոլոր ծխականներին ժողովին մասնակցելու հրաւիրատոմս ուզարկելը, գիտենալ ով այս հրաւիրւած ծխականները յառաջդիմականների կուսակից են (գէպք Զրկիննենց եկեղեցու առաջին ընտրութիւններին, յունիսի 19-ին, ուր

քահանաներից Աէկի ծխականները հրաւիրւած չէին), 3) հրաւիրատումներ ուղարկելը յառաջդիմականներին յայտնի կերպով համակրող ծխական ընտանիքների այն անդամների անուններով, որոնք բացակայ են Թիֆլիսից և արգելելով որ նոյն ընտանիքների Թիֆլիսում ներկայ և չափահաս անդամները մասնակցեն, առարկելով թէ ընտրողական ցուցակում դրւած է ընտանիքի այլ անդամի անունը. (իմ աշքի առաջ կատարւած չորս դէպք Մողնու վերընտրութեան ժամանակ յուլիս 3-ին <sup>1)</sup>). 4) ընտրութիւնների օրը, ո. պատարադի ժամանակ, սուրբ բեմից քահանանելի կողմից ընտրողական քարոզ կարդալը, թելադրելով ժողովրդին ընտրել այս ու այն (նոր-դարական) թեկնածուներին և անէծքով սպառնալլ հժէ ձայն տան միւսներին (յառաջդիմականներին): Դէպքը պատահել է Գորաբաշի եկեղեցում:

Անկարելի է մի առ մի թւել բոլոր այն միջոցները, որ գործադրուած էին հոգեորականների կողմից յաղթութիւնը ապահովելու համար յետաղէմ բանակներին: Զանց չէր առնւած նաև ընտրութիւններից միայն մի կամ մի քանի օր առաջ իրանց հնագանդ նոր ծխականներ զրել տալլ (բազմաթիւ դէպքեր Լուսաւորչայ եկեղեցում) կամ իրանց հնագանդ կարծւած նոր ծխականներ զրել տալլ (նոյնպէս բազմաթիւ դէպքեր Եջմիածնեցոց եկեղեցում):

Մի քանի եկեղեցիներում նախագահող քահանաները, նկատելով որ յաղթութիւնը յառաջդիմականների կողմն է, սկառուակներ են որոնել նիւուը փակելու ընտրութիւնը առանց հետեւանքի թողնելու համար (դէպք Եջմիածնեցոց եկեղեցում, յունիսի 19-ին <sup>2)</sup>):

<sup>1)</sup> Խ պահանջներ հարկի կարող ենք ներկազայնել ալդ ապօրինի կերպով միրժւածների անուն-ազգանունները:

<sup>2)</sup> Մի ալ դէպք, իմ աչքով տեսածը Մողնու վերընտրութիւններին, յուլիսի 3-ին, հայր Նախագահը, սկսելով ընտրողական թերթիկները կարդալ և հէնց առաջին թերթիկի վրա կարդարով ի թիւս երեք անունների մի ոչ-ծխականի անուն, ասաց թէ «Նիստը փակում եմ» Նիստը սական չփակւեց յողովականների բոլոքի պատճառով, որոնք հասկացրին թէ նախագահի պարտքն է բոլոր թերթիկները կարդալ ընտրութեան հետեւանքները արձանագրել և արձանագրութիւնը ներկաւացնել

Թէ ինչպէս էր իրան պահում հակառակ մամուլը ընտրութիւնների ժամանակ, ինչ միջոցների էր դիմումը իւր հակառակ կուսակցութեան վրայ արատներ գրոշմելու, այդ ամենը մենք մի կողմն ենք թողնում, մանաւանդ որ դորանով նորա վաստակածը ոչինչ էր և ընդհանուրի արհամարհանքը նորա բաժինը եղաւ։ Այդպիսի ստոր միջոցներով թերեւս կարողանալին հակառակ բանակները մի բան վաստակել, եթէ միայն ժողովրդի ձայների մեծամասնութիւնը ճիշտ լինէր. թերեւս զեղծումները կարողանալին մեծ զեր կատարել, եթէ մօտաւորապէս հաւասար բանակներ իրար հանդէպ կանգնած լինէին, և եթէ խնդիր վճռողը ամեն եկեղեցում մի քանի հոգով մեծամասնութիւնը լինէր։ Սակայն այդ այլպէս չէ, և ոչ մի կունստշտիւկ, ոչ մի զեղծում չէր կարող դիմուալ ձայների այն առաւելութեան հանդէպ, որ բարեբախտաբար վաստակել է յառաջդիմական կուսակցութիւնը, և վաստակել է «հալալ աշխատանքով»։

Մեր ընթերցողների առջևն ենք դնում մի ցուցակ, որի մէջ նշանակւած են, թէ ամեն մի եկեղեցու՝ որ կուսակցութեան թեկնածուներից ամենից շատ ստացածը որքան ձայն է ստացել։ Պաշտօնական աղբիւրներից քաղած չլինելով, այդ թւանշանները սակայն մօտաւորապէս ճիշդ պատկեր են ներկայացնում՝<sup>1)</sup>

\* Վանքի մայր եկեղ. յառաջդ. 103, պահպ. 70

\* Մողնու ս. Գէորգ եկ. <sup>2)</sup> » 101 » 78

սրբ. առաջնորդին, որին և պատկանում է առաջին ինստանցիալում վճռել թէ, կանոնների համաձայն, ոչ-ծխականները ընտրելի են թէ ոչ։

<sup>1)</sup> Ասողով նշանակւած եկեղեցիների անունները ցուց են տալիս որ միայն լաւաջդիմականների թեկնածուներն են անցել. մինուսով (—) նշանակւածները՝ որ միայն պահպանողականներ են անցկացել. նշան չունեցողները՝ որ ընտրւածների մէջ կան երկու կուսակցութիւնների պատկանողներ։

<sup>2)</sup> Դա իսկ և իսկ այն եկեղեցին է, որի ծխական Արդար Յովհաննիուսանը, «Արձագանքի» խմբագիրը, վերջին ժամանակներս երկու անգամ ընտրաղական ջարդ կրելուց վետով այս անդամ չէր համարձակւել ոչ զնել իւր թեկնածութիւնը և ոչ իսկ երեալ ընտրաղական ժողովում, ոչ 19 ին լուսիսի, ոչ 3 ին լուլիսի, իւր հոգու համար միսիթարութիւն որու-

|                           |   |                  |   |        |
|---------------------------|---|------------------|---|--------|
| <b>Զիդրաշէն</b>           | » | 55               | » | 60     |
| * Կաթողիկէ ս. Գէորգ       | » | 117              | » | 43     |
| * Քամոյենց                | » | 66               | » | 15     |
| — Ըեթզեհեմ ս. Աստւածածն.  | » | 10 (?)           | » | 37     |
| Ա. Սարգիս                 | » | 35               | » | 35     |
| * Ա. Մինաս                | » | 45               | » | 4      |
| * Էջմիածնեցոց             | » | 117              | » | 43     |
| * Նորաշէն                 | » | 50               | » | 24     |
| * Շամբռուեցոց ս. Աստւածն. | » | 69               | » | 20     |
| Զօրաբաշի                  | » | 17               | » | 35     |
| * Ա. Նշան                 | » | 68               | » | 29     |
| * Հրեշտակապետաց           | » | 41               | » | 3      |
| — Ա. Լուսաւորիչ           | » | 20 <sup>1)</sup> |   | 33     |
| Վերայի ս. Խաչ             | » | 20 (?)           |   | 20 (?) |
| — Չուզուրէժ               | » | 5 (?)            |   | 20 (?) |
| Կուկիոյ ս. Ածածն.         | » | 9                |   | 30     |
| Թանգոյնց ս. Ածածն.        | » | 30 (?)           |   | 30 (?) |
| * Նութլուղի               | » | 38               | » | 1      |
| * Ա. Կարապետ              | » | 89               | » | 26     |
| * Քարափի ս. Գէորգ         | » | 17               | » | —      |
| Զրկինենց                  | » | 36               | » | 33     |
|                           |   | 1158             | » | 689    |

Նկատեցէք որ պահպանողականները կարողացել են յաջողութիւն ունենալ միմիայն համեմատասկս սակաւ ընտրողներ ունեցող եկեղեցիներում, իսկ երկրորդ, որ աւելի նշանակութիւն ունի, յառաջդիմականները բոլոր եկեղեցիներում ունեցել են առ առաւելն 1158 ձայն, պահպանողականները առ առաւելն 689 ձայն, ուրիմն առաջինները ունեցել են մօտ  $63^{\circ}/_0$ , երկրորդները  $37^{\circ}/_0$  բոլոր ընտրողների, եթէ հաշվի առնելու չլինենք այն սակաւաթիւ ընտր

նելով «Մուրճի» խմբագրի ծխախոտի պատմութեան մէջ, իբր արժանի նիւթ «Արձագանքի» որոտընդուռ հրապարակախօսութեան !

<sup>1)</sup> Յառաջիմականները, թւով մօտ 20 հոգի չմասնակցեցին:

բողներին, որոնք իրանց ձախները տւել են կուսակցական թեկնածուների ցուցակներից դուրս անձերին՝<sup>1)</sup>

Վրեմին, չնայած որ արտաքին հանգամանքները ամբողջապէս յօդուառ սպահանողականների են ներգործել, վակտը մնում է ֆակտ, որ ընտրովների ահազին մեծամանութիւնը յառաջդիմականների կողմն է եղել և զեռ աւելի քան այդ եղաւ 1893 թւականի ընտրութիւններին, տեղակալութեան օրերով, և կամ կաթողիկոսական թեմական սպատգամաւորի ընտրութիւններին 1892 թւականին:

Ահա մերկ իրողութիւնը, ահա և ասպաշոյցը այն բանի, որ յառաջդիմականների յաղթութիւնները առանձնակի երևոյթ չեն, այլ օրգանապէս կապւած են հասարակաց կարծիքի զարգացման հետ։ Լրագրական սուտերը, չափազանցութիւնները, վակտերի աղաւաղումները, անւանարկութեան փորձերը, հեղաթիւրութիւնները և այլ և այլ կեղծիքները, — թող այժմ համոզւեն որ լուրջ և շիտակ մամուլին հետեւողների վրայ ոչ միայն ներգործութիւն չն կարողացել անել, այլ ընդհակառակը՝ աճեցրել են յառաջդիմականների ազդեցութիւնը։

Եւ այդ մեծ բարոյական մխիթարութիւն է և գրաւական յառաջդիմութեան նաև այսուհետեւ։

### ԱԽԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

1) Ինչպէս որ կան սակաւաթիւ ընտրովներ, որոնք իրանց քւէն տեղել են ամեն մի կուսակցութեան առաջին կանգիդատներին, նոյնպէս էլ եղել են ընտրովներ, որոնք տւել են իրանց քւէն կուսակցական թեկնածուներից դուրս անձերին։ Ազդպիսով առաջինների թիւը մօտաւորապէս հաւասար ընդունելով երկրորդներին, կը ստանանք որ Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում ընտրութեան մասնակցածների թիւը եղած է 1158+689 կամ շուրջ 1850 հոգի և ոչ աւելի։

## ԳԱԻԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Մ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆՅԻ

ՄԵՂՐԻ ԳԻՒՂԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Սիւնեաց Գենւազ գաւառի գիւղերից մէկն է Մեղրին. Գաւառը ալժմ «Գիւնէլ-մահալ» պարսկերէն աճունն է կրում. Գիւնէլ մահալի 23 գիւղերից ամենամեծն է Մեղրին, որը ունի երկու հարիւր տուն հայ բնակիչներ։ Հին ժամանակ Մեղրին երեք թաղերի էր բաժանւած՝ Մեծ թաղ, Միջին թաղ և Փոքր-թաղ։ Ներկալում միան Միջին և Փոքր թաղերն են մնացել, որոնց մէջ տեղաւորւած են բնակիչները։ Մեղրիում և սահմաններում կան չէն և աւերակ եկեղեցիներ, որոնցից մի քանիսի մօս կան գիւղերի աւերակներ։ Միջին թաղը (աչմ Մեծ-թաղ է կոչում) մի ձորի մէջ է երեք կողմից սպատուծ բարձր սարերով, որոնց գագաթների վրայ հին ժամանակից մնացել են եօթը բուրգեր, որոնց մէջ մի ժամանակ ապաստանում է եղել Մեղրիի ժողովուրդը Պարսից արիւնհեղութիւններից ազատ մնալու համար։ Փոքր-թաղը շինւած է մի սարի լանջի վրայ Երկու թաղերի գիրքն էլ զատիւլ լր է։ Տները շինւած են անքան մօս, որ մէկի տանիքը միւսի համար բակի տեղ է ծառալսում։ Ուզիղ փողոցներ չկան։ ծուռն են և նեղ։ Տեղ տեղ աճքան նեղ են, որ երկու մարդ իրար հանդէպ գալուց մէկը ստիպւած է լինում լետ զառնալ, եթէ չի ուզում պատերին քաւել։ Փողոցները անումաքուր են։ Ալս ու ան տեղ պատահում են սատկած հաւերի և կատուների դիակներ և ուրիշ շատ ազտեղութիւններ։ Տները առանց բակերի են և շինւած լինելով գոմերի հետ խառն, որոնք տարւակ ընթացքում չեն մաքրում, չի կարւում գիւղից զարշանութիւնը, որ շատ է վեասում բնակիչների առողջութիւնը։ Մաքրութեան վրա վերահսկողներ չկան։ Մսավաճառները ամենայն ազատութեամբ իրանց մսացու կենդանիները մորթուամ են գիւղի հրապարակում, արիւնը և փորտիքը թափում ուր համուռմ է, որից նոյնպէս զարշահոսութիւն է բարձրանում, մանաւանդ տաք եղանակին։ Մեղրիի օդը և ջուրը առողջարար չեն։ Ամեն տարի անապակաս են զանազան հիւանդութիւններ, որոնցից Մեղրեցուն աւելի մանրիմ են չերմախան ու աչքի ցաւը, որոնք

գարնան վերջերից մինչև աշնան վերջերն են տևում:—Մեծ և Փոքր թաղերում երկու հաստ եկեղեցիներ կան՝ Ա. Աստածածածնի և Յովհաննու Մկրտչի: Ա. Աստածածածնը Մեծ-թաղումն է, որը վկայում է գիւղի վաղեմի փառքը, Նա շինւած է բաւական ընդարձակ և բարձր, ներսի կողմից մի մասը ներկւած է զանազան գոյներով: Գմբէթը շատ բարձր է և շինւած է թրծած աղիւսից: Զարդարանքի և անօթների կողմից աղքատ է, բայց ունի մի քանի հազար ոռութիւն դրամագլուխ, որ բաժանւած է գիւղացիներին տոկսով:

Մեղրին ունի մի եկեղեցական-ծխական երկդասեան դպրոց, որ հիմնած է 1882 թվին: Դպրոցում ուսանում են երկու թաղերի ութ տարեկանից վեր բոլոր երեխաները երեք ուսուցչի ղասաւանդութեամբ: Երկու տարի է, որ տղանց բաժանմունքին կից բացւած է և օրիորդաց բաժանմունք, որտեղ սովորում են գիւղի օրիորդների մի փոքր մասը միան մի ուսուցչուու գաստիարակութեամբ: Մեր ուսումնարանում ուսումը սահմանափակ է արւում: Սովորեցնում են շատ առարկաներ, բայց բոլորն էլ թերի, աճնպէս որ ուսումնարանի ղասընթացքը անցնելուց չետու աշակերտը շատ քիչ մտաւոր պաշար է հաւաքում իր գլխի մէջ, որը շուտով մոռանում է: Ուսումնարանը ունի և մի գրադարան, որը չէ ծառալում իր նպատակին: Գրադարանի գրքերը խնամքով պահւում են պահարանի մէջ: Երեխի չիշանալու համար: Ամառավին արձակուրդներին աշակերտները բոլորովին կտրւած են ուսումնարանից և ուսուցիչներից, և որովհետեւ գրքեր չեն տալիս, նրանց ընթերցանութեամբ պարասպելու չեն սովորեցնում, այդ պատճառով ուսումը չէ ունենում նրանց վրաւ աճն ազգեցութիւնը ինչ որ սպասում է, որով ուսումնարանը չէ արդարացնում մեր հասարակութեան նրա վրաւ լուսերը, որը իր փրկութիւնը միան ուսումնարանից է սպասում:

Ուսումնարանին բատկացրած են մի քանի հողերից, արօտատեղերից, հասարակական կշուից և մոմավաճառութիւնից ստացւած արդիւնքները: Ուսումնարանը ունի և մի քանի մանր աղբիւրներ: Մեր ուսումնարանի տնտեսական դրութիւնը թէի ապահով չէ, բայց և աճնպէս նա կարողացել է, տարիների ընթացքում խնացողութիւն գործ դնելով անհրաժեշտ ծախքերի մէջ, մի փոքր դրամագլուխ կազմել, որը ալժմ բաժանւած է հասարակութեան մէջ տոկսով:

Մեղրին ունի երեք քահանակ, երկուսը Մեծ և մէկը Փոքր-թաղում: «Օրինակելի» է Մեծ-թաղի երկու քահանաների վարմունքը: Նրանք ոչ մի կերպ չեն հաշտում իրար հետ: Նրանցից մէկը ճեմարանաւարտ է, միւսը «լուս նման» քահանաների կամ տիրացուների մօտ իր կրթութիւնը առած: Զարմանալի է, որ ով ուրիշ միջոցներով չի կարողանում իր ապրուստը զանել, ձեռք է մեկնում քահանակութեան աստիճանին: Մեր երկ-

ըորդ քահանան էլ ամեն միջոց փորձել և որոշել է, որ միայն քահանա-  
լութիւնը կապահովացնէ իր վիճակը: Դժւար չէ ուրեմն հառկանալ թէ  
որքան է օգտուում ժողովուրդը ազգախիք քահանաներից... Բայց չեղացաւ,  
խօսքս մեր դիւզի մասին է:

Մեղրիի հատարակութիւնը նիւթականապէս աննախանձելի, մինչև  
անգամ ամենասողութելի դրութեան մէջ է: Նրանք բոլորը, առանց բացա-  
ռութեան, պարապւում են երկրագործութեամբ, մասամբ էլ չերամապա-  
հութեամբ և ազգեզործութեամբ: Երկրագործութեան համար նրանք շատ  
քիչ հող ունին, որ ընկած է երկու թաղերի միջով հոսող գետի աջ ու  
ձախ ափերին: Ցանքոը բամբակն է, որի մշակութիւնը ծանր աշխատանք-  
ներ է պահանջում: Գարունը բացւելուն պէս Մեղրեցին առնում է իր  
զործիքները և արտերի ու ազգիների ետևից է ընկնում: Նա կարկասում  
է փուլ եկած պատերը, հանում է առուները, ամելորդ ծառերն ու բուսերն  
է կտրապառմ, ցախերն է հաւաքում, վարում է, ցանում է և ազն: Ազդ  
բոլորը անում է նա իր միակ լուս—բամբակի արդիւնքը չաջողացնելու  
համար: Բայց որքան է նրան չաջողում ալդ, Ամբողջ գիւղում միայն եր-  
կու-երեք տներ կան, որոնց արդիւնքը կը բաւականացնէ նրանց ծախքե-  
րին, եթէ լաւ տնատեսութեամբ զործադրւին: Ընդհանուրապէս վերցրած Մեղ-  
րեցիներից ոչ մէկը չի վերցնում անքան արդիւնք, որով կարողանար իր  
ամենաանրամեշտ կարիքները հոգալ: Հողը ան չէ մնացել, ինչ որ եղել  
է շատ տարիներ առաջ, (երբ ժողովուրդը համեմատաբար քիչ է եղել) ալլ  
պակասել է: Արտերի միջով հոսող գետը վերջին տարիներում գարնանը  
չաձախ մեծ հեղեղներ է բերում և, որովհետև արաերի և գետի դիրքը հա-  
ւասար է, շեղելով իր ընթացքից հեղեղում է շատ արտեր և տեղը լցնում  
անթիւ մեծ ու փոքր քարերով: Տարեցտարի աւերելով աչժմ մի սրտա-  
շարժ տեսարան է բացւել վարելանողերի մէջ: Մի քանի տարի առաջ  
կահաչին տւող արտերի տեղ աչժմ միայն քարեր են երեսում, որոնց մաք-  
րելու համար Մեղրեցին ոչ ժամանակ և ոչ կարողութիւն ունի: Միւս  
կողմից հոգը ամեն ատրի վարւելով բոլորպին ուժից ընկել է և չի տա-  
լիս ան արդիւնքը, ինչ որ մի քանի տարի առաջ էր տալիս: Վարծես  
բնութիւնը զէմ է զրել իր պատուհաները Մեղրեցիներին բոլորովին աղ-  
քատացնելու համար: Ամեն ատրի շարունակում են տեղական բարբառով  
«չիրա» և «ափաթ» կոչող բամբակի հիւանդութիւնները, որոնք քիչ չեն  
մնասում երկրագործին: Երբան մի անպիսի լատկութիւն ունի, որ բամ-  
բակի բոլուի վրան երեալուց ձնշում է նրան և արգելում անելու: շիրան  
բոլուի վրան երեալում է բարձր կազող հիւթի նման անթիւ մանր գե-  
ռունեներով, որոնք մոծակի փոքր տեսակին են նմանում: Ափաթը ան  
լատկութիւնն ունի, որ նրանով հիւանդացող բամբակաբառախի տերեները,  
ծաղկիները և դիուահաս կոկանները թափուում են, և շատ անդամ բուսը

չորանում է: Այդ հիւանդութիւնների գէմ Մեղբեցիք ոչ մի միջոց գործ չեն գնում:

Ամեն տարի Մեղբեցիք իրանց անասունների աղբը արտերն նն տանում հողը պարարտացնելու համար, որով կարողանում են պահպանել հողի քիչ թէ շատ արդիւնաւէտութիւնը: Զրի առատութիւնը նոչնպէս մնձ զեր է կատարում հողի արդիւնաբերութեան մէջ: Ամառը շաբաթական երկու անգամ արտերը ջրում են:

Եկրամապահութիւնը կարելի է ասել լաջող արդիւնք է տալիս, բայց թթենիների քչութեան պատճառով մնձ քանակութիւն չէ ստացւում: Ակ դեպործութեամբ պարապւում են միայն տնալին պէտքերի համար գինի ստանալու համար:

Մեղբի հողը շատ պտղատու է: Խնձորի, տանձի, ղեղձի, ծիրանի, սալորի, թթի, նուան, սերկելիի, կեռասի, բալի, թզի, ընկուզի շատ ընտիր տեսակները կան, որոնք առատ բերք են տալիս նուռը երբեմն լինում է երեք փունտ ծանրութեամբ, ղեղձ մի և աւելի փունտ ծանրութեամբ: Պարտէզի մրգերից սեխը, ձմերուկը և վարունգը առատութեամբ են ստացւում: Պտուղները չեն ծախւում, աղ շռալլութեամբ ուտւում են, որոնք աւելացնում են ջերմաստի հիւանդութիւնը: Մեղբեցուն հազարտոր ծախքերի համար փող բերողը միայն բամբակն է, որը շատ քիչ քանակութեամբ է ստացւում հող չլինելու պատճառով: Ծնդհանուր աղքատութիւն է տիրում գիւղի մէջ: Բնակիչների մեծ մասը պարտքերով է ծանրաբեռնւած, որոնցից աղատելու ոչ մի միջոց չէ մնացել: Աղքատ դասակարգը տարեցտարի զրկւած է իր հողերից, որոնք հարուստների ծեռն են անցնում պարտքերի և ծանր տոկոսների տեղ: Վերջիններս ժողովեան «աշք են տալիս լոյս չեն տալիս»: Նրանք իրանց հանգստութեան համար իրանց հողերը, որոնցից մի աշնալիս օգուտ չէ ստացւում, իրանք չեն վարում, այլ տալիս են աղքատներին, որոնք աշխատում են առանց վարձատրելու: Աղքատը վերցնում է հարստի հողը, վարում է, ցանում, պահում: պահպանում, տարեզլիսին ստացւած արդիւնքի կէսը տանալու համար, բայց տեսնենք թիչ է մեռւմ նրան: Նրան հարկաւոր է փող իր ընտաշնիբը կերակրելու մինչև բամբակի հունձը, և նա զիմում է իր պարտնին, վերջինս տալիս է նրան մի գումար ան պալմանով, որ բամբակը հաւաքելուց լիսու աղքատը իր մասը նրան տալ, որի համար նա տալիս է բամբակի իսկական գնի կէսը: Աղքատը շատ էլ ուղում է չտալ, բայց ընկճաւում է կարիքի ասած և ակամակ համաձայնուում: Ակդէս շատերը զեռ բամբակը արտից չհաւաքած՝ ուստում են նրան, իսկ տարևըլիսին ստիպւած են լինում գարձեալ պարոնին կամ նրա նման մէկին դիմել մուրհակով պարտք վիրցնելու: Շատ հարուստներ աղղպիսով պարտական են գարձրել շատերին և նրանցից խլել միակ արտը կամ արգին: Աղքատ

զասակարգը այնքան խղճալի դրութեան մէջ է, որ իր հոգսերի մէջ ընկղմած՝ բոլորավին խորթացել է, և հասարակական ոչ մի խնդրին չի խառնւում. — ըսկի նրա կարծիքը հարցնող էլ չկալ. Ասպարէզը զարձեալ հարուստներին է մնաւմ իրանց շահերի համաձայն կարգադրել ամեն բան:

Մեղրեցիք ցորեն չին ցանում, այլ ուրիշ գիւղացիներից են առնում: որոնք իրանք բերում են Մեղրի և հասարակական կշռով ծախում: Հարուստը ալղատեղ էլ է խոչնուա հանդիսանում աղքատին: Վերջինո մօտենում է ցորեն ծախողներին, հարցնում է ցորենի գինը, պատասխան է սուանում, որ բոլոր ցորենը միասին ծախւած է մի մարդու: «Ո՞վ է աղքարդը, որ բոլորը գնել է — մոտածում է աղքատը — Տէր Աստւած, ինչ դրժարութեամբ մի քանի ոռութիւն եմ գտել ընտանիքիս համար հաց առնելու, ան էլ չեն թողնում» շուրջը նակելով ասում է նա, բաց նրա վրայ ուշադրութիւն դարձնող չկալ: «Ելի ալդ անգութներից մէկը կը լինի» կրինում է ինքն իրան և խոր հառաջում: Աղդպէս աղքատ զասակարողը շատ անգամ աղդպիսի հանգամանքների հանդիպելով, ստիպւած է լինում հարստից առնել իրան հարկաւոր ցորենը աւելի թանգ գնով: Հարտուստների մէջ սովորութիւն է զարձել աղդ: Շատ անգամ նրանք վերստերով ցորեն ծախողների առաջն են գնում և այնտեղ առնում ցորենը, իսկ չետու թանգ գնով աղքատներին ծախում: Աղդպիսի հանգամանքներից ան է առաջացել, որ Մեղրեցիք նախանձում են միմեանց լաջողութեանը և ուրախանում միմեանց դժբաղութեանը, որովհետեւ աղքատը իր հարեան հարստից օգտի փոխարէն վեաս է կրում:

Ասացինք, որ Մեղրեցին ծանր աշխատանքներ է կրում բամբակի մշակութեան մէջ. բաց իւր գառը քրտինքով ստացած բամբակը նա կարողանում է արդեօք լաւ գնով ծախսել: Մեղրեցիների մէջ չկայ միութիւն, մէկը միսսի հետ կապ ունենալ չի ուզում, ամեն մէկը տռամծնացած է իւր գործը տեսնում, և միմեանց ջղբու բամբակի գինը էժանացնում են շուտ ծախսելու համար նրանք իրանց վեասում են առանց ալդ համկանալու: Վերջին տարիներում գիւղի տանուաէրը կամենալով հասարակութեան շահերի պաշտպան հանդիսանալ է չաշտարարում, մի աղդպիսի բան: «Ով ոք համարձակի տանուաէրի որոշած գնից պակասով ծախսել իւր բամբակը կենթարկելի տուգանքիու Շատ բարի, գոմիլի գործ: Բաց արդեօք աղդպիսի լայտարարութիւն անելուց չետու ինչ միջոցներ է արւում աղքատ զասակարտին, որի ապրուստի միակ լուսը իւր բամբակն է, և որը չծախսել չի: կարող եթէ հարկաւոր է մտածել հատարակութեան բերքը լաւ գնով ծախսելու, հարկաւոր է և նուն հատարակութեան դրութեամբը հետաքրքւել, եթէ ոչ դուրս կը գալ: որ պ, տանուաէրը աղդպիսի լայտարարութեամբ կամենում է իւր բամբակի գինը բարձրացնել: Հոգ չէ, կառարութեամբ կամենում է իւր բամբակի գինը բարձրացնելց: թող քիչ էլ տռկոս առն:

թող իրանց աչքի լուս միակ արտը կամ ազգին դրաւ դնեն։ Այս աչք անգութները... որտեղ չեն նեղում աղքատ դասակարգին։

Խնչպէս ասացի, մեր եկեղեցին և ուսումնարանը իրանց փողերը բաժանել են ժողովրդին։ Այդ փողերի համար ժողովուրը տալիս է 12 տոկոս։ Դալիս է հաշվառութեան օրը, կարդացում են պարտականների անունները։ Դաւրս է գալիս, որ բոլորն էլ որոշ չափով պարտք ունեն, բացառութիւն չեն կազմում և հարուստները։ Երբ որ բոլորի անունները լսում է աղքատը, զարմանում է տեսնելով, որ մենակ ինքը չէ որ պարտք ունի. նա իրա անւան հետ լսում է և հարստի անունը, որի պարտքը աւելի շատ է քան իրանը. ինքն իրան հարց է տալիս՝ ալիրակուրը ինչո՞ւ պէտք է պարտք ունենալ, չք որ նա հազարներով ցըւել է ինձ նմաններին, որոնցից մեծ տոկոսներ է սահնում, մինչեւ անգամ րոպէական կարեկցութիւն է զգում դէպի անպիսին։ Բայց խարսում է. Խեղճը չկատէ, որ նոյն գումարը, որը հարստի անւան դէմ է գրւած, և որ նա վերցրել է 12 տոկոսով, հնչու իրան կամ իր նման մէկին տած է 20—24 տոկոսով։ Այդ աղջպէս է, ալու Մեր հարուստները աշխատանքի այց աղբիւրն էլ են զտել, և թու կատէք, որ շատ անգամ եկեղեցական կամ ուսումնարանական փողոց ազգատ գումար չի լինում դիմող աղքատին տալու համար, շատ անգամ էլ ուղղակի մերժում են. խոկ հարուստները հեշտութեամբ կարողանում են հարիւրներ վերցնել ուրիշին տալ։

Ապրուստի ամեն միջոցից զրկած լինսլով, մեղքեցիները սկսել են պանդիստներ օտար քաղաքներ, ծառալութեան մէջ մտնել և ծանր աշխատանքներով փող աշխատել իրանց պարտքերը տալու և ապրուստը հոգալու համար. բայց թու կը լինի մի ժողովրդի զրութիւնը, որը իւր բաղդը պանդիստութեան մէջ է որոնում։

Տնտեսական աղջքան անապահով դրութեան մէջ լինելուց վեառոց Մեղքեցիներին հարկաւոր է չափասրել իրանց ծախքերը, բայց զրանք աչք չեն անում ։ Շուալլութիւնը և փարթամութիւնը ընդհանրացած է. Նթէ մինչեւ այժմ բաւականանում էին հասարակ չթէ հազուստներով, այժմ շալն ու մետաքսն են չթի տեղը բռնել. իրանց հայրերին անծանօթ ուկէ մատանիները, ապարանչանները և օղերն են լուս ընկել, տրեխ ու մաշիկները պապղուն կօշիկների են փոխել, բրդէ ձեռագործ չուխանները մահուցէ կտորներին են տեղ տեղ, կաւէ և պղնձէ ամանեղինները լախճապակեալ և ճենապակեալ ամանների են փոխել փալտէ հասարակ զդալները արծաթէ են դարձել և ալ հազար ու մի փոփոխութիւններ, որոնք նրանց մեծամեծ պարտքերի տակ են զրել։ Կանանց մէջ արդէն ընդունում է եւրոպական փետրազարդ գլխարկներ ծածկել. Հաւանսական է, որ շուստի կորուսմն ու տիւրինիւրն էլ մէջ կընկնեն, որովհետեւ Մեղքեցիք հա-

ւատարիմ հետեւղներ են «քաղաքներում հնացած, բայց իրանց համար դեռ նոր» մողավնու

Եթէ կը շարունակւի մեղրեցիների աչժմեան դրութիւնը և անտարբերութիւնը, չուս կաէ, որ կարճ ժամանակում նրանք պարտքերով ամենահարուստը կը լինեն. Ասուած լնքը մի բարեփոխութիւն մացնի նրանց մէջ, եթէ ոչ կորած են.

Վաղից հարկաւոր էր մեղրեցիներին դիմել կառավարութեանը և հողը առաստ մի տեղ ստանալ բնակիչների մի մասը տեղափոխելու համար, որպէս զի մնացածին կարելի լինէր բաւականացնել եղած հողով.

# ԱԱՄԱԿՆԵՐ ՍԵՒ ԾՈՎԻ ԱՓԵՐԻՑ

## Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

### III

Դեռ էլի շարունակում է հալը գաղթել իր հալրենիքից. մի գլուխ նոր գաղթականներ են զալիս Անատոլիական ափերից դեպի մեր Կովկասան ափերը:

Եթէ ճիշդ է մասամբ, որ այս վերջին տարիներս եկողների գաղթելու պատճառներից մէկն էլ գուցէ իրանցից առաջ եկած, իրանց միւս հալրենակիցների զախ և նրանց տնտեսական ապահովութեան մասին հալրենիքում տարածւած լուրերն են, բայց և անսպէս չի կարելի ընդունել որ այնքան մարդիկ, հարիւրաւոր ընտանիքներ միենան այդ լուրերից չափշտակած՝ տունը տեղը ձգած, օտարութեան և պանդխտութեան զիմենն, էլ երբէք հալրենիքը չդառնալու մտքով. Միթէ այնքան հեշտ է անցուկ-մոռցուկ անել այն ամենը, ինչ որ այնքան խոր և անջնջելի կերպով տպաւորւած է մարդու սրտի մէջ, Հալրենիքի սէրը այնքան էլ վերացա-կան գաղափար չէ, ինչքան գուցէ իրբն զաղափար կարող է նա շատերին երեալ: Խոկ գիւղացու, խոկ երկրագործի համար հօ այդ սէրը արդէն կար-ծէք բնական երեսով լինի. այնքան մօտիկ է նրա սրտին: Այստեղ է իր տունը, միակ տեղն է, ուր նրան սիրում ցաւակցում են և ուր մտնելիս՝ մի առ ժամանակ գոնէ մոռանում է իր քաշած դառնութիւններն ու միսի-թարսում է իր կոտրած սիրտը: Այստեղ է և իր հողը, որ նրա հալրերի աշ-խարհի բոլոր տարրերի մէջ գուցէ միակն է, որ չէ հարստահարում, չէ թալ-նում նրան, չէ խլում նրանից նրա արդար աշխատանքը: Միթէ գրանից լետու կարող է նա դրանցից բաժանւել: Խոկ ձիգ դարերն հօ ամելի են ուր: Խարունի գաղթել նրա աղջ սէրը դեպի իր սրտի սիրած աշխարհը, գէափի իր հալ-րենիքը: Դարերի ընթացքում հալրենի երկրի սէրը ծոր-ծոր կռթել է նրա սրտում, քաղցր ու անսուռանելի վիշողութիւններ թողնելով նրա սրտի խորերում և նրան անքակա ու անբաժան կերպով կապելով իր մազը երկ-

րի հետ... Եթէ մի մեծ պատճառ. չլինէր, եթէ մի թշւառութիւն չլինէր, ովք կը թողնէր իր տունն ու տեղը, իր մակրենի երկիրը ու կը ընկնէր օտարութիւն։ Խնչքան որ հայի համար տսում են, թէ բազդախնդիր է, արկածախնդիր ոգի կաչ նրա մէջ—բայց դա սուս է, հաւատալու րան չի։ Յաւ չունենար, թշւառութիւն չլինէր, նա երբէք չէր գաղթի իր երկրից։ Անցէք, ման եկէք Ան ծովի անբողջ կովկասեան ափերով։ տեսէք թէ ինչ կիմանաք։ չեմ կարծում, թէ գտնէք մէկին, որ կարօտով չփաշէր իր հայրենիքը, իր ծնած տեղը։ Սէկը իր չափուի երկրի աղբիւրներն է գոլում, միւսը գեղեցկութիւնը, մի ուրիշը իրանց տեղի բարձր լեռնասուն ու առողջ դիրքը։ Խնչ առեմ, ամեն մէկի սրտի մէջ մի բան կաչ մնացած, որ անքան խոր ու անջնջելի տպաւորսւթիւն է թողել նրանում, որ երկար տարիներից լեռու, նոյն խոյ լաւ տեղերում ընկնելուց ու նիւթապէս լաւ վիճակի մէջ լինելոց վեաց անգամ, — էլի վիշտում է, մտքիցը չի գնում։

Թշւառութիւնն է, որ նրան բերում է օտար ափերը, թէ չէ միթէ նա աճնքան շրատ կը մոռանար նրան, կը հեռանար իր երկրից։ Դժբազդաբար հայրենի երկրի թշւառութիւնը կաչ ու կաչ վերջ չունի։ Հայը գըլումը կորցրել է նեղութիւններից։ Էլ հակենի երկրի ոչ մի վիշտութիւն, ոչ մի վիշտատակ ու սրբութիւն չէ կարողանում նրան կանոննեցնել։ Համբերութիւնը հատած, ինքնամուացութեան մէջ՝ օտար ափերն է զիմում—իր և իր մօտիկների կիանքը թշւառութիւնից ու մօտալուտ կրուստից փրկելու համար...»

---

Անցեալ տարի, նոյեմբերի 19-ին, ինձ պատահեցան նորեկ հաչ գաղթականների մի ուրիշ խումբ, որ, ինչպէս այս տարւան միւս բոլոր եկուորները, սլանք էլ Տրապիզոնի մօտակաչ հաչ գիւղերից էին գաղթել։ Բացի մէկ տնից, որ Տալա գիւղից էր, մնացածներից ամեն քն էլ Տրապիզոնի գաւառակի Աղուրու գիւղի եկեղեցու մօտիկ տեղերից էին եկել։ Թուով նրանք 70 հոգի էին, չհաշւելով մի քանի մանր երեխաներին։ իրանց հաշտով՝ 12 տուն։

Դեռ ամենը չէին զուրս եկել, որ նրանց նաւակը ես տեսակ նաւահանգստում, ծալի վրայ։ Դրանք եկել էին առագաստաւոր նաւով և ամբողջ 5 օր նրանց հրաման չէին տւել ափը դուրս գալու։ Թիւրքիակում տիրող խոլերայի պատճառով՝ նրանց ենթարկել էին կարանտինի։ Ծփում էր նաւակը տաշէղի նման Ան ծովի կատաղի ալիքների վրա։ մէջը անքան մարդկի, մանր երեխաներ, համարեա իրար վրա էին նստել։ Ուքը, լիքն էր նաւակը։ Գիշերը բացօղեաչ, ծովի վրա։ աճն էլ տնւոր գաղթականներ և մասնաւանդ որ ծովն էլ այն օրերը հանգիստ չէր։ Հասկանալի է, թէ ինչ կը լինէր այդ խեղճերի դրութիւնը...»

Կրկնում եմ՝ որ հայրենիքում ցաւ ու նեղութիւն չունեցողը երբեք անքան լանդուդն ու համարձակ չէր վարւի իր կեանքի հետ, որ նրան աղպէս անփոխ ու անհոգ կերպով ցրաին ու ծովին մատնէր: Թշւառութիւնը, հայրենիքի մեծ թշւառութիւնն է, որ նրան այդ լուսահատութեան է հասցրել: Դա քաջութիւն չէ. համարեա ձմեռ ժամանակը բաց երկնքի տակ, ան էլ ալեկոծ ծովի վրաւ օրեր ու գիշերներ անցկացնել: Եւ բաւական չէ, որ այդ տանջանքն իրանք քաշին, գեռ էլի համարձակւեն սիրտ ունենալ այդ ցուրտ ու կատաղած բնութեանը իրանց մատղաշ որդոց էլ մատնել:

Վերջապէս հինգերորդ օրը, նույնմերի 19-ին, երեկովնան դէմ, նրանց ենթարկում են ախտահանութեան, մանրամասն մեկ-մէկ հետներն իերած բաներն էլ քանդելով ու սրակելով ախտաջինջ դեղով: Ախտահանութիւնը վերջայնելուն պէս, նրանց դուրս են հանում ավելքաց չեն թողնում հետանալ: Ան դիշերը նրանց հրամակում են մնալ ափին և ոչ մի տեղ չգնալ մինչեւ լուսանալը: Ազդ գ' շերն էլ աղպէս հն անցկացնում ափին, էլի բացողեալ, պահնորդներով շրջապատւած: Պէտք է ասել, որ տեղական կառավարութեան հրամանով այդ գիշերը նրանց բաւական ինամք են ցուց տալիս պահնորդները: Ամբողջ գիշերը կրակը վառ: Են պահում, որ չմրտւն փոքրերը: Կառավարութիւնը առաջարկում է նրանց գնալ Ծէրէլտափի կողմերը, աշխատելով համոզիլ նրանց, որ անտեղ լաւ կը լինի նրանց համար, հաւեր շատ կան, նկեղեցի: Քահանակ կաւունան, պակասութիւն չեն տեսնի, իրանց հայրենակիցները նրանց կօգնեն, տեղն էլ բարձր է, ողը լաւ և ալիս: Խսկ գաղթականներն անքան չին տպում այդ կողմերը գնալ: Նրանք աւելի ուղում էին մնալ Սուխում քաղաքի մօտիկ, իրանց ծանօթ, իրանց գաւառից նկած հաչ գաղթականների մօտ, քան Ծէրէլտափում, ուր նրանց կողմերից նկողները քիչ են: Կառավարութիւնը կրկնում է, որ անպատճառ Ծէրէլտափի կողմերը գնան, համոզելով նրանց՝ որ իրանց ուղած տեղը անքան լաւ չէ, ճանապարհ էլ չունի, զետ կաէ մէջանքը, միշտ չի անցնալ և ալիս: Նշերջապէս նրանց թուլ է տալիս մի 5—6 օրով գնալ իրանց ուղած կողմերը—Սուխումին մօտիկ, ծրապիզոնի մօտերքից նկած հաչ գաղթականների գիւղերը և ապա անհեղից անպատճառ Ծէրէլտափի կողմերը գնալ: Միւս օրը առաւատեան սլահնորդներով նրանց ճանապարհ դրին նրանց ուղած տեղերը: Առ այժմ նրանցից Ծէրէլտափի կողմերը միան երկու տուն հկաւ մնացածները ցրւել են Սուխումին մօտիկ հաչ գաղթաշէնները:

Խչքան ես կարտղացաւ իմանալ, գաղթականները խեղճ մարդիկ էին. շատերը նաւել գին անգամ շունէին. չդիտէին որտեղից տան ճանապարհի ծախսը: Ախտահանութեան համար տրւած վճարն էլ նաւագարից էին առել ու առել:

Նորեկ հակ գաղթակարների ասելով, իրանցից չետու շատերն են գալու Եթէ հաւատանք նրանց՝ արդէն 100 տռւն գալու վրայ են. Հենց իրանց տաճերէց քահանայի համար ասում էին, որ նա էլ է գալու գարնան, մալխին. ընտանիքն արդէն զրկել էր նրանց հետ. Երեսւմ է, որ մեծ շարժում կակ հայրենիքում. Պշտուութիւնն անքան է ծանրացել իսկզ ժողովրդի վրայ որ ամեն մարդ օր առաջ փախչելու և զլուխն ազատելու է աշխատում:

Գաղթականութեանը քիչ չէ նպաստում և այն հանդամանքը, որ կառավարութիւնը չէ արգելում և չէ կանգնեցնում նրանց ազդ շարժումը և տներով հայրենիքից համարեա անդարձ կորչելն ու հեռանալը.

Վերջին տեղեկութիւնների համեմատ, աչճմ Թիւրքիայում ընտանիքով գաղթելու թովառութիւն կաչ. Ալ ուզում է կարող է գաղթել ու անցագիր ստանալ. Վերջին եկողները ամենքն էլ անցագրով են. մինչդեռ նրանցից առաջ՝ էլի նրանց կողմերից եկած հակ գաղթականներից մի քանիսը կամ փախչելով էին եկել կամ կեղծ անցագրով. այն ժամանակ ները Թիւրքիայից ընտանիքով գաղթելու համար անցագիր չէին տալիս. Աջօր երեսւմ է, որ թովառութիւն կաչ անցագիր տալիս են. Մարդ չի հասկանում, թէ այդ ինչ խաղ է, որ անում է կառավարութիւնը խեղճ ժողովրդի զլխին. Կարելի է ասել, թէ տարին անքան եղանակ չունի, ինչքան այդ թովառութեան կարգադրութիւնը. Ահա լսում են, որ կառավարութիւնը բոլորովին արգելել է Թիւրքիակից ընտանիքով գաղթելը. մէկ էլ չանկարծ լուր է գալիս, որ կարգադրութիւնը փոխել է, արգելը վերցրել են և գաղթելը թովառուած է, Եւ այդ խաղը կրկնում է երեսն տարին մի քանի անգամ:

Խսկապէս ալդ արգելքից ու թովառութիւնից, ինչպէս երեսւմ է, հայրենիքին ու ժողովրդին ոչ միան մի օդուտ չէ լինում, որովհետեւ երկու գէպքումն էլ գաղթողներ անպակաս են լինում հայրենիքից, այլ կարող եմ ասել, որ արգելքների ժամանակ, երբ անցագիր չեն տալիս գաղթել ուզողներին, ժողովրդի ցաւերի վրայ մի նոր ցաւ էլ է աւելանում. Ում չաղոնի չէ, թէ ինչ նշանակութիւն ունի Թիւրքիայում այս կամ այն օրէնքն ու կարգադրութիւնը.

## ԳԵՐՄԱՆԻԱՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՓՈՔՐ-ԱՄԻԱՅԻՄ .

Գերմանիան անդադար զբաղում է գաղթականութեան խնդրով, նամանաւանդ վերջին ժամանակներում: Այս խնդիրը չարուցեց մեծ հետաքրքրութիւն թէ մամուլի մէջ և թէ պաշտօնական շրջաններում: Արա զԵրիատր շարժառիթը այն էր, որ Հիւս. Ամերիկան սկսեց զժւարացնել օտար գաղթող ազգերի մուտքը գէտի իր երկիրը: Խոկ եւրոպական ազգերից ամենից շատ գաղթողը հանդիսանում է Գերմանիան, որի արագ աճող ազգաբնակութեան աւելորդը մեծ մասամբ դէպ իրան էր քաշում Հիւս. Ամերիկան: Վիճակադրական տեղեկութիւնից երեսում է: որ 1882 թից մինչ 1891 թ. բարոր գերմանական գաղթողների քանակութիւնը հասել էր 1,237,000: Սրանցից այս տասն տարւակ ժամանակում 1,135,000 հոգի գաղթել էին Հիւս. Ամերիկայի Միացիալ Նահանգները, 20,379 հոգի գէտի Բրազիլիա և 18,360 հոգի գէտի ազգ ամերիկական հարաւային երկիրներ, իսկ մնացած մասը գաղթել էր Ասիա, Աւստրալիա և Աֆրիկա:

Ցառաջ բերած թւերից տեսնում ենք, որ Գերմանիայից գաղթում են տարեկան աւելի քան 100,000 հոգի: Արդարեւ սա մի խոշոր թիւ է, որպէս զի Գերմանիան լրջօրէն մոտածի ալսպիտի մի գաղթական հասանք դէպի ազգ տեղեւ ուղղելու համար, քանի որ Ամերիկան իր դռները փակում է օտար ազգերի ներմուծութեանը:

Գերմանիան համարեա թէ զտած է համարում այն անդերը, ո՞ւ զերմանիան գաղթականութիւնները կը կարողանալին հաստատել: Այն երկիրներից, որոնք ներկալացնում են զանազան առաւելութիւններ գերմանական գաղթականութիւնների համար, ամենից շատ երեսում է Գերմանիային Փոքր-Ասիան: Արդէն 1888 թին գերմանացիք սկսեցին Փոքր-Ասիայի հիւսիս-արևմտեան կողմերում երկաթուղի կառուցանել: Երկաթէ ճանապարհի գիծը սկսւում է Բոսֆորի ափերից մինչև Անգորա: Այս ճանապարհը կառուցանելու համար կազմեց մի ընկերութիւն Յօ միլլիոն մարկ գրամագլխով, որ մաս ակարարում էր Բերլինում դժուող գերմանական բրամբելիք, Յիշած երկաթէ գիծը անչափ արդիւնաւէտ երեաց, որ գերմանացիք աչմ մտադիր են դարձեալ նորանոր ճիւղեր աւելցնել: Երկաթէ ճա-

Նապարհներ կառուցանելուց լեսոյ՝ գերմանացիք լաւ ծանօթացան Փոքր-Ասիացի ազդ կողմների կլիմացի և արդինարերութեան հետ Աչքի ընկնող արդիւնքներն են՝ ցորենը, այծէ մազը, բուրդը, փատեղէնը և աշն, որոնցից 1892 թւին Անգորայի երկաթէ զծի վրանով անցյել է մօտ 3,473,000 միլ-լիոն մարկի (1,736,500 ռուբլի այժմեակ կուրսով) արտահանական ապ-րանք: Արտահանուող ապրանքների շարքում լիշելու է դեղին սաթը (քեհ-ըիրար), որից նւրսպանում շինում են ծխափողեր (մունդշտուկ): Միայն մի տարում—1884 թւին—արդիւնահանւել է քեհըիրար մօտ 400,000 ռուբլու:

Աչքի առաջ ունենալով Փոքր-Ասիացի երկրագործական հարստուոթիւնները, որոնք խելացի տնտեսութեամբ կարող կը լինէին տասնապատկ-մել չալոնի բան է, որ գերմանացիք միծ ուշը պիտի դարձնէին ալժմ ան-մշակ և անխնամ թողած այն երկրի վրաց որ հնումը աչնքան միծ համ-րաւ էր վագելում իր առետրականութեամբ և արդիւնաբերութեամբ:

Գերմանացիների համար նշանաւոր խնդիրը միայն նրանում է կա-չանում թէ ինչ է պահանջւում, որպէս զի գերմանական գաղթականու-թիւնը Փոքր-Ասիալում հաստատ հիմքերի վրաց զնուի և իր քաղաքական-թական դերը կատարի: Համարեա թէ ամեն մարդ հասկանում է թէ ինչպիսի պալմաններ են հարկաւոր, երբար խնդիրը Փոքր-Ասիալում նո-րանոր քաղաքակիրթ զործեր սանդելու մասին է: Այդ կարեոր պահանջը վերաբերում է հասարակական և տնտեսական կատարեալ ասկանովութեանը, որից տաճկաց Փոքր-Ասիալում բնակուող քաղաքակիրթ քրիստոնեակ տարրը զուրկ է չորհիւ չերքէզների և այլ աւազակաբարու տարբերի սապատա-կութիւնների և չափանիւթիւնների: Այդ ամեն ինչ տապալող և աւերիչ հանգամանքը սովորում է նոյն իսկ գերմանացիներին պահանջել իրանց ապագայ գաղթական համանքների հաստատ բնակութեան համար՝ սե-փական վարչութիւն, սեփական հարկաւութիւն և սեփական դատաստա-նատուն: Առանց ալս, գոլութեան համար հիմնական, պալմանների, կար-ծում է նորերս լուս տեսած մի գերմանական բրոշլւրի<sup>1)</sup> հեղինակը, ան-կարելի կը լինէր Փոքր-Ասիալում գերմանական գաղթականութիւններ հիմնել: Թէն, աւելցնում է նա, հեւսիսակին Փոքր-Ասիացի գաղթելու լար մար կողմերում տեղ-տեղ, նամանաւանդ քաղաքներում, լոյներ և հակեր կան, սակայն սրանք այդ տեղերում հողագործութեամբ չեն դբադ-ւում: Նրանք, առաւելապէս հակերը, ընդունակ և ճարպիկ սեղանա-

<sup>1)</sup> «Լարելի է արդեօք գերմանական գաղթականութիւնը մզել զիպի Փոքր-Ասիայ», Դոքտոր լ. Օլմանի: (Տես «Մուրճ», 1894 № 1, էջ 166): Հրատարակութիւն պր. Ֆիրխտի և Վատահմբախի:

Ist es möglich die deutsche Auwanderung nach Kleinasien abzu-  
lenken, von Dr. E. Oehlmann.

տէրեր և առնտրականներ են, այսպէս որ հողագործութիւնը դարձեալ անխմամ և անտէր զրութեան մէջ է գտնւում: Սա մի իրողութիւն է, որ անհերքելի է: Նմանապէս չի կարելի վիճել Փոքր Ասիացում ի բնէ անտի բնակուղ քրիստոնեանների հողագործական ընդունակութեան և տոկունութեան մասին, եթէ միայն սրանք էլ վայելէին այն օրինական ապահովութիւնը, որ գերմանացիք պահանջում են իրանց ապագայ գաղթականութիւնների համար: Բայց աչքաթող անել ալս վերջին հանգամանքը Փոքր-Ասիայի քրիստոնեակ բնակիչների վերաբերմաբ՝ մեզ շատ անարդար է թւում, նամանաւանդ որ Փոքր Ասիայի քրիստոնեանները օտար չեն դերմանական քաղաքակրթութեանը, որին նրանք շատ շուտով են ընտելանում և կարմարւում:

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

# ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

## ԿԱՐՆՈՒ ՍՊԱՆՈՒՄԸ

ԿԱՐՆՈՒ ԼԻՇՆՈՒՄ

Յունիակի 23-ին էր (մեր տոմարով 11-ին) որ ֆրանսիական Հանրապետութեան նախագահ ալ. Կարնո ուղևորւեց Պարիզից Լիոն, ուղեկցութեամբ մինիստրների խորհրդի նախագահ և միաժամանակ ներքին գործերի մինիստր Շարլ Դիպիւլի'ի, գեներալ Բորիւսի, գնդապետներ Շամուանի և Գալուէնի, նաւապետ Մարեն-Դարբելի և ալ. Տրանշ'ի Ուղևորութիւնը կատարւեց Դիժոնի, Մակոնի միջով։ Դիժոնում համեստ ընդունելութիւն եղաւ տեղական իշխանութիւնների կողմից նույն խականութուղութեամբ։ Ողջուններից լինով, տեղական իշխանութիւնները դահլիճից լիոյ քաշւեցին, թողնելով նախագահին միանակ իւր զինուրական որդու հետ, որը Դիժոնի գարնիզոնումն է ծառագաւմ, իւր ամուսնացած աղջկակ հետ (տիկին Կիւսիսէ-Կարնօ), և փեսակի և թոռան հետ որ մի փոքրիկ աղջիկ է, Կարնոն չի ծածկում իւր ուրախութիւնը որ իւրականների մէջ է։

Կարնօն ալցելում էր Լիոնը երկրորդ անգամ իւր նախագահութեան օրերով. առաջին անգամ ալցելութիւնը եղաւ 1888-ին։ Այս երկրորդ անգամը ալցելութեան առիթ տառն էր Լիոնի արդիւնահանդէսը։ Լիոնի ժողովրդից ստացած ընդունելութիւնը չափազանց ջերմ էր, չնայած որ Լիոնի ազգաբնակութիւնը սառնութեան համբաւ ունի։ Լիոն հասաւ երեսկան ժամ 6-ից քառորդ անց։ Անտ-Ֆոււա ամրոցից արձակում են թնդանոթի 101 հարւած ըստ կանոնի։ Քաղաքագլուխը առաջնորդում է զէսի գահլիճը ուր ժողոված էին Ռոն նահանգի սենատորներն ու պատգամաւորը։ Սոցա հետ միանում են նոցա ընկերակիցները ալ նահանդ ներից։

Քաղաքագլուխը սղջոնի խօսքերն է արտասանում, որին պատասխանում է նախագահը։ Ապա նստում է չորս ձիերով լծած լանդօն։ Նւազում է զինուրական երաժշտութիւնը. զօրքերը ներկալացնում են հրացանները. Կեցցէ Հանրապետութիւն, կեցցէ Կարնօ! ձախներով դղրդում է

ողը: Լանգօ՛ի առջևից գնում է ձիաւոր ժամոդարմների մի կէս զասակ և կիրասիրների մի էսկաղրոն: Ամբողջ ճանապարհին՝ կաչարանից մինչ նահանգապետի (պրեֆեկտ) տունը երկու կողմից շարւած է զօրքը: Տները՝ զարդարւած են զրոշակներով, շատ տեղ չափազանց փարթամ կերպով:

Դնացքը հասնում է քաղաքավին տաճ: Դահլիճում կարծ ճառ է արտասանում քաղաքազլուխը, որին պատասխանում է նախազահը: Քաղաքազլուխը ներկալացնաւմ է և ընծալում նրան Լիոնի քաղաքավին վարչութեան նոր տպած մի մենազրութիւն շքեղ կազմոծ: Ապա նախազահը դուրս է գալիս բալկոն՝ ժողովրդին ողջունելու: Երաժշտութիւնը ածում է Մարոէզը:

Ժամ 7<sup>1/2</sup> նտխաղահը ուղեսրւում է նահանգապետի տունը, ուր տեղի է ունենում մի մտերմական ճաշ տասնեակ հոգով:

Հետեւալ օրը, լուսիսի 24 ին առաւատը նիւթեց ընդունելութիւններին՝ կազմակիրապւած մարմիններին և ազլ և ազլ ընկերութիւններին,

Ընդունելութիւնները սկսելուց առաջ և այն բոսէին երբ սկսեցին ներկալանալ բարձրաստիճան իշխանութիւնները, կարնոն, մերձեցաւ Ռոնի պրեֆեկտ (նահանգապետ) Ռիօին և լավտնելով իւր մեծ դոհումակութիւնը նորա անցեալից՝ չնորհեց նորան կումանդորի վողապատ:

Ընդունելութիւնները տեսեցին երկուս ու կէս ժամ: Այդ ամբողջ ժամանակ նախազահի կողքին կանգնած էին առաջին մինխատը Դիպիւլին, զեներալ Բորիս, իւր զինտրական տաճ օֆիցիէրները, 14-րդ կորպուսի հրամանատար զեներալ Վուազէն, Ռոնի պրեֆեկտը, Ռոնի սենատորներն ու պատգամատորները<sup>1)</sup>, բայցառութեամբ մի սոցիալիստ պատղամատրի:

Կախսաղահը հերթով ընդունեց՝ նահանգական ընդհանուր խորհուրդը և զաւառական խորհուրդը (զեմստօ), Լիոնի քաղաքավին վարչութիւնը, Լիոնի համալսարանի պրոֆեսորներին, բողոքի ատեանը, օտար պիտութիւնների հիւպատումներին (որոնց անունից խօսեց Խտալիալի հիւպատու Պ. Բասօ), ապա գիմնազիալի ուսուցիչները, Լիոնի առեսրականների ներկալացուցութիւնը, Լիոնի արք-եպիսկոպոսը, ռեֆորմական եկեղեցու կոնսիստորիալի նախագահը, իսրայէլական կոնսիստորիալի նախազահ Լիոնի մեծ ռաբբին, 14-րդ գնդի օֆիցիէրները և Ռոնի նահանգի քաղաքազլուխները, նոտարների ներկալացուցութիւնը, (որի առիթով չիշեցրին որ Կարմոի պապի հայրը նոտար էր) և վերջապէս նահանգի ուսումնաբանների ուսուցիչները:

Երկար կը լինէր առաջ բերել ամեն մէկ պատգամաւորութեան արտասանած խօսքերը և նախազահի պատասխանները: Ամեն տեղ սակայն արտապատւում էր նւիրւածութիւն Հանրապետութեան:

1) Ալիքնքն Սենատի և Պատգամաւորնենի Ժողովի (Պարիզում) աճնադամները, որոնք ընտրւած են Ռոնի նահանգում:

Կարնոն ապա ստորագրեց պատւուի նշանների արժանացողների ցուցակը։ Նախագահը, բացի դորանից, չնորհեց 25 պատւու մեղալներ հինգանուրներին և որոնց ներկագացրել էր վաճառականութեան մինիստրութիւնը, և երկու տասնեւսկ մեղալներ՝ ուրիշ մինիստրութիւններից։

Նախաձաշին հրաւիրւած էին նույն մտերմականները, ինչպէս և նախորդ օրւակ երեկոյեան։

Ժամ երկուսին նախագահը ացցելեց Արդիւնահանդէսը, ուր մնաց մինչ երեկոյ։

Ժամ 7.ին երեկոյեան տրւեց մեծ ճաշ 1100 հոգու Բորսակում։ Դեսերտի ժամանակ կենաց առաջարկեց քաղաքազլուխ ալ. Գալրտոն, որին պատասխանեց Կարնոն բաւականին երկար ճառավ, որը աւազ պիտի մնար Լարնոի քաղաքական կտակը...

Պատրաստւեցին գնալու Մեծ-Թատրոնը, ուր պիտի տրւէր հանդիսաւոր ներկալացում։ Պիտի խաղալին Ռասինի'ի «Անդրամարք» ողբերգութիւնը։

Լիոն, 25 լունիսի.

### Ո Ճ Ի Բ Ը

Խնջուքը վերջացել էր երեկ երեկոյեան 9.ից 10 րոպէ անց։ Սւիտան պատրաստել էր թատրոնը ուղևորւելու, ուր արւում էր հանդիսաւոր ներկալացում նախագահի պատւին։

Փր. Կարնոն բռնել էր իւր անդը առաջին կառ.քի մէջ։ Նա հասել էր Պալայ և Սոմերս-ի ֆասադի կէսը։ Ամբոխի կողմից ոգեորւած ողջունների առարկաց էր, և նա պատասխանում էր, որպէս միշտ, ամենաշնորհալի կերպով, աջ ձեռքով չնորհակալութիւններ անելով և ձախ ձեռքով գլխարկով ողջունելով, երբ մի ոմն առաջ վազեց զէպի նախագահի լամփօն (կառ.քը) և արագութեամբ թռաւ աստիճանի վրաւ։ Լանդօն կանգ առաւ... և ամենքը սեսան որ նախագահը թեքւեց մէջքի վրա։ զէմքը դռնատւեց, աչքերը հուզալ եկան։

Լանդօփ մէջ Լարնոի կողքին նստած պիտիքեկտ (նահանգապետ) Ռիոն բռնւցքի խիստ հարւածով զլորեց ներքեւ ոճրագործին, որը օտարւելով շփոթութիւնից, անցաւ լանդօփ շուրջը առջնից և հանդէպի կողմին անցնելով, աշխատեց ամբոխի առաջին շարքը կարելով՝ յիսառնել ամբոխի մէջ։ Բայց ալզ չաղողւեց նրան։ Ամբոխը, ոկզբում շշմած պատահած գեպքից, հասկացաւ թէ բանը ինչումն է, զարձակւեց վրան և նրան տեղն ու անդը պիտի խեղդէր, եթէ սատիկանական պահապանները չըթապատէին և չպաշտպանէին նորան ժողովրդի կատաղութիւնից։

Լուսեցին ձախներ—Հանրապետութեան նախագահը ատենատի (ոճիր) զոհ գնացի Դաշտանով խիեցին նորան։

Ոճրտղործը գուցէ ոստիկանների ձեռքից էլ փախչել կարողանար, եթէ նոցա չշրջապատէին լիոնի խորհրդարանի ձիաւոր պահապանները, Ալդ ձեռվ նորան տարան հասցրին ոստիկանատուն:

Ոճրազործը մի երիտասարդ է քամաներկու տարեկան, առանց մօրուսի, զգգուած, նա հագած է բրդից զուր կաթնախառն սուրձի դուռնուի, նուն գողնի էլ կասկետ զլխարկ:

Պահապանների մէջ, որոնք նորան տանում են, նա գնում է զլուխը իջեցրած, ինչպէս եթէ ուզում լինի րոպէից օգտել փախչելու համար:

Կարնօին, լսնոցի մէջ, ուր նստել էին պրեֆեկտը և դեներալ Բորիուս, քերում են պրեֆեկտուրը<sup>1)</sup>. հոեից զալիս են այլ կառքեր, ուր տեղ են գրաւել մինխատրները և ալլք:

Նախազանը ձգւած է լանդօի մէջքի բարձերի վրայ, աչքերը հանգած, ժիլեաի և բրիւկի գոտիի կոճակները բացւած են. Շապկի, որի վրայից պոկւած է Պատուղ լեզեռնի մեծ ժապաւէնը ծածանում է դուրսը, որը արեան մեծ բծով:

Ոչ ոք չգիտէր թէ նախազանը մեռած է թէ զեռ կենդանի է:

Գեներալ Բորիուս, պրեֆեկտը, քաղաքագլուխը, թիկնապահները մեծ դժւարութեամբ կառքից դուրս են քերում նախազանին, առանում նախազունով և սանդուխքներով մինչ առաջին հարկը:

### Հ Ա Գ Ե Խ Ա Բ Ք Ը

Նորան պառկեցնում են այն մահճակալի վրայ, ուր նա անց էր կացրել նախընթաց զիշերը. Դոքտոր Գալըստնը տալիս է առաջին խճամքները, Ննջարանում ներկալ էին՝ մինխատրներ Դիւպիւչի (մինխատրների խորհրդի նախազան), նորա եղբարը, գեներալ Բորիուս, նախազանի զինուրական տան օֆիցերները, և մինխատր Բիւրդո, պրեֆեկտ Ռիւօ, Պրաւիէ, Ռոսաէնդ, Սալւետա և «Թան» լրագրի թղթակիցը:

Դոքտոր Գալըստնին օգնութիւն են զալիս դոքտորներ՝ Օլիէ, Պոնսէ, Լէպին, Մասուն-Կուտան և ալլք:

Արագ կերպով զննելուց լետո՞վ վճռւում է մի օպերացիա անել, Դոքտոր Պոնսէ անմիջապէս սկսում է վէրքը բանալ. Մի վէրք բացեց 12 սահաբիմեար երկարութեամբ և ութ սահաբիմեար լանութեամբ. Պողպատի զործիքով կտրելիս (incision) ևարնո՞ն ուշքի է զալիս և որոշ ձանուլ ասում է. «Ոհ, զոքոր, զուք ինձ ցաւեցնում էք»:

Վէրքը բացելով և հետազոտելով երևում է որ եթէ աղիքները զերծ են մնացել, լեարդի (ու ջիգարը) առջնի ծալը վնասուած է:

1) Պրեֆէկտ նշանակում է նահանգապահ, պրեֆուկտոր—նահանգապահապահի առւնե.

Կարնօն, բոլոր բժիշկների ասելով՝ ամենածանր դրութեան մէջ է, որը լուսի տեղիք չի տալիս նամանաւանդ որ վախ են կրում թէ ներքին արինհոսութիւն կը լինի.

Երբ օպերացիան վերջացաւ և ներքին արինհոսութիւնը զադարեցրին, գոքտորներ Պոնսէ, Օլլիէ, Գալըտոն և Մանօ պատվիրեցին կատարեալ հանգստութիւն և մինչ այդ ժամանակ սենեկում եղող բոլոր անձերը քաշւեցին մի հարեան սենեկակ. Մնացին միան գեներալ Բորիուս, զինւորական տան օֆիցիեները և պ. Տրանչօ:

Սենեկակի մուաքերը խստութեամբ պահպանւած են:

Ժամ 11 և կեսին արինհոսութիւնը, որ մի առ լոպէ դադարել էր, նորից սկսում է դանդաղ կերպով. Լեարդը երեսում է թէ սննդազանց է եղած (հիպերտրոֆիա):

«Աթէ արինհոսութիւնը շարունակվի, ասացին բժիշկները, պիտի փորձել վճռողական օպերացիա անել: Պիտի որոնել որովանը բացելով, ճիշդ ան կէտը, որից արինը հոսում է, որ արմատապէս դադարեցնեի եթէ կարելի է:»

Բաց այդ թուլ լուսն էլ շուտով կորաւ:

Կարնօն շատ լաւ զգում էր իւր դրութիւնը. նա երկու անգամ ասաց. յե ո՞ւն ռայ! (ես մեռնում եմ). և այդ միջոցին բժ. Պոնսէ՛ն, որի անձնւիրութիւնը հրաշալի էր, կոացաւ դէպի կարնօն և ասաց նրան. «Ձեր բարեկամները աջնտեղ են, պարոն նախագահ:»

Կարնօն, հազիւ լսելի ձայնով պատասխանեց.

«Ես շատ ուրախ եմ, որ նոքա ներկալ են» (J: suis bien heureux de leur présence):

Այդ էին նորա վերջին խօսքերը. Մի քանի ակնթարթից լեռոչ սիրալ այլ ևս չէր բախում, և կէս գիշերից 45 րոպէ անց նա վերջին շոնչը փչեց:

Հանրապետութեան նախագահը մեռաւ երկաթէ մահճակալի վրայ սենեկակի երկու պատուհանների մէջ տեղում, պատուէ մահճակալի ստորոտում:

Նախագահը ընդունեց վերջին օծումն (ըստ սպարութեան կաթոլիկ. ների) Կուէ արքեպիսկոպոսի ձեռքով, վերջին բոպէլին:

Կարնօի հօրեղբօր որդին, Միմոն կարնօ, որ Կոա դ'Օրի մի համայնքի մէր (քաղաքագլուխ) է, և նորա քոլը, եկել էին Լիոն տօների առիթով: Երբ նոքա իմացան ոճիրի մասին, զնացին մի ազգականից անդեկութիւն ստանալու, և որպէս զի նախագահի զգացմունքը չըուղւի, նոցա ներս թողին վերջին բոպէլին միան, արքեպիսկոպոսի հետ միասին:

Ուրաղործը խրել էր սուրբ նախագահի մարմնի մէջ մինչև կոթը. նա ինքն էր համել դաշտինը վերքից և դյուլ էր նորան փողոցը վախչելիս:

Ոստիկանութեան մօտակալ բաժնից հրամանի համաձայն՝ նորան տեղափոխում են կառքի մէջ մի ազ «ուչաստով», ուր ոստիկանութեան կոմիսար կուզէն սկսում է առաջին քննութիւնը:

— Ի՞նչպէս է ձեր անունը?

— Իմ անունն է Կազերիս Զիօվաննի Ամստո:

— Ուրեմն դուք իտալացի եք, ինչպէս երեսում է նաև ձեր արտասահութիւնից: Դուք ֆրանսիական ընկութիւն չք ընդունել:

— Ոչ, պարոն, ես Ֆրանսիակումն եմ միայն մի քանի ժամանակից ի վեր:

— Որտեղ էք ծնւել:

Ես ծնւել եմ Մոնտեվերն, Միլանի պրովինցիակում: Ես 22 տարեական եմ:

Ոճրագործը դժւարութեամբ է ֆրանսերէն խօսում: Վելջապէս հասկանում են որ նա եղել է Անժ (Cette) քաղաքում:

— Ես գնացել էի Անժ գործ ճարելու: Որովհետեւ չգտակ՝ ես ոսով գնացի Պարիզ: Գող չունեի տոմսակ գնելու համար: Մի քանի օր է որ թողել եմ Պարիզը Լուն գալու համար: Ես մտածեցի թէ արդիւնահանդէսին գործ կը ճարեր:

Թէ ինչու իր ոճիրը գործեց, այդ մասին չի պատասխանում, ասելով թէ դատաւորների առաջ միայն կը խօսի: Սակայն նա ընդունում է որ ոճիր գործողը ինքն է:

Ապա հրամակում են շորերը հանել և խուզարկել: Գտնում են վրան կաշէ կարնէտ, որի մէջ մի քանի թերթիկներ: Ապա գնում են որմանգիր բանուրի տետր, վրան նշանակած «Պարիզ» 15 լունիսիո: Գտնում են մի տերիկական խիելու գործի ու զրապանի մի դանակ, որպէս նաև մի կտոր հայ:

Ապա հարցեր են տրում երկու վկաներին: Առաջինը, ոմն Բատիստ Պոմերա, 60 տարեկան, գետնիք բարձրացրել էր գաշոնը, որով խփել էր Կազերիօն: Երկրորդը՝ ոստիկանութեան պահապան է, որը ոճրագործին ընդունել էր ինսպեկտոր Դիւլուանից, որը ուղեկցում էր նախադահին:

Ժամ տասին դալս են ոստիկանութեան բիւրոն Առնի պլեֆիկա Ֆոչիէ և գլխաւոր դատախազ Ագրիեն Դիսիւլի: Ուզում են նորից սկսել հարցաքննութիւնը, բայց մեծ է լինում դժւարութիւնը թշւառականի ֆրանսերէն չիմանալուն պատճառով:

Ժամ 12-ին ոճրագործին ուղարկում են դատարանը, աչնտեղ պահելու համար:

### ՄԵԾ ԹԱՏՐՈՒԱԿ

ՀԵՆԴ որ Հանրապետ, նախագահին ստառեցնում են իւր մահակալի վրայ, Առնի պլեֆիկա ալ, Արիօ շտատեց մեծ թատրոնը, ուր Լիոն քա-

ղաքի հրաւիրւածները, լսած չլինելով սպանութեան մասին, սպասում էին Կարճօ'ի գալուն: Դաշլիճը սական սկսում է աղմկւել երբ լուրեր են հասնում եղելութեան մասին: Կանաչը սարսափի աղաղակներ են բարձրացնում, բայց մի մասը հասարակութեան խաղաղ է, չհաւատալով լուրերին: Բայց և այնպէս բոլոր պաշտօնական անձերը թողնում են թառունը՝ տեղեկութիւնների ետեից ընկնելով:

Թատրոնի մուտքերի առաջ, որ փակուն լուսաւորւած էին, անցուղարձը անհնարին է դառնում:

Ժամ 9<sup>1/2</sup> Հանրապետութեան հրապարակի խորքում երեսում է մի լանդօ, որ քարչում են ձիերը գալոպով: Դա Ռիւօ'ն է երկու ուղեկիցների հետ:

Ամբոխը, կարծելով թէ դա նախագահական գնացքի սկիզբն է, ահագին աղաղակ է բարձրացնում «Անցցէ Կարճօ! կեցցէ Հանրապետութիւնը!» Բայց լանդօ'ի աջ գոնից պ. Շողէի ձախից՝ պ. Ռիւօ, սաստիկ լուզած ալդ տեսարանից, պատասխանում են. «Մի բղաւէք, Հանրապետ, նախագահը զոհ է գնացել ոճրագործիունում!»:

Զարհուրելի արձագանք զտան ալդ խօսքերը ամբոխի մէջ. Ամեն կողմից լուսում են վրէժինողրութեան և անէծքի ձախեր:

Ռիւօ և Շողէ մտնում են թատրոնի աջն օթեակը որ պատրաստած էր նախագահի համար. Ամենքը տեղներից վեր են կենում: Ռիւօ'ն միակ մօտենում է օթեակի եղրին, և նա ասում է, ձանը ընդհատելով զառն հեկանքով,՝ պարոններ, Հանրապետութեան պ. նախագահը սպանեցէ:

Դաշլիճում կատաղութիւն է պալթում: «Ի մահ, վրէժինողրութիւն!» բղաւում են հանդիսաւումները:

Ռիւօն շարտունակում է.

«Հանրապետութեան վարչութեան... մի թշւառական պ. Կարճօ'ն խնդիրք տալու պատրւակալ, մօտեցաւ լանդօ'ին և խփեց նրան զաշնով...»

Մի երկրորդ անգամ Ռիւօ'ն ընդհատում են զալութի ձախերով:

«Իմ պաշտօնը աւելի ծանր մի գալձեքք, Մենք թողինք պ. Կարճօ'ն բժիշկների ձեռքում, Դուք հասկանում էք որ այս հանգամանքներում, ախրութիւնը ամենքի սրաներում լինելով, ալորւալ ներկաւացումը բոլորովին վերջացած է»:

Հանդիսականները ետ են քաշւում շշմած և զնում են աւրոխին չափնելու սարսափելի լուրը:

### ՆԵՐԱՋՆԵՈՒԹԵԱՆ, ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բժիշկները Կարճօի մահւան մասին կազմեցին արձանագրութիւն այս կերպ:

Ներքու սառագրին բժշկականութեան դոքորները կտարիցին այսօր Հանրապետութեան ալ. նախագահի ներազնութիւնը՝ Նորա գանձ հետեւալ վեառումները:

Վէրքը գտնում էր անմիջապէս աջ կողմի ներքին կողերի տակ, երեք սանտիմէտր հեռու որակերպ կցւածից (appendice xiphoides): Նորա չափոն էր 20-ից 25 միլիմէտր, և դաշնը, ներու խրելով, կտարիւագէս մաս մաս էր արել համապատասխանող կողի կոճուկը (cartilage costal).

Դաշունի սուրբ խրել էր լեռի ձախ բլթակը (lobe) առկախիչ կապից (ligament suspensorium) մօտաւորագին 5-ից մինչ 6 միլիմէտր հեռու: Նա ծակել է օրգանը ձախից դեպի աջ և վերեից ներքեն, իւր ընթացքում վիրաւորելով միծ երակը (veine porte) որ նա բացել է երկու ոկղերում: Վէրքի երկարութիւնը լեռդի միջում է 11 մինչ 12 սանտիմէտր:

Ներքնաթաղանթի միջի արինհոսութիւնը (hémorragie intra péri-tonéale), որ անպայման մոհառիթ է, եղած է հետեւանք երակի այդ կրկնակի ծակւելուն:

Լին, 25 լունիսի 1894 թ.

Դոքորներ՝ Լակասահն, Անրի Կուտախն, Օլիէ, Ռեբատէլ, Պանսէ, Միշէլ Գան գոլֆ, Յարբու:

### ՅՈՅՅԵՐ ԻՏԱԼԱՑԻՆԵՐԻ ԴԵՄ

Լին, 25 լունիս.

Նախագահին սպանելու մասին լուրը արագութեամբ տարածեց քաղաքում: Պրեֆեկտուրի առաջ բաղմաթիւ խմբեր են հաւաքւում: Նոչնը լրազիւների խմբազրութիւնների առաջ, որտեղից լուրերի են սպասում: Լուրը տարածում է սպանողի խտալացի լինելու մասին: Բնազդամամբ, առանց հաշւի, կատաղութեան մի զգացմունք է ծագում: Ժողովրդական մի շարժում է առաջ դալիս սաստիկ կատաղութեամբ, որ ծանր հետեւանքների է հասցնում: Խմբեր են կազմում, որոնք ձաներ: Են բարձրացնում խտալացիների դէմ, որոնք շատ բազմաթիւ են Լիոնում:

Այս հանգամանքներում մի հասարակ կայծը բաւական էր՝ վառօղը բռնկեցնելու համար: Ժամ 10-ին խահակ Կաղատիի կաֆէտիում, որ մի խտալացու էր պատկանում, Հանրապետութեան փողոցում, տերրասի վրայ հստած մի լաճախորդ, լուսով սպանողի խտալացի լիներ, բնկարծ ուի է կանգնում և բղաւում «զլորփ Խտալիան» (A bas l' Italie!). Լաֆէտան մի ծառախող, նունակէս խտալացի, որ մօտն էր կանգնած, վերցնում է գարեջրի մի բաժակ և գցում լաճախորդի վրայ: Յաճախորդները

տեսնելով արդ, մի անգամից ստի են կանգնում և ամեն կողմից ձախներ են լսում «Կորչեն խալացիք! Կեցցէ ֆրանսիա! Կեցցէ կարնօ!»: Բաժակները ու շիշերը օդն են թռչում, տեսարանը անհկարագրելի է: Դրսի ամբոխը խառնում է չաճախորդների հետ, պատուանմների ապակիները ջարդում են աթոռների և տարօւրէտների հարւածներով, հայելիները հազար կտոր են լինում, դռները կտորատուամ, և նոյն ձախները շարունակում են՝ «Կորչին խալացիք! Ի մահ ոճագործներին!» Կաֆէտան ծառալողները, զարութիւնի ալս պալթումի առաջ, փոխուստ են տալիս և թողնում կաֆէտունը չաճախորդների և ամբոխի ձեռքում:

Բայց ամբոխի մէջ մի հակառակ շարժում է նկատում—վազելով ոստիկանութեան ագէնտներն են գալիս: Ոչ առանց ջանքերի՝ նորք հաւաքում են զրում ընկած ամեն տեսակ կտորատանքները և կաֆէտունը զատարկում մարդկանցից:

Խաղաղութիւնը կարծես վերականգնեց. ագէնտները, իմանալով որ այլ փողոցներում նոյնպէս անկարգութիւններ են պատահել վազում են այստեղ, թողնելով միան մի քանի հոգի ջուցեր անողները սակայն, նորից խմբում են, նորից լարձակւում են կտիւտան վրայ և վերջնականապէս ամեն ինչ քանում Առաջին հարկի ընդարձակ դահլիճները, որպէս նաև շոկոլազի խանութը, որ նախում է Bat—d' Argent փողոցին, կատարելապէս աւերում են, ջահեր, ո շտանակներ, բրոնզեր, սալպեղինը—բոլորը ջարդուտում է:

Միան զիշերւակ ժամ մէկին կլրասիրների մի էսկաղրոն և ինքանտերիալ մի վաշտ տեղն է հասնում կարգը վերականգնելու համար:

Նման տեսարաններ կրկնում են շատ ուրիշ փողոցներում: Ժամ 11<sup>1</sup>/<sub>2</sub>-ին մի մեծ ամբոխ հաւաքւել էր Խալալիալի հիւպատոսարանի առաջ, փողոց զը Լա Բառ: Մի խումբ մարզիկ արգէն զօռել էին զուռը ներս խուժելու համար, երբ ոստիկանութեան ագէնտները ժամանակին վրայ հասան առնը պաշտպանելու համար: Հլ ապատու պ. Բասսօ, վերցնել տւեց հիւպատոսարանից իւր երկրի դրօշակը, և դորանով չուզմունքը խաղաղւեց: Անու ամենանիւ ինքատերիալ մի վաշտ զօրք բռնած էր փողոցը ամբողջ գիշերը: Երբ անցնում ես այս փողոցով, կարծես Վիոնը պատշարման մէջ է:

Անու ամենանիւ ցոլցեր անողները իրանց կատաղութիւնը դարձրին այլ հիմնարկութիւնների վրայ որ պատկանում էին կամ ըստ երեւալին պատկանում էին խալացիներին: Ալսպիսով աւերւեցին ի միջի ապալ կաֆէտները Ֆիլիպ Կազատի՛ի, Մատերնի՛ի, Մատոսովի՛ի, Հնալած որ ալլ պարոնները ֆրանսիականութիւն են ընդունած և միան անունները խալական են:

Եղան ապօր, 25 (13) լուսիօի երկու ձերբակալութիւններ. մէկը,

լսելով սպանման լուրը, բացագանչել էր՝ «Շատ լաւ է արել»։ Այդ խօսքեր լսողները խկոն բռնել են նորան և լանձնել ոտտիկանութեան։ Մի այլ ոմն բզաւել էր Ալեքսէ անարխիա (անիշխանականութիւն)։

Լիոն, 26 բանիսի.

Սկսեց շարժում Ֆրանսիացւմ հաստատւած խտալացիների դէմ։ Յթէ շատերը մասնակցեցին այդ շարժմանը հարթենասիրութեան վիրաւորած զգացմունքից, մեծ թւով մարդկանց խմբեր մասնակցեցին նաև միմիտն կողոպտափի համար։ Կողոպտում էին խտալացիների տնելն ու խանութեները կամ կրակ տալիս կահ կարասիքը, թէ քաղաքի միջում և թէ արւարձաններում։

Ոստիկանութիւնը անբաւարար լինելով նահանգապետը օգնութեան է դիմում տեղական զարնիզոնին։ Սկսում են բազմաթիւ ձեռքակալութիւններ։ Կալանաւորածներին հարցաքննում են ձեռաց։ Ապա կազմում է նահանգապատի մօտ խորհուրդ, բազկացած նահանգապետից և աեղական կամ չրջակալ զօրքերի հրամատարներից։ Որոշում է աճնպիսի պլան։ քաղաքը բաժանել վողոցներով կազմած եռանկիւնների, ինֆանտերիան կը բռնի վողոցների մուտքերը, հեծելազօրը կը չը վողոցը և չետ կը մզի ամբոխը, որը ամպիսով կը սովորի հեծելազօրի և ինֆանտերիայի մէջ։ այդ միջոցին ոստիկանները կը կալանաւորեն բոլոր կառկածաւորներին, իսկ միւսներին կը թողնեն որ անցնեն։ Պլանը իրագործեց շատ արագ, գեներալ Նինիէրի ղեկավարութեամբ։ Հեծելազօրը փողոցի լայնութեամբ առաջ է գնում, ամբոխը, տեսնելով այդ, լիու և լիու է քաշում և վագում փողոցի միւս ծալրով փախչելու, առանց կասկածելու թէ երկու կողմից էլ բռնւած է։ Փողոցի միւս ծալրը համելով տեսնում է որ ինֆանտերիան բռնել է մոււաքը, անհնարին է զօրքի շարքերը կտրել անցնել։ ամբոխը ոտփաւած կանգ է առնում։ Անմեղները գուռում են, ազաշում որ թողնեն անցնելու։ Անկարելի է, հրամանը կտրական է՝ ոչ ոքին չթողնել։ Գալիս են ոստիկանութեան ագէնտները, քննում են ամեն մէկին, դատում են արագ, նաև ածած թէ ամեն մէկը ինչպէս է իրան պահում կամ աինչ ռէխու է ցուց տալիս։ անմեղ գատածներին բաց են թողնում, իսկ կասկածաւորներին պահում են։

Այդ կալանաւորներին շարում են փողոցի մի կողմը, ապա չորս շարքի բաժանում, և ուղեկցութեամբ ոստիկանների և հեծելազօրքի՝ տանում են նահանգապատի տան ուղղութեամբ։ Նոյնը կատարում է բազմաթիւ այլ փողոցներում։ Հատնելով նահանգապետի տունը, մանիֆիսատանտները (ազմուկ հանողներ և անկարգութիւն անողներ) լայտնում են իրան անուն ազգանունը, քննում են, եթէ տւած բացատրութիւնները բաւարար են՝ բաց են թողնում, իսկ եթէ մի որ և է թէկուղ ամենաշնչին մի նշա-

Նից երեսում է թէ մասնակցել է անկարգութեանը, այն ժամանակ սկսում են աւելի մօտիկուց հարցաքննել: Արեան կաթիւ, պատռած շորեր—և արդէն բաւական է որ կալանաւորվի ու, հաջող, դէպի բանտը:

Թէ որքան արագ կատարեց աղդ գործը, բաւական է ասել որ քաղաքի բաժիններից մէկում (la Gulliotière) երեկոյեան ժամ 7-ից մինչ 9 ամբ ձևով բանտարկեցին 500 հոգի:

Կուրս Գամբետապից և Մոնսէ փողոցից գալով մենք տևանում ենք ժամ 8-ին տանում են 150 հոգու, որոնց բոնել են միանգամից. գորքա մանիքեստագեր են ո դեռ աւելի վատ. մէկի վրայ տեսնում ենք զողացած ապրանք, սարդինի տուփեր, կոնսերվներ, մանաւանդ ճրագի մոմեր. Միւսների մօտ տեսնում ենք զէնքեր, զանակներ, զաշոխներ, լիցրած ռեսլերներ. Երկուսը հրացաններ ունեին: Մէկի մօտ կու գանակ էր և նոր սրած, և խոստպահում էր թէ ձիերի ետի ոտների զամարները կորելու համար է վերցրել, և ցինիկաբար առում էր թէ արդէն առիթ է ունեցել օգտւելու իւր զէնքից, և իրօք՝ նա արիւնոտ էր.

Չեսք առած եռանգուն միջոցները առողջ հատեանք ունեցան և երեկոն անցաւ շատ խաղագի բաց չարագործներին հալածելու գործը այնու ամենանիւ չարունակում է, և չաջողութեամբ:

Մի միջնադէպ. ժամ 9-ին, Գիլլօտէր մասում, մի 55 տարեկան մարդ, վաճառական, հալչողում է Վարնովին. Նորան զէն են շպրտում կաֆէտնից, ուր նա զանում էր. այն ժամանակ նա հանում է իւր ձեռագալուց սուրբ և չարձակելով սրճատան հիւրերից մէկի վրաչ՝ խրում է փորի ներքեց: Նորան տանում են պրեֆեկտուրը (նահանգապետի տուն). Խուզարկում են շորերը և գտնում մի ամբողջ արևենալ՝ լքցրած ռեսլեր, նոր սրած զանակ թաշկինակի մէջ փաթաթած, և իւր ձեռնախալու սրով. երկու պղուսմներ են գտնում, որոնցից մէկի մէջ 200 ֆրանկ, միւսում 22 ֆրանկ:

Երկու օրւակ մէջ (26-ին և 27-ին) կալանաւորւածների թիւը 1500-ից աւելի է:

Լիոն, 27-ին (15) լունիսի:

Գաղաքակին խորհուրդը կարեոր նիստ ունեցաւ. Գաղաքագլխի մի քանի խօսքերից էետու, խորհուրդը (զումա) վճռեց ամբողջապէս ներկաւանալ Պարիզի չուղարկաւորութիւններին: Մի ուղերձ կը գրւի և չառուկ պատղամաւրների ձեռքով կը ներկացնեմ տիկին Վարնո՛ին:

Խորհուրդը վճռում է իւր արխիւների մէջ արձանագրել Վարնոի աշցելութեան նպատակը և նորա վերջին ճառը ամբողջապէս:

Մէրը (քաղաքագլուխ) լաւանում է որ սատցել է բազմաթիւ հեռագիրներ իտալական քաղաքների խորհրդարաններից, որոնց և պատասխաններ էին ուղարկել:

Նա կարդում է Վիոնի իտալական կոլոնիալի ուղարկած ալս թուղթը:  
Վիոնի իտալական կոլոնիան, խորը զգւած ան զարշելի ոճիրից,  
որին զոհ եղաւ Հանրապետութիւնն նախագահը, և որի կատարողն է մի  
մոլեգին որ անարժան է իտալացու անունին, ընդունում է ամենաջերմ  
մասնակցութիւն Ֆրանսիալի սուդի մէջ, որը հարւածել է իւր սրտի մէջ  
այդ անուղղելի կորուսով, և լուսնում է իւր զգացման քները խոր հա-  
մակրութեան և համերաշխութեան ֆրանսիական ազգի հետ»:

Մէրը չեցտում է Ֆրանսիալին իտալիալի կողմից տւած տիսուր հա-  
մակրութիւնների գրաւականների վրայ: Ապա չօշափում է նա Վիոնում  
սպատաճած անկարգութիւնների խնդիրը, պախարակելով անկարգութիւնն  
անողներին և լուս լաւանելով որ նոքա չեն փախչիլ արդարադատութեան  
աչքից:

Գերջը Մէրը առաջարկում է մասնակցել Լյոն քաղաքայի թերթի  
բացած ստորագրութեանը՝ Կարնօին արձան կանգնեցնելու համար և իւր  
ձեռքը վերցնել արձան կանգնեցնելու զործը:

Վիոն քաղաքի կողմից խորհրդարանը ստորագրում է առաջին ան-  
գամ 10.000 ֆրանկ: Ապա վճռուում է տօնական ուրախութիւններ չկա-  
տարել լուլիսի 14-ին, որ ֆրանսիացոց ազգալին տօնն է, նորա տեղը  
կը լինի մի հայրենասիրական տօն, որ կը կատարէի Կարնօի անունով  
կոչով հրապարակի վրայ արձան կանգնեցնելու սկզբնաւորութեան առի-  
թով, 50.000 ֆրանկը, որ նախանշաշտում որոշւած էր լուլիսի 14-ը տօնի-  
լու համար, կը բաժանել աղքատներին:

### Ո Ճ Բ Ա Գ Ո Բ Ծ Ը

Վիոն, 28 (16) լուլիսի, առաւօտ:

Ոճրագործ Կազերիս զետեղւած է Սուրբ Պաւլոս բանտում, խոսց  
№ 42, առաջին լարկում: Կահաւորութիւնը բաղկացած է մի դաշտավին  
մահճակալից, մի աթոռից, մի սեղանից, լաւարանից և ձորձակալից (շոր  
կախելու համար): Կազերիսն սպահանւում է բանտավին երկու պահա-  
պանների աշքի առաջ: Նա իւրան բանտում է մի տեսակ անզգաչ կերպով  
և կարծես չի զգում իւր կատարած ոճիրի ահազնութիւնը: Նորա խելքը  
շատ սահմանափակ է երևում, իսկ կրթութիւնը՝ զէրո: Նորա անդիտու-  
թիւնը Փրանսերէն լեզւի իսկական է և ոչ շննծու, ինչպէս առաջ կար-  
ծում էին: բայց հասկանում է, երբ կարծ նախադասութիւններով են  
խօսում:

Կազերիսն հանգիստ քնում է ամբողջ գիշերը և ցերեկւակ մի մասը  
Նա մեծ ախորժակով ուտում է: Նա չի ծխում: Ոճրագործը ամեննելին չի  
հետաքրքրում իւր զործի ընթացքի մասին:

Ազ Հեռադիր, 28 (14) լուլսի:

Կազերիօն երէկ դուրս բերեց բանտից ժամ 1-ին կէսօրից վետոյ և տարւեց զատարանը քննութեան ենթարկելու համար: Քննիչ դատաւոր պ. Բենուա, որ զբաղւած էր Կարնօի դիակի զննութեամբ, եկաւ պրեֆեկտուրից ժամ 4-ին և խօսքու հրամաչեց բերել մեղադրուղին:

—Ասացէք, Կազերիօն, ինչու ուզեցիք դուք սպանել Հանրապետութեան նախագահին? Դուք նորան ճանաչում էիք? Տրտունջ ունէիք նորա դէմ?

—Ոչ, պատասխանում է Կազերիօն: Դա մի բռնակալ էր. ես դորա համար սպանեցի նորան:

—Ինչու սպանեցիք նորան?

—Ես այդ կ'ասեմ երդեալների դատարանում (jury): Նա կը հասկանաւ շարժառիթը, որ ինձ ալդաքս գործելու ստիպեց. Ես իմ պատճառները կ'ասեմ:

—Ունէք արդեօք ոճիրի ընկերներ:

—Ոչ, Ես գործեցի մենակ, առանց դրսմի:

—Լինում ում և իցէ ճանաչում էք: Կազեր ունէք ալստեղ?

—Ոչ մի: Ես չեմ ճանաչում քաղաքը, Բայց ես բանել եմ ոչ հեռու ալսուղից, Վիեննում, մի հացագործի մօտ, մի տարի կը լինի:

—Ինչպէս խփեցիք պ. Կարնօին?

—Ես առաջ գնացի, դէնը հրելով մի կիւրասիրի ձին: Ես իմ դաշտնը բացել էի թեքիս մէջ: Բաւական էր որ ծեռքս բարձրացնէի: Ես նշան զրեցի փորի տակը և ծեռքս իջեցրի, աղաղակելով՝ «Աեցցէ անիշխանութիւն»! Ամբոխը չարձակւեց վրաս, ինձ գետին գլորեց և ծեծեց: Ոստիկանները ինձ տարան ոստիկանատուն:

—Դուք շարունակում էք առել թէ ոճիրի ընկերներ չէք ունեցել?

—Այս: Բայց ի դէպ, նախագահը մեռմա՞:

Պ. Բենուա՛ն չի պատասխանում: Կազերիօն կարծես մտածեց, որ իւր զոհը մեռաւ և չի ծածկում իւր գործիւնը: Նա ժպտում է և, բարձրացնելով ծեռքը, խփելու ձև է անում:

Հարց ու փորձը տևեց մինչ ժամ 8, Բանը դժւարանում է նրանով, որ թէև Փրանսերէն հասկանում է Կազերիօն, բայց շատ դժւարութեամբ է խօսում:

Հեռագիր Մոնպելիէից, 27-ին (15) լուն.

Անիշխանական Լաբորի, որի հետ Կազերիօն Մոնպելիէլում անց է կացրել շաբաթւակ կէսօրից վետոն, այս առաւտա ծեռքակալւեց, Մոնպելիէից չորս կիլոմետր հեռաւորութեամբ:

## ՖՐԱՆՍԻԱՑԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԵՐԹԸ

Ֆրանսիակի պաշտօնական „Journal officiel“ թերթը, լուսիսի 25 ի համարում, իւր պաշտօնական մասում լայտարարելով կոնգրեսի մասին նախագահ ընտրելու համար, իւր ոչ պաշտօնական մասում այս կերպ է լայտարարում Հանրապետութեան նախագահի մահը:

Ոչ-պաշտօնական մաս:

Մինիստրների խորհրդի նախագահը, ներքին գործերի և դաւանութիւնների մինիստրը, հետեւեալ հեռագիրն է ուղարկած պ.պ. մինիստրներին, պատ. նախագահներին Անուածի և պատղամաւորների ժողովի, Պարիզի զինուորական կառավարչին, պրեֆէկտներին, ենթ-պրեֆէկտներին և Ալժիրիակի կառավարչապետին՝

Վիտն, 24 լունիսի,

10 ժամ 35 րոպէ երեկոյեան:

Հանրապետութեան նախագահը խփւել է դաշոնի մի հարւածով ճանապարհին Chambre de Commerce-ից գէպի մեծ թատրոնը, Ոճրազործը իսկոն ձեռքակալւեց. նա բռնած ունէր մի ձեռքում աղերսազիր և միւսում մի դաշոն:

Նախագահը անմիջապէս տարւեց պրեֆէկտուրը, ուր նա շրջապատւած է Հիոնի նշանաւորագոն բժիշկներավ:

Այս տիսուր փորձութեան մէջ, կառավարութիւնը Ֆրանսիացին մասնակից է անում իւր մաղթութիւններին Հանրապետութեան նախագահի համար:

Խորհրդի նախագահ, ներքին և դաւանութիւնների մինիստր  
Ն. Դիպիւտի:

Մի երկրորդ հեռագիրը բերում է տիսուր լուրը Հանրապետութեան նախագահի մահւան կէս գիշերից 35 րոպէ անց:

Միւս կողմից Հաւասի գործակալութիւնը հաղորդում է մեզ հետեւեալ դոկումէնտները:

Ներքին գործերի մինիստրը ուղարկել է գիշերս հետեւեալ հեռագիրը Արժիրիակի կառավարչապետին, պրեֆէկտներին և ենթ-պրեֆէկտներին՝

Ցաւով տեղեկացնում ենք ձեզ մահը Հանրապետութեան պր. նախագահի, որը վախճանւեց կէս գիշերից երեսուն և հինգ րոպէ անց:

Դիպլոմատիական մարմնի անդամները անմիջապէս տեղեկացրած են արտաքին գործերի մինիստրի խնամքով:

Պր. Կազիմիր Պերիէ հետեւալ հեռագիրն է ուղարկել պ. Դիպիւզիին:

Պարիզ, 25 լունիսի, գիշերւակ ժամ 12 և  $\frac{1}{2}$ :

Պր. Շարլ Դիպիւզիին, մինիստրների խորհրդի նախագահին, Լիոնի պրեֆեկտուր:

Պատգամաւորների ժողովի նախագահը խորը լուզմունքով իմանում է աղջան տիուր լուրը գարշելի ոճիրի որ գործւած է Հանրապետութեան նախագահի ղեմ և որը վատացնելու է ժողովուրդին որպէս ամբողջ ֆրանչիային:

Նա խնդրում է կառավարութեանը ներկայացնել Հանրապետութեան պ. նախագահին իւր ամենավառ բաղձանքները:

Կազիմիր Պերիէ:

Կառավարութեան բոլոր անդամները առանձին-առանձին ուղարկեցին ցաւակցութեան հեռագիրներ տիկին Կարնօին:

Լուսաւորութեան մինիստրը հեռագրերով տեղեկացրեց նախագահի մահան մասին իւր դեպարտամենտի բոլոր կառավարիչներին և ակադեմիաների բոլոր ռեկորդներին:

Բոլոր ռեկորդները լուսաւորութեան մինիստրին հեռագիրներ ուղարկեցին տիկին Կարնօին իրանց և ակադեմիական այլ պաշտօնեաների խորը ցաւակցութիւնը կատանելու համար:

### Օ Տ Ա Ր Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Բ Բ

Կարնօի սպանումը տհագին արձագանք գտաւ ամբողջ կուլտուրական աշխարհքում, բոլոր պիտութիւնների կառավարութիւնները շտապեցին իրանց ցաւակցութիւնը լաւոնել Մենք ակտաեղ դնում ենք միանմի քանիսը այդ հեռագիրներից, որոնք առանձին կարենութիւն են ներկայացնում:

Պրն. Ռեսման, Խոտալիալի գեսապնը, 25-ին լունիսի գիշերւակ ժամ 1 ին եկաւ ներքին գործոց մինիստրութիւնը, բայց այդ լուպէին պ. Շարլ Դիպիւզին Լիոնից ղեռ չէր ժամանած Պարիզ:

Պրն. Վրիսալին, իտալական մինիստրների խորհրդի նախագահը, ուղարկել է Տիկին Կարնօին միխթարութեան մի անձնական հեռագիր:

Միւս կողմից ահա հեռագիրը որ Վրիսալին ուղարկել է Լիոնի Խոտալիալի հիւպատոս պ. Բատո՞րին:

Հունի, 25 լունիսի, 9 ժամ 15 րոպէ:

Կոմմանդոր Բատո, ընդհանուր հիւպատոս Խոտալիալի, Լիոն.

Ես ուղարկեցի նորին գերազանցութիւն Ուսումանին այս հեռագիրը.

«Սաստիկ լուրջած՝ առնելով լուրը զարհուրելի ոժիրի որը Ֆրանսիա-չից խեց նորա առաջին պաշտօնեալին, իսկ Խոտալիալիդ մի բարեկամի, ևս խնդրում եմ ձեզ արտադատել նորին գերազանցութիւն պրմ. Շ. Գիւ-պիւլի իմ խորը վշտի և զարհուրանքի զգացումները, որոնցով տողորւած է թագաւորի կառավարութիւնը և որին միանում է ամբողջ Խոտալական ազգը. Աւելցրեք անձնական միջթարանքներիս ջերմ արտաքառութիւնը, որովհետեւ ես միացած եմ եղել այդ համեստ մարզու հետ ոչ միայն հայոցմունքով, այլ և անկեզծ բարեկամութեամբ. Աճրագործները հայրենիք չճանաչող, որոնց մենք տեսնում ենք որ ամբողջ Եւրոպան լքցրել են իրանց զարհուրելի ոժիրներով:

«Ֆրանսիան որպէս Խոտալիան չի ուզում տեսնել սպանողի մէջ այլ ինչ եթէ ոչ մարդկութեան թշնամուա:

«Լրիսապի»

Վերջապէս Խոտալիալի արտաքին գործերի մինիստրը ուղարկել է Խոտալիալի դեսպանին Պարիզում հետեւեալ հեռագիրը.

Հառմ, 25 լունիսի 1894

«Մենք իմանում ենք ամենախորը ցատով սպանումը մի ազդի ովե-տի, որը ամբողջ Խոտալիալում կը լարսուցանի խորը սոսկումն սպանիչի դէմ որ անարժան է Խոտալիալ անւանը. Այն վալրինին երբ նորին Մեծութեան վիառութեանն եմ հասցնում սոսկալի ոճիրի մասին լուրը, դուք պէտք է անմիջապէս միջնորդ հանդիսանաք Հանրապետութեան կառավարութեան առաջ այն զգացմունքների համար, որոնք թագաւորինը և մեր ամբողջ երկրինն են»:

Բլանկ

Պ. Փոք Միւնստէր, Գերմանակի դեսպանը, լուր ստանալուն պէս, ուղարկեց տիկին Կարմոխն հետեւեալ հեռագիրը.

Տիկին Կարմո, Լիոնում.

«Ես տեղեկանում եմ ամենախորը ցատով այն մեծ վշտի մասին որ ձեզ հասցրած է և սրտի խորքից, Տիկին, ուղարկում եմ ձեզ վկացութիւնը իմ ամենաջերմ համակրութեան և հաւատարիմ վիշտակի որ ես միշտ կը պահպանեմ դէպի աղնիւ հանգուցեալը»:

«Իմ աղջիկը միանում է բոլոր սրտով իմ զգացմունքներին»:

Լումս դը Միւնստէր

Կիլ, 25 լունիսի, 10 ժամ, 56 րոպէ.

Կոմս Գոն Միւնստչը. Պարիզ.

Բարեհածեցէք արտակարուել Փրանսիական կառավարութեանը թէ որքան ևս զարբացած եմ գարշելի սպանութիւնից որին զոհ է եղած Հանրապետութեան նախագահը, որին ևս անքան բարձր գնահատում էի, և բարեհածեցէք ասել որ ևս ի բոլոր սրտէ ամենաջերմ կերպով մասնակցում եմ Փրանսիական աղջի վշտին:

Ասորազրած է՝ Վիլհելմ Ա. թ. <sup>1)</sup>:

Վիլ.

Տիկին Կարճօ, Պարիզ.

Կալսրուհին և ևս խորը զգացւած ենք սարսափելի լուրից որ գալիս է մեզ Լիոնից. Հաւատացած եղէք, Տիկին, որ մեր ամբողջ համակրութիւնը և մեր զգացումները ներկայ բոպէին Զեզ հետ ևն և Զեր ընտանիքի հետ:

Տաէ Աստւած Զեզ կարողութիւն ալս սարսափելի հարւածը կրելու համար:

Արժանի իւր մեծ անունին՝ ոլ. Կարճօն մեռաւ որպէս զինւոր՝ պատերազմի դաշտի վրա:

Վիլհելմ Ա. թ.

Ռուսաց դեսպանատուն, Պարիզ.

«Բարեհածեցէք Փրանսիական կառավարութեան որպէս նաև Տիկին Կարճօի առաջ թարգման լինել մեր անկեղծ ցաւակցութեան և ջերմ համակրութեան համար, որով մենք միանում ենք Ֆրարոխալին հասցրած սուղին:

«Կալսրուը, լինելով ճանապարհի վրաէ դէպի Բօրկի, ևս հեռազրով իսկոն ներկաւացրի տիսուր լուրը Նորին Մեծութեան»:

Դիրս

Տիկին Կարճօ, Պարիզ.

«Խորը զգածւած ոճիրի լուրից, կալսրուհին և ևս, մենք ձեզ լայնում ենք մեր ամենախորը տփառանքները և մենք ձեզ հաւատացնում ենք այն ջերմ մասնակցութեան մասին որ մենք ընդունում ենք ձեզ դիպած դժբաղդութեան մէջ և որը ամբողջ Ֆրանսիան սուզի մէջ է զցում:

Ալէքսանդր

<sup>1)</sup> Ալսինքն Կալսր—Թագաւոր:

Խոտակական դեսականը Պարիզում ստացել է բազմաթիւ հեռագիրներ Խոտալիակից, որոնք էականում են իրանց կատաղի զալրութը Կարնօի սպանութեան առթիւ: Խոտալիալում լուզմունքը մեծ է և ամենքը միաձայն սպախարակում են սպանողին:

### ՊԱՏԳԱՄԱԿՈՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴՈՒՄ

Ահազին բաղմութիւն պատգամաւորների ժողովում կունիար 25-ին, Բակոց չնալած քաղաքական հակեացքների տարբերութեան, ամենքի վրաէ հաւասարապէս նկատում է թէ տիրութեան և թէ զալրութի զգացմունք:

Ազդ զգացմունքը մանաւանդ արտախատեց ժողովի նախագահի մըտնելով, երբ ժողովը մի անգամից ոտի կանդնեց, առանց որ աչդ մասին նախագամատրաստութիւն եղած լինէր, և նոզն արաւ լսելու համար Շարլ Գիպիւլի՛ հեռագիրը, և Կազիմիր-Պերլէլի ճառը:

Նիստին ներկաւ են բոլոր մինիստրները, բացի Գիպիւլի՛ ից: Երբ նախագահը բարձրանում է զէպի բաղկաթուը՝ ժողովը ոտի է կանդնում և Կազիմիր-Պերլէլ կարդում է մինիստրների խորհրդի նախագահի հետագիրը.

### Պարոն նախագահ:

Կառավարութիւնը խորը ցաւով էականում է պատգամաւորների ժողովին: Հանրապետութեան նախագահի մահը:

Պին, Կարնօն վախճանւեց ալս գիշեր Լիոնում զազրելի ատենտատի հետևանքներից, որին նա զո՞ս եղաւ Բորսակի սպալատից դուրս գալիս:

Ֆրանսիան, ապշած ալս գարշելի լանցանքից, ամեն կողմերից ներկայացնում է կառավարութեանը իւր լուզմունքը և յաւը:

Նա ողբում է Հանրապետութեան նախագահի անձի մէջ օրինաւոր պաշտօնեալին, շիտակ քաղաքացցուն, որը եօթ տարի շարունակ կրել է պատով և հաւասարմութեամբ ազգային դրօշակը և նորչնչել Եւրոպային զգացումներ որոնք միմիթարութիւն են մեզ համար այն անազորոն փորձութեան մէջ որի միջով մննք ակմ անցնում ենք:

Համբարակիսութիւնը պահպանում է իւր նախագահի վշատակը: Նա ուղարկում է իւր տիսուր համակրութեան վկացութիւնը նորա ընտանիքին որ ողբում է և որը նորա պէս արժանի է ֆրանսիալի անւանը:

Ամբողջ երկիրը կը միանալ զալրութի այն շարժմանը, որ Լիոնի սպանութիւնը էարտացանում է կառավարութեան և ազգային ներկայացնուցութեան ծցում:

Բարեհաճեցէք ընդունել և ավել:

Շարլ Գիպիւլի:

Ժողովը, կանգնած, լսում է ալս ընթերցումը կրօնական լուս թեան մէջ:

Ապա Կազիմիր. Պերիէ արտասանում է.

«Ֆրանսիան և ֆողավը կը միանան մինխատների խորհրդի նախագահի խօսքիցին։ Նորա առօրուած են անձկութեան զգացումով ի գիտաց մի գարշելի սպանութեան որը հարւածում է Հանրապետութեան նախագահին պատուի դաշտում, իւր սահմանադրական պարտաւորութիւնների կատարման միջոցին։

Ժամ է ամփոփելու. Յարգանքով խոնարհենք այս գերեզմանի առաջ ուր անքան սոսկալի հանգամանքների մշջ անհետանում է մի կեանք, որը մի դաս է և մի օրինակ, որովհեան նա կաղմւած է նւիրաւծութիւնից հաւրենիքին և Հանրապետութեանը»

Ուղղենք մեր սրտերի խորքից պ. Կարնօի ընտանիքին մեր չարգալից համակրութեան վկանութիւնը. Թող մեր միաձանութիւնը նորա համար իւր ցաւերի ամոքումն լինի»

Մեր ողբացած մեծ քաղաքացուն մնարած կը լինենք եթէ սսենք որ Ֆրանսիան մնում է քաջ և սաժեղ, նոյն իսկ ազգային ալս սուգի օրը:

Ֆողավի նախագահը ապա կարդում է Մենատի նախագահի համորդագրութիւնը, որով նա չափանում է թէ Ազգավին ժողովը<sup>1)</sup> կը հաւաքի չորեքշաբթի, ժամ 1-ին, Վերսալը՝ Հանրապետութեան նախագահ ընտրելու համար։

Նիստը փակւում է։

### ՅՈՒՂԱՐԿԱՍԻՈՐՈՒԹԻՒՆԸ ԼԻՌՆՈՒՄ

Լիոն, 26 (14) լունիսի

Երեկ, 25-ին, Հանրապետ. Կախագահի զիակը թողեց Լիոնը նոյն ժամին, որ նշանակւած էր առաջուց Պարիզ վերադառնալու համար։ Յուղարկումը կատարեց միենող ճանապարհով, ինչպէս Լիոն դալու ժամանակ։ Ամբոխը նոյնքան մեծ էր, որքան շաբաթ օր, երբ Կարնօն Լիոն հասաւ, բայց այլ էր ժողովրդի տեսքը։ Բացազանչութիւնները տեղի էին տւել սուցի լուսութեան, որ ընդհատում էր կանանց հեկեկան քններով, տղամարդկանցից շատերը նոյնակէս լաց են լինում, և զինուրներ տեսակ որոնք անսասելի ջանք էին գործ դնում։ արտասունք չթափելու համար Զինուրական չարգունքները կատարելապէս նոյն ձեռվ մասուցւեցին ինչպէս կենդանութեան ժամանակ։ Բայց զինուրական երաժշտութիւնը, Մարտէլէզի փոխարէն՝ թաղման հանդիսի եղանակներ էին նւազում։ և սեղ քողարկւած թմբումների ձաները ուրախի տեղ՝ դառել էին խուլ և տխուր։

<sup>1)</sup> Այսպէս է կոչւում այն ժողովը որ կազմում է սենատի և պատգամաւորների ժողովի անդամներից։

Ժամ 5 ից երեկոյեան ահագին բազմութիւն պրեֆեկտուրի առաջ, մալթերի վրայ: Պրեֆեկտուրի վրայից վերցրած են դրօշակները, կարտուչները, որոնք որ առաջ զարդարում էին շինութիւնը: Միայն գմբէթի վրա շինած պաւիլոնը մնում է, բայց ձողի վրայ հաղցրած է շղարչի փողապատ:

Եշխանութիւնները գալիս են և բռնում նոցա համար որոշած տեղերը:

Ժամ 5 և 1/2-ին ժամանում է Լիոնի արքեպիսկոպոսը երեք զլիաւոր փոխերեցներով և շրջապատած իւր խորհրդարանի անդամներով, և կատարում է ննջեցեալի սենեակում:

Դիակառ-քը, լծւած չորս ձիերով և հեծւած երկու մարդկանցով, և թնդանութեածիցների մի տարեշալ de logis զալիս են և բռնում պատռող դռան մօտ: Գամ 6-ին երդւամ են արքեպիսկոպոսը և իւր զիսաւոր փոխերեցները, ասպա դադաղը, որ տանում են ութ հոգի, զնուում է զիակառ-քը: Թէ վերջինս և թէ դադաղը կահաւուած են ահագին դրօշակի մէջ, երեք գոյնի, մետաքսից, որի վրայ դնում են ձեռաց պատրաստած շքեղ պասկեր:

Գնացքը սկսում է. ճակատը բռնում են՝ քաղաքացին երաժշտութիւնը, պսակներ կրողները, ասպա կառ-քի մէջ արքեպիսկոպոսը և իւր փոխերեցները:

Երբ գնացքը սկսում է, Ֆուրեիէր բլրի բարձրութիւնից թնդում է թնդանութը, որպէս նաև զինուորական փողը և թմբուկները:

Երաժշտութիւնը սկսում է սգոյ մարշ:

Կառ-քի տեսեից զնում են նախ՝ նախադահի երեք որդիքը՝ Սաղի, Էրնէստ և Ֆրանսուա Լարնո, որոնք Պարիզից առաւաօնն էին եկել, առանց իմացած լինելու հեղելութիւնը, և Լիւնիս-Լարնո, նախադահի փեսան: Նոցա տիրութեան վրայ դժւար է նախին անդամ:

Ասպա դալիս են զինուորական տան օֆիցերները, գեներալ Բորիուս, Լիոնի զինուորական կոմենդանտը, 13 երորդ գնդի հրամանատարը, ապելացիալի քաղաքացիական, վաճառականական զատարանների առաջն նախադահները, Լիոնի քաղաքագլուխը, և Փորմական եկեղեցու է իսրայէլական կոնսիստորների նախադահները:

Ասպա ընթանում են բոլոր այն իշխանութիւնները և հիմնարկութիւնների ներկայացուցիչները, որոնք ներկայ էին Լարնոի ընդունելութեան ժամանակ: Ընկերութիւնների բազմաթիւ պատգամաւորութիւններ վերջացնում են լուղարկատրների շարքերը:

Տիրութիւնը ամենքի գէմքերի վրայ է: Ամբոխը իրան զսպած է պահում: Ցուցը ամենասպառահեղն է որ կարելի է երեակացել:

Երբ անցնում են այն փողոցի կողքով, ուր խտալական հիւպատ:

սարանն է և որը բռնւած է զօրքով, խտալիափի հիւպատոս պ. Բոսօ,  
իւր դռան առջե կանգնած է և վերջին պատիւն է տալիս նրան, ում օր  
առաջ աճնքան ջերմութեամբ ողջունում էր

Նրկաթուղու կալարանում կանգնած է մի այլ զինուրական ծւագա-  
խումբ և կիրասիրների երկու էսկադրոն. Դիակառաքը կանգ է առնում  
նուն դահլիճի առաջ, ուր շաբաթ օր Կարնօին ընդունել էին, Դագաղը  
դնում են մի սալօն-վագոն. արքեախոկոսուր օրհնում է, Սալոն-վագոնը  
մտնում են զեներալ Բորիւս, զինուրական տան երկու զնդապետներ ու  
պ. Տրանչօ, որոնք պիտի հակն դագաղը մինչ Փարիզ: Կարնօի որդիքը և  
վեսան դնում են միանում արկին Կարնօին, որը իւր ամռանացած աղջկաէ  
և բժ. Պլանչոնի հնա նոր զալիս է պրեֆեկտուրից: Տիկին Կարնօն մանում  
է մի լատուկ վազոն, որի վեղիերը ձգած են, Ժամ 7 $\frac{1}{2}$ -ին կառախումբը  
շարժում է: Ներկաէ եղաղները բարեւում են վերջին անդամ Կարնօի որ-  
դիներին, որոնք այլ ևս չեն կարողանում արտասուքը պահել:

